

Արշակունցի Թեոթիկ

Կրոնի



Քարոյսագիտութիւնը



(ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. ԴԱՍԸՆԹԱՅԲ)



Պ Ա Ց Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ



Պարտականութիւնը մեզ հետ կ'ելլէ առաւօտը
մեզ հետ կ'երթայ հանգչիլ գիշերը : Ստուգան
անիկա որ կը հետեւի մեզ ամէն ո՛ւր որ երթան,
և այն ատե՛ն միայն կը թողու զմեզ, երբ մեզ
թողունք կեանքի լոյսը : ԿԼԵՏՍԵՐՆ



Կ. ՊՕԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Յ. ԳԸԼԸՃԵԱՆ

1911

Արշակունցի Թեոդիկ



(ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Ա. ԴԱՍԸՆԹԱՅԲ)

Պ Ա Ց Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Պարտականութիւնը մեզ հետ կ'ելլէ առաւօտուն
 մեզ հետ կ'երթայ հանգչիլ գիշերը : Ստուերն
 անիկա որ կը հետեւի մեզ ամէն ո՛ւր որ ելլէք
 և այն ատե՛ն միայն կը թողու զմեզ, երբ
 թողունք կեանքի լոյսը : Կ Լ Ե Տ Ս Թ Ը Ը



Կ. ՊՕԼԻՍ
 ԳՐԱՏՈՒՆ Ե. ԳԸԼԸՃԵԱՆ
 1911

... Տիկին Ա. Թեոդիկ. — Մեծ հաճոյքով կարդացի «Արդի Բարոյագիտութիւնը»ի 11 պրակները գորս բարութիւնը ունեցած էք ինձ դիմելու՝ որպէս զի «զայնս վերծանել եւ անաշտ կարծիքս ձեզ հարդել»։ Հաւաստեցիք թէ դասաւորի այս բոլորովին անակնկալ դերը կը գարնացնէ եւ կը շփոթեցնէ զիս, ու դժուարին է ինձ բացատրել ինձգիւնքս այն արժեքը գոր ներողաւտօրէն կը հաճիք սալ իմ կարծիքս «Արդի Բարոյագիտութիւնը»ի մասին...։ Բայց նրաւոր մը կ'ուզդիք ինձ, եւ չեմ կրնար սնոր չպատասխանել՝ առանց վիրաւորելու ձեր գիրք զգացումները։ Կը համակերպիմ ուրեմն ձեր փափագին։

Բարոյականի մասնաւոր եւ բովանդակածի (systematique) ուսուցում մը պէ՛տք է։ Հարց մըն է այս, որ իր բաժնուն կ'ապաստէ ակաւաին, եւ զանազան ազգութեանց վերաբերող այն հոյակապ ասեկաբանները որոնք իրենց մտածումները պարզեցին մէկ քանի տարի ստալ ի Լոնտոն գումարուած Միջազգային Համաժողովին մէջ—սեւուշտ կարդացած էք այն երկու խոշոր հաստեղները որոնք կը պարունակեն Համաժողովին աշխատութիւնները—չիրցան վերջնական եզրակացութեան մը յանգիլ։

Թէ Բարոյականը աւելի թեւադրութեան գում է քան ցամաք ուսուցման, այս մասին դժուարին չէ համոզուել գոյացնել շուտով. դաստիարակին սնանք, դպրոցին մէջ ժրող ընդհանուր մթնոլորտը հարաւ անգամ աւելի կ'արժէն քան բարոյականի արեւեկն գեղեցիկ դասը։ Բայց երբ արեւն ինչպէս զիտութեանց ընծանում անկեղծիչի մշտաւտարիւններուն վրայ հիմնուած բարոյագիտութիւն մը կու գայ բիւրեղացնել եւ ամրացնել սպաւորութիւնները, չեմ կարծեր որ ներքին ըրրայ մակարոյծ մը նկատել բարոյագիտութեան դասը եւ բարոյագիտութեան դասագիրքը։ Ձե՛ք որ նոյն այն Բասիլը որ ըսած է թէ մշտաւտարիս բարոյականը կը ծաղիք բարոյախօսութիւնը, բարոյականի իբր տարր եւ սկզբունք կ'ընդունի աղէկ խորհիլը։ «Արդի Բարոյագիտութիւնը» այս հիմնան վրայ կառուցուած է, եւ իմ անկեղծ համոզումս այն է թէ գեղեցիկ արդիւնքներ տարու կոչուած է այս գեղեցիկ դասագիրքը, բաւական է որ զայն գործածող դաստիարակը այնքան սիրտ դնէ անով ուսուցման մէջ որքան սիրտ դրած է հոն հեղինակը՝ սնոր յորինման մէջ։ Ստուգիւ, դասագրքին ընդհանուր յորինումութիւնը կ'ապացուցանէ թէ սնոր հեղինակը ոչ միայն մտնկալարժան փորձատուրիւն ունի, այլ եւ համոզմամբ, օգտակար ըրրաւոր որքան անկեղծ՝ նոյնքան բուն ինքնով մըն է որ ձեռնարկած է դասագրքին պատասխանութեան։ Որքան ալ ընտիր եղած ըրրայ առաջնորդը—այդ առաջնորդին համար չէ որ Բրնան պիտի ըսէր՝ Tout est fécond, excepté le bon sens—գոր ունեցած էք, Տի-

կին, Ձեր դասագրքին պատրաստութեան համար, չիք կոր-
ցած, սակայն, պարզ քարզմանէջ մ'ըջայ. պատուական Հայու հողին
կը քրքուայ անոր ամեն մեկ հէին մէջ, եւ, աւա՛ղ, Կիլիկիան սոյնսը՝
գոր շատ մօտեն ճանցած ու զգացած հի, արդարակշիռ ազգասի-
րութեան ամենեկն զօրաւոր եւ ազդեցիկ դասերը գրեջ տուած է Ձեզ՝
Ձեր դասագրքին մէջ:

Ու «Արդի Բարոյագիտութիւնը» իր արժեքը կը պարտի ոչ միայն
իր հիմնական սկզբունքներն որ է տղուն մէջ մտադը կազմեջ անոր բա-
նականութեան դիմում ընկելոյ անդադար. այլ եւ մասնաւոր հոգա-
ծութեանը ընտրուած ընթերցումներուն—յամայն Հայ մեքի եւ Հայ
արտի արտադրութիւններ — որոնք խորունկ կերպով պիտի դրոշմեն
տղուն արտին մէջ՝ այն գեղեցիկ գաղափարները գորս բարոյագիտու-
թեան դասերը արթնցուցած էին անոր մեքին մէջ: Իսկ ընթերցում-
ներուն կցուած Գեղեցիկ Խօսքերը գեղեցիկ առիքներ պիտի ըլլան
խորհրդածութեան, որպէս զի կրկին եւ կրկին անդրադառնայ տղան
ընկերային ներկայ կազմակերպութեան հետ առընկութիւն ունե-
ցող բարոյագիտական այն սկզբունքներուն որոց վրայ իր ուշա-
դրութիւնը երաւիրած էր արդեւ ուսուցիչը: Զ՞ որ գաղափարը գամի
կը նմանի եւ աղէկ մխուշու համար կրկնակի հարուածներու կը կա-
տօսի: Վերջապէս, շահագործելու համար բուրբ այն միջոցները գորս
դասագիրք մը կրնայ գործածեջ՝ դասերը կարելի եղածին չափ շատ
սպաւորիչ ընելու համար, դիմում ըրած էք նաեւ նրասակայարմար
պատկերներու թելադրութեան, որոնցմէ շատերուն սակ դարձնայ Հա-
յուն սիրտն է որ կը բարբախէ: Իցի՛ւ թէ projection lumineuseները
գային նոր կենդանութիւն սայ այդ պատկերներուն: Ու ինչ որ արհա-
մարտեղի առաւելութիւն մը չէ ընաւ դասագրքի մը համար, «Արդի
Բարոյագիտութիւնը» գրուած է պարզ եւ մաքուր հայերեկնով մը:

Կրնայ ըլլայ որ «Արդի Բարոյագիտութիւնը» գործածող ուսուցի-
չը—եւ կը մտադրեւ որ բազմաթիւ ըլլան այդ ուսուցիչները — երբեմն
համակարծիք չգտնուի անոր հեղինակին հետ, օրինակի համար, երբ,
հէ 185, իբր գլխաւոր եւ իրական պատասխանատու, փոխանակ կա-
ռուպարութեան, խեղճ Քիւրտը ներկայացուած տեսնէ— բայց սարակոյս
չունիմ թէ ամեն հայ ուսուցիչ երախտագիտութեանը պիտի գործածէ
«Արդի Բարոյագիտութիւնը», տղայը ընտելացնելու համար բարոյակա-
նի՛ այն գիտական սկզբունքներուն որոց վրայ պիտի է հիմնուած ըլլայ
կենսականութիւն ունենայ ուղող ամեն ընկերութիւն— պատրաստելու
համար, ինչպէս Կ'ուրի Բայեօ, ումեղ մարմնակեր, սուր խնացակա-
նութիւններ, ֆայտնուի կամէր:

Համեցիք ընդունիչ, Տիկին, «Արդի Բարոյագիտութիւնը» ի մասին
անկեղծ մտածմանցս այս պարզ արտայայտութեանց ստիքի, իմ ջերմ
շնորհաւորութեանց եւ խորին յարգանաց հաւաստին:



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Տարիներէ հետէ Ռուսմական Խորհուրդի կողմէ պատրաստուած ծրագիրին մէջ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄԸ հակառակ իր ուրոյն ու շայն բաժինը գրաւած շրջաշուն՝ ցանցառակի կ'աւանդուէր: Ռուսցիներ աչ—իրենց կարգին — դասագիրքի ընտրութեան մասին շփոթութեան բնաւ չէին մասնուէր, քանի որ այնքան հազուագիւտ էին աւակերտներու համար յատկապէս պատրաստուածները:

Այսօր, երբ մարդկային միտքը՝ հեզգիտէ գերծ ամեն նախապաշարունակ՝ աւելի գիտակից ոգիով մը կ'ուզէ նայիլ Կեանքին, ուրեմն պարզ է թէ Բարոյագիտութիւնը որ պարտականութեան ու պարտականութեանց գիտութիւնն է, եւ ծանօթացումը՝ կեանքի գործնական սկզբունքներուն, ինչ բարեւար դեր մը կատարելու կոչուած է մարդկային կեանքի կազմակերպութեան մէջ, մասնաւորապէս մանկութիւնն առաջնորդելու աւագ գործին մէջ, քանի որ այս գիտութիւնն — իրականութիւնները պարզելով եւ գործնական սկզբունքներ ծանօթացունելով — կը մղէ տղան՝ խորհրդածելու իր ամենօրեայ կեանքին վրայ, շաւ ընտրելու իր ճարտարան, իր սկսելիք կեանքը գեղեցիկ, երջանիկ, արի ու քաջողը ընելու, ո՛րքան աչ համեայտ դիրքի մէջ ծնած ըլլայ անիկա:

Անհաս մը մանուկ հասակէն պէ՛տ է որ զուգընթաց կերպով զարգացուցած ըրայ իր սիրեն ու միտքը: Արդ, առանց բարոյագիտութեան՝ կարելի չէ երեսակայեղ սիրտի եւ միտքի զարգացում, այսինքն անթերի դաստիարակութիւն մը անձին: Վերցուցե՛ք բարոյականի դասն ու մարզեցե՛ք աշակերտները զանազան գիտութիւններով. արդիւնը պիտի ըրայ ունենայ ուսումնականներ, բանագետներ, բայց երբե՛ք ազնիւ անհասներ, բայց երբե՛ք բարեկիրք քաղաքացիներ, զուրկ անհասականութենէ, նկարագիրէ, ինքնագիտակցութենէ, իրենց վարելիք կեանքին անտեղեակ, մեկ խօսքով՝ իրենց անձին ու ընկերին նո՛յն իսկ պատուհաս: Վասն զի քաղաքագիտութիւնը գիտութիւն չէ, ինչպէս որ աստղաբանութիւնը չի նկարագրում չի, ցորչափ չմասջի ճարտարապետի մը ձեռքը, կերպ ու կերպարանք սաշու համար անոր:

Բարոյագիտութեան նպատակին բարձրութիւնն ու հրապոյրն էին որ համարձակութիւն ներշնչեցին մեզ՝ մեր հասակէս ուժերովը ձեռնարկելու դասագիրքի մը պատրաստութեան՝ մեր երկսեռ ուսանողներուն յատուկ: Նկատի առնելով մանաւանդ՝ ներկայիս մեք ուսուցման բարեկործանեց կենսական հարցը, չխառնեցանք մեր յոյսը դնելու բարոյագիտութեան մասնագէտ՝ օտար հեղինակներու օժանդակութեանը վրայ: Այսպէս, սոյն դասագիրքը յօրինած ասեմնիս, այ՛քի առաջ ունեցանք Քրանսացի, անգլիացի ու գերման բարոյագիտներու գործերէն շատեր, որոնցմէ նախապատուութիւն սաշով ժիւղ Բայետի «Բարոյագիտութիւնը դպրոցին մէջ» անուն ամենավերջին երկասիրութեան — տղոց համար իբր ամենէն նպատակայարմարն ու դիւրուսոյցը, — զայն ուղեցոյց ընտրեցինք մեզ, ո՛չ թէ սակայն կոյրզկուրայն բառական քաղաքագիտութիւն մը ներկայացունելով Հայ ուսանողին, այլ նոյն գիրքին ընկերով կարելուր յապաւումներ եւ ի հարկին յաւերումներ, որպէս զի շատ մը դրուագ-

ներ ու հասուածներ պատշաճեցուցած ըրանք Հայ կեանքին, այսինքն մեր աղարծի երկտեռ մանկութեան ընթոնողութեան: — Աւելորդ ջրից ըսել թէ նոյն բարոյախօս-մանկավարժ Բրոֆեսորը եօթը տարի սწնած է իր դասագիրքը պատրաստելու գործին համար, եւ ջանացած՝ վարդապետական տեսութեանց ու վերացական փարոզներու փոխան՝ տոյց ընծայել ազդու օգնութիւն մը՝ կեանքի դժուարութեանց մէջ:

Բայեօի մեքոնս է ջրել ռուսանոյքին. «Դուն պէտք է ընես այսինքն բանը», հասպա. «Դուն մտացի ես, նայէ՛ իրականութեան, խորհէ՛, ըրէ՛ ինչ որ կը թելադրէ քեզ քո բանականութիւնդ. նայէ՛ թէ կ'ուզե՞ս ապրիլ իբր պատուաւոր մարդ, թէ իբր բարբարոս կաւ յիւսար»:

Առ հասարակ տոյց կեանքը կանոնաւորելու պաշտօնը ստանձնող այս ռուս միտ դասաւանդութեան համար՝ ընտրուած է եղանակ մը գիրքին մէկ ծայրէն միւսը, զայն հնար եղածին չափ սանելի եւ դիւրահասկանալի ընծայելու համար աշակերտին:

Ներկայ դասագիրքնիս ԱՐԴԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ կոչեցիմք առանց յաւակնութեան, քանի որ հոն նկատուած է կիրարկուած են ռուսացեան ամենավերջին բարեկորոզումները, քանի որ մանաւանդ փափաքուած է հոն՝ պարզել կեանքի արդի ընթոնումներն ու ըստ այնմ ուղղել տղան իր ինքնաճանաչութեան մէջ:

Անձնիւր մասի ստորաբաժանումներէ անմիջապէս վերջ, մեր կողմէ արեւոյցած ենք նաեւ ընթերցումներ, պատմութեան եւ գեղեցիկ մտածումներ՝ նիւթերու պահանջընտրութեան համաձայն, օրինակներով եւ բացատրական խորհրդածութեանք տղան արեւի ուժգին տպաւորելու դիտումով:

Մեր անկեղծ շնորհակալութիւնը Հիւրքեան Յովնանն էս կժ.ի որ մեքոնս ընտրութեան մեր վարանքին մէջ թե-

բաղիւր եղաւ մեզ — իր մանկավարժի եւ բարոյագէտի փորձառութեամբ — նախապատուութիւն տալու Բայեօի մեքոսին, ամենազգի հեղինակներէ վերջերս հրատարակուածներուն մէջէն դաւանելով զայն՝ ընտրելագոյնն ու նպատակայարմարը:

Բաղձալով ամեն օգտակարութիւն մանուկ սերունդին, գիրքիս Բարձրագոյն Բ. եւ Լրացուցիչ դասընթացները յոյս պիտի ընծայենք ի մօտոյ, նոյն ուղղութեամբ:

Բերա, 18 Յունիս 1911

Ա. Թ.





ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մ Ա Ր Դ Ո Ւ Ն Ա Ջ Ա Տ Ա Գ Ր Ո Ւ Մ Ը

1. Ն Ա Խ Ա Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Դ Ե Ր Ո Ւ Թ Շ Ո Ւ Ա Ռ Վ Ի Ճ Ա Կ Ը

Բարոյագիտութեան նպատակը. — Բարոյագիտութեամբ է որ կը սորվինք թէ մարդիկ ի՞նչպէս կրցած են իրենց վրայէն թօթափել իրենց տգիտութիւնը, վայրենութիւններն ու անարդարութիւնները, դարերու ընթացքին՝ հազարամէկ տառապանքներ քաշելէ վերջ :

Դարձեալ, Բարոյագիտութեամբ է որ կը սորվինք թէ ի՞նչպէս մենք ալ մեր կարգին՝ ամէն ճիգ թափելու ենք, օր ըստ օրէ զարգանալու և ազատելու համար վայրենիի այն զնազոններէն՝ զորս ժառանգաբար ստացած ենք հնադարեան նախնիքներէ որոնք անգութ բարբարոսներ էին :


Այսպէս, Բարոյագիտութիւնը կ'ուսումնասիրէ նախամարդոց անցուցած խզճալի կեանքը, մեզ ցոյց տալով յառաջդիմութեան այն ընդարձակ ճամբան՝ ուրկէ քալած է մարդկութիւնը : Նաև կը բաղդատէ անոնց վարած ստորին կեանքը՝ վեհ ու բարի անձերու վարած առաքինի կեանքին հետ, ի վեր հանելով բոլոր գեղեցկութիւններն այն միծ հոգիներուն որոնք իրաւամբ արժանացած են ամէնուս հիացումին և երախտագիտութեանը :

Բարոյագիտութեան կատարած այդ բաղդատութիւններէն վերջ, իւրաքանչիւր տղու կը մնայ իր կեանքը վարել՝ բանականութեանը տրամադրածին համաձայն, ընել զայն գեղեցիկ, արդիւնաւոր, և կամ բանականու-



Ն Ա Խ Ա Մ Ա Ր Դ Ի Կ

Էլիպէ Ռըբըլի L'homme et la terre անուն հայկապ գործէն
 արտագրուած սոյն պատկերը կը ներկայացունէ զանոնք
 իրենց ապրելակերպով և բնակարանով՝ ուր ապաս-
 տանած են, գիշերուան ստակումէն և ցուրտէն
 զերծ մնալու համար :




ԵՒԿՏՐԱՅԱՆՏՈՒԹԻՅԱՆ ՊԱՒԱՏԸ ՉԻՔԱՅՈՑԻ ՎԵՐՋԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԳՎՈՒՄԻՆ. [Գեօր]։

Բազմաթիվ իր կատարելությունները մեջ շքերդ պս շնորհը՝ Նախարարության քարտեզագրման հետ (տե՛ս դե՛տե 522)։

թենէ զուրկ, անազնիւ և արհամարհելի, մեր նախնիքներուն վարած կեանքին պէս:

Բարեբախտ կը ծնինք.— Երբոր ծնինք, տակաւին որևէ օգտակարութիւն չունեցած ուրիշի մը, ամէն տեսակ բարիք կը վայելենք. պատրաստ բնակարան, հագուստ, շուրջերնիս՝ անհամար առարկաներ մեր հանգլատին համար: Հետզհետէ որքան մեծնանք, կրնանք մեր միտքը



ՆԱԽԱՄԱՐԴՈՅ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԻՔԸ. — Գայլախազի երկու կտորներ — երկկողմանի տաշուած — որոնք դարերով իբր զէնք և իբր կացին ծառայեցին քաղաքակրթութենէ զուրկ նախամարդոց:

Ճոխացունել միլիոնաւոր դիտուններու հմտութեամբը, մեծ խորհողներու իմաստութեամբն ու փորձառութեամբը: Արածիչսներ, նկարիչներ, համբաւաւոր մեծ արուեստագէտներ հրաշալի գործեր արտադրած են. կ'ըսքանչանանք անոնց դեղարուեստական արտադրութիւններուն վրայ, կը վայելենք վերջապէս բոլոր բարիքները մեծ ու ազնիւ այն հոգիներուն՝ որոնք իրենց նմանները չափազանց սիրելնուն՝ ի հարկին իրենց կեանքն ալ զոհեցին անոնց համար:

Մինչ մենք այնքան հանգստութիւններ ունինք այ-

սօր, ո՛րքան ցաւալի է խորհիլ թէ հազարաւոր տարիներ առաջ աղաք ոչ միայն հմտութենէ և գեղարուեստէ զրկուած էին, այլ և պարզ զգեստ մը անգամ չունէին հագնելիք: Իրենց բնակարանները մութ ու խոնաւ քարայրներ էին. տգէտ, կոպիտ ու ազտոտ էին և սնրաններու պէս կը թափառէին:

Բարեբախտ ենք ուրեմն՝ դարերէ ի վեր սեզի ունեցած յառաջդիմութեանց արդիւնքը վայելելով: Ամէնուս վրայ պարտք մը կը ծանրանայ՝ մեր կարողութեան չափով աւելցունելու եղած գիւտերու, գեղեցկութեանց ու բարիքներու այն մեծ պաշարը՝ զոր մեր նախնիք անաղին գոհողութիւններով ձեռք բերած են մեզ համար:

Նախաճարտոց ապրելակերպը.— Գիտութիւնը մեզ կը սորվեցունէ թէ երկու հարիւր հազար տարիէն աւելի է որ մարդկային ցեղը գոյութիւն ունեցած է աշխարհիս վրայ: Այն խիստ նախապատմական մարդիկ մեզ չէին նմաներ ոչ իրենց կերպարանքով, ոչ ալ իրենց ապրելու եղանակով: Իրենց բրածոներուն հետ՝ գտնուած են նաև իրենց գործիքները, որոնցմէ ամէնէն սուաջինն եղած է երկկողմանի տաշուած կայծքար մը «բուռնցքի հարուած» կոչուող: Այդ կայծքարէն զատ ուրիշ գործիք կամ գէնք չունէին, որով ո՛չ փայտ կարելի էր կտրել, ոչ ալ սղոցել կամ ճեղքել: Անասուններու մորթն ալ չէին կրնար հանել, որպէս զի գէթ իրենց մերկութիւնը կարենային ծածկել գարշահոտ մորթերով: Մերկ կը պտըտէին, գիշերն ալ, ցուրտէ և գազաններէ խոյս տալու համար՝ բնութեան պատրաստած բնակարաններուն մէջ կ'ապաստանէին, — սոսկալի անձաւներ՝ ուր կը գտնուին ցարդ իրենց գոյութեան հետքերը:



Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ Ա Ռ Ա Ի Օ Տ Ը [Գեղունի]

Արուեստագէտներու կը պարտինք մեր գեղեցկագիտական ճաշակներուն զարգացումը: Նախամարդն իր սնունդը ճարելու հոգերուն մէջ՝ չէր ազդուեր բնութեան գեղեցկութիւններէն:

Ժամանակակից վայրենիներուն թշուառութիւնը . — Մեր ունեցած ստոյգ սեղեկութիւններէն զառ , կարող ենք նաեւ երեւակայութեամբ ըմբռնել դժնդակ կեանքը՝ Պատմութեան ամենահին շրջանէն առաջ ապրող մարդկութեան , երբ ուսումնասիրենք ժամանակակից վայրենիներու վարած ողորմելի կենցաղը : Իեւեռի մօտիկ տեղեր , Պրագիլիոյ մէջ և Սփրիկէ կը գտնուին անոնք : Փոշերով և ճախճախուսներով շրջապատուած անթափանցելի անտառներու խորը կ'ապրին : Մօտերնին կան վայրի կենդանիներ , քիչ հեռուն՝ թշնամի ցեղեր որոնց հետ կռիւի մէջ են միշտ : Մտուողնին շատ նախնական է , իսկ բնակարաննին ճիւղերէ շինուած խարխուլ բաներ են , ծխոտած , խոնաւ ու մթին : Սղոց չունին , կացին չունին . գիշերներն ալ իրենց զազրելի բնակարանները լուսաւորելու համար բա՛ն մը չունին : Զգեստներնին անբաւական են՝ դիրենք պաշտպանելու ցուրտին դէմ :

Կարելի՞ է բաղդատել այս մարդերուն ճակատագիրը մերինին հետ : Ռ'քան տառապագին պիտի ըլլար մեր կեանքն ալ , երբ զուրկ ըլլայինք հանգստաւէտ բնակարանէ , հաղուստէ , առողջարար սնունդէ , օճառէ , պատառաքաղէ , կանթեղէ , կրակէ , թուղթերէ , գիրքերէ և դեռ անհամար անհրաժեշտ բաներէ :

Ժամանակակից վայրենիները , սակայն , որոնք մեր աչքին ա՛յնքան տգէտ ու թշուառական կ'երեւին , շատ աւելի զարգացած են քան հարիւր հազար տարի առաջ անպրող մարդիկը , քանի որ ունին քիչ չափ գործածելի գէնքեր , ինչպէս աղեղը , նետը , ևն :

Վայրենիներուն իմացականութիւնը . — Ժամանակակից վայրենիներէն շատերուն իմացականութիւնը պզտիկ տղու մը իմացականութենէն տարբերութիւն չունի : Լեզունին

այ շատ անկատար բան մըն է : Իրարու հետ աւելի ձեւերով կը խօսին՝ քան թէ բառերով : Հաշուել այ չեն գիտեր և գաղափար չունին ժամանակի տեւողութեան վերայ : Իրենց շուրջիններէն զուրս մարդոց հետ չեն կրնար հաղորդակցիլ , քանի որ , աւելորդ է ըսել , կարդալ-գրել



ԷՐԷՅԼԻԻ ԾՈՎԵՉՐԸ [Սեւ Ծով] . — Հեռաւոր տեղեր փոխադրելու համար՝ շոգեհասեր կը բեռցուին մեծաքանակ հանքածուխով : Նախամարդիկ ի՞նչ պիտի խորհէին արդեօք , նմանօրինակ յառաջդիմութիւններ եթէ տեսնէին :

չեն գիտեր , մանաւանդ որ բոլորովին անգիտակ են տիեզերքի բովանդակութեանը մասին : Չափազանց ծոյլ են . իրենց համար անտանելի կը թուի աշխատութիւնը : Արդէն սահմանափակ , ստորին , գրէթէ անբանի կեանք մը ունենալնուն՝ ոչինչ ունին մտածելիք , ապրելով միայն բնազդով ու սովորամոլութեամբ :

Նախաւարդոց սարսափը . — Նախամարդիկ անտեղեակ էին նաև բնութեան օրէնքներուն , որովհետև իրենց

միտքը խոր խաւարի մէջ կը գտնուէր : Ով. գիտէ ինչ ահուգողի կը մատնուէին երբ ամպերը կ'որոտային , կայծակը կը փայլատակէր կամ հովը կ'ունար միջոցին մէջ : Անհամար տարիներ անցան , մինչեւ որ մարդիկ քիչ քիչ ընստանեցան իրենց շուրջի կրեւոյթներուն : Նաեւ , գիշատիչներու կեր չըլլալու համար , վախերնուն , իրենց թագստոցներէն դուրս չէին ելլեր և օրերով անօթի՛ ալ կը մնային :

Տմարդի կի՛ն. — Ցեզ ցեղ բաժնուած՝ անջատ կ'ապրէին անոնք : Մեծ ատելութիւն մը կը տածէին իրենց ցեղէն դուրս գտնուողներուն նկատմամբ և աներեւակայելի կերպով անգուլթ էին : Նոյն իսկ իրենց ցեղէն եզոզ կիներու մասին ալ բիրտ ու անգուլթ վարմունք մը ունէին : Քարի գարուն երեւան ելած կմախքներու վրայ նշմարուած են սոսկալի վէրքերու նշաններ . դիւրին է ատոնցմէ հետեւցունել թէ անոնք ո՞րչափ զիրար կը չարչարէին ու կը վիրաւորէին : Արդ , կը տեսնենք թէ ինչպէս խելքէ , փափկութենէ , գեղեցիկի զգացումէն զուրկ , բուռն ու անխիղճ նախնիքներէ սերած ենք :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ առաւելութիւններ կը վայելենք մեր աշխարհ եկած օրէ՛ն իսկ . — Ի՞նչ կեանք կը փարհիմ մեր նախնիք . — Գործիք կամ գեղն ունե՛ին . — Գարեջր՞ է բաղդածել անոնց կեանքը մարիկն հետ . — Ի՞նչպիսի մարդիկ էին մեր նախնիք :

2. Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Է Ա Ղ Բ Ի Ի Ր Յ Ա Ռ Ա Զ Դ Ի Մ Ո Ի Թ Ե Ա Ն

Համագործակցութիւնն է մէ՛կ սիրտ ու մէ՛կ հողի ըլլալով՝ համընթաց կերպով աշխատիլ միեւնոյն գործին ,

միեւնոյն նպատակին : Չայն պէտք է ընգունինք աղբիւր
ամէն բարիքի և յառաջդիմութեան : Անո՛վ է որ մար-
դիկ , շատ հին ժամանակներու մարդիկ՝ այնքան տգէտ ,
վատթար ու վայրագ էակներ ըլլալով հանդերձ , երթալով
կրցած են տիրանալ մտաւորական բարձր զարգացումի ,
կատարելութեան և ազնուութեան՝ որոնց հասած են սա-
կայն մեր մէջէն լաւագոյնները : Ինչպէս անցեալին մէջ ,
նոյնպէս ալ ներկային ու ապագային՝ մարդկութեան ճշ-
մարիտ յառաջդիմութիւնը կը կայանայ համագործակցու-
թեան մէջ : Մենք ամէնքս իրարու պէտք ունինք : Կա-
րելի չէ առանց սոսկումի խորհիլ այն թշուառ ու բար-
բարոս վիճակին վրայ՝ ուր պիտի իյնային մարդիկ , եթէ
իրարու զլանային իրենց ծառայութիւնները :

Նախնական յառաջդիմութիւններ. — Երկար դարեր ,
մարդիկ՝ խումբերու բաժնուած՝ թշնամութեամբ լեցուած
էին իրարու հանդէպ : Իրենց մէջէն ամէնէն խելացիները
հնարեցին սրտորդութեան յատուկ գէնքեր և զանազան
պէտքերու ծառայելիք գործիներ : Յաջորդներու ձեռքով
տոտնք և դեռ ուրիշ առարկաներ հետզհետէ կատարելա-
գործուեցան և գործածութեան լաւագոյն կերպ մը առին :
Բայց հարիւրաւոր տարիներ անցան և անընդհատ յառաջ-
դիմութիւններ ընել հարկ եղաւ , որպէս զի մարդիկ հաս-
նէին քաղաքակրթութեան այն աստիճանին՝ ուր կը
գտնենք զիրենք պատմական չրջանի առաջին մասին մէջ .
ասով հանդերձ՝ կրկին յետնեալ վիճակով մըն է որ կը
տեսնենք զիրենք :

Մեծ գիւտ մը եղաւ , Կրակի գիւտը՝ զոր ըրին երկու
կայծքար իրարու թաղխելով և աբեթը բռնկցունելով :
Աւելի մեծ գիւտ մըն ալ եղաւ յետոյ , Երկաթիւնը : Դէպ ի
քաղաքակրթութիւն հսկայ քայլ մը առնել սկսան մար-

գիկ ան զն օրէն երբ կրցան հանածոներ (*) հայեցունել և ունեցան կացին , դանակ , սղոց , ուրագ , ևայլն :

Իրարմէ հեռու , ցրուած ու մեկուսի կ'ապրէին մարգիկ , հաղորդակցութենէ զուրկ էին , քանի որ անտառներ , լեռներ , գետեր ու ճախճախուտներ կը բաժնէին զիրենք : Մեծ ծառայութիւն մը մատուցին անոնք որ օրին մէկը նաւակը երեւակայեցին ու շինեցին . աւելի յանդուգն անձեր ալ համարձակեցան անով ճամբորդելու և հաղորդակցութեան մտնելու ուրիշ ժողովուրդներու հետ , որով կրցան իրարու գիտցածէն օգտուիլ փոխադարձ , և յառաջ գիմել :

Դիր , Թուրք , Տպագրութիւն . — Մարդիկ իրենց գիտցած արհեստները կրնային քիչ թէ շատ իրենց յաջորդներուն սորվեցունել և սերունդէ սերունդ փոխանցել . բայց իմաստուններու յղացած գեղեցիկ մտածումները դատապարտուած էին իրենց հետ անհետելու : Այդ մեծ կորուստին առաջքն առաւ անա Դիրին գիւտը : Անհաշուելի են ատոր պարգեւած բարիքները : Թուղթին գիւտովն ալ մէկդի դրուեցան պապիրոսի (**) պատաստներ որոնք սուղ էին և դժուար գործածուելիք : Վերջապէս Տպագրութեան գեղեցիկ գիւտովն ալ կարելի եղաւ ունենալ բազմաթիւ գիրքեր , թերթեր , լրագիրներ որոնք մարդկային մտածումները կը հաղորդեն իրարու՝ աշխարհիս մէկ ծայրէն միւսը : — Իարձեայ , ինչ զոնողութիւններ ու տանջանքներ կը յիշեցունէ մեզ՝ աշխարհացոյց քարտէս մը : Քանի՛ քանի՛ նաւորդներ և երկրախոյզներ

(*) Համաժոյ կաւ երահալք , հակիկն երած սևգոտծ մետաղ , mineral :

(**) Պրտու կոչուած տուկիկն կեղևուլը շինուած օեսակ մը բուրք եգիպտացիներու յատուկ :

իրենց կեանքը վտանգի դրած են՝ գտնելու համար նոր ցամաքներ, նոր երկրամասեր :

Անցեալ դարերու, ինչպէս և ժամանակակից մարդոց բարերար համագործակցութեամբ է որ ունեցած ենք կերպաս հիւսող, լոյս արձակող և տաքութիւն տուող զանազան մեքենաներ. և դեռ ինչն՝ր վերապահուած են մեզ՝ ապագային, մանաւանդ երբ մարդիկ մէկզմէկ փոխանակ նեղելու, սպաննելու՝ սիրեն մէկզմէկ և ըմբռնեն թէ գործակիցներ են իրարու :

Մարդիկ տե՛ր՝ բնութեան ուժերուն . — Որքան կը սկսին մարդիկ ծանօթանալ բնութեան օրէնքներուն, այնքան կ'սկսին չվախնալ անոր երեւոյթներէն և տակաւ օգտուիլ անոր ուժերէն : Այսպէս, նախամարդիկը սարսափեցունող կայծակը ներկայ մարդկութենէն կը գործածուի՝ անոր պէտքերուն ի սպաս : Յիշենք ելեկտրական հեռագիրը, հեռաձայնը, ելեկտր. հանրակառքն ու ելեկտր. վայրաչարժը :

Հիւանդութեանց, մահուան դէմ իսկ կ'սկսի պայքար մղել : Նորանոր գիւտեր եղած են՝ անդամահատութեան միջոցին ցաւը դադրեցունելու համար . հականեխումը գտած են : Ծաղկախտ, կատաղութիւն, կեղծմաշկ ևն . բուժելի հիւանդութիւններ են հիմայ : Պիտի գայթերեւս ատեն մըն ալ ուր բոլոր հիւանդութիւնները պիտի անհետին և այն ախտե՛րը միայն պիտի մնան զորս մեր վրայ կը հրաւիրենք շատակերութեամբ, անզգուշութեամբ և ողջպահիկ կանոններու մասին անհոգ գտնուելով :

Նախնեաց անձանօթ էին նաև ցորենն ու միւս արմրտիքները : Երկար ատեն ուսումնասիրած, շատ մը փորձեր կատարած են իմաստուն հողագործներ, մինչև որ

կրցած են կենսունակ հացահատիկը գտնել, և դեռ հազարումէկ տեսակ ազնուացած պտուղներ՝ զորս կը ճաշակենք ս'յնքան ախորժանօք:

Յարգենի մեր քարերարները.— Գիրքերէ կը սորվինք թէ բոլոր սերունդներու մարդիկ ինչ եւանդով, համբերատար աշխատանքով և իրարու հետ գործակցութեամբ ջանացած են պարգեւել ազատութիւն, հանգիստ ու երջանկութիւն՝ իրենց նմաններուն, և թէ անոնցմէ քանինքն զոհուած են ազատագրութեան և յառաջդիմութեան սիրոյն համար: Այդ անհետացող ազնիւ դէմքերը, գիտուն կամ խոնարհ գիւղացի՝ այդ մարտիրոսները մեր քարերարներն ու պաշտպաններն են ահա, մեր երախտագիտութեանը միշտ արժանի:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Համագործակցութիւն ընելով ի՞նչ կը հասկընանք.— Ի՞նչ գիտեր ըրած են մարդիկ եւ որո՞ւ շնորհիւ. — Մեր առողջութեան ու մեր սեռեւորին հաւար ինչե՞ր ըրած են.— Որո՞նք են մեր քարերարները:

3. ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ ԻՐԱՐՈՒ ԳՈՐԾԱԿՑՆԵԼՈՒՄԷՁ.—

Ը Ն Տ Ր Ե Ն Ք Մ Ե Ր Կ Ե Ա Ն Ք Ի Ճ Ա Մ Բ Ա Ն

Ազատութիւն, քայց ո՛չ յիւստութիւն. — Ազատ եզած ըլլալնիս ապացուցանելու համար՝ եթէ պատուհանէն ինքզինքնիս փողոց նետէինք, փոխանակ տան մը սանդուղներէն վար իջնելու, բնական էր որ ուրիշներ պիտի խորհէին թէ մենք յիմար ենք: Չփութենք ուրեմն ազատութիւնը յիմարութեան հետ: Ազատ ըլլալը հնչանակեր թէ խելքերնուս փչածը կրնանք ընել, այլ կը նշանակէ

հնազանդիլ բանականութեան ձայնին : Այդ ձայնին մտիկ ըրած կ'ըլլանք՝ կռուելով որկրամոլութեան , ծուլութեան և բարկութեան դէմ , երբ անոնք մեր վրայ տիրել ուզեն : Ո՞վ կրնայ վստահիլ շատակեր , անգործ և ցասկոտ մարդերու : Եթէ խօսքերնուն նայինք , բնաւ չեն վախնար անոնք . անօթութենէ , ծարաւէ , յոգնութենէ և սաքէ չեն նեղուիր : Սակայն երբ պատահի որ իրենց անիրաւեալ մէկ ընկերոջ գատը պաշտպանել հարկ ըլլայ իր գասատուին կամ վարպետին դիմաց , փախուստ կու տան անոնք . երբ ցուրտ ըլլայ՝ կը դողան , կը նեղուին տաքուն , և կը տրսնջան երբ քիչ մը աւելի քալել պէտք ըլլայ , կամ քիչ մը ուշ ճաշել : — Այսպէս , երբեք մարդս ազատ չնկատուիր , երբ գերին է իր մարմինին և կիրքերուն :

Ազատ տղայ անիկա՛ կը կոչուի միայն , երբ իր հանգիստը կամ զբօսանքը կը զոհէ՝ իրմէ խնդրուած ծառայութիւնը կատարելու համար առանց գանգատելու . երբ ի հարկին կարենայ տոկալ քաղցի , պազի և յոգնութեան . երբ արհաւիր անխատուութեան ձեռնարկէ և չընկճուի ո՛չ մէկ ցաւէ ու վիշտէ . երբ ուրիշներուն ըրած կոպտութիւններուն հանդէպ անփոյթ մնայ , առանց զայրոյթ կամ ատելութիւն զգալու : Այն ատեն է որ այդ տղան կրնայ վստահիլ իր անձին , ինչպէս և ուրիշները վստահիլ իրեն , քանի որ ինք՝ ծոյլ ու դանդաղ մարմինի մը գերին եղած պիտի չըլլայ :

Տղուն փիճակը՝ ընկերութենէ զուրկ . — Վայրենիէ մը տարբերութիւն պիտի չունենար այն սղան որ զրկուած ըլլար մարդերու ընկերութենէն , բոլորովին առանձին մեծնար ամայի վայր մը՝ առանց ուսումի և առանց ըն-

կերոջ , ո՛չ մէկ կերպով օգտուէր կատարուած գիւտերէ
և ապրէր գիտութեան ու բնութեան հրաշալիքներուն
մասին անտեղեակ , որով և չհետաքրքրուէր այն գործօն
ու ժիր կեանքով զոր համօրէն մարդկութիւնը կ'անցունէ
աշխարհիս վրայ : Ուրեմն տղան իր ինքնութիւնը կը
պարտի ընկերութեան , ամէն անոնց որոնք իրմէ առաջ
ապրած են և իր օրովը կ'ապրին , աշխատելով մարդկու-
թեան համար :

Արդարութեան պէտքը . — Ընկերութեան բարելաու-
թեան և յառաջդիմութեան մնասող ամէն արարք՝ չար
գործ մըն է : Եթէ մարդիկ միասին չապրին , այն ատեն
մարդոց մէջ կը նուազին խելք , արիւթիւն և նմանասի-
րութեան զգացում : Ուստի ճշմարիտ չարագործներ են
այն անձինք որոնք ուղղակի կամ անուղղակի պատճառ-
ներ յարուցանելով մէջտեղ՝ արդելք կ'ըլլան որ մարդիկ
միասին ապրին :

Այս պարագան ինչ որ է մարդկային ընկերութեան ,
նոյնն է նաեւ դպրոցին համար : Այն աշակերտը որ դա-
սարանին մէջ խանգարում յառաջ կը բերէ և արգելքներ
յարուցանելով՝ իր դասընկերներուն աշխատութիւնը կ'ընդ-
հատէ , անարդար և չար եզած կ'ըլլայ : Այսպէս , ուրեմն
օրէնքը պէտք է պաշտպանէ աշխատասէրն ու յառաջա-
դէմը՝ ծոյլին և նախանձոտին դէմ , ինչպէս ընկերութեան՝
նոյնպէս և դպրոցին մէջ :

Ուրիշին համար արդար չեզոյր թշնամին է ամէնուն :
Եթէ անարդարները շատնային , ապրիրն անհանդուրժելի
և սոսկալի պիտի դառնար : Սնիրաւ գործ մը կատարե-
լով՝ ո՛չ միայն ուրիշին տառապանք առթած կ'ըլլանք ,
այլ և մեր աչքին առջեւ նուաստացած և ցոյց տուած՝
որ մենք բարբարոսներէ չունինք տարբերութիւն :

Պատուաւոր տղան կը սոսկայ իրմէ տկարները չարչարելու գաղափարէն . իրմէ պզտիկ քոյրերուն կամ եղբայրներուն հետ չիյնար և չնեղեր զանոնք : Եթէ սխալմամբ թերութիւն մըն ալ գործած ըլլայ , կը խոստովանի յանցանքը : Ստախօս մը սեպուելու ամօթի գաղափարէն անգամ կարող է կարմրիլ անիկա : Ամէնքը զինք կը սիրեն և հայրն ու մայրը վստահութիւն ունին վրան : Պատուաւոր և արդարութիւնը սիրող տղան դասի ատեն զիսէ լուռ կենալ , կը խորհի թէ ուսուցիչը պէտք չէ նեղել ժխոր յարուցանելով : Անիկա չխաբեր դասատուն . իր գասերը չընդօրինակեր ուրիշներէ և գաղտագողի չհայիր գիրքին վրայ՝ դասը զրոյցած ատեն : Ընկերներէն կը յարգուի և ո՛չ ոք կը համարձակի զինք յանդիմանելու : Անիկա բարի , պատուաւոր և արդարասէր , քաղաքացի մը պիտի ըլլայ ապագային :

Անարդար, գեշ տղան . — Ընդհակառակն երբ տղայ մը վատ սովորութիւններ ունի՝ կը չարչարէ իրմէ պըզտիկներն , իր քոյրերուն կամ եղբայրներուն հետ գէշ կը վարուի , մօրը չօգներ՝ երբ անիկա պէտք ունի իրեն , դասընկերները կը նեղէ և վարժապետին հեռանալուն կ'սպասէ՝ որպէս զի ուրիշներէ ընդօրինակէ իր համարը , գասարանը կը խանգարէ՝ ազմուկ հանելով . վերջապէս ստախօս , կեղծաւոր ու չար տղայ մըն է ինք՝ ո՛չ մէկէն սիրուելով և վստահութիւն չահելով : Շատ դժուար է որ այդ տեսակ տղայ մը վերատին պատուաւոր տղայ մը ըլլայ : Մեծնալուն՝ մուրացկանութիւնն է վիճակը , դառնալով ձախաւեր գործաւոր , ընտանիքի գէշ հայր և յոռի քաղաքացի :

Լաւ ընտե՛նք մեր կեանքի ճամբան . — Քանի որ այն-

քան տգեղ բան է ըլլալ անիրաւ, չարսիրտ և անբարոյ, ուրեմն տղայ եղած ատեննուս՝ ուշադրութիւն ընենք և չմտնենք այն ճամբան որ զմեզ չարութեան և անարդարութեան կը սանի, հապա ընտրենք զայն որ բանակատութեան և արդարութեան ուղին է և ուրկէ քալեցին պարկեշտ ու յարգելի մարդիկ :

Իրաւ է թէ երբեմն ամէնէն աղէկ սղաքն ալ կը գործեն պակասութիւններ, ծուլութեան կը յարին և անխիղճ կը գտնուին իրենց նմաններուն հանդէպ, թայց երբ յանցանքնին կարմրելով կը խոստովանին, հաւտալու ենք իրենց անկեղծութեան : Գերազանց կերպով իմաստունն անգամ թերեւս օր մը յաղթուի իր կիրքերէն : Այս բանը կրնայ վնաս չունենալ եթէ ինքզինքնիս չը խաբենք, ճիգ չընենք սրբանալու, այլ շիւղ շիտակ նայինք ճշմարտութեան և խոստովանինք թէ բանիմաց և ուղղադատ անձի մը պէս չենք վարուած : Եթէ գէշ բանի մը զակատինք, պէտք է որ անդրադառնանք անոր, ծաղրենք ինքզինքնիս և ընդունինք որ ունեցածնիս թրութիւն մըն է զոր պիտի վանենք մենէ. վերջապէս ինքնագիտակցութիւնն ունենալու ենք թէ առաջադրած ենք ուղիղ ճամբուն մէջ մասնի :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Տղայ մը կ'ըբ ազատ կը սեպուի. — Ի՞նչ պիտի ըլլային մարդիկ երբ ընկերութիւններ չըլլային. — Ինչո՞ւ հաւատ արդար չըլլալու եմ. — Ի՞նչ օտրորութիւն կայ արդարասէր, պատուաւոր տղուն եւ անարդար, չար տղուն միջեւ. — Կեանքի մէջ ո՞ր նամբան ընտրելու եմ :

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Ա. ՄԱՍԻՆ ՅԱՏՈՒԿ

ՈՍԿՈՐԻ ԿՏՈՐԸ

Թիկնաթոռին մէջ ընկողմանած՝ հայրս քանի մը վայրկեանէ ի վեր կը քննէր ոսկորի այն պզտիկ կտորը, որուն մէկ ծայրը սուր էր, իսկ միւսը բոլորովին մաշած:

— Ահաւասի՛կ, ըսաւ, ակռան մարդու մը որ մամուրներու ժամանակ ապրած է, սառերու դարուն, քարայրի մէջ: Այս մարդը՝ վախն ու անօթութի՛ւնը կը ճանչնար լոկ: Անասունի կը նմանէր: Յօնքերը պոստած ատեն՝ ահարկու խորշումներ կը ձեւացունէին մկանունքը: Դէմքին վրայ, արտառոց կերպով դուրս ցցուած էր կզակը. բերնէն դուրս յառաջացած էին սկռաներն ալ:

«Այսպէ՛ս էր հին մարդկութիւնը: Բայց անզգալաբար, յամբ ու հրաշալի Զանքերով, մարդիկ նուազ թշուառ ըլլալով՝ սկսան նուա՛գ ալ վայրագ ըլլալ: Ակռաններ որոնք այլևս հու՛մ միս բըզըքտելու չէին ծառայեր՝ սկսան նուազ երկայն բուսնիլ նուազ խոշոր ծնօտի մը ՚էջ: Մարդկային դէմքը գերագոյն գեղեցկութիւն մը ստացաւ և ժպիտը ծնաւ կնոջ շուրթերուն վրայ»:

Նոյն պահուն հայրս կամաց մը վեր բարձրացուց անձուներու մարդուն այդ ակռան և գոչեց.

— Ո՛րվ հին դարերու մարդ, որուն կոշտ ու վայրի մէկ մնացորդն ունի՛մ հիմայ ձեռքիս մէջ, քու յիշատակդ խորապէս կը յուզէ իմ էութիւնս... Դուն թշուառական ապրեցար, բայց դուն ի գուր չապրեցար. և կեանքը գոր ա՛յնքան սոսկալի վիճակի մը մէջ ընդունեցիր՝ փոխանցեցիր քու զաւակներուդ, նուազ յոռի վիճակով մը: Անոնք աշխատեցան՝ իրենց կարգին՝ զայն լաւագոյն հանդիսացունելու: Երկանաքարը հնարեց մին, ուրիշ մը՝ անիւը: Հնարամիտ դարձան ամէնքն ալ. և դարերու ընթացքին՝ մարդոց յարատեւ Զանքերը հրաշալիքներ արտադրեցին, որոնք ներկայիս մէջ կը գեղեցկացունեն կեանքը:

Շարունակեց հայրս ու ըսաւ.

— Շա՛տ գեղեցիկ բաներ. սակայն գործը դեռ աւարտած չէ: Մենք անձաներու մարդերէն նուա՛գ վեհանձն եղած պիտի ըլ-

լայինք, եթէ մեր կարգին մենք ալ մերինէն աւելի ապահով և
լաւագոյն ընելու չաշխատէինք մեր զաւակներուն կեանքը: Ասոր
համար երկու գաղտնիք կայ, Սէր և Գիտութիւն: Ատոնցմով է որ
ամէն բան հնարաւոր է աշխարհի վրայ:

ԱՆԱԹՕԼ ՅՌԱՆՍ

Ե Ր Ա Ձ Մ Ը

Կ'երագէի, ու երկրագործն ինձ երեւցաւ ու ըսաւ.
«Շինէ՛ քու հացդ, հերկէ՛, ցանէ՛. ալ քեզի չեմ տար սընունդ»:
Եւ ջուլհակը ինձ ձայնեց. «Երբեք ա՛լ չեմ հիւսեր քեզ կըտաւ».
Որմնադիրն ալ ըսաւ նոյնպէս. «Ա՛լ չեմ կանգներ ես քու տունդ»:

Եւ միայնակ, լքուած յանկարծ մարդկութենէն բովանդակ՝
Որուն անլուր անէծքը զիս կը հալածէր ամէն տեղ,
Երբ գըթութիւն կը հայցէի՝ աչքս երկինքին անյատակ,
Տեսայ կանգնած ճամբուս վըրայ առիւծներու խուփք մ'ահեղ:

Բացի աչքերս, չը հաւտալով արշալոյսին նորաբաց.
Սանդուղներու վըրայ ելած՝ քաջ ընկերներ կ'երգէին.
Կը բզղային ամէն ջահրակ, և ամբողջ հողն էր ցանուած:

Եւ ըզգացի երջանկութիւնս, և թէ ինչպէ՛ս՝ ներկային,
Ո՛չ ոք կրնայ ըսել երբեք թէ պէտք չունի ուրիշի,
Եւ այդ օրէն ի վեր է որ մարդերն ամէն սիրեցի:

Հայացուց վ. ԹէՔէեԱն ՍԻՒԼԼԻ ԲՈՒՒՏՕՍ
1911

Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ձ Օ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Է

Երբ ծառ մը միայնակ է՝ հովերէն կը ծածուի և իր տերեւ-
ները կը թափին. իր ոստերը փոխանակ բարձրանալու՝ վար կը
ծռին, իբր թէ հողը փնտռէին:

Երբ տունկ մը առանձին է, պատասպարան մը չգտնելով արեւ-
ուտն կիզիչ ճառագայթներուն դէմ՝ կը սոճուենի, կը չորնայ ու
կը չքանայ:

Երբ մարդ անոք է, զօրութեան հովը գետին կը ծռէ զինք
և աշխարհիս մեծերուն ընչաքաղցութեան եռանդը կը ծծէ անոր
մտուցիչ հիւթը:

Մի՛ ըլլաք ուրեմն մենաւոր ծառին ու տունկին պէս, այլ
միացէ՛ք, կռթընեցէ՛ք և ապաւէն եղէ՛ք իրարու փոխադարձաբար:

Երբ միացած չէք, անձնիւր ոք ինքզի՛նք կը խորհի միայն.
տառապանք, դժբախտութիւն ու հալածանք կրնաք սպասել այն
ատեն:

Ճնճողուկէն աւելի տկար մը և ծիծեռնակէն աւելի անզէն մը
կա՞յ միթէ. սակայն երբ գիշատիչ թռչունն երեւի, ծիծեռնակներն
ու ճնճողուկները կը յաջողին զայն վռնտել՝ անոր շուրջը հաւաք-
ուելով և բոլորը միասին զպն հալածելով: Օրինա՛կ առէք ճընճ-
ողուկէն ու ծիծեռնակէն: Վա՛խը կը հետեւի անոր որ իր եղբայր-
ներէն զատուած է:

Ուրեմն եթէ մէկը ձեզ հարցունէ թէ ո՞րչափ էք, պատասխա-
նեցէք «մէկ ենք», որովհետեւ մեր եղբայրները մենք ըսել ենք,
և մենք՝ մեր եղբայրները:

Ատուած ո՛չ չգտիկ ստեղծեց, ո՛չ մեծ, ո՛չ տէր, ո՛չ գերի,
ո՛չ թագաւոր, ո՛չ հպատակ: Բոլոր մարդիկ հաւասար ստեղծեց:
Բայց մարդոց մէջ ոմանք աւելի ոյժ, կամ միտք և կամ կամք
կ'ունենան և անո՛նք են որ միւսները կ'ուզեն իրենց հպատակե-
ցունել, երբ հպարտութիւնը կամ ընչաքաղցութիւնը խեղդէ իրենց
մէջ՝ իրենց եղբայրներուն համար ունեցած սէրը: Ստեղծողը գիտէր
թէ այսպէս պիտի ըլլար. ու ատոր համա՛ր էր որ հրամայեց մարդոց
սիրել զիրար, որպէս զի միանան և տկարները չիյնան զօրաւոր-
ներուն ճնշումին ներքեւ:

Վասն զի մէկ հոգիէ աւելի զօրաւոր եղողը նուա՛զ զօրաւոր
կ'ըլլայ՝ երբ դէմը կան երկու հոգի, և երկու հոգիէ աւելի զօ-
րաւորը նուազ զօրաւոր կ'ըլլայ՝ երբ դէմը կան երեք հոգի: Եւ
այսպէս տկարները չեն վախնար, երբ զիրար սիրելով՝ ճշմարտա-
պէս միանան իրարու:

Մ Ա Ր Դ Կ Ո Ւ Թ Ե Ա Ն Բ Ա Ր Ե Ր Ա Ր Ն Ե Ր Ը

1. ԲԱՍԹԻՅՈՒ. Առաջին անգամ միքրոպներու գոյութիւնը հաստատեց և յաջողեցաւ Կատաղութեան դարմանը գտնել:



2. ՍԷՆ ՎԷՆՍԱՆ ՏԸ ԲՕԼ. Է՛ն առաջ ինք արթնցուց բարեգործութեան և գթութեան զգացումը, հիմնելով «ընկեցիկ տղոց ապաստանարան»ներ:

3. ԲԱՌՄԱՆԹԻԷ. Աղքատ դասակարգին հայթայթեց առողջ և աժամ ուտելիք մը, Գետնախնձորը, զայն Ամբրիկայէն Եւրոպա ներմուծելով:

4. ՃԷՆՆԸՐ. Իրեն կը պարտինք Պատուաստը, որ արդի բժշկութեան մեծագոյն գիւտերուն չուկէտը եղած է:

5. ԿԻԻԹԷՆՊԷՐԿ. Տպագրութեան գիւտն ընելով՝ նպաստեց ժողովուրդներու կրթութեանն ու բարորութեանը:

ԷՏԻՍԸՆ, ԱՄՕՆԹՕՆ, ՇԱԲ, 6. ԱՆԲԷՒ. Իրե՛նց է որ կը պարտինք հեռաձայն, հեռագիր, հեռաւորութեան ջնջում, — այս հրաշալի դիւրութիւնները հաղորդակցութեան:

ԱՔՔՈՒՄ. Առաջին անգամ կազմ լուսաւորութեան գործածեց:

7. ՏԸՆԻ ԲԱԲԷՆ, 8. ՍԹԷՖԷՆՍԸՆ, ՖՈՒԷՏԷՌԻՔ ՍՕՎԱԺ. Հնարեցին Շոգին, Վայրաշարժն ու Պտուտակը:

9. ԼԻՍԹԷՒ. Ապանեխական դարմանումը հնարելով, վիրաբուժութեան չաստուածը նկատուեցաւ:

10. ՏԸ ԼԷԲԷ ԱԲԲԱՆ. Խուլ-համրերու նախախնամութիւնը եղաւ, նշաններու լեզուն հաստատելով անոնց համար:

11. ՎԱՎԱՆԹԷՆ ՀԱԻԻՑ. Կոյրերուն նախախնամութիւնը եղաւ, յղանալով ցցուած տառերը:

ՄԱՅԵՕ. Զերմին յաղթեց «սիւլֆատ տը քինին»ի գործածութիւնը գտնելով:

12. ՏՔԹ. ՌՈՒ. Կեղծմաշկին շիճուկը գտաւ և միլիոնաւոր մանուկներու կեանքը ստոյգ մահէ մը փրկեց:

ՊԻՉԸՐ ՍԹՕՈՒ. «Եղբայր Թոմասի տնակը» հռչակաւոր վէպը հրատարակելով՝ սիրտերը յուզեց, որով պատճառ եղաւ Ամերիկայի մէջ սեւամորթ գերիներ ծախելու տմարդի սովորութեան ջնջումին: — Եւ դեռ անհամար գիտուններ և իմաստասէրներ՝ այլևայլ ժամանակներու մէջ:

“ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅԵԸ”

ՈՍԿԻ ԱՊԱՐԱՆ ԶԱՆԸ

Խուճը մը արհեստաւորներ կը ճամբորդէին: Իրիկուան դէժ կը հասնին «Ոսկի Ապարանջան» անունով պանդոկ մը ուր օթեւանիլ կ'որոշեն: Պանդոկին մտտե՛նալնուն՝ տարօրինակ աճապարանքի մը անձնատուր կ'ըլլան, իրարմէ առաջ անցնելու համար. սակայն դուռը նեղ ըլլալուն՝ անկարելի կ'ըլլայ խմբովին ներս մտնել անկէ:

Պանդոկապետը լսելով անոնց ոտքերուն ձայնը, պատուհանէն դուրս կը նայի և ժպտուն դէմքով բարեւելով զանոնք կ'ըսէ.

«Եթէ ձենէ իւրաքանչիւրը կարող չէ առային ըլլալ, այն ատեն թող մին միւսին հետեւի արհեստներու կարեւորութեան կարգով»: Այս սրամիտ, բայց իրար ձգող առաջարկին վրայ՝ ամէն մէկը կ'ուզէր առաջին ըլլալ. և այս պատճառաւ վէճ մը ծագեցաւ մէջերնին:

Կօշկակարն ըսաւ. «Եթէ ես չըլլայի, դուք ո՞րտեղէն ոտքի աման կ'ունենայիք տեղէ տեղ ճամբորդելու և ոտքերնիդ պաշտպանելու ձիւնին ու բուքին դէմ»:

—Կաշի կ'անցունէինք ոտքերնուս, գոչեց խաղախորդը:

—Ձէ, մորթ, մէջ ինկաւ մնագործը:

Երեք արհեստաւորներն ընդհատեց անդիէն հացագործը յոխորտալով. «Եթէ ես ամէն օր հաց պատրաստելու չըլլամ, բոլորդ ալ կը չորնաք ձեր կօշիկներուն մէջ»:

—Իսկ եթէ ես ալիւր չաղամ, աւելցուց ջաղացպանը քմծիծաղով, ծամեւիքնիդ յարդ պիտի ըլլայ. այնպէս չէ՞:

Իօսելու կարգը երկաթագործինն էր: «Եթէ ես ալ խոփ և ուրիշ գործիքներ չշինեմ սալիս վրայ, դուն ալ հո՞ղ պիտի աղաս ջաղացքիդ մէջ, քանի որ երկրագործն ինձի՛ կը պարտի իր դաշտին աշխատութիւնները: Առաջնութեան իրաւունքը պէտք է ինձի՛ տաք բոլորնիդ ալ»:

—Բարեկամներ, լսուեցաւ ձայն մը յանկարծ, որովհազի՛րը պէտք է առաջ անցնի. որովհետեւ եթէ սա շէնքը կառուցած չըլլայի ես, դուք հոս ինչպէս իջեւանելու տեղ պիտի գտնէիք:

—Կը ներես, եղբայր պատուական, աւելցուց դարբինը, պիտի կրնայի՞ր արդեօք սրկէ ներս մտնել, եթէ բանալին շինած չըլլայի»: Այս խօսքին վրայ բոլորը մէկ խնդացին ըսելով. «Կարծես թէ առանց փականքի դուռ չկայ եղեր»:

Այսպէս, երբ ամէն ոք ինքզինք գովելու և իր արհեստը գերադաս համարելու ձիգ կ'ընէր, նիհար ու կարճահասակ դերձակ մը ներս սարդեցաւ պանդոկէն ու սկսաւ պարծենալ իր արհեստին անզուգականութեանը վրայ, ընկերներուն տրտունջին պատճառ ըլլալով:

Բարեբախտաբար պանդոկապետը վրայ հասնելով դոկն հանեց զայն և հանդիսաւոր շեշտ մը դնելով իր ձայնին մէջ՝ ըսաւ. «Հանդարտեցէք, եղբայրներ. ե՛ս գործեցի սխալը: Օ՛հ, դուռը ծխնիէն հանեցէք միասին, ու բոլորդ ալ կրնաք ներս գալ, քանի որ ամէն մէկերնիդ իր դաստակին անցուցած ունի մէյ մէկ «ոսկի ապարանջան» գոր ո՛չ ոք կարող է հանել կամ գողնալ: «Առա-

ջին»ի կամ «վերջին»ի խնդիր պէտք է՝ որ գոյութիւն ունենայ մէջերնիդ, քանի որ դո՛ւք էք եղած ազգերու յառաջդիմութեան զօրաւոր ազդակը, դո՛ւք էք եղած հասարակութիւններու փառքն ու պարծանքը, վերջապէս դո՛ւք էք եղած մարդերու կեանքին նիւթական բարօրութիւն և անդորրութիւն ընծայողները: Զէ՞ մի որ ամէն արհեստ ոսկի ապարանջան մըն է»:

Թարգմանաբար

Գ. Մ.

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Գետնի քառակուսի մղոն մը պէտք է՝ հայթայթելու համար մկկ վայրենիի մը ուտելիքը, մինչդեռ հողի միեւնոյն տարածու-
թիւնը բաւական է քաղաքակիրթ երկիրի մը հազար բնակիչներու ուտելիքին:



Արհեստին գէշը չըլլար, մարդուն գէշը կ'ըլլայ: (Առած):



Ճշմարիտը խորհիւ, գեղեցիկը զգալ և բարին կամենալ. ասոնց միջոցա՛ւ է որ միտքը կը ճանչնայ գիտակից կեանքին նպա-
տակը:



Դնչպէս որ միանալը զօրանալ է, այնպէս ալ բաժնուիլը՝ քայ-
քայուիլ, ուժասպառիլ է մարդկային ընկերութեան համար:



Ծնած ենք ապրելու և գործելու համար միասին: Մարդկային
ընկերութիւնը կամար մըն է իրարու միացած քարերու, որ պիտի
փլէ՛ր՝ եթէ մին միւսը չբռնէր:



Ուսմունքը կը խոնարհեցունէ մեծ մարդերը, կը զարմացունէ
հասարակ մահկանացուները, կը հպարտացունէ պզտիկ մարդերը:



Ճշմարիտ ազատութիւնը կը կայանայ ո՛չ մէկ կիրքի հնազան-
դելուն մէջ:



Մարդկային բոլոր առաքինութիւններէն գերագոյնն է Արդարութիւնը:



Գիտութիւնները փականքի կը նմանին՝ որոնց բանալին է ռատումը:



Իր անձին համար միսոյն աղէկ ըլլալը բանի՛ մըն ալ օգտակար ըլլալ ըսել չէ:



Բռնադատեցէ՛ք մարդիկ աշխատութեան. և պարկեշտ ու պատուաւոր պիտի ընէք զանոնք:



Պզտիկ հարուածները մեծ կաղնիները կը տապալեն:



Կեանքը յարատեւ դաստիարակութիւն մը պէտք է ըլլայ:



Եթէ մենք զմեզ չողոքորթենք, ուրիշներուն շողոքորթութիւնները չեն կարող մեզ վնասել:



Մշակուած կը կոչուի այն միտքը, որուն մէջ սերմանուած է ուրիշներուն միտքը:



Ինքզինք ամբողջովին իր գործին նուիրողը սքանչելիք մը կ'ըլլայ՝ եթէ հանճար ունի. իսկ եթէ չունի՝ յամառ աշխատութեամբ մը կը բարձրանայ միջակութենէ վեր:



«Այն բան ինձի համար, ոչինչ ուրիշին համար». այս է ահա անձնասէրին օրինագիրքը:



Օրէնքը շինուած է՝ չարերը վախցունելու և բարիները պաշտպանելու համար:



Լաւագոյն գիրքեր կարգալու եռանդը՝ ջերմաչափն է ուսանողի մը բարոյական զգացումին:



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵՐ ԿՈՐՈՎԸ . ԶԱՅՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՆՔ

1. ՄԱՐՄԵԱԿԱՆ ԿՈՐՈՎ

Առանց կորույի՝ ոչնչութիւն է մարդ. — Ի՞նչ կ'ընէ կորովէ զուրկ տղայ մը. քիչ մը երբ անօթենայ կամ երբ մէկ տեղը ցաւի՝ անմիջապէս կուլայ. ամէն բանէ շուտ մը կը յոգնի. դինք ո՛ր կողմ մղեա՛ այն կողմ կ'երթայ: Եռանդ չունի աշխատած ատեն. զօրաւոր փափաք մը չզգար լաւ գործ մը կատարելու. ձեռքէն գո՛րծ ալ չի գար: Ապագային, այդ տղան անճարակ մէկը պիտի ըլլայ ապահովաբար: Գործի մը ձեռնարկելէ առաջ՝ արդէն յուսահատութենէ պաշարուած՝ ապիկար թուլամորթ մըն է:

Մաքուր արիւն. — Մեր ուղեղն է որ կը կազմէ մեր կորովը: Բայց որպէս դի ուղեղը կարենայ լաւ կորով արտադրել, հարկ անհրաժեշտ է որ մաքուր և հարուստ արիւնով մը սնանի: Ամէն դարու մէջ և ամէն մարդերէ ընդունուած բացարձակ ճշմարտութիւն մը պիտի մնայ սա շատ սովորական առածը. «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ»:

Լաւ արիւն մը ունենալու համար՝ պէտք է որ լաւ սնունդ առնենք: Եւ «լաւ սնունդ» ըսելով՝ պէտք է հասկընալ պարզ, առողջարար սնունդ մը: Տանտիկիմներ կան որոնք իրենց պատրաստած կերակուրին մէջ ան-

փութութեամբ կամ տգիտութեամբ առատ համեմ կը դնեն, կամ, շատ խորովելով միսը կը մեռցունեն, որով դժուարամարս կը դարձունեն զայն՝ սննդական տարրերէ զուրկ: Կան ալ որ ծուլութենէ մղուած՝ կ'ուղեն աղանդերներով ժամանակ անցունել. ինչ որ թէ՛ սուղ կ'ըլլայ և թէ՛ սննդարար չըլլար: Այդ կարգի կիներ կատարեալ յանցաւորներ են, որովհետեւ իրենց ամուսիններուն և զաւակաց տկարանալուն պատճառ կ'ըլլան: Տկարացած ամուսինը գինիին կը դիմէ ինքզինք կազդուրելու մտածումով: Ու գիտենք թէ ըմպելիքի դիմող մը կորսուած մըն է: Ալքոլը կը փճացունէ զինք. մանաւանդ ընտանիքին յատկացեալ դրամն ալ կը փճանայ՝ ծախսուելով գինետուներու մէջ: Ընտանիք մը ինկած է այն ատեն թշուառութեան դիրկը: — Մտունդի առողջապահութեան քիչ շատ տեղեակ տանտիկին մը չափաւոր ամսականով մըն ալ կրնայ օգտակար բաներ կերցունել իր աշխատող ամուսինին և անոր մէջ անեղծ պահել կորովը:

Շատակերուքեան վնասները. — Ամէնքս ալ գիտենք թէ երբ չափէն աւելի ուտենք՝ անհանգիստ կ'ըլլանք. կը թուրնանք և անկարող կ'զգանք ինքզինքնիս՝ բան մը ընելու: Շատ ուտելը կը մնասէ նաև ստամոքսին: Գազաններէ տարբերութիւն չունին այն մարդիկ որոնք պայթելու աստիճան լցցունել կ'ուղեն իրենց ստամոքսը:

Տղոց յուր սովորութիւններէն մին է չաքար, պըտուղ և այլն ճաշակել գլխաւոր ճաշերէ դուրս: Այսպէս անժամանակ կերպով ստացուած ամէն սնունդ պէտք է թոյն նկատել, քանի որ օգուտ մը չունի՝ մնասէ դատ. ստամոքսը կը յոգնի, կը խանգարուի, և վերջիվերջոյ կը տկարանայ: Մայրեր մեծ ուշադրութիւն ընելու են որ-

պէս զի զաւակներնին հանդիպած ժամանակ բան չուտեն , մանաւանդ ձեռքերնին անցած ստակը չյատկացունեն , շաքարի , մրգեղէնի և հաստեաներու : Մանկութենէն ատանկ բաներու իր դրամը վասնող տղան երբոր մեծնայ՝ չուայ մը կը դառնայ ամէն բանէ առաջ :

Քուռի, օղի եւ մարմնամարզի կարեւորութիւնը . — Օրուան մէջ երբ աշխատինք , մեր մարմինը կը մաշի և արիւննիս կ'աղտոտի : Ազէկ մը քնանալով է որ կը մաքրուի մեր արիւնը , մարմիննիս ատակ դառնալով կրկին աշխատելու : Շատ քնանայն ալ սակայն մարմինը կը ծանրացունէ և կը նուազեցունէ կամք ու կորով : Անհրաժեշտ է նաև մաքուր օդ . առանց անոր՝ կարելի չէ ապրիլ . մաքուր օդէ զուրկ ապրողներն իրենց առողջութեան հետ կը կորսնցունեն իրենց կորովը . դանդաղ , թանձրամարմին կ'ըլլան և ենթակայ՝ ամէն տեսակ հիւանդութեանց : Որչափ հնար է , մեր տան պատուհանները բաց պահելու ենք , թող տալով որ արև և մաքուր օդ առասօրէն ներս մտնեն . նոյն իսկ ցուրտ օդերուն՝ գոնէ քանի մը վայրկեան բանանք դուռ ու պատուհան՝ օդաւորելու համար մեր սենեակները :

Ո՞վ չէ զգացած ապականուած օդի մը գարշանքը , դուրսի մաքուր օդէն յանկարծ մտնելուն՝ բազմութեամբ խճողուած և սիկառի մուխերով լեցուն սենեակէ մը ներս , կամ դպրոցական սրահ մը ուր բազմաթիւ տղաք կ'ուսանին : Սոյս տանք ուրեմն բոլոր աղտոտ օդով տեղերէ , գինետուններէ , սրճարաններէ՝ որոնց մէջի մըթնոլորտը թունաւորուած է :

Բաց օդի եղած մարզանքները շատ օգտակար են : Մարմինին թէ՛ ճկունութիւն , դիւրաշարժութիւն կուտան , թէ՛ պատճառ կ'ըլլան թոքերուն առատ , մաքուր

օդ շնչելուն , որով արիւնը կը մաքրուի , կը նորոգուի , մարմինը կը զօրանայ և ուղեղն ուժովնալով՝ կարող կ'ըլլայ կորով հայթայթելու : Տուներու մէջ փակուած , առանց մաքուր օդի և մարմնական շարժումի մինչև իրիկուն նստուկ կեանք վարողները յաճախ անարիւն կ'ըլլան և թանձրամարմին : Տունի գործերով զբաղող կիներ իրենց մարմինը շարժումի մէջ դրած ըլլալով՝ նպաստած կ'ըլլան իրենց առողջութեան :

Մարմինին մաքրութեան հակաս պէտքը .— Մեր մարմինն մորթը ծակ ծակ է : Օդին թթուածինը ներս կը մտնէ այդ ծակերէն և մորթին մօտէն անցնող արիւնը կը մաքրէ : Եթէ այդ ծակերը փոշիով , աղտեղութեամբ , քրտինքով , իւզոտ նիւթերով դոցուին , արիւնն առանց օդի մնալով չմաքրուիր : Այն ատեն շնչառութեամբ արիւնը մաքրելու պաշտօնը թոքերուն վրայ կը մնայ միայն , և անոնք շատ կը յոգնին . ուստի խնամք տանելու ենք մեր մարմինին մաքրութեանը : Բաղնիքներ շատ մեր երկիրին մէջ չարաթն անգամ մը գտնէ երթալու է հոն , որպէս զի տաք ջուրն ու օճառը մեր մորթին վրայի կեղտը լաւ մը հանեն և ծակերը բանան : Ասկէ զատ , պէտք է որ տունն ալ ամէն օր կարելին ընենք ամբողջ մարմինով լուացուելու :

Մասնաւոր ուշադրութիւն ընելու ենք մեր աչքերուն , լուալով զանոնք եռացած դաղջ ջուրով , (քանի որ պաղ ջուրը վնաս է) . յետոյ մեր ականջներուն և ունեզերուն ուր ամէն տեսակ հիւանդութեանց միքրոպներ կը վխտան . նա մանաւանդ մեր ձեռքերուն , որովհետեւ անոնցմով է որ կը դալինք ամէն բանի , յետոյ— գէշ ունակութեամբ մը—զանոնք կը տանինք մեր աչքին , քիթին ու բերնին :— Զգուելի բան է տեսնել աղ-

տոտ , սեւցած եղունգներով սղաք : Այդ տեսակ եղունգները վտանգաւոր ալ են , քանի որ միքրոպի բոյներ են ապահով . մեր մարմնին վրայ պզտիկ սկրդուքի մը կը նային , որպէս զի օգին մէջի և մեր աղտոտ մորթին վրայի միլիոնաւոր միքրոպները ներս մտնեն անկէ և ապականեն արիւննիս : Եթէ անմիջական խնամք չտարուի , ծանր շիւանդութիւններ հրաւիրած կ'ըլլանք մեր անձին վրայ :

Օճառ և մաքուր ջուր . ասո՛նք են միակ դարմանը՝ կռուելու համար սոսկալի միքրոպներուն դէմ : Մաքուր ըլլալը սովորութի՛ւն մը ընենք , և թող աղտոտ եղած ըլլալու գաղափա՛րն իսկ նոզկանք ազդէ մեզ :

Փոշիին եւ աղտոց ցուրիս վնասները . — Տղաք երբեմն անտեղի կերպով փոշի կը հանեն սենեակին մէջ , նաև կիներ ուրիշներու քով իրենց փոշոտ հագուստները ևն . կը թօթվեն : Այդ վարմունքով պարզապէս չարիք մը գործած կ'ըլլան ուրիշներուն , որովհետեւ կերպ կերպ հիւանդութեանց միքրոպներ տուած կ'ըլլան անոնց , քանի որ միքրոպին բո՛յնն է փոշին : — Ուշադիր ըլլալու ենք նաև խմուելիք ջուրին : Անմաքուր ջուրեր արիւնը կը թունաւորեն : Բնաւ խմելու չէ աղտոտ տեղերու մօտէն անցնող ջուրերը :

Մեր սխալ ընթրնումը՝ դեղերու մասին . — Կը կարծենք որ բժիշկի մը դեղերը կրնան զմեզ բոլորովին բուժել : Եթէ մենք տարիներէ ի վեր որկրամոլութեամբ , կամ կերակուրներ արագ արագ , առանց կանոնաւորապէս ծամելու՝ կուլ տալով փճացուցած ենք ստամոքսնիս , ի՛նչպէս կ'ուզենք որ մէկ երկու դեղահատ կլելով կամ քանի մը դգալ բուսաջուր խմելով աղէկնանք : Նաև

նստուկ կեանք անցունող մէկը, պաշտօնեայ մը, փոխանակ իր պարապոյ ժամերը բացօդեայ պտոյտներու յատկացունելու՝ երթայ աղտոտ մթնոլորտով սրճարան մը նստի, ինչպէս կրնայ գեղով բուժել իր վաստրկած ջղայնութիւնը: Հիւանդ եղած ատեննիս անգամ, դեղէ աւելի կարեւորութիւն տալու ենք հանգիստի, մաքուր օդի, լաւ սնունդի, լոյսի, նաև ջանալու ենք կորովով կուռիլ մեր ցաւերուն գէմ և յաղթել անոնց:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՛ր է կորովին կեդրոնը. — Ինչո՞ւ համար մեր արիւնը մաքուր ըլլաու է. — Ի՞նչ օգտակարութիւն ունին ֆունը, մարգանքն, օդը, ջուրն ու օճառը. — Մորթի մաքրութիւնն ի՞նչ բանի կը ծառայէ. — Փոշին և աղօտ ջուրը վնասակա՞ր են. — Ի՞նչ կրնայ ըլլայ դեղերուն օգտակարութիւնը:

2. Մ Ի Տ Ք Ի Կ Ո Ր Ո Վ

Տգե՛ս մարդուն վիճակը. — Ազատ չնկատուիր այն մարդը որ տգէտ է և գերի՝ նախապաշարումներու և աւանգութեանց: Նոր տեսած մէկ բանին վրայ ապշելու կամ նոյնութեամբ զայն ընդունելու հակամէտ է: Չգիտեր՝ ինչ որ պէտք էր գիտնալ. գաղափար չունի թէ իմաստուն, գիտուն մարդիկ ինչեր խորհած են և ինչ գործեր տեսած: Ինչ որ աւելի տխուր է, անտեղեակ է մանաւանդ առողջապահութեան նոյն իսկ ասորրական սկզբունքներու մասին: Կարծելով թէ օգտակար բան մըն է ըրածը, զաւկին կը խմցունէ ոգելից ըմպելիներ իբրև կազդուրիչ, գինի, գարեջուր և այլն: Այնպիսին իր իրաւունքներուն ալ գիտակցութիւնը չունի, և իբր քաղաքացի՝ իր ձայնը չէ կարող լսելի ընել տալ:

Այսու հանդերձ , սակայն , մարդ ազատ համարուելու համար իր ուսեալ ըլլալը միայն չբաւեր , այլ պէտք է իրականութիւնը ճիշդ տեսնէ , մարդերը լաւ ճանչնայ ու ըստ այնմ վարուիլ գիտնայ :

Երկու խոշոր քերութիւններ կան արգելք եղող մեզ՝ որ իրականութիւնը ճիշդ տեսնենք և մարդերը լաւ ճանչնանք : Ատոնցմէ մին է նոր բաներ իմանալու մեր անպարանքը , միւսն ալ՝ կանխակալութեամբ , այսինքն ճախողակի առած մեր տեղեկութեանց իսկոյն հաւատ ընծայելնիս : Նոր բաներ լսելու արտորանքն ունեցողներ յուզուած վիճակ մը ունին միշտ . հետաքրքիր են , ականջնին կը լարեն երբ տարօրինակ դէպքեր կը պատմուին . գիտցած-չգիտցած բաներու նկատմամբ կարծիք կը յայտնեն , հիմնական բան մը չեն գիտեր և սաստիկ շատախօս կ'ըլլան : Իրարանցումը կը սիրեն , կ'երթան կու գան . դիւրին ալ կը խաբուին շողոքորթիչ խօսքերէ :

Ամէն բանի մէջ , որոշում տալու կամ գործ մը կատարելու մասին յախուռն չարժող մարդիկ օր մըն ալ կը հանդիպին՝ դժուարութեանց՝ զորս չէին նախատեսած : Ուստի ամէն ատեն հանդարտութեամբ խորհելու ենք , միշտ նկատի առնելով «վերջ»ը : Տղայ մը երբ ժամանակին սթափ միտքով չպատրաստէ իր դասերը , վերջին պահուն միայն զանոնք խորհելով , բնական է որ ալէկ չսորվիր և դժգոհ կը ձգէ իր դասատուն : Անպարանքով աշխատող գործաւոր մը պէտք եղած ուշադրութիւնը չնուիրելուն իր գործին՝ չյաջողիր , ու իր շինածին ալ չեն հաւնիր :

Միւս թերութիւնն ալ՝ կանխակալութիւնը՝ շատ վնասակար է : Տեսակ մը յիմարութիւն է ատիկա , որով մենք ամէն բան իր իսկական վիճակովը չենք տեսներ ,

և յամառած կը մնանք մեր մէկ սխալ ըմբռնումին վրայ : Մայր մը իր զաւակին պակասութիւնը չտեսներ , հպարտն ալ՝ իրենը : Իսկ նախանձոտներ ուրիշներուն պակասութիւնները միայն կը տեսնեն :— Կանխակալ մարդիկ կրօնամոլներ ալ են . կը կարծեն թէ իրենց կրօնքին չպատկանող մէկը պատուաւոր չկրնար ըլլալ . և դեռ այս կարգի շատ մը թիւր մտածումներ ու դատաստաններ կ'ունենան :

Երբ ամփոփ միտքով խորհինք թէ ինչո՞ւ այս կերպ յիմար թերութիւններ գործեցինք , պիտի տեսնենք այն ատեն թէ մեր մէջ հակամիտութիւն կայ եղեր նախանձի, բարկութեան , ծուլութեան , եւն . : Նեղսրտութեան վայրկեանի մը մէջ՝ բնական է որ իրականութիւնը գէշ կը տեսնենք : Ուրեմն մտադրենք գործել կամ խօսիլ՝ առանց արտորանքի , լաւ մը խորհելէ վերջ , որպէս զի ետքէն չզղջանք :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Տգեհ մտդիկ ինչո՞ւ ազատ չես .— Ո՞րն է ճշմարիտ ազատութիւնը . Որո՞նք են այն երկու բերութիւնները՝ որոնցմով կը կուրմանք իրականութեան առջեւ .— Ի՞նչպէս ես կենալու եւ ազատը :

3. Կ Ա Մ Ք Ի Կ Ո Ր Ո Վ

Կամփր .— Մեզ հաճելի եղած բաները կատարելու մէջ կամքի նշան չկայ . իսկ երբ բան մը կայ՝ մեր աչքին տհաճ կամ դժուար , զայն կատարելով կամք մը ցոյց տուած կ'ըլլանք : Լեղի դեզ մը խմելուն կամ մեզ անհաճոյ անձի մը հետ քաղաքավարութեամբ տեսնուելուն մէջ տեսակ մը ոյժ կայ , քանի որ լեղի դեզ մը խմելը

չնամանիր օչարակ խմելուն , ոչ ալ մեզ անհաճոյ երեւցող անձի մը հետ տեսնուիլը՝ համակրելի անձի մը հետ տեսակցութեան : Կամքի տէր ըլլալու համար վարժութեան պէտք ունինք , որ սկիզբները դժուար է թէեւ , բայց հեազհետէ ճիգ ընելով կրնանք անոր տիրանալ :

Տղայ մը գիր գրել սկսելուն՝ դժուարութիւնը կը կրէ իրար բերելու գիծեր և գիրերը կազմելու . բայց յետոյ մեծնալով ա՛յնքան վարժութիւն կ'ստանայ որ ա՛լ չիտրհիր իսկ անոնց վրայ ու նոյն իսկ աչքը գոց կրնայ գրել : Բարի սովորութիւններ երբ իւրացունենք , աւելի կարող և աւելի ազատ մարդ եղած կ'ըլլանք : Ծուլութիւն , պարծենկոտութիւն ու բարկութիւն չեն զօրեր յաղթել մեր կամքին , քանի որ զօրացուցած ենք զայն ու անոր ոյժով՝ սովորութիւն ըրած ենք այդ կիրքերէն հեռու մնալու :

Ուժեղ կամքի տէր ըլլալու համար պէտք է որ բանականութիւննիս վարէ մեր գէշ կիրքերը : Այն ատեն է որ փոխանակ անոնցմէ յաղթուելու՝ մենք կը նուաճենք զանոնք : Չնայինք մեզ հաճելի երեւցող բաներուն և ի հարկին մերժենք զանոնք . այն բանը սիրենք որ թէեւ հաճոյ չթուիր մեզ , բայց օգտակար է ու բարի : Կամքի տէր ըլլալու գաղտնիքը հո՛ր կը կայանայ ահա :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ է կամքը.—Ե՞րբ կ'ըլլանք ազատ.—Կամքի օտ ըլլալու համար ի՞նչ ընելու եմք :

4. ԿՈՐՈՎԻ ԿԱՄՔԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ

Համբերութիւն, եթէ կ'ուզենք մտոյ ըլլալ.— Անանկներ կան որոնք քիչ մը աշխատելէ վերջ համբերութիւննին կը կորսնցունեն , կ'սկսին գանգատիլ թէ շատ աշխա-

տեցան և թէ միօրինակ է իրենց աշխատութիւնը: Կեանքերնուս մէջ ամէն բան մեր ուզածին պէս չէ. նեղութիւններ, հակառակութիւններ չեն պակսիր: Տղաք օրինակ առնելու են իրենց մայրերէն որոնք անտրտունջ կը խնամեն ամէն օր պզտիկներնին և անձանձրոյթ կը հոգան անոնց պէտքերը:

Պէտք չէ շփոթել համբերութիւնը համակերպութեան, այսինք ամէն բանի կուրօրէն գլուխ ծռելուն հետ: Առաքինութիւն մըն է համբերութիւնը. բայց շատ անգամ ծուլութիւնն ու թուլութիւնը խաբող երեւոյթն ունին համբերութեան: Ամէնուն գործիք եղող, ամէնուն կամքին հնազանդող տղան՝ զուրկ կը սեպուի արիութենէ և նկարագիրէ: Մարդիկ շատ անգամ բռնաւորներ կ'ըլլան, որովհետեւ համբերութեամբ վատօրէն իրենց հնազանդողներ կը գտնուին:

Անարդարութեան դէմ բողոքելու ենք մեր բոլոր ոյժով. անարդար մէկու մը մեղսակից ըլլալնիս վատութիւն է պարզապէս: Աշակերտներ, գործաւորներ ներելու չեն որ կոպտութեամբ վարուին մեծերնին իրենց հետ. մինչեւ անգամ ծառան պէտք չէ հանդուրժէ որ իր տիկինը կամ էֆէնտին հետը կոպտութեամբ վարուի՝ երբ յանցաւոր չէ ինք:

Յարսեւուրքիւնն ու իր հրաշխները. — Նպատակի մը հասնելու համար անհրաժեշտ է յարատեւութիւնը: Քմահաճ տղան կ'սկսի գիրք մը կարդալ, բայց քիչ յետոյ պատուհանէն դուրս կը նայի, եղբայրներուն, քոյրերուն հետ կ'իյնայ, քիչ մը կատուն կը սիրէ, վերջապէս բան մը չկրնար ընել. մինչդեռ կամքի կորով ունեցող տղան չզբաղիր ուրիշ բանով՝ երբ միտքը դրած է գիրքը կարդալ, և ընթերցումը աւարտելուն միայն կ'զբօսնու:

Կամք մը ա՛յն ատեն զօրաւոր է, երբ յարատեւ է : Յարատեւութիւնը հրաշքնե՛ր կը գործէ : Զուրը կը մաշեցունէ ապառաժներն անգամ, և քար քարի վրայ դրուելով է որ կը կառուցուին հոյակապ շէնքեր : Տասնոցը տասնոցին վրայ դնելով, ամէն օր բան մը ինայելով է որ կ'ունենանք պահեստի գումար մը՝ ծերութեան ատեն թշուառութենէ փրկուելու համար : — Յարատեւութեամբ, չարունակաբար կատարուած ջանքերով տղայ մը արի կ'ըլլայ :

Արիութեան անհրաժեշտութիւնը . — Տղայ մը երբ արի է, առանց գանգատելու կը սոկայ յոգնութեան, ցուրտի, ծարաւի : Իսկ անարի տղան վատ մըն է . պըզտիկ դժուարութենէ մը կը յուսահատի . ձմեռը չլուացուիր, որովհետեւ պաղէն կը վախնայ . չնչին աղմուկէ մը կը սոսկայ : — Քանի որ կեանքը լեցուն է դժուարութիւններով, անակնկալ դէպքերով ու վտանգներով, խորհելու ենք նախապէս թէ ի՞նչ ընելու ենք երբ անբաւարար պատահարի մը առջեւ գտնուինք : Օրինակի համար, երբ հրդեհ մը պատահի, արիութեամբ մեր պաղարիւնութիւնը պահելու ենք և կան-կարասիներէ առաջ՝ փախչելու անկարող մանուկի մը կամ ծերունիի մը փրկութիւնը խորհելու ենք : Կամ, ընտանիքի անդամ մը երբ յանկարծ հիւանդանայ, ինքզինքնիս փոխանակ կորսնցունելու յուսահատական լացերով՝ դարմանին վրայ միայն կեդրոնացունելու ենք ուշադրութիւննիս :

Երես երեսի քացատութիւն պահանջելը կարեւոր է երբ չարախօսութիւն մը կայ մէջտեղ : Եթէ մէկը զրուցէ ինձ թէ ընկերներէս այսինչը չարախօսած է իմ մասիս, ամէնէն պատուաւոր միջոցն է՝ ուղղակի անոր դիմել և

իրազեկ ըլլալ խնդիրին : Կը գտնուին յաճախ չար ընկեր-
ներ որոնք հաճոյք կ'զգան երբ երկու տղայ իրարու հետ
գժտուին , և այս բանին համար խօսք կը խառնեն դիտ-
մամբ : Երբ բացատրութիւնը դէմ յանդիման կատարուի ,
չատ անգամ թիւրիմացութիւններ կը վերնան , հակա-
ռակութիւնն ալ միասին :

Նախաձեռնութիւն . — Շատեր երբ գործ մը կատա-
րել ուզեն , չեն գիտեր ո՛ւրկէ սկսիլ և ի՛նչպէս սկսիլ :
Կ'ուզեն որ անպատճառ ուրիշ մը զիրենք վարէ և ցոյց
տայ թէ առաջ ո՞ր բանը պիտի ընեն և որը՞ ետքը : Նա-
խաձեռնութեան պակասէն շատե՛ր կան նեղուող : Ինչպէս
իրենց աշխատութեան , նոյնպէս իրենց զբօսանքին մէջ՝
նախաձեռնութենէ զուրկ տղաք ուրախութեամբ ու ե-
ռանդով չեն կազմակերպեր իրենց խազերը . կը թողուն
որ ուրիշներ կարգադրեն ամէն բան , մինչ իրենք կը
մնան թոյլ ու առանց ջիղի : Այդ կարգի տղաք ապա-
գային կ'ըլլան գէշ գործաւորներ , դանդաղ պաշտօնեա-
ներ , անպէտ արարածներ , մարդամեքենանե՛ր պարզա-
պէս : — Ամէն մարդ ձեռնտու կը գտնուի ա՛յն անձին
որ գիտէ ինքզինքին օգնել . իսկ ժամավաճառութիւն է
թիկունք ըլլալ մէկու մը որ ջանք չընէր անձին օգտա-
կար գործ մը տեսնելու :

Անկախութիւն . — Կարգապահութիւնն ալ կամք ունե-
նալուն մէկ ուրիշ նշանն է : Երբ ամէն ինչ իր տեղը
դնենք , ժամանակ չենք կորսնցուններ վերջէն փնտռելու :
Ո՞ր աստիճան ծիծաղելի կ'երեւի մեր աչքին այն տղան՝
երբ աճապարելու ստիպուած ըլլալով ո՛չ գիրքերը կը
գտնէ , ո՛չ գլխարկը , ո՛չ վրանոցը . կ'սկսի այն ատեն աս
ու ան զրպարտել , ըսելով թէ առեր պահեր են իր բա-

ները: Բաց աստի, անկանոն տղան անձնասէր ալ է, քանի որ իր սեպհական առարկաները ասդին անդին ձգելով՝ պատճառ կ'ըլլայ որ իր մայրը կամ ուրիշներ զանոնք փնտռեն, ժողվեն ու կարգի դնեն: — Ի՞նչ հանգստութիւն է տղու մը համար, երբ նախապէս կարգադրած կ'ըլլայ գասագիրք, տետրակ, մատիտ ու քանակ, և առաւօտուն ուղած վայրկեանին՝ պատրաստ կը գտնէ զանոնք:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Մեր կեանքին մէջ ի՞նչ դեր կը կատարէ համբերութիւնը. — Ինչքան կարող է ընել յարստութիւնը. — Ի՞նչ է արիւթեակ զուրկ տղուն վիճակը. — Ի՞նչ ընկաւ եւեթ, երբ ուրիշներ չարախօսած են մեր վրայոյ. — Նախամտնութիւն ըսելով ի՞նչ կը հասկընաք. — Որո՞նք են կարգապահութեան օգուտները:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Բ. ՄԱՍԻՆ ՅԱՏՈՒԿ

Գ Ի Ն Ի Ն ՈՒ ԶՈՒՐԸ

Երկու գաւաթ մէ՛կ սեղանի վրայ դրուած կ'սպասէին: Մէկուն մէջ գինի լեցուած էր, միւսին մէջ ջուր: Կարմիր գաւաթը խօսք առաւ ու ըսաւ դիմացինին:

— Ո՛րչափ անիրաւ վարուած է ընտելանը քեզ հանդէպ: Ո՛չ իմ աղւոր գոյնս ունիս, ո՛չ այն հեշտահամ ճաշակս և կազդուրիչ զօրութիւնս որոնք սիրելի կ'ընեն զիս ամբողջ աշխարհի մէջ: Նախամարդիկ անգամ հասու եղան իմ յատկութիւններուս և բազիններ կանգնեցին ինձ՝ զիս աստուածացունելով: Հետեւեցայ քաղաքակրթութեան: Փիւնիկեցիներ տարին զիս Միջերկրականի ասիերուն վրայ և անոր շատ մը կղզիները: Արշակեղազոսի կղզիներ և Իտալիոյ արգաւանդ երկիրներ արագ արագ ծածկուեցան այն զմայլելի տունկով որ զիս կ'արտադրէ, և կեղտացիք գա-

ցին տիրել Բօի երկու փերուն՝ զա՛յն ստանալու համար: Իտա-
լիայէն անցայ Տրանսա, յետոյ ուրիշ երկիրներ, նոյն խակ Ամերիկա
և Ովկիանիա: Բայց եթէ կ'ուզես գիտնալ բո՛ւն իմ ծննդավայրս,
ստորոտն ամպաճեմ Մասիսի, և Ակոռիի աւերակ այգեստաններուն
մէջ տակաւին պիտի գտնես սերունդն այն որթերուն՝ զորս նոյ
տնկեց երբ դուրս ելաւ Տապանէն: Այսօր, ինչպէս անցեալին մէջ,
մասնակից եմ ամէն ուրախութեանց և խնջոյքներու, և շատ բան
կը պակսի հոն ուրկէ ես բացակայ եմ: Պալատին մէջ կը զուար-
թացունեմ հարուստը, խրճիթին մէջ կը մխիթարեմ աղքատը:
Բանաստեղծը զիս աշխարհալուր կը հուշակէ երգելով իմ գո-
վեստներս, և իմ դիւթիչ բաժակէ՛ս է որ կ'ստանայ իր գեղե-
ցիկ ներշնչումները: Յոգնած գործաւորը, ուժասպառ հիւանդը,
նիհար մանկիկն ու դողդոջուն ծերունին ինձմո՛վ կ'ունենան զօ-
րութիւն, քաջութիւն և առուգութիւն: Վերջապէս իմ վաճա-
ռականութեամբս է որ հազարաւոր գործաւորներ իրենց օրա-
պահիկը կը հայթայթեն՝ և ես եմ որ վաճառականը փարթամու-
թեան կը հասցունեմ:»:

Բիւրեղ գաւաթին մէջ իր արծաթի փայլունութեամբ նպասող
խոնարհ ջուրը պատասխանեց.

— Իրա՛ւ է թէ քեզի պէս մինչեւ աստուածացում չեմ բարձ-
րացած, բայց գոնէ երիցագոյն եմ քենէ: Իմ շնորհիւս էր որ կըր-
ցաւ ծլիւ և ուռճանալ այն որթատունկն ուրկէ գոյութիւն առիր
դուն: Ասկէ զատ, քեզ ընծայուած պատիւներ ուրիշ բանի չծա-
ռայեցին բայց եթէ գազանային կիրքեր արթնցունելու քու եր-
կըրպագուներուդ մէջ: Ի՛նչ շուայտ տօներ, քանի՛ քանի՛ ոճիր-
ներ գործուեցան ու կը գործուին դեռ քեզմով: Մեր օրերուն
մէջ, բանտերը լեցուն են զքեզ անընդհատ վայելող ոճրագործ-
ներով: Եթէ ընդհանրանալդ քեզ պարծանք կը համարես, զայն
ի՛նձ կը պարտիս դարձեալ, որովհետեւ Ջո՛ւրն էր որ փոխադրեց
զքեզ տեղէ տեղ: Աեմ ուրանար թէ երբեմն ուրախութեան
պատճառ ես, սակայն յաճախ ի՛նչ դառնութիւններով, ամօթով
և թշուառութեամբ կը համակես ընտանիքներ որոնց այսինչ ան-
դամը—պատուաւոր դեռ առանց քեզի—նուաստացաւ, անբանա-
ցաւ և անպատուութեան ու փճացումի մատնուեցաւ այն ցփով
զոր դուն ունիս քու մէջդ: Գու ամէն մէկ կաթիլդ արցունքներ
արժած է ընտանիքի մայրերու: Գիտե՞ս ի՛նչ պատճառաւ կու լան
անոնք. որովհետեւ անոնց զակիկն ձեռքը դաշոյն մը դրիր զոր

կարմրեցուց անիկա անմեղի մը արիւնով, և արդարութիւնը չուշացաւ զինք կախադան բարձրացնելու: Կ'ըսեն թէ ուժեր կը նորոգես և առողջութիւն կը դարմանես: Ա՛լ այս դարուն մէջ հաւատացող չկայ այդ առասպելին: Ոյժ և առողջութիւն քեզ կը պարտին իրենց խանգարումն ու վատթարացումը: Ընդհակառակն ես առաջին և անհրաժեշտ պէտքն եմ մարդուն, անասուններուն և բոյսերուն՝ իմ անշուք գոյնիս մէջ: Առանց ինծի աշխարհ անպատ մը պիտի դառնար, մարդկութիւնն ալ հացահատիկէ զուրկ՝ պիտի փճանար: Ես զովացունող և անվնաս ըմպելի, չունիմ բնաւ տխրառէթ յատկութիւնը՝ բանականութիւններ խանգարելու և մարդը չարիքի մղելու: Քեզմէ ծնունդ առնող ատելութիւններ կը մաքրեմ իսկոյն՝ ինձ յատուկ այն զօրութեամբ զոր տունկերն ինձ կը հողորդեն, գործելով անհամար բժշկութիւններ: Մարդկային մարմինն ինձ կը պարտի իր կորովն ու քաջակազմութիւնը. չէ՞ մի որ զայն կեղտերէ մաքրելով, կը զօրացունեմ դնդեր ու մկանտէք, որով կ'աւելցունեմ կորովը մարդուն: Աւելին կայ. իրարու կը մօտեցունեմ ազգերը՝ վրայէս քալող նաւերով, մանաւանդ կը ծառայեմ ճարտարարուեստին: Կաթսայի մը կողին մէջ շոգիացած՝ կը դարձունեմ վիթխարի մեքենաներ և երկաթ ժապաւէնի մը վրայ ետեւէ՛ս կը քաշեմ կը տանիմ կառաշարն ամբողջ: Ես, հզօր տարր քաղաքակրթութեան և զօրութեան, ընդհանուրին մէջ կը սփռեմ գործունէութիւն, շարժում և կեանք»:

Թարգմանաբար

Մ. ԱՍԲԱՆԱԶ

Ս Ա Ր Դ Ն Ո Ւ Շ Ե Ր Ա Մ Ը

Սարդը շերամին կ'ըսէր հեզնօրէն.

— «Ի՞նչ դանդաղաշարժ ես դու, Աստուած իմ,
 Եւ որքա՞ն օրեր քեզ հարկաւոր եմ
 Որ գործ մ'արտադրես: Նայէ՛, չը պարծիմ,
 Փոքրիկ պահ մ'ինձ բաւ է՝ նուրբ անհամար
 Թելերով ոստայն հիւսելու համար»:





ՈՎԳԻԱՆՈՍԻՆ ՓԱՐՈՍԸ


որ անա կը հեզնէ կոհակներուն կասաղորբունն՝ իր ամուր կառուցուածնով, եւ գիշերուան մուսլին՝ իր զագաքին յորդ յոյսով, — փրկարար առաջնորդ հանդիսանալով ուղեկորոյս ևաւորդներու: Եղած են մարդեր որ այս փարոսին պէս աշարակուած կեցած են Տգիտութեան ովկիանոսին մէջ՝ իրենց նկարագիրին տկունութեամբ եւ իրենց խելով:

Ներամը յարեց.— «Լա՛ւ, սահայն
 Դիմացկուն չէ քու ոտայն,
 Ո՛չ աւ որ և է բանի
 Օգտակար կամ պիտանի:
 Քիչ կ'արտադրեմ ես, իրա՛ւ,
 Բայց արտադրածս է միշտ լաւ»:

Հայացուց ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

1911 Ապրիլ 18ին, Ատլանտեան ովկիանոսին կղզիներէն մէկուն մէջ հաստատուած փարոսի մը պահապանը, երբ առտուն կանուխ ելած՝ լապտերին կազմածները կը մաքրէր, անհանգստութիւն մը զգաց յանկարծ, ու ստիպուեցաւ գործը կիսկատար ձգելու: Յորեկին՝ հիւանդութիւնը սաստկացաւ հետզհետէ ու մարդը՝ չը կրցաւ իր լապտերին մեքենան շիտկել: Իրիկուան դէմ հոգեվարքի մէջ ինկաւ: Արտասուաթոր աչքերով՝ իր կինը կեցած էր սնարին քով, ու տղաքը կը հեծկլտային շարունակ: Յանկարծ գաղափար մը հէք կնոջ միտքը գրաւեց. գաղափար մը պարզ, վսեմ, ինչպէս ազնիւ սիրտերը միայն կրնան յղանալ: Ո՞վ պիտի վառէր փարոսին լապտերը: Իսկոյն հեռացաւ մեռելական սենեակէն



և շտապով ելլելով մինչեւ աշտարակին գագաթը, լամբարը վառեց: Յետոյ ապահով ըլլալով որ ծովի ճամբորդներ փարոսին հուրքը պիտի տեսնէին ըստ սովորութեան և պիտի կրնային ճամբանին գտնել, դարձաւ իր ամուսինին քով՝ ճի՛շդ այն պահուն ուր հոգին կ'աւանդէր անիկա: Ու մեռելական հսկումը սկսաւ:

Յանկարծ տղու մը ձայնը լռութիւնը խզեց. «Մայրիկ, փարոսը չգառնար կոր»: Վշտահար մայրը կորովի յեղակարծ զար-

թում մը ունեցաւ Եթէ փարոսը չըսուանար, ծովուն վրայ երթե-
լեկող նաւագներ անշարժ լոյս մը պիտի կարծէին զայն,— քանի որ
սովորաբար անոր դառնալը գիտէին,— և խաբուելով՝ ճամբանին
պիտի կորսնցունէին ու վտանգի պիտի մատնուէին փոթորկալից
գիշերուան մէջ, մորիկին սպառնալիքին տակ:

Վերստին դուրս ելաւ սենեակէն ուր ամուսինը մահուան
քունը կը նիրհէր, ու զնաց միջոց մը գտնել՝ շարժումի մէջ դնե-
լու ազատարար լապտերը, բայց ի զո՛ւր: Առտուն հիւանդանալով՝
պահապանը ժամանակ չէր ունեցած պէտք եղած կերպով լամ-
բարին մեքենան լարելու, ոչ ալ հրահանդ մը տալու իր կնոջ:
Ի՞նչ ընելու էր հիմայ:

Վեր կանչեց իր երկու մեծ տղաքը, — տարէցը տասերկու
տարու չկար, Եւ հոն, մութ ու նեղ խուցին մէջ, միս մինակ, գի-
շերուան ժամը Գէն մինչեւ առտուան 7, երկու անչափահաս եղ-
բայրներ քուներնին ծախած՝ իրենց փոքրիկ բազուկներուն բոլոր
ուժովը դարձուցին ու դարձուցին այն մեքենան որ լամբարը
շարժման մէջ կը դնէր: Եւ այս երկու քաջարի մանուկներուն
շնորհիւ գործը շարունակուեցաւ, ծովին բացերէն անցնող դար-
ձող նաւորդներն ալ կարող եղան առաջնորդուիլ փարոսին լու-
սացայտ ճաճանչներէն. մինչդեռ միւս երկու փոքրիկները մօրեր-
նուն հետ վերջին սպասարկութիւնը կը մատուցանէին բարի պաշ-
տօնեային՝ որ վարը յաւիտենական քունով մը կը ննջէր:


(Քաղուած Բ Ա Ր Ի Ջ Ե Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Է)

Կ Ա Մ Ք Ի Կ Ո Ր Ո Վ Ի Տ Է Ր Հ Ա Յ Մ Ը

1886 Դեկտեմբեր 15ին, Միացեալ Ընկերութեան քառասուն
վարժարաններուն ընդհանուր տեսուչ Մկրտիչ Սարըեան Ալաշկեր-
տի մէջ կը ձերբակալուի կառավարութեան կողմէ և շղթայակապ
կը փոխադրուի Կարին՝ ուր բաւական ատեն բանտարկուած մնալէ
վերջ, Չանդըբի կը զրկուի իբրեւ աքտորեալ:

Սարըեան այն հազուագիւտ անձերէն էր, որոնք իրենց ան-
հատականութեամբ և ստացած բարձր դաստիարակութեամբ պար-
ծանք կը համարուին Տաճկաստանի մտաւորականութեան մէջ: Կոյ-

ոերական Լիսէէն փայլուն կերպով վկայուելէն ետք՝ նուիրուած էր
կրթական գործին և իր հմտութեամբ ու բարեմիջն բնաւորու-



Միացեալ Ընկերութեան 40 վարժաւաններու երբեմնի Ընդհ.
Տեսուչ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԸԵԱՆ (մօրուսաւոր) եւ Փոխ-Տեսուչ
ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ, 1886ին լուսանկարուած:

Թեամբ սկսած էր բարիք մը դառնալ այն նոր սերունդին համար
որ հայաբնակ գաւառներու մէջ կ'աշակերտէր:

Զարմանալին հոն էր որ ինք ո՛չ մէկ հարցաքննութեան են-

Թարկուած էր՝ գիտնալու համար թէ ի՞նչ յանցանք վերագրուած էր իրեն: Անկարելի է երեւակայել վիճակն իր ընտանիքին, մանաւանդ իր հօր, որ, ամիսներու ընթացքին պաշտօնատուներ դեգերելէ յուսահատ՝ իսլամացած Շահապօղի կը դիմէր ի վերջոյ, զրպարտութեամբ աքսորուած իր զաւկին փրկութեանը համար: Շահապօղ երբեմնի կառավարութեան ազդեցիկ մարդն էր, որ խօսք առնելով տարաբախտ հօրմէն թէ իր որդին Պօլիս բերուելուն ամէն ինչ պիտի խոստովանի՝ հեռագրել կու տայ Չանդըրբի, ժամ առաջ անոր Պօլիս վերադարձը փութացունելու համար:

Ամէն բանի անտեղեակ աքսորականը ճշմարիտ մտատանջութեան մը մատնուած է արդէն, Չանդըրբիէ Պօլիս իր անակնկալ ճամբորդութեան ընթացքին, տեսնելով անստուգութիւնն իր կացութեան: Երջողի մէջ մասնաւոր յարկաբաժին մը կը յատկացուի իրեն, ուր կը մնայ քանի մը ամիս՝ ամէն հանգիստ և ճոխութիւն վայելելով սկիզբները, մինչեւ որ օր մըն ալ Համիտի կողմէ մէկը կը ներկայանայ իրեն և անուշ լեզուով կ'ուզէ խոստովանցունել զինք թէ իրա՞ւ էր որ Միացեալ Ընկերութեան գաղտնի նպատակն էր «դպրոցական» անունին տակ «յեղափոխական» հասցունել գաւառներու մէջ, օր մը Տէրութեան դէմ ելլելու դիտումով...:

Օսմանեան Բռնակալութիւնը տգիտութեամբ կուրացած, սյուպէս, Հայուն մտաւորական զարգացումը կ'ուզէր շփոթել անոր ըմբոստացումին հետ, կամ, մին միւսին հետեւանք կը նկատէր, մանաւանդ որ այս սև գաղափարը սաստկացունելու համար չէին պակասած լրտեսող քուռ ոգիներ:

Սարըեան քարացած կը մնայ այս տարօրինակ յայտարարութեան առջեւ և այդ պահո՛ւն միայն վերահասու կ'ըլլայ թէ ի՞նչ ամբաստանութեան տակ օր մը ձերբակալուած էր Ալաշկերտ և այնուհետեւ ամիսներ տառապած: Այն ատեն կոչ ընելով իր բովանդակ արիութեան, պերճախօսութեան և միտքի կորովին՝ կ'սկսի ամէն կասկած փարատել ջանալ «Միացեալ»ի անունին վրայէն, բայց անօգուտ: Համեզումնին անդրդուելի էր:

Յաջորդ օր, այդ ուղղամիտ անձը, Տէրութեան և իր ազգին պատիւ բերող այդ ազնիւ քաղաքացին որպէս զի յաջողին կաշառել, համազգեստ, սուր, պատուանշան, աշխարհիկ փառքի ամէն ցոյց և հրապոյր կը շուայլեն անոր, մինչ Սարըեան հետեւանքին անգէտ՝ ապշահար կը մնայ իր այս անակնկալ զգեստաւորումին առջեւ: Այն ատեն է որ կ'ըսեն իրեն, — զինք հսկայ

հայելիի մը դիմացը կեցուցած, — թէ Սուլթանը հաճած է իր կայսերական այս բարձր շնորհներուն արժանացունել և պաշտօնի կոչել զինք 3000 դրշ. ամսականով, բաւ էր որ միակ ստորագրութիւն մը դնէր այն թուղթին տակ զոր իրեն ներկայացուցեր էին նոյն պահուն:

Սուկո՛ւմ, Ֆրանսերէն և թուրքերէն կրկին պատճէններով ահռելի ամբաստանագիր մըն էր ատիկա ընդդէմ Միացեալի, որով ո՛վ գիտէ դեռ ո՛րքան հողիներ պիտի վառէին և ի՛նչ փորձանք ներ տեղային մշտաջարջար Հայութեան գլխուն:

Իր զարգացած, կատարեալ և անվեհեր մարդու պաղարիւնը պահելով, անիրաւ տեղը զրկանք ու տառապանք քաշող Հայ ուսուցիչը չուշանար հանել նետել սուր ու պատուանշան և ըսել. «Ազատ և կարո՛ղ էք ընելու զիս ի՛նչ որ կ'ուզէք. ես չե՛մ ստորագրեր, Արդարութեան դէմ չե՛մ կարող դաւաճանել...»

Անուշ լեզու և անուշ դէմք դադրած էին այլ եւս երեւելէ: Եւ վաղայաջորդ օրն իսկ, սուտին և կեղծիքին առջեւ չընկրկող, իր ազգին անունը չաղտոտելու համար փառք ու պատիւ արհամարհող այդ վեհագի հայորդին շղթայակապ շոգեմաւ կը դրուէր, Գիւրտ ոճրագործներու հետ անդարձ վտարուելու համար Պէն-կագիի խորերը:

Ա. Թ Ե Ո Դ Ի Կ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Երկրորդ բնութիւն մըն է սովորութիւնը:



Ամէն սկիզբ դժուարին է:



ձշուութիւնը բարեկիրթ մարդուն պարտքն է, և գործի մարդուն՝ օրէնքը:



Բոլոր լծակներէն զօրաւորագոյնն է կամքը:



Երբոր մեծ կարծուած մարդիկ առիթն ունենան կարօտներուն բարիք ընելու, քիչ անգամ սակայն կամքովնին է:



Առանց ազատ կամեցողութեան՝ առաքինութիւնը գոյութիւն չունի:



Կորովը բարոյական ոյժն է անհատին, և, հոգին արիութիւնը:



Լաւ առողջութեան տէր մէկը զուարթ, գոհ ու երջանիկ կը զգայ ինքզինք. դիւրութեամբ կը մտիթարուի և բանէ՛ մը չնեղանար. գորովոտ է, բարի բարեկամ, բարի հայր, բարիք գործող ու վեհանձն:



Մեծ վտանգներու պարագային է որ կ'երեւին մեծ արիութիւնները:



Այէն արի մարդ խոստումնապահ մարդ է:



Կանուխ պառկիլ-կանուխ ելլելը կը պարզեւէ մեզ առողջութիւն, հարստութիւն և իմաստութիւն:



Աւելի լաւ է խնամել առողջութիւնը, քան թէ հիւանդութիւնը:




Ով որ առողջութիւն չունի, բա՛ն մըն ալ չունի:



Անհամբեր մարդը կը նմանի առանց իւղի կանթեղի մը:



Հողն ամուլ է՝ առանց վարուցանի. միտքն ամուլ է՝ առանց խորհրդածութեան և ուշադրութեան:





ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵՐ ԱԶՈՏՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

1. ԱԼՔՈԼԸ

Այրոյամոյ ըրալու պատճառներ. — Երբեմն, շատ յոգնած գործաւոր մը, վիշտ կրող մարդ մը և ձանձրացողներ կը դիմեն ալքոլին ու անոր առթած թեթեւ գրգռութենէն հաճոյք մը կ'զգան: Այդ վայրկեանէ՛ն իսկ վտանգը սկսած է իրենց համար: Որպէս զի կրկին անձնատուր ըլլան նոյն հաճելի գրգռութեան, անոնք նորէ՛ն կը խմեն, այս անգամ քիչ մը աւելի, ուրիշ անգամ քիչ մըն ալ աւելի, մինչև որ դառնան գերի ալքոլին:

Ալքոյամոյները տկար կամքով մարդեր են, որովհետև եթէ զօրաւոր կամք ունենային, ժամանակին պիտի կրնային դէմ դնել իրենց խմելու կիրքին: Ալքոյամոյ մը տէրը չէ ինքզինքին. կը խմէ եթէ նոյն իսկ չուզէ խմել: Ճշմարիտ կորսուած մըն է:

Այրոյամոյութեան հետեւանիք. — Ալքոյամոյն ամէն օր իր ֆիզիքական կորույէն բան մը կը կորսնցունէ. տկար, վատառողջ կ'ըլլայ. հիւանդութեանց դէմ դնելու ոյժ չունենար. և ինչ որ աւելի տխուր ու սոսկալի է՝ իր արժանապատուութիւնն ալ վրայ կուտայ և երթալով կ'ըլլայ անբան մը: Ո՛չ ոք վստահութիւն կրնայ ունենալ իր վրայ: Ընտանիքին ու զաւակներուն յատկացեալ դրամը

գինեստուններու մէջ ծախսելով՝ տեղի կու տայ այդ խեղ-
 ճերուն թշուառութեան: Ալքոլին պատճառաւ է որ ըն-
 տանիքներու մէջ անպակաս են վէճեր, կռիւներ, նոյն
 իսկ ոճիր, յուսահատութիւն և չքաւորութիւն: Առանց
 ապրուստի, առանց խնայողութեան ըլլալուն, ալքոլա-
 մոլ մը երբ օր մըն ալ հիւանդանայ, կը զրկուի հիւան-



ԱԼՔՈՒ ԶԳՈՐԾԱԾՈՂ ՄԱՐԴ ՄԸ

ՆՈՅՆ ԱՆՁԸ՝ ԳԵՐԻ ԱԼՔՈՒԻՆ

Ժուժկալ ըլլանք: Պատկերին վրայ նայելուս՝ ակտի
 համոզուինք թէ է՛նչ աւեր կը գործէ Ալքոլը՝ մարդ-
 կային կազմին վրայ:

դանոց: Ցաւով կարելի է հաստատել թէ այսօր հիւան-
 դանոցներու մէջ գտնուող հիւժախտաւորներ մեծ մասամբ
 ալքոլամոլներ եղած են, ինչպէս նաև յիմարանոցներու
 մէջ գտնուող թշուառականներէն շատեր, առանց հո-
 շուելու տակաւին բանտերու խորը տառապող մեծ թիւով
 մարդասպաններ սրունք ալքոլամոլներ են և ալքոլի ալ-
 դեցութեան տակ գործած են սոսկալի ոճիրներ:

Ալքոլամոլութիւնն այն ահարկու թշնամին է մարդ-
 կութեան որուն դէմ կռուելու ենք մեր բոլոր ուժովը:
 Տղաք ուխտելու են բնաւ ալքոլ չդնել բերանին, եթէ
 չեն ուզեր ապագային ըլլալ անբան, հիւժախտաւոր, յի-
 մար կամ ոճրագործ:

Այնոյն դէմ աղջկանց ու կիներուն դերը. — Չարիքին դէմ պէտք է սկիզբէն կռուիլ : Քանի որ տկար կամքի տէր անձերն են որ կը յաղթուին ալքոլէն , դիտելու է թէ որո՞նք են կամքը սկարացունող պատճառները : Եթէ չափազանց աշխատող և վասուժող մէկն է արբեցութեան սկսողը , Չանանք որ լաւ սնունդ մը ստանայ անիկա , մաքուր օդ ծծէ , հանգիստ վայելէ և զօրանալով՝ խմելու այդ կիրքին յաղթէ : Եթէ ձանձրացող մը կամ զբօսասէր մըն է որ դիմել սկսած է ալքոլին , հայթայթենք անոր ընտանեկան մաքուր հաճոյքներ , ընթերցումներ ընկելով , ազնիւ մարդիկ տուն հրաւիրելով՝ ժամանակ անցունել տանք անոր : Մանաւանդ նեղսրտած ատենը զգուշանանք հետը վիճաբանելէ , հապա միշտ քաղցրութեամբ վարուելով ուշադիր ըլլանք որ չհեռանայ ընտանեկան յարկէն և չդիմէ գինեստուն : Անխոհեմութիւն է դիմովի մը հետ հակաճառելը կամ զայն նախատելը : Պէտք է դարման տանիլ միայն : Սթափելէն վերջն է որ կարելի է տրամաբանել հետը , փափկութեամբ ու ներողամտութեամբ համոզել զինք որ ծիծաղելի և արհամարհելի զինսով մը եղած է , ու կրկին կրկին թուել այն չարիքները բոլոր՝ որոնց կը դիմէ , եթէ շարունակէ այդ ընթացքը :

Ծիւնը. — Ինքզինքնիս թունաւորելու մէկ ուրիշ եղանակն է ծխելը , զինսովութեան չափ վնասակար : Ծխախոտն իբրև զբօսանք կը նկատեն տղաք , բայց քիչ ատենէն այդ զբօսանքը սովորութիւն ըլլալով իրենք ալ անոր գերին կը դառնան : Գիտենք թէ արբեցող մարգոց կեանքը կարճ կ'ըլլայ , կամ շատ շատ՝ տխուր ծերութիւն մը կ'ունենուն այդպիսիներ , դողդոջուն , յիշողութենէ զուրկ , թմրածի պէս : Նոյնը կը պատահի նաև

անո՞նց որ մոլին են սիկառին, մանաւանդ անո՞նց որ պզտիկուց անճնատուր եղած են ծխելու կործանարար հաճոյքին: Գինովին պէս՝ ծխող մը թէ՛ Ֆիզիքականէն կը տուժէ և թէ նիւթականէն:

Մարդուս ջղային դրուժիւնը հաւասարակչիւ վիճակի մը մէջ կը մնայ՝ երբ ինքզինք չթունաւորեր աշխարհիս երկու մեծագոյն թոյներով՝ որ կը կոչուին Ալքոլ և Ծը-խախտա:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Որո՞նք են այժոյանդուրեան առաջնորդող պատճառները. — Ի՞նչ է անոր հետեւակը. — Կիներ ու աղջիկներ ի՞նչ միջոցներով կրնան կրո-ուիչ անոր դեմ. — Ծխելն ալ չարի՞ք մըն է:

2. Բ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Բարկացողին վիճակը. — Բարկացողը կը դադրի կարծես մարդու նմանելէ: Բանականութիւնը կորուսած՝ յիմարի երեւոյթ մը կ'առնէ, կամ աւելի ճիշդ՝ դազանի մը որ կասողած ու փրփրած՝ կ'ուզէ խածնել զիմացինը: Այդ վիճակին հասած մէկը չխորհիր իր ըրածներուն հետեւանքին վրայ: Բարկութիւնն այնպիսի յիմարական նոպայ մըն է որուն ազդեցութեան տակ անյուր ոճիրներ իսկ կը գործուին աւանց ուզուելու: Իրաւ է թէ զղջումը կը յաջորդէ, բայց ափսոս որ շատ ուշ է: Ո՛րչափ պրզ-տիկներ բարկանալնուն իրարու քար կը նետեն, կը գլգ-աւըտին և մէկզմէկ կը վիրաւորեն:

Գէշ բնաւորութեան տէր մէկը կէս յիմար մը կը սեպուի, որովհետեւ չնչին բանի մը համար կը զայրա-նայ, կը պօռայ կը կանչէ անտեղի կեբպով. այսպէս՝

երբ կերակուրը քիչ մը տաք կամ քիչ մը պաղ է, երբ օդը շոգ է կամ անձրեւոտ, գոհ չէ վերջապէս ո՛չ մէկ բանէ :

Բարկութեան պատճառները. — Այս յուր սովորոյթը յաճախ սկարութենէ յառաջ կու գայ. հիւանդներ շատ նեղսիրտ կ'ըլլան : Նաև միս շատ ուսողներ և ալքոլ շատ գործածողներ ենթակայ են զրգռուելու, բարկանալու : Ուստի միակ դարմանն է չափազանց չյոգնիլ, առողջ սնունդ առնել, զօրանալ, մանաւանդ ըմպելիքներէ հրաժարիլ : Շատ անդամ ծնողքներն են որ իրենց տղոց զրգռուելուն պատճառ կ'ըլլան, որովհետեւ իրենք ալքոլ շատ գործածած ըլլալով՝ դաւակներնին ալ այդպէս զըրգռուած ուղեղով ծնած են :

Ինչպէս զսպեմք բարկութիւննիս. — Պէտք է միաքերնիս դնենք բնաւ չկորսնցունել մեր պաղարիւնը՝ նոյն իսկ բարկացողներու հետ. շատ չենք նեղուիլ այն ատեն : Երբ բնութեամբ ցասկոտ ենք, յաճախ անդրադառնանք այդ բանին և որոշենք տէրը մնալ մեր անձին, քանի որ բարկութիւնը պարզապէս յիմարութիւն է և մենք բնական է որ չենք ուզեր յիմար ըլլալ : Գոնէ քանի մը վայրկեանի համար մեր զայրոյթը հանդարտեցունելու միջոց մըն է նաև չխօսիլ նոյն պահուն : Բարկութիւնը տարափոխիկ է կարծես. ուստի զգուշանաք ասանկ բնոյթով տղոց հետ տեսնուելէ և խաղալէ. որովհետեւ կրնայ ըլլալ որ անոնք նախատեն կամ ծեծեն զմեզ ու մենք ալ բարկութեան մղուինք : — Երբ մարդիկ իրարու դէմ կ'ելեն, կը բզքտեն, կը չարչարեն ու կ'անպատուեն զիրար, զիտցէ՛ք որ բարկութեան արդիւնք են բոլորն ալ :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ կերպարանք կ'առնէ բարկացող մը. — Որո՞նք են բարկու-
թեան առիթ տուող ազդակները. — Միջոցն ի՞նչ է բարկութիւննիս
զսպելու:

3. ԶԱՐԱԿԱՄՈՒԹԻՒՆ, ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐԱԳՐԳՌՈՒԹԻՒՆ

Զարակամութիւնը. — Երբոր մեր մասին գէշ խօսին՝
կը նեղանանք, իբր թէ մենք ուրիշին մասին գէշ խօսած
չըլլանք՝ շատ անգամ նոյն իսկ անտեղի կերպով: Ասկէ
զատ, միթէ ամէն իմացուած խօսք ճի՛շդ է. միթէ զրոյց
մը յատկապէս չարափոխելով տարածայնողներ չկա՞ն:
Ստուգելու միակ միջոցն է երես երեսի գալ կնիթաղրեալ
չարախօսին հետ:

Կը բորբոքինք երբեմն ալ որ այսինչ անձը մեզ
տուած մէկ խօսքը չյարգեց, կամ յարգալից չլար-
ուեցաւ և կամ անհաճոյ արարք մը ունեցաւ մեզ հան-
դէպ: Այն ատեն խորհինք անգամ մը թէ մենք արդեօք
միշտ անթերի՞ եղած ենք, բնաւ չէ՞ պատահած որ զան-
ցառու գտնուինք կամ յիմարութիւն մը գործենք.
Ինչո՞ւ համար մեր ըրածը կը մոռնանք կամ աչքերնուս
չերեւիր, մինչ ուրիշներուն համար ա՛յնքան խտտապա-
հանջ կ'ըլլանք:

Յայտնի է որ մենք ամէնքս ալ կը տառապինք մեր
բնոյթին կատարեալ չըլլալէն: Զանանք կատարելագոր-
ծուիլ ուրեմն. համբերատար ըլլանք, անյիշաչար, վե-
հանձն. զգուշանանք մանաւանդ ուրիշներու մասին չա-
րախօսելէ:

Հպարտութիւնը կամֆի սխարտութիւն է. — Համեստ
չեղողը կը կարծէ թէ ամէն մարդ մեծ ուշադրութիւն

կ'ընծայէ իրենն, կը հաւնի իր անձին, ուստի երբ պատահի որ ծանօթ մը զինք անուշադիր կերպով բարեւէ կամ իր մասին պակասութեան մէջ գտնուի՝ կ'զգածուի իսկոյն և իր հպարտութիւնը վիրաւորուած տեսնելով կը զայրանայ: — Երբ մենք աշխատասէր ու պարտաճանաչ ենք, ի՞նչ կարեւորութիւն ունի մեզ համար այնինչին անտարբեր գտնուիլը, բաւ է որ մենք կը վայելենք մեր ծնողքին, դասատուներուն և ծանօթներուն սէրն ու համարումը: Զանանք միշտ աւելի՛ արժէք ունենալ: Ապագային թերեւս անո՛նք ալ կը հասկընան թէ մենք իրենց արհամարհանքէն աւելի՛ իրենց համակրանքին արժանի ենք:

Սրդողիլը տեսակ մը հիւանդութիւն է. սրդողող անձին ունեցածն է խուլ բարկութիւն մը՝ օրեր, ամիսներ տեւող, ան բանականութեան ձայնին մտիկ չընելով: Բռնութեամբ կարելի չէ զինք շահիլ, քազցրութեամբ վարուելու է հետը. սպասելու է որ տաղնապն անցնի. վե՛րջը միայն իրեն յիշեցունելու է թէ աղէկ բան մը չէր բրածը:

Դիւրագրգռութիւնն ալ ցաւալի տկարութիւն մըն է: Անձեր կան որոնք կ'առնուին խօսքէ մը կամ խնդուքէ մը որ իրենց հետ վերաբերութիւն չունի, ու կրակ կը կտրին: Ուրիշին կարծիքէն ազդուիլը գերի ըլլալ է պարզապէս: Յոյս տալու է այդ խեղճերուն, ըսելու է որ իրենք ծաղրելի չեն, թէ ուրիշներ զիրենք ցաւեցունելու դիտում չունին բնաւ՝ երբ իրենք որ և է կերպով առիթ տուած չեն այդ ծաղրին կամ վիրաւորանքին:

Առաջադրութիւն. — Դժբախտաբար մարդիկ շատ մը պատճառներով սուտ կը խօսին: Անանկներ ալ կան

որոնք իրենց ճիշդ թէ սխալ լսածն առանց լաւ մը քնն-
նելու՝ ուրիշներուն կը կրկնեն, որով իրենց զրուցածը
սուտ մը եղած կ'ըլլայ: Սոսեյէ առաջ աղէկ մը խորհինք
թէ լսածնիս իրա՞ւ է, չափազանցութիւն կամ սխալ
մեկնութիւններ չկա՞ն անոր մէջ: — Սուտ չխօսիլը մեծ
կարողութիւն մըն է. կարելի չէ վստահիլ այն մարդուն
որ կը ստէ, ըլլայ անիկա տղայ մը, ծառայ մը կամ ուրիշ
անձ մը: Ստողներ կան՝ կուրցած իրենց կիրքերէն, — սէ-
րէ, ատելութենէ, բարկութենէ, — և ճշմարտութիւնը
չեն կարող տեսնել: Վատերն ալ կը ստեն, ծոյլերը,
վախկոտները, վասն զի ճշմարտութիւնը խոստովանելու
քաջութիւնը կը պակսի իրենց: Դասը պատրաստած չե-
ղող աշակերտը սուտ պատմութիւն մը կը յօրինէ, որով
կ'ուզէ խաբել իր դասատուն, փոխանակ արիութեամբ
խոստովանելու անոր թէ ծոյլ գտնուած է:

Սուտը սնապարծներո՞ւն ալ յատուկ է. կ'ուզին
հարուստ երեւիլ անոնք, կամ, չունեցած մէկ յատկու-
թիւննին ցոյց տալ: Ի՞նչ ծիծաղելի գերութիւն հասարա-
կաց կարծիքին:

Զրպարտելու հանդամանք ունեցող սուտեր խօսիլը
վերջին ծայր անարկու բանն է: Նախանձոտ, ատելավառ
անձեր իրենց հակառակորդներուն աղէկ ըրածի՛ն անգամ
գէշ մեկնութիւններ կու տան և անոնց կը վերագրեն
սոսկալի սուտեր: — Բացառիկ պարագաներու մէջ միայն
սուտը ներելի է: Օրինակի համար՝ երբ ծանր հիւանդ մը
կայ որմէ ծածկել պէտք է սիրելիի մը մահ, կամ իր ըն-
տանիքին պատահած դժբախտութիւն մը և կամ որ և է
յուզումնալից դէպք, որոնք կրնան մահացու ըլլալ երբ
հիւանդին հաղորդուին:

Չարութիւնն ալ ծուլութեան նման՝ բացարձակապէս

գէշ բան մըն է : Բարկացոսներ , գոռոզներ և այլն աստիճան մը կարգի կու գան՝ եթէ լաւ ուղղուին . բայց դժուար բան է չար մը դարձի բերելը : Չարերը խիղճ , սիրտ ու գուլթ չունին և իրենց նմաններուն գէշ կը կամենան միշտ : Ամէն չար՝ առանց խտրութեան՝ վտանգաւոր է :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞ր կը կայանայ չարկամութիւնը . — Ի՞նչ ցեասկ մարդ է հարստը . — Աղէկ բան մըն է սրդողիլը . — Ե՞րբ դիւրագրգիռ կը լլան մարդիկ , եւ ե՞րբ ստախօս . — Սուսէն չարիք կրնա՞յ ծագիլ . — Ի՞նչ է չարութիւնը :

4. Դ Ր Ա Մ Ը . — Ի Ր Օ Գ Ո Ի Տ Ն Ե Ր Ն Ո Ի Վ Ն Ա Ս Ն Ե Ր Ը

Դրամին ոյժը . — Դրամը մեծ ոյժ մըն է . պէտք ունինք անոր՝ ապրելու և ապրեցունելու համար մերինները , մանաւանդ անո՞վ է որ կրնանք աշխատցունել ուրիշներ՝ մեզ համար : Օր մը կրնանք ծերանալ , կամ անկողին իյնալ և կամ աշխատելու անկարող զգալ ինքզինքնիս . այս բաները խորհելով շարժող մարդ մը վատարկած ստակը չվատներ նոյնութեամբ , անպատճառ բան մը կը դնէ մէկդի՝ նեղ օրի համար : Գործաւոր մը երբ կարող ըլլայ գրամ խնայել , կը նշանակէ թէ կամքի տէր մէկն է , որովհետեւ կրցած է ներկային ինչ ինչ հաճոյքներէն զրկուիլ՝ ապագան խորհելով : Տխուր է տեսնել հայրեր ու մայրեր որոնք իրենց դրամը կը ծախսեն ոչինչ , նոյն իսկ վտանգաւոր բաներու : Դրամ կը ծախսեն տղոց շաքար առնելու , մինչ այդ շաքարը կը խանգարէ անոնց ստամուքը : Դրամ կը ծախսեն ծխախոտի ,

ըմպելիքի, ցուցամոլութեան ու պերճանքի համար: Սուղ, անպէտ առարկաներով կը խճողեն իրենց բնակարանները, միքրոպի բոյներ ընելով զանոնք: — Իմաստուն մարդուն ամենամեծ պերճանքն է մաքուր օդ, լոյս, արեւ, առողջութիւն:

Ստակը չէ՛ որ մեզ կը պարգեւէ խորին հաճոյքները կեանքին, — ընտանեկան սէր, գուրգուրանք, առողջութիւն, ընութեան գեղեցկութեանց զգացում ու միտքի վայելքներ: Իստարկ միտքերն են ստակին մեծ յարգտուող, որովհետեւ անով կրնան գոհացունել իրենց սնապարծութիւնները, — գեղեցիկ հագուստներ, ճոխ բնակարան, հացկերոյթներ, և այլն:

Երջանիկ ըլլալու համար շատ դրամի պէտք չկայ: Ընտանիքին ապագան չապահովելով դրամ ծախսողները կատարեալ չարագործներ են. ի՞նչ պիտի ընեն վաղը՝ հիւանդութիւն մը պատահելուն: Խորհինք ատոր վրայ և Զանանք աւելորդ ծախքերէ հրաժարիլ:

Խնան բանւոր. — Բանւոր մը՝ փոխանակ խմելու, որով թէ առողջութիւն և թէ դրամ կորանցունելու, մէկդի դնէ վատնելիքը, թէ՛ առողջ կ'ըլլայ, թէ՛ երջանիկ և թէ մանաւանդ անկախ ու ազատ: Գինետունը մսխուած դրամը զաւակներուն սնունդին, կրթութեան ու ապագային յատկացուած դրամն էր: Երբ գործաւորին վաստակը գինեպաններուն դրպանը լեցուի և ծերութեան օրերը հասնին, անոր վիճակն է մուրացկանութիւն, թշուառութիւն: — Տղա՛ք, արգահատելով նայեցէք գինետուններու մէջ արբեցողներուն՝ որոնք կը փճացունեն ինքզինքնին ու իրենց ընտանիքը: Ինչպէս որ սարդն իր ցանցին մէջ կ'առնէ ճանճը, կը ծծէ ու նետէ զայն, նոյնպէս ալ գինեպանն իր ցանցին մէջ

կ'առնէ իր յաճախորդները, կը հարստանայ անոնց վաստակով և օր մըն ալ կը վռնատ դանոնք՝ քայքայուած, դատարկ ու անպէտ վիճակի մէջ :



ԽԱՂԻ ՍԵՂԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Մօնթէ-Գառլօ խաղամուլութեան համար տշխարհիս ամէնէն սոսկալի ժամադրավայրն է: Հո՛ն է որ ընտանիքներ կը փճանան մէկ ժամէն միւսը: Դիտել վերեւի պատկերին մէջ իւրաքանչիւրին դէմքին արտայայտութիւնը, երկիւղի, անձկութեան, վիշտի և ուրախութեան դառնագոյն փոփոխականութեամբ:

Կծծիկն յիւար մըն է. — Ապագայի մտածումէն ու վախէն թռնուած՝ անհաւասարակչիւ միտքի տէր մարդիկ երբեմն ամէն ինչ մէկդի դնելով ստակ ղիգելու հիւանդութենէն կը վարակուին: Ա՛լ տեսակ մը յիմարութիւն կը դառնայ ատիկա իրենց համար: Ազտոտ կը հագուին, գէշ կ'ուտեն, ինքզինքնին կը զրկին ամէն թանկէ, այդ զրկանքէն անմասն չհանելով նաև իրենց զաւակները:

Անդգամ են այլ ևս ամէն հեգնութեան ու դիտողութեան հանդէպ : — Ազահութիւնը զագրելի ախտ մըն է զոր ծնողքներ կանուխէն արմատախիլ ընելու են իրենց զաւակներուն սիրտէն :

Խաղամուրաքիւնը. — Ահաւասիկ ահռելի կիրք մըն ալ որ վիշտ, հոգ, կործանում ու աղէտ կը սփռէ ընտանիքներու մէջ : Կատարեալ ցաւ մը կ'զգայ մարդ երբ դիտէ խաղամուրներու կերպարանքը. մտատանջութենէ յուզուած՝ կորսնցունելու երկիւղն ունին անոնք, կամ, չահած ըլլալու վայրենի ուրախութիւնը : Ո՞վ չգիտեր թէ ինչ գրամներ կորսուած են խաղի սեղաններու վրայ : Խաղացող մը երբ անգամ մը բռնուած է այդ ախտէն, աչքին բա՛ն չերեւիր : Իժմախտաբար հազուադիւտ չեն այնպիսիներ որոնք ամէն թան կորսնցունելի վերջ, այլ ևս խեղայեղած՝ իրենց կռնակի հազուստն իսկ տուած են, մինչեւ անգամ իրենց կիանքին վերջ տուած :

Ճշմարիտ հանոյճները. — Ամէնէն տեւական ու խորին հաճոյքները հանդարտ հաճոյքներն են որոնք սուղ չեն արժեր մեզ : Ոմանք երջանկութիւնը բուռն գրգռուումներու հետ կը շփոթեն, ինչպէս խաղամուրութիւն, խամանութիւն, երեկոյթներու, խնջոյքներու յարում ելն : Հաճոյքներուն մեծագոյնն է նախ աշխատութիւնն, առանց որու՝ յուսահատական պիտի ըլլար մեր կեանքը : Յետոյ կու գան բնութեան պարզեւած հաճոյքները զորս վայելիլու շատ առիթ չունին քաղաք բնակողներ : Դաշտ, անտառ, ձոր, բլուր, բոլորն ալ անհուն քաղցրութիւններ ունին : Թռչուններուն երգը, ջուրերուն կարկաջն, օդին թեթեւութիւնն ու մաքրութիւնը թանկագին վայելքներ են որոնցմով գեղջուկ տղան երջանիկ ու ազատ կ'զգայ ինքզինք, քան թէ քաղաքի հարուստ տղան :

Ուսանելու ուրախութենէն զատ, կայ նաև սիրելու ուրախութիւնը: Ամենախոնարհ դասակարգէ մարդ մըն ալ կրնայ սիրել իր ծնողքը, քոյրերն ու եղբայրները, փոխադարձաբար սիրուելով անոնցմէ: Անձնասէր մարդերն են որ սիրել չեն գիտեր, չեն վայելեր սիրելու հրճուանքը. չունին բարեկամներ շուրջներին: Համեստ դիրքի տէր եղողներ, իրենց օրականը մէկտեղ շահողներ շատ աւելի սիրով և անձնուէր են իրարու հանդէպ՝ քան հարուստները. վասն զի դասակարգի խտրութիւն չկայ իրենց մէջ:

Երջանկութիւնը մեր մէջն է: Երջանկ ենք երբ գործունեայ ենք, աշխատասէր, վեհանձն, հանդարտ, մեր անձին խօսք հասկըցունող, և, սիրահար բնութեան: Ընդհակառակն երբ կարծրասիրտ ենք, կոպիտ, շատակեր և չն., ո՛րքան ալ աղէկ դիրքի մէջ ըլլանք՝ համաւկրութիւն չենք գտներ մեր շուրջ և ապերջանելի կ'զգանք ինքզինքնիս: >

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ի՞նչ է դրամը. — Ի՞նչ չարիքներ յառայ կու գան անկի, երբ գործածել չգիտեմք գայն. — Որո՞նք են իր բարիքները. — Խնամ գործաւորին վիճակն ո՞ր է կը հասնի. — Ի՞նչ տեսակ մարդ է կծծիկ. — Խաղամուտքիւնը մարդս ի՞նչ բանի կ'առաջնորդէ. — Որո՞նք են կեանքի նշխարիս հանոյքները:

5. ՏԻՐՈՒԹԻՒՆ, ԵՐԿԶՈՏՈՒԹԻՒՆ, ԾՈՒԼՈՒԹԻՒՆ, ՎԱՍ

Տիրութիւնը խիստ վտանգաւոր է մեր անձին. կը վնասէ մեր առողջութեան, քանի որ ախորժակ չենք ունենար ճաշելու և կը տկարանանք: Տիրադէմ անձ մը

ուրիշներուն, իր շուրջիններուն, իր զաւակներուն ալ երջանկութիւնը կը խափանէ: Ուրիշներն իրենց վիշտով գրադցունողներ կերպով մը անձնասէրներ են: Եթէ վիշտ մը ունինք, փորձենք վրան չխորհիլ միշտ, այլ անձնատուր ըլլանք աշխատութեան. անոր, ինչպէս և բարի, անկեղծ մարդոց սիրոյն մէջ գտնենք մեր մխիթարութիւնը: Տխրութիւնը տկարացունելով զմեզ՝ կը նուագեցունէ կորովեխ, ինչ որ շատ վտանգաւոր է:

Երկչոտքիւն եւ վախ. — Տկար մարդիկ միայն վախկոտ կ'ըլլան: Կարելի չէ վստահիլ վախկոտ սողու մը: Տղաքը մեղմութեամբ համոզելու է որ յաճախ իրենց վախու բան կարծածը պարզապէս ոչնչութիւն է: — Ոճրագործներէ տարբերութիւն չունին անոնք որ սատանայի, ուրուականի, «խարախոնճողոզ»ի եւն. պատմութիւններով ահաբեկելով սողոց միտքը՝ սկիզբէն վախնալու հակամէտ կը դարձունեն զանոնք: — Պզտիկներ ալ կան որ երկչոտ են: Երկչոտ մը իր բուն վիճակէն բոլորովին տարբեր մէկը կ'երեւի. գիտցածը չգիտնալու պէս կը ցուցունէ, սիրածը՝ չսիրած, ըրածն ալ չըրած: Սօսերու և դործելու համարձակութիւն չունենալուն՝ ձախաւեր ու անղգայ կը թուի ըլլալ. կարծես թէ կապուած է. չկրնար խօսակցութեան մը խառնուիլ. անկարող է ինքզինք ճանչցունել և սիրցունել. կը տառապի պարզապէս: Պէտք է որ կամքի ուժով մէկ կողմ դնէ իր ամչկոտութիւնը, յաղթէ անոր, հրաժարի խպլիկ ձեւերէ, կտրուկ և համարձակ ըլլայ, վայելուչ և լսելի ձայնով մը խօսի: — Անտեզի է ծաղրել այդպիսիները. խրախուսելու ենք զիրենք և ցոյց սալու իրենց՝ թէ կարող են և ճարպիկ: Զանանք վերջապէս երկչոտները վարժեցունել համարձակ ըլլալու:

Մուշուքիւնն ալ չարութեան պէս անտանելի կերպով գէշ և անբուժելի թերութիւն մըն է : Մոյլերն ալ երբեմն զօրաւոր ջանքեր կ'ընեն , բայց շատ կարճ տեւող : Արդէն այդպիսիներուն համար ամէնէն անհանդուրժելի բանն է ջանքի մը երկար տեւելը : Մոյլը կամքով տկար մըն է . առաջուց չխորհիր իր ընելիքին վրայ . վերջին պահուն միայն ակամայ իրար կ'անցնի և գործածն ալ թերի կ'ըլլայ : Եթէ գպրողական մըն է , դասն անկատար պատրաստելով՝ աղէկ թիւ չառներ . եթէ տանտիկին՝ կիսեփ բան մը մէջտեղ կը հանէ և գժգոհութիւն յառաջ կը բերէ ընտանիքին մէջ : — Անոնք որ մտածելու ծուլութիւնն ունին , բանի մը վրայ խորհիլը տանջանք կը նկատեն , և տարբերութիւն չունին մեքենաներէ . կ'ընեն ինչ որ իրենց հրամայուի . կը գործեն միօրինակ կերպով , կուրօրէն , բաւ է որ մտածում չպահանջուի իրենցմէ : — Մոյլեր ապագայի նախատեսութիւն չունենալով՝ վտանգաւոր են . նախանձոտ կ'ըլլան , չար , ստախօծ , ձանձրացող և ամէն բանէ դժգոհ : Ուրիշներու՝ աշխատութեամբ շահած յաջողութիւնները նախանձնիկ կը շարժեն . ու չարախօսութիւնը կ'սկսի : Ինչ որ ընեն՝ պակասաւոր է , որով դժգոհ կը ձգեն իրենց պետերը . պատահած ալ է որ վտանգներ յառաջ գան՝ իրենց ծուլութեան և թերի դործ կատարելուն ևրեսէն : Ասկէ զատ , ո՛րքան անձեր կան անպէտ , թափառաչրջիկ , գող , բանտարկեալ , լոկ ծուլութեան հետեւանքով :

Կը գտնուին անանկներ ալ որ առողջ չըլլալնուն համար ծոյլ են : Պէտք է դարմանել զանոնք , աղէկ անունդէ , մաքուր օդէ և արեւէ չղրկել : Ջանալու է որ աղոց մարտողութիւնը լաւ կատարուի , և երբ ֆիզիքական ոյժերնին ստանան , հետզհետէ վարժեցունելու է զանոնք բացօդեայ մարզանքներու և դիւրաստար աշխատութեանց :

Այսպէս քիչիկ քիչիկ զօրանալով, նոյն համեմատութեամբ ալ կ'ազգին աշխատութիւնը սիրել և փարիլ ա-
նոր :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ի՞նչ է ջիւուր մարդոց վիճակը.—Որո՞նք են փսիսին հետեւանքները.—
Ի՞նչ կ'ըրջան երկրոս, ամէկոս տղայ.—Ի՞նչ է ծուրաքիւնը.— Ի՞նչ ա-
պագայ կ'սպասէ ծոյրերուն:

ԸՆՔԵՐՑՈՒՄՆԵՐ Գ. ՄԱՍԻՆ ՅԱՏՈՒԿ

Գ Ի Ն Ո՛Վ

Երկու հաս չկար Թումիկին նման: Օղին խոշոր գաւաթով կը
կլէր, ջուր խմելու պէս: Գինեպանները կը սիրէին զայն, իրենց
լաւազոյն յաճախորդն ըլլալով: գինեմոնները կը յարգէին զայն՝
իբրեւ իրենց անվիճելի պետը. սովորական մարդիկ կը վախնային
անկէ՝ իբրեւ վտանգաւոր անձէ մը:

Բոլոր արհեստներուն գլուխ զարկած, ամէնուն մէջ ալ չյա-
րատեւած, դատարկապորտութեան որոշում տուած էր վերջապէս:
Անխոստովանելի միջոցներու դիմելով իր խմելիքին ստակը հանե-
լու համար, ամէն մոլութեանց մէջ թաթխուած, այդ մարդը մէկն
էր մարդկային կոյանոցներէն ուր ի զուր պիտի փնտուես ազնիւ
զգացման ճառագայթ մը:

Իր կինը սոսկմամբ տեղէն կը ցատկէր մեռելի դոյն առնելով,
երբ դրան առջեւ բարձրանար անոր ձայնը՝ զարհուրելի լու-
սանքներ թափթփելով: Զինք այդ մարդուն տուած էին ծնողքը,
յուսալով որ ամուսնութենէն վերջ ինքզինք վար դնէ և երջանիկ
ըլլայ զաւկին հետ: Բայց Թումիկ հարսնիքին շարքուն իսկ սկը-
սաւ ծեծել զայն: Եւ ա՛լ այնուհետեւ չարչարանքի կեանք մը
եղաւ խեղճ կնոջ կեանքը: Սարուկ մը, զո՛հ մը այդ հրէշին ձեռ-
քը: Առանց ձիկ մը հանելու կ'ընդունէր անոր նախատինքներն ու

ծեծը, կքած այդ մարդուն լուծին տակ և դարձած անասուն մը որ կը դողայ խարագանին վախէն:

Ամուսինը շատ անգամ հաց չէր բերեր, ինք դուրսը կշտացած ըլլալով. և վա՛յ եթէ պզտիկ գանգատ մը լսէր: Բայց կինը, սքանչելի տիպար մը տանտիկինի, խնայողաբար պնտառ մը բան պահած կ'ըլլար միշտ. այնպէս որ գիշեր մը առանց ուտելիքի չէր ձգած իր մէկ հատիկ մանջը՝ զոր խենդի պէս կը սիրէր: Իր միակ սփոփանքն ու յոյսն էր անիկա որուն սէրը զինք կարող կ'ընէր՝ իր մարտիրոսի կեանքը քաշկուտելու:

Տեսե՛ղծ, նիհար, հիւանդկախ տղայ մըն էր Գրիգորիկ, փտած



ԳԻՆԵՏԱՆ ՄԷՋ (Պասկեր՝ Տ. Չրափսանկ գծուած՝ պատկերասեր)։—
Սեղանին շուրջը նստողները բանտներ են բոլոր՝ իրենց օրական փաստակը մսխելու եւ իրենց ստողությունը ֆայֆայելու ետեւ:
«Կենացնուր...» Ի՛նչ ծիւղեր հեղեղութիւն՝ իրարու կեանքի խնկ,
երբ այդ կեանքներ կը փնտնան աշխարհ:

խորէ մը շինուած: Եւ եթէ կրցած էր ապրիլ քանի մը ծանր հիւանդութիւններէ ետք որոնք իր ազատուն մանկութիւնը մթագնած էին, իր մօր շնորհիւն էր որ աներեւակայելի գուրգուրանքով մը խնամած էր զայն: Հայրը կը հայհոյէր միշտ տղուն, նեղանալով անոր գոյութենէն որ բեռ մըն էր իրեն համար: Մայրն

էր որ լաթ լուալով, կար կարելով կը նայէր զայն, և շատ անգամ ծեծ ուտելու վտանգին ենթարկուելով՝ կ'երթար ազատել զայն հօրը ձեռքէն որ ոտքին տակ առած կը տփէր անխնայ:

Զակին հետ մինակ մնալուն՝ մայրը գիրկը կ'առնէր զայն և երկար ատեն զսպուած արցունքներն անոր առջեւ թափելով, անոր աչքերը գորովով պազնելով, խրատներ կու տար անոր, կը ցուցնէր հօրը վիճակը, կ'ըսէր թէ Աստուած չսիրեր ատանկ մարդերը, կը պատմէր իր բոլոր քաջածներն անոր ձեռքէն, ու կ'աւելցնէր անփոփոխ յանկերգը. «Զըլլա՛յ որ խմես, զաւակա՛ս: Եւ օր մը իմացուց վերջապէս թէ զինք դպրոց պիտի դնէր: Պզտիկը գէշ ընդունեց այս լուրը. յամառեցաւ լալով պօռալով: Մայրը կը զարմանար այս ընդդիմութեան համար. քանի մը խիստ խօսքեր ըրաւ և ըսաւ թէ պիտի տանէր զինք, ուզէր չուզէր: Դրիգորիկ որ ատենէ մը ի վեր փողոցի ընկերներ գտած էր և անոնց հետ օրն ի բուն խաղալու սովորած, պնդեց դարձեալ. և երբ մայրն աւելի բարկացաւ, կատաղութեամբ մը որ դեռ իր վրայ չէր տեսնուած՝ և քանի մը սոսկալի հայհոյութիւններով որ զինք ապշեցուցին, վրան վազեց և քանի մը հաս զարկաւ մօրը: Ո՛ւսկից սորված էր այս բաները, Տէ՛ր Աստուած: Ի՞նչ եղած էին իր խըրատները. հապա իր արցունքներն ու ինամքները: Սարսափեցաւ: Շուտ, տանելով էր դպրոց, որպէս զի հոն շիտկուէր դաստիարակին ազդեցութեամբ: Երկրորդ օրն իսկ, մտիկ չընելով տղուն ընդդիմութեանը, տարաւ զայն և անձամբ ներկայանալով տնօրէնին, արցունքոտ աչքով ինդրեց որ մասնաւոր հոգածութեամբ մը նային իր զաւակը, «մանուսնդ բարոյականին» ք

«Մարդ չէր ըլլար» Դրիգորիկի Հետզհետէ անձոգնի սովորութիւններ կ'ստանար: Ո՛ւսկից կը սորվէր զանոնք, Իրիկուէները շատ անգամ ուշ կու գար, յոգնած, կաս կարմիր, շնչատալաւ: Ո՛ր կ'երթար դպրոցէն ետք, իր հարցմանը չէր պատասխաներ, կամ շատ շատ՝ հայհոյութիւն մը: Երբեմն ալ վրան գլուխը պատուտած կու գար: Մայրը չէր հասկընար թէ ի՞նչ կ'անցնէր այդ տղուն մէջ: Իր մեծցուցած, իր շինած, իր կրթած զաւակը չէր ատիկա. ու կու լար ինքնիրենը, մտածելով իր բոլոր ինամքներուն ու չարավաստակ աշխատութեանց որոնք պարապը կ'եւէին, իր խրատներուն ու աղաչանքներուն որոնք օգուտ չէին ունեցած, և իր յոյսերուն որոնք կը ցնդէին:

Օր մը ելաւ դպրոց գնաց՝ տնօրէնը տեսնելու. Դողալով մօ-

տեցաւ անոր՝ ինչպէս դատաւորի մը, և հարցուց թէ ինչպէս էր իր զաւակը: «Սրիկայի՞ն մէկը» գոչեց տնօրէնն այնպիսի նայուածքով մը որ կիներ աչքերը վար առաւ, որպէս թէ յանցանք մը գործած ըլլար: Այնպիսի բաներ լսեց տակաւին որ զինք զարհուրեցուցին: Գրիգորիկ շատ առտու ուշ կու գար դպրոց և շատ օր ալ բնա՛ւ չէր գար: Ո՞ր կ'երթար ուրեմն: Դասագիրքերը զոր մօրը ստակովը գնած էր՝ ծախած էր ընկերներուն. ինչ ըրած էր այդ ստակը: Դպրոցին մէջ ամէնէն անկարգն էր. քանի մը տղոց հետ կռիւ ըրած և վիրաւորած էր զանոնք: Իր անկրթութեանց և հայհոյութեանց համար բոլոր դասատուները դժգոհ էին: Գանի մը անգամ գողութիւնը բռնուած էր:

Սրտէն զարնուած մարդու մը պէս խեղճ մայրը երերալով դուրս ելաւ: Տուն հասնելուն՝ մինչեւ իրիկուն լացաւ ու լացաւ: Իր զաւակը սրիկայ. ինչպէս եղած էր: Իրիկունն՝ վախով տեսաւ անոր՝ ներս մտնելը: Փոխուած կ'երեւար աչքին: Միտքը դրած էր կշտամբանքի խօսքեր ընել անոր. չկրցաւ: Անուշ խօսքով յայտնեց անոր՝ տնօրէնին դժգոհութիւնն ու խնդրեց որ ա՛լ շտակէ ինքզինք: Իբրեւ պատասխան, Գրիգորիկ անանկ աղտոտ շարժում մը ըրաւ և անանկ նողկալի հայհոյութիւն մը որ մայրն երկու ձեռքով երեսը ծածկեց ամօթէն ու ցաւէն:

Շաբաթ մը ետք արտաքսեցին զայն դպրոցէն: Այն ատեն ազատ մնալով՝ իր բնազդներուն անձնատուր եղաւ: Տասն և հինգը անցեր էր արդէն, բայց քսան և հինգ տարուի հասունութիւն մը և առնութիւն մը ունէր: Հայրը զաւկին մէջ իր պատկերը կրկնուած տեսնելով սկսաւ զայն սիրել: Մէկտեղ կ'երթային գինետուն, ու մոլութիւնները մէկիկ մէկիկ կը սորվէր Գրիգորիկ իր զարշիկ հօրմէն:

Գիշեր մը շատ ուշ դարձան հայր ու տղայ: Յանկարծ ստակալի հարուած մը զարնուեցաւ դրան՝ հայհոյութիւններով. ձայնը Գրիգորիին էր: Երկուքն ալ ծայրայեղ կերպով խմած էին այդ գիշեր, աչքերնին դարձած, սպանութեան փայլակ մը կ'անցնէր անոնց նայուածքին մէջէն: Պաղատանքի առաջին խօսքին զոր կէնը համարձակեցաւ մըմնջել, ապտակը փակաւ երեսին: Չեռքը Գրիգորիին էր: Երկրորդը թումիկը դրոշմեց: Յետոյ ուրիշներ, կռուիքի, կիցի և ահուելի խօսքերու ընկերացած:

Իր զաւկէն ծեծ ուտէր: Վախ իր յոյսերը, կուրծքին կաթը, աչքին լոյսը, կեանքին հիւթը ատո՞ր համար տուած էր անոր: Զէ՛,

ալ չէ՛ր կրնար դիմանալ, որովհետեւ գիւնդի մը հետ չէր գործը, հապա գիւնդութեան: Հիմայ իր գլխուն վրայ կը կանգնէր մե՛ծ պակտեցիչ այն ուրուտկանը, ցցուած մազերով, կարմիր երեսով, գարշահոտ բերնով, ըմպելիքէն վառուած աչքերով և չոր ու կրուտ ձեռքերով որ կը սեղմեն, կը ճմլեն, կը խեղդեն...:

Եւ տարաբախտ մայրը շաբաթ մը յետոյ կը մեռնէր իր խըջտեակին վրայ անձայն անտրտունջ, երբ իր գլխուն քով երկու գինովներն իրենց խայտառակ երգը կ'ոռնային:

Սրտին ցաւէն մեռած էր:

(Իր մկկ գրուածքին համառոտում)

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Ա Ռ Ա Ք Ի Ն Ի Հ Ա Յ Մ Ը

1907 Յուլիս 10ին Նիւ Եօրքի մէջ կը մեռնէր Հայ առեւտրական մը, Յովհաննէս Թաւշանճեան՝ որուն կեսնքը կրնայ օրինակ նկատուիլ ինքնօգնութեամբ և յարատեւութեամբ զարգացող գործնական և աշխատասէր մարդու:

1880ին Ամերիկա գաղթելով, ռահվիրան եղած էր արեւելեան գորգերու՝ Միացեալ Նահանգաց մէջ ներածումին: Սակայն այս մարդը տիպար վաճառական մը ըլլալէ զատ՝ տիպար առաքինի՛ մըն ալ էր, մեծ սէր ցոյց տալով գրականութեան և բարենպաստակ գործերու:

Իր մահէն քսնի մը տարիներ առաջ Պօլսահայ թերթերու սկսաւ դրկել թղթակցութիւններ որոնցմով կը ջանար հեռի պահել Հայուն բարոյականը՝ մոլութիւններէ ծնող տխուր անկումներէ: Իր տեսլականն էր դաստիարակութեամբ մաքառիլ տգիտութեան դէմ և ի սպա՛ռ բառնալ լպիրշ գրականութիւնը հայ հանդէսներու մէջէն, որպէս զի նոր սերունդն առողջ սկզբունքներով տողորուելով՝ զերծ մնար զակատելէ դէպ ի կործանարար անբարոյութիւն:

Բաւական չհամարելով իր համեստ յօդուածներով արտայայտած կոչերը, քարոզի մրցում մը բացաւ, դրամական պարգևներ յատկացունելով այն եկեղեցականներուն որոնք պիտի յաջողէին լաւագոյն նիւթերը մշակել՝ դարձի բերելու համար կրօնքէ ու-

Ճացողներ և հաւատքէ մոլորողներ: Այս առթիւ կ'արժէ մէջ բերել անգլիացի նշանաւոր բարոյախօս ձ. Մ. Պլէքիի սա տողերը. «Բարոյագէտներու դպրոց մը կայ որ բարոյականի ծրագիր մը գծած է առանց կրօնի, ասիկա սպահարզան մըն է բնութեան դէմ»:



Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս

Թ Ա Ի Շ Ա Ն Ճ Ե Ա Ն

Այնորամոտեան դիմ պայխտելու համար մեցանակ հաստատոյ առաջին Հայր

Թաւշանճեան իր բարեպաշտ մարդու հակումներուն հազիւ իրականութեան գոյն տուած, — յայտնի կղերականներու գրուածքները հատորի մը մէջ ամփոփած՝ հրապարակ հանելով, — գաղափարն ունեցաւ աւելի գործնական, աւելի վսեմ ծառայութիւն մը մատուցանելու իր ազգակիցներուն: Ուստի հակայիշդական մեցում մը հաստատեց թրքահայ թերթերու միջոցաւ: Գիտէր թէ աշխարհի մեծագոյն չարիքն էր արբեցութիւնը — Վժ գիտնալս և շատերուն գիտնալը չեն բաւեր, ըստւ, ջանանք որ ամէնքն ալ գիտնան»:

Եւ ահա, գիտուն, բանասէր, հրապարակագիր ու բանաստեղծ — պարգեւի խոստումէն շլացած — սկսան իրենց գրիչները սրել, լրագիրներու և պարբերականներու մէջ շաբաթներո՛վ տեղաւ յօդուած ու քերթուած՝ որոնք ալքոլամոլներու կեանքէն քաղուած սարսուլի պատմութիւններ էին բոլոր:

Պայման դրուած էր որ մրցանակի արժանացող գրագէտներու գրութիւնները կրկին պիտի տպագրուէին թերթերու մէջ: Այնպէս

ալ եղաւ: Ժողովուրդը ստիպուեցաւ արեւեցութեան պատուհասները մանրամասնող այդ յօդուածները քանիցս կարդալ և տպաւորուիլ քիչ թէ շատ:

Խոստովանինք որ Նոր Աշխարհ մէջ ապրող Հայէ մը եկող այս եզակիան փորձն իր համեստ՝ այլ փրկարար արդիւնքն ունեցաւ: Եթէ հարիւրէն մէ'կ հոգի համողութեցաւ իր խմած գինիին կամ օղիին իրական թոյն ըլլալուն և հրաժարեցաւ անկէ, բա'ւ է արդէն. վասն զի այդ մէկը՝ պարագան ներկայանալուն՝ ետ պիտի չկենայ ուրիշ խմաններ խրատելէ: Միևս կողմէ, արեւեցութեան դեռ ևս անձնատուր չեղող նորահաս Հայութի'ւնն էր որ ապահովապէս օգտուեցաւ այդ յօդուածներուն ընթերցումէն, իր սիրտին խորը մթերուած տեսելով ահագին պժգանք՝ այրոյն, այդ եպերելի' թոյնին նկատմամբ, զոր կարելի է կոչել դժոխի ըմպելին, քանի որ անոր ազգեցութեան տակ՝ մարդիկ անբանացած, վատթարացած, մինչեւ իսկ ոճիւրի' մղուած կը տեսնենք աշխարհի վրայ:

Յ Ե Ո Դ Ի Կ

« Բ Օ Լ Է Ր Ա » Ն

Օր մը մօլլա մը էշ հեծած՝ իր գիւղէն մօտակայ քաղաք մը գացած ատեն՝ հեռուէն նշմարեց յանկարծ տժգոյն և ահարկու դէմք մը: Չար ոգի մը ըլլալու էր անիկա, մտածեց, աչքերը գոցեց և զայն իրմէ վանելու համար սկսաւ աղօթքներ մըթմըթալ իրարու ետեւէ:

Աչքերը բանալուն, կարծելով թէ այդ մահատիպ դէմքն անհետացած էր այլևս, սոսկաց՝ երբ զայն շատ մտըր տեսաւ: Ծայրայեղ կերպով յուզուած և ամբողջ մարմնովը դողալ սկսած՝ իջաւ էշէն և վազն ի վազ ուղղուեցաւ դէպ ի գահալէժ մը:

Ինչ յուսախաբուեցին և ինչ արհաւիրք: Կմախքի նմանող այդ նողկալի կերպարանքը բաժնուած չէր նորէն մօլլայէն որուն ըսաւ յետոյ բարձրաձայն. «Աստուծմէ՛ դրկուած եմ ես. բնաւ մի՛ վախնար ինէ. ե՛ս ալ քու երթալիք քաղքիդ ճամբորդն եմ՝ երկնային պաշտօնս կատարելու համար: Եթէ կ'ուզես՝ միասին քա-

լենք՝ ճամբուն երկարութիւնը չենք իմանար: Անհոգ եղի՛ր, չա-
րիք չե՛մ հասցունեք քեզ»:

Մօլլան հանդարտած՝ էշուն վրայ հեծաւ կրկին, և իր ուղե-
կիցին հետ ա՛յնքան բարեկամացաւ խկոյն որ առաջարկեց անոր
նստիլ էշուն գաւակին վրայ:

Հասան քաղաքին դուռը: Երբ իրարմէ պիտի զատուէին,
մօլլան աղաչեց որ զրուցէ թէ ի՞նչ էր իր պաշտօնը: Ուրուականը
պատասխանեց. «Աստուած տեսնելով որ շատ մեղաւորներ կան
այստեղ, զիս դրկեց՝ զանոնք պատժելու համար: Իմ անունս Գօ-
լէրա է»:

Սարսուռ մը անցաւ մէկէն ի մէկ՝ կրօնաւորին ամբողջ մար-
մինին մէջէն, ի լուր այդ քստմնելի անունին: Մօլլան ինքզինք
գտնելուն՝ հետաքրքիր եղաւ իմանալու թէ ո՞րքան մեղաւորներ
կային այդ պատիժին արժանի: «Երեք հարիւր» ձայնեց Ուրուա-
կանը: Այն ատեն մօլլան պատասխան տուաւ անոր ու ըսաւ.
«Զքեզ ա՛յնքան անտիրտ և անգութ կը գտնեմ որ, կը վախնամ
թէ պահ մը մուռնա՛ս քեզ վստահուած պաշտօնդ և ամէ՛նքն ալ
օպաննես: Երդու՛մ կ'ընե՞ս թէ որոշեալ թիւէն անդին պիտի չանց-
նիս»: Խօսակիցը չհակառակեցաւ կրօնաւորին բարի առաջարկին,
և երկու բարեկամները բաժնուեցան իրարմէ:

Ժամանակ մը վերջ, երբ մօլլան գործերը կարգադրելէն
ետք՝ իր գիւղը կը վերադառնար, քաղաքին դուռնէն դուրս ելած
միջոցին կանգ առաւ պահ մը և հարցուց պահապանին թէ վեր-
ջերս ո՞րչափ մեռել թաղուած էին մօտակայ գերեզմանատունը:
«Երեք հազար» պատասխանեց պահապանը: Մօլլան զայրացած
խաբեքային դէմ որ իր խոստումը չէր ուզած յարգել, էշուն
սանձը ձեռք առաւ և շարունակեց իր ուղին:

Իր բարկութիւնն ու ատելութիւնը մեծ եղան, երբ ճամբան
մօլլան հանդիպեցաւ կրկին ստախօս և բարբարոս Ուրուականին՝
որ, իր տխուր պաշտօնը կատարած, այլո՛ւր կ'երթար սփռել իր
տոսկումը: «Բարի լո՛յս, Մօլլա՛» ձայնեց անոր:—«Բարե՛ւղ ալ քե-
զի, բարե՛քդ ալ քեզի,—պատասխանեց մօլլան էշուն վրայէն՝
նեղարտած,—պատուաւոր կերպով չվարուեցա՛ր դուն, չյարգե-
ցի՛ր խոստումդ: Ի՞նչպէս խիղճ ըրիր երեք հազար հոգիներու
կեանքը բառնալ, երբ ա՛յնքան քիչով պիտի բաւականանայիր»:

Ուրուականն ըսաւ. «Մի՛ անիծեր զիս՝ ամէն բան չգիտցած»:

Կ'երդնում յանուն քու պաշտած Աստուածիդ, թէ ես — «Բօլէ-
բան—երեք հարիւր հոգի միայն մեռցուցի: Մնացեալ 2700ը
վախերնուն մեռան . . . »:

Պ Ա Ր Ս Կ Ա Կ Ա Ն Զ Ր Ո Յ Յ

Ե Ր Կ Ն Ա Հ Ա Ճ Ո Յ Ն Ո Ի Է Բ Ը

Բարի ոգի մ'որ ձանձրացած մեր Երկրէն՝
Կ'ուզէր դառնալ բընագաւառն էր նախկին,
—Ա'լ զգուած էր մարդոց կեանքէն անօրէն,—
Ներկայացաւ Երկինքի դրան պահակին:
«Բա՛ց ինձ սյս դուռն, ըստւ, եղբա՛յր, կ'աղաչեմ,
«Որ միանամ ընկերներուս երկնաձեմ»:

Պահակն յայտնեց թէ ներս մտնել հընար չէր,
Ոչ ալ մտիլ Տիրոջ ասեղ գահոյքին:
Ոգին ի զո՛ւր կը պաղատէր, կ'աղաչէր:
«Պէտք է, յարեց, բերես նըւէր մը անգին,
«Որ սուրբ ըլլայ և վեր մարդոց արարքէն,
«Նըւէ՛ր մ'որուն հաւնի Աստուած ապաքէն»:

Ու ետ դարձաւ ոգին, իջաւ Երկրի վրայ՝
Պատերազմի դաշտի մը մէջ ընդարձակ,
Ուր զինուոր մը սուրերու տակ անխընայ՝
Նո՛ր ինկած էր, Հայրենիքին նահատակ:
Իր արիւնէն առաւ կաթիլ մը մաքուր,
Եւ արտորնօք երկինք թըռաւ հրափետուր:

Բայց Աստուծոյ հաճոյ չեղաւ այդ նըւէր:
«Գընա՛, ըսաւ, ընծայ մ'ինձ բե՛ր շատ վըսեմ»:
Իջաւ ոգին, մըտաւ խրճիթ մը աւեր.
Այնտեղ գըտաւ մայր մը՝ հասած մահուան սեմ.
Իր գաւակը դարմանելով ժանտախտէն,
Վարակուեր էր, ու կը մեռնէր ինք արդէն:

Շուտ մտեցաւ անոր, առաւ շունչն յետին՝
 Խունկէն մաքուր, և արեւէն ալ պայծառ,
 Ու սրլացաւ դէպ ի գաւառն երկնային
 Ուրտեղ մտնել այնքան սաստիկ կը բաղձար:
 Բայց սիրելի չեղաւ այդ ձօնն Աստուծոյ:
 «Գընա՛ գտիր, ըսաւ, նըւէր մ'ի՛նձ հաճոյ»:

Դարձեալ իջաւ ոգին աշխարհք՝ յուսահատ.
 Թափառական շրջեցաւ շատ ձոր ու լեռ,
 Մինչեւ հասաւ խոր անտառ մը միգապատ՝
 Ուր ո՛չ Թռչուն կ'երգէր, ո՛չ մարդ կ'այցելէր:
 Անիծապարտ ոճրագործ մը կ'ապրէր լոկ՝
 Այրի մը մէջ մինակ, Թշուառ, մըտահող:

Իր կուրծքին տակ կը վառէր զիդջն իր բոցեր.
 Հառաչանքէն՝ անդունդն յուզուած կը զփար,
 Եւ լրսելով իր տանջանքին սուր կոծեր՝
 Կ'արտասուէին ժայռն ու քարերն անբարբառ:
 Կեցաւ ոգին. և առաւ շիթ մ'արտասուք
 Այդ զղջումի դառն հեղեղէն տրտմասուգ:

Ու բացուեցաւ դուռն Երկինքին ամրակուռ,
 Զի ընդունեց տէրն այդ նըւէրը մաքուր:

(Գերմանական Զրոյց)

Ս Ի Պ Ի Լ

Յ Ե Խ Ի Ն Դ Պ Ր Ո Յ Ը

Հարուստի զաւակ էր Լեւոն: Գիւղը կը բնակէին ամառները՝
 գեղեցիկ պարտէզով շրջապատուած շքեղ տունի մը մէջ: Փայտէ
 ձի, կառք, շեփոր, տեսակ տեսակ սուղ խաղալիքներ ամէն ատեն
 կը գնէին ծնողքը: Աղւոր կը հագուէր, մանաւանդ հանդիպած
 տղուն կը պարծենար իր ունեցածներուն վրայ: Կը կարծէր թէ
 ունեւոր ըլլալն ամէն բան է աշխարհիս մէջ, և երբեք չէր գի-
 տեր թէ ի՞նչ տեսակ բան է բարի և բարեսիրտ ըլլալը: Ամբար-

տաւա՛ն ալ էր, որովհետեւ երես ելած էր՝ հօրը մօրը մէկ հատիկն ըլլալուն. ծառաներուն հետ գէշ կը վարուէր ու չէր քաշուեր տարեկիցներ ծաղրելէ:

Օր մը ցորեկ ատեն պարտէզը խաղացած միջոցին, կիսաբաց թողուած վանդակադռուին առջեւ գնչու տղայ մը կայնած տեսաւ, պատուտած աղտոտ լաթերով, բռպիկ ոտքերով և արեւահար դէմքով: Սիրուն ըլլալով՝ սև, փայլուն աչքեր մը ունէր միայն: Կողովի պէս բան մը կար ձեռքը՝ հասուն մոռմենիներով լեցուն: Լեւոն մոռմենիներուն նայեցաւ, բաղձաց ճաշակել ատոնցմէ, բայց հպարտութիւնը թող չտուլաւ իրեն՝ այդ լըրճուկ աղտոտ մանչուկէն պտուղ խնդրելու: Յանկարծ սրտնեղած անոր ներկայութենէն՝ գոչեց գոռոզ ձայնով. «Գնա՛ սըտեղէն, մենք հարուստ ենք, աղտոտ մանչեր չենք ուզեր»: — «Ինձի քիչ մը ջուր կու տա՞ք, ըսաւ գնչուն, շատ ծարաւ եմ. քանի որ հարուստ էք, ձեզի համար վե՞ծ բան մը չէ գաւաթ մը ջուրը»: — «Մենք բա՛ն մըն ալ չենք տար քեզի պէս տղուն. գաւաթնի՛ս պիտի մնտուես այդ բերնովդ: Եթէ չերթաս, շուներս վրա՛դ կը վազցունեմ» պատասխանեց Լեւոն լիրբ շեշտով մը:

Գնչուն խնդաց ու հեռացաւ, քանի մը մոռմենի դնելով բերանը, ծարաւը յագեցունելու համար: Դիտա՞ծ էք. աղքատին տղան կը խնդայ երբեմն՝ լալու տեղ, երբոր ծաղրեն զինք:

«Երթամ քիչ մը մոռմենի փողվեմ» մտածեց Լեւոն իրիկուան դէմ, տեսած այդ ոչինչ պտուղներէն հրապուրուած և ախորժաւ կը սրուած, — մինչ իրենց պարտէզը լեցուն էր զանազան պատուական պտուղներով, — ու դուրս ելաւ դուռնէն՝ մտնելով դէպի մտակայ դաշտն առաջնորդող նեղ ճամբու մը մէջ, ուր գիտէր թէ առատ մոռմենի կար: Ասդին անդին դեգերելէ վերջ, բարձրութեան մը վրայ թաւուտք մը նշմարեց՝ շաղապատուած մորեմի ձիւղերով, որոնց վրայ ողկոյզ ողկոյզ կը փայլէին սև ու կարմիր պտուղները: Բայց ձիւղերը դէպի փոս հակած էին և իր ձեռքը կարելի չէր մինչեւ հոն երկարել: Հասակը ծուեց ոստի մը վրայ, բազուկը վրան նետելու փորձ մը ըրաւ, սակայն հաւասարակշռութիւնը կորսնցունելով դէպի վար գլտորեցաւ, առանց փշուտ ոստին հասնելու:

Թաց, կպչուն ցեխ մը կար փոսին մէջ, անձրեւներէն գոյացած: Ատիկա մինչեւ իր մէջքը բարձրացաւ, քանի ջանաց դուրս ելլել հոնկէ: Իրիկուն էր, և ամայի դաշտին մէջ, հովերէն ու բոյ-

սերէն զատ ո՛չ ոք լսեց անոր ձիջն աղիողորմ. «Օգնութի՛ւն...» Սոսկումէն կը դողար, ու կու լար՝ դիշերը հող մնալու մտածու մէն՝ երբ ոտքի ձայներ մը լսեց մօտիկները: Իր խոնաւ և ստուերոտ թագատոցէն վեր նայելուն, տեսաւ պատուտած լաթերով գընչուն զոր ցորեկին վունտեր էր ա՛յնքան կոշտութեամբ:

— «Կ'աղայեմ, վե՛ր հանէ գիս այս տեղէն, քեզի 5 դրուշ կու տամ» ըսաւ Լեւոն պաղատագին:— «Բարայի պէտք չունիմ ես» ձայնեց քաջասիրտ աղքատիկ տղան, մինչ խոտին վրայ պառկած և ձեռքին մէկը Լեւոնին երկարած՝ դուրս կը քաշէր զայն ցեխոտ փոսէն՝ ողորմուկ գորտի մը պէս:

Լեւոնին գլխարկը թռած էր գլուխէն, կօշիկին մէկն ալ ելած ոտքէն և վրան գլուխը տիղմերով մալակոնուած ամբողջովին:

— «Ո՞վ հիմակ աւելի աղտոտ է» հարցուց գնչուն: — «Ե՛ս, պատասխանեց Լեւոն, աչքերը լեցուած»:— «Ուրիշ անգամ եթէ գալու ըլլամ, հետս աղէ՛կ կը վարուիս ալ» յարեց մոռմենի ժողվող մանչը, նշանակալից ակնարկ մը ձգելով անոր վրայ, և առաջալեց:

Շաբաթ մը վերջ, երբ Լեւոն դուռին առջեւէն անոր անցնիլը տեսաւ, սիրելի հիւրի մը պէս ներս կանչեց զայն, խաղաց անոր հետ, խոհանոց տանելով փորը կշտացուց, և ցուցուց անոր իր բոլոր խաղալիքները: Գնչու մանչը յուզուած այդ գորովանքէն «Այսօր լաւ վարմունք մը ունիս հետս» ըսաւ: — «Այո, պատասխանեց Լեւոն, այդ վարմունքը ցեխոտ փոսին մէ՛ջն էր որ գտայ»:

Ու իրաւ ալ ցեխոտ փոսը լաւագոյն դպրոցն եղաւ ամբարտաւան Լեւոնին:

Թ Ե Ո Դ Ի Կ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Չորս սիւն ունի Դժոխքը.— Ծուլութիւն, Սուտ, Չարութիւն և Աւբու:



Ամենամեծ յիմարութիւն է աղքատ ապրիւ, հարուստ մեռնելու համար:



Մուրացկանին եղբայրը ծոյն է:



Ծուլութիւնը բոյն մըն է որուն մէջ իր հաւկիթները կ'ածէ
Չարութիւնը:



Ծոյին գործ տուր, տեղը քեզի խելք կու տայ:



Երբ բարեկամը խաբէ զքեզ մէկ անգամ՝ բարկացի՛ր անոր
դէմ. իսկ երբ երկու անգամ՝ բարկացի՛ր դուն քեզի դէմ:



Կախքդ եկամուտիդ համեմատ կարգադրէ՛, իմաստուն կը
կոչուիս: Եկամուտդ ամբողջ ծախսէ՛, անխոհեմ: Եկամուտէդ աւել-
ւի՛ ծախսէ, յիմար:



Իր փափաքները չափաւորողը բաւական հարուստ է արդէն:



Յիմար մըն է անիկա, որ իր դրամը կը գործածէ՝ զղջալիք
բան մը գնելու համար:



Անխոհեմ ծախսերէ ետ կենալու առաքինութեան անունն է
Խնայողութիւն՝ որ ո՛չ կծծիութիւն է, ոչ ալ շուսյլութիւն:



Բուրդ գնելու եկաւ, խուզուած ետ դարձաւ (Իջայ. առած,
խաղամոլներու յատկացեալ):



Շարժուձեւերու մէջ հպարտութիւնը տխմարներուն մոլութիւն-
թիւնն է:



Անթը թշնամանքին մէջն է, և ո՛չ թէ ներողութիւն խնդ-
րելուն:



Ծուլութիւնն ա՛յնչափ կամաց կը քալէ որ Աղքատութիւնը
շուտով կը հասնի անոր:



Կծծի մը պատրաստ է ծախելու իր հոգին և ուրիշներունը՝
դրամի համար:





ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ԹԻՆ ԹԱՂԹԱՆԱԿԸ

1. ԿՈՐՈՎԻՆ ԴԵՐԸ

Աշխատանքը պէտք է՝ ապրելու համար անկարօտ : Անտ՛վ է որ մարդիկ յաղթած են սոցեղութեանց , բռնութեան , և ստացած իրենց ազատութիւնը : Ամէն ատեն հարկ է աշխատիլ , այսինքն կուռիլ՝ պահպանելու համար մեր կեանքը ցուրտին , անօթութեան , հիւանդութեան , տառապանքներու և չարութեան դէմ : — Սիրտերնիս յուզմամբ կը թրթուայ երբ մտածենք թէ աշխարհիս վրայ ի՞նչ հրաշքներ գործած է աշխատութիւնը : Անտ՛վ կ'ըլլանք սուղջ և ազատ , որովհետեւ անիկա մկաններնիս կ'ուժովցունէ , չըջան ընել կու տայ մեր արիւնին ու մարմիննիս կը զօրացունէ : Միւս կողմէ , դարձեալ անտ՛վ է որ ապագանիս կը շինենք , կ'ըլլանք ազատ , պէտք չենք ունենար ստորնանայու և ձեռուրնիս երկարելու՝ մուրայու համար :

Աշխատած ատեննիս սակայն մեր գործէն հեռացունելու չենք ուշադրութիւննիս : Դպրոցականն ուշադիր աշխատելո՛վ է որ կը տիրանայ իրեն պէտք եղած հրմտութեանց : Բանուոր , ստաղձագործ , որմիադիր , մշակ պէտք է որ ուշադրութեամբ կատարեն իրենց աշխատանքը : Կողարործը պէտք է որ ուղի՛ղ լանայ իր ակօսը : Անփոյթ աշխատողներուն բաժինն է վերակսիլ իրենց աշ-

խատուութիւնը, վասն զի եթէ գործաւորը խղճամիտ չըլլայ և նորէն չսկսի շինել անուշադրութեամբ սխալ կամ գէշ ըրած իր գործը, հաւանական է որ վտանգ մը պատահի ետքէն :

Նեղսրեղու չենք աշխատած ասեմնիս, վասն զի նեղ-սրախը բոլորովին անօգուտ, նո՛յն իսկ վնասակար է : Երբեմն արտորանքով փնտռած մէկ աւարկանիս չենք գտներ, կամ ընելիք մէկ գործերնիս չյաջողիր, հա-կառակը կ'երթայ : Ի՞նչ օգուտ սակայն բարկանալ առ-արկայի մը դէմ որ չկայ, գրչածայրի մը դէմ որ չը գրեր, փայտի մը դէմ որ չտաշուիր դիւրաւ, գամի մը դէմ որ մխուած պահուն կը ծռի . ի՞նչ օգուտ գիւ-ղացիին տրտունջքը հունձքին դէմ որ օր մը առաջ չը բուսնիր, որպէս զի ինք ալ քաղէ : Կարծես թէ անհամ-բեր մարդուն ամէն բանը հակառակ կ'երթայ, մինչդեռ խոհական ու հնսօգանդ աղուն՝ անշունչ նիւթերն անդամ կը հնազանդին : — Կեանքի մեծ կանոնն ընենք «մէկ գործ մէկ անգամուան համար և հանդարտութեամբ» :

Կարգադրենք աշխատանքինս . — Իրար չխառնենք ամէն գործ, այլ խորհինք թէ ո՞րն է կարեւորագոյնն ու ո՞րը հարկ է ամէնէն առաջ ընել լմնցունել : Շատեր ամէնէն վերջ ընելիք գործերնին ամէնէն առաջ կ'ընեն, ասանկով գործերնին չքայեր, և տակնուվրայութիւն յառաջ կու գայ : — Կեանքի մէջ յաջողելու համար ան-հրաժեշտ է աշխատանքը . բայց ատոր մէջ ալ յաջողելու համար պէտք է որ մեթոսով ըլլայ ան : — Մեր բոլոր գործերուն մէջ եռանդ մը, սիրտ մը պէտք է դնենք : Զսպասենք որ դասերնիս սորվելու համար սանկ փափաք մը դայ վրանիս . երբ դասերնուս աշխատիլ սկսինք՝ ջանք մը ընենք, եռանդը չուշանար :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Կեանքի ամենամեծ ուրախութիւնն ո՛րեկէ կու գայ մեզի. — Աշխատանքն ի՞նչ բանի կը ծառայէ. — Ի՞նչ յատկութիւն կարեւոր է՝ աշխատանքի ասեմ. — Աշխատելու ասեմ մերոսն ի՞նչ դեր կը կատարէ:

2. Հ Ա Յ Ը, Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Հ Ր Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ը

Աշխատանքը հացը ստեղծած է. — Մեր սնունդին ծառայող բոյսերէն շատեր մարդիկ հնարած են, և մըշակներու սերունդներ զանոնք բարկաւած են հեղուկացնել:



ԳՈՒԹԱՆԸ ՎԱՆԻ ՄԷՁ

Հողի աշխատութիւնը՝ հերկելը հնագոյնն ու ազնուագոյնն է բոլոր արհեստներուն. — Վանեցի հայ գեղջուկներ՝ արօրով իրենց դաշտը մշակելու վրայ:

Վայրի վիճակի մէջ ցորենը չբուսնիր ո՛չ մէկ տեղ. խելք ու աշխատանք ձեռք ձեռքի աուած՝ արդիւնաբերած են կենսատու հացահատիկը: — Յարգանքով նայինք ուրեմն սեղոնին վրայ դրուած հացին. ո՛րքան

խելք ու աշխատանք կը ներկայացունէ ան : Այիւրը թրոզ հացագործին հետ՝ յոգնած դատած են ամէն անոնք որ մշակական արուեստը հնարած են , ցորենն ազնուացուցած , հերկը կատարելագործած , ձեծելիք գործիներն ու կամիր երեւակայած , խմորը պատրաստելու եզանակը գտած : — Մենք չենք զիտեր այդ բարերարներուն աշունները . բայց զիտենք թէ այդ անհետացող մարդիկ կերպով մը կ'աշխատին ցարզ հացագործին հետ : Միւս



ԿԱՐՎԱՆԻ ՄԷՉ

Վանեցի ժիր գեղջուկներ հասկաթոււ ցորեանը կը վատեն յարդէն՝ եւսմողազին , կենսատու հացը պատրաստելու համար :

Կողմէ , դաշտը հերկող , ցանող ու հնձող զիւղացին , ցորենին փոխադրութեան համար երկաթուղի , վայրաշարժ ու կառաշար շինող ճարտարագէտներ , գործաւորներ , բոլոր ասոնք աշխատած են՝ մեզ տալու համար այն հացը զոր կ'ուտենք :

Աշխատանքը մեր փրկութիւնն ու երջանկութիւնն է . — Աշխատելով , գժուարութեանց և արգելքներու դէմ կըու-

ուելով է որ մեր արիութիւնը կ'ստանանք, և անոնց
յաղթելով է որ կը վայելենք մեր երջանկութիւնը: Իրաւ
է թէ դժուար է նեղութեանց սովալը, կարօտութիւն-
ներ քաշելը, բայց անոնք իսկապէս օգտակար են մեզ,
քանի որ մեծ փորձառուներ և իմաստուններ ըսած են
թէ խեղճութիւնը մարդկային սեռին ուսուցիչն է: Մենէ
ո՞վ չուրախանար երբ դժուար գործ մը յաջողութեամբ
գլուխ հանէ: Երբ լաւ գիտցած ենք դասերնիս՝ զուարթ
կ'ըլլանք: Երբ գործաւորը ձեռքին գործն աղէկ շինած
է, երբ տանտիկինը դժուար պատրաստուելիք կերակուր
մը կամ անուշեղէն մը յաջողութեամբ եփած է, կ'զգան
անհուն ու անխառն թերկրանք մը, ինչու որ դժուարու-
թեան մը յաղթած ըլլալու գոհունակութիւնն ունին:

Ամենամեծ ուրախութեանց աղբիւրը սակայն երկ-
րագործութիւնն է կարծես՝ իր ա՛յնքան փոփոխ երե-
ւոյթներով: Անոնք որ ձեռքի աշխատութեամբ չեն պա-
րապած՝ կ'արհամարհեն զայն, կարծելով որ ստրկութիւն
մըն է մշակական կեանքը: — Երջանիկ և արժանաւոր
մարդ անիկա՛ կը սեպուի որ իր խելքն ու արիութիւնը
կը գործածէ իր աշխատանքին համար ու սրտանց և ան-
կեղծութեամբ կը փարի անոր, ըլլայ անիկա հողագոր-
ծութիւն, կօշկակարութիւն, հիւսնութիւն կամ երկա-
թագործութիւն: Այդ խոնարհ արհեստներուն մարդիկն
են որ կրնան արժանապէս վայելել այն խոր ուրախու-
թիւնը՝ զոր սրտանց կատարուած աշխատանքը կը պար-
գեւէ իրենց:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ բանի կը պատճիմ կենսական սնունդնիս. — Որո՞նք արդիւնաբե-
րած են ցորենը. — Ո՞րն է մարդու փրկութիւնն ու երջանկութիւնը.
— Կրնա՞ք քուեղ մշակական կեանքի հանոյքները:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Դ. ՄԱՍԻՆ ՅԱՏՈՒԿ

Հ Ն Ձ Ո Ղ Ի Ն Ե Ր Գ Ը

Պէտք է ցորենն յարգել, տըղա՛ք և աղջիկներ,
Ջարկէ՛ք մանգաղն՝ ամբառնալով ձեր ճակտէն վեր:
Փա՛ռք Յորեանին որ մեզ կու տայ կեանքի արեւ.
Հնչեցընենք երգն հնձողին՝ Տիրոջ առջեւ:

Երկինքէն մեզ պարգև մ'է ան ցուրտին բուքին.
Հողն իր կողին մէջ կը պահէ զայն կաթոգին,
Եւ Ծաղիկներ երբոր ծըլին, կ'ածէ աշխարհք.
Ջայն սընուցած է ինն ամիս իր սիրով տաք:

Մուրացիկ մը օր մ'ինձ ուսոյց գաղտնիք մ'անգին.
—Սերմը՛ հողին այրն՝ ու զաւա՛կն է երկինքին.
Անոր օգտին ոչինչ խնայել չէ կարելի.
Կը խնամեն զայն սիրուած զաւկէ մ'ալ աւելի:

Եթէ վատուժ ծըղօտն հիւծի ծիւրած գարնան,
Վար կը հոսի ցօղն օգտակար կաթի նըման.
Թեթեւ սիւգեր թիթեռնիկի պէս օդապար
Ջայն կ'օրօրեն ակօսներուն մէջ մեղմաբար:

Իր ծարաւին կիզիջ՝ յագուրդ տալու համար,
Բարդ բարդ ամպեր ոսկի հեղեղ կը տեղան վար:
Յետոյ, աղուոր յորջորջումով կ'ըսէ երկինք
Արեգակին. «Ձորցո՛ւր ցորենն, իմ հիր աստղիկ»:

Եւ կը հասնի այսպէս ցորենն, հա՛ց երկնատուր,
Քոյր խաղողին, այդ պըտուղին շէն ու մաքուր:
Փա՛ռք Յորեանին, ո՛վ մեր տըղաք և աղջիկներ.
Հնչեցուցէ՛ք, շողացուցէ՛ք ձեր մանգաղներ:

Ա Շ Ի Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն Ճ Ա Ռ Ը

Աշխատութիւնն, օ՛հ, աշխատութիւնը. ցայսօր անո՛ր կը պարտիմ իմ ապրիլս: Կը տեսնէ՞ք թէ ի՞նչ ճղճիմ էակ մըն եմ. կը յիշեմ թէ մայրս օդը քիչ մը ցուրտ եղած օրերը ծածկոցներու մէջ կը փաթթէր զիս: Սակայն ա՛ն էր որ զիս մղեց աշխատութեան, իբրեւ լաւագոյն միջոց առողջ ապրելու: Ճնշող աշխատութեանց չէր դատապարտեր զիս, այլ կանոնաւոր, մշտափոփոխ և հրապուճ ըիջ աշխատութեան մը կը վարժեցունէր: Այսպէս, սորվեցայ աշխատիլ, ինչպէս որ կը սորվին շնչել ու քալել:

Աշխատութիւնը գոյութեանս պաշտօնն եղած է, անդամներուս և գործարանաւորութեանս բնական ու անհրաժեշտ խաղը, կեանքիս նպատակն ու միջոցը: Ապրեցայ, որովհետեւ աշխատեցայ. աշխարհի ու իմ մէջս հաւասարակշռութիւն մը գոյացաւ, գործքերովս իրե՛ն վերադարձօւցի ինչ որ ան կու տար ինձ զգացողութիւններով. և կարծեմ թէ բոլոր առողջութիւնս ատոր մէջ կը կայանայ, — կանոնաւոր փոխանակութիւն մը և գործարանաւորութեան՝ միջավայրին պատշաճեցումը: Ո՛րքան ալ նիհար ու հիւանդկախ կ'երեւիմ, շատ պիտի ապրիմ, վստահ եմ ասոր, որովհետեւ լարուած փոքրիկ մեքենայ մըն եմ որ տրամաբանօրէն կը գործէ:

Աշխատութիւնը չէ՛ թէ միայն լաւագոյն առողջապահութիւնն է, այլ նոյն իսկ կեանքն է: Կեանքը շարունակական աշխատութիւնն է քիմիական ու մեքենական ոյժերու: Առաջին հիւլէէն ի վեր որ շարժած է դրացի հիւլէներուն միանալու համար, ստեղծող մեծ աշխատութիւնը չէ դադարած երբեք. ու միշտ շարունակուող այս ստեղծագործումը տիեզերական գործն է որուն ամէնքս մեր դոյզն աշխատութեան մասը կը բերենք:

Ընդարձակ աշխատանոց մը չէ՞ տիեզերք, ուր դադար չկայ երբեք, ուր անհունապէս փոքր էակները հսկայ աշխատութիւններ կը կատարեն, ուր նիւթը կը գործէ, անդադար կ'արտադրէ, ամենապարզ խմորէն մինչեւ ամենակատարեալ էակները: Հունձքով բեղուն արտերը կ'աշխատին, անտառներն իրենց դանդաղ աճումին մէջ կ'աշխատին, հովիտներուն եզերքն ի վար սահող գետերը կ'աշխատին, իրենց ալիքները մէկ երկիրէն միւս երկիրին փերը տարածող ծովերը կ'աշխատին: Զկայ էակ մը, իր մը որ անգործ

մնայ. ամէն ինչ կը գործէ, իր բաժինը բերելու ստիպուած է հասարակաց աշխատութեան: Անգործութիւնն անհետացումն է մարդուս որ, իբր անօգուտ ու նեղող տարր, մէկ կողմ կը նետուի, իր տեղը տալով անհրաժեշտ աշխատողին: Այս է կեանքի միակ օրէնքը, — նիւթն՝ աշխատութեան մէջ, ոյժ մը՝ յաւիտենական գործունէութեան մէջ, երջանկութեան համար որուն տիրական պէտքը կ'զգանք ամէնքս ալ:

Աշխատութիւնն ինչ հիանալի կանոնաւորիչ մըն է. ո՛ւր որ տիրէ՝ կարգ ու կանոնաւորութիւն կը բերէ հետը: Խաղաղութիւնն է, ուրախութիւնն է, առողջութիւնն է: Շուարած կը մնամ երբ կը տեսնեմ աշխատանքն անարգուած, ստորնացած, իբր պատիժ կամ ամօթ նկատուած: Եթէ ան ազատած է իմ կեանքս, տուած է նաև ինչ որ կայ իմ մէջս ազնիւ ու բարի. ինչպէ՛ս կը կանոնաւորէ անիկա մտաւորական կարողութիւնները, մկաններու գործունէութիւնը:

ԷՍԻԼ ՋՕԼԱ

Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ը

Ինութեան մէջ երբե՛ք դադար, հանգիստ չկայ. աշխատանքը կայ միշտ, ներդաշնակ, կենդանի և տեւական աշխատանքը:

Երկիրն անշարժ կ'երեւի, սակայն անիկա կը տանի զմեզ միջոցին մէջէն:

Լուսինը կեցած կ'երեւի, սակայն անիկա մեզ կը հետեւի՝ արեւուն շուրջ իր ըրած շրջանին պահուն, և մեր բոլորտիքը կը դառնայ, մէկ երկվայրկեանի մէջ հազար մէթրէ սուելի կտրելով:

Ատողերը հաստատուն կ'երեւին, սակայն անոնցմէ իւրաքանչիւրը կը դառնայ՝ խելքի պտոյտ պատճառող անհաստատալի արագութեամբ մը:

Արեւը կարծես մարը կը մտնէ իր լոյսի և տաքութեան գոլորշիներով, սակայն անիկա կը փայլի միշտ՝ հո՞ծ նշոյններով պարուրուած:

Գետը հանդարտ է՝ հայելիի մը պէս, սակայն անիկա կը հոսի միշտ:

Գետնի դալարը կարծես անշարժ գորգ մըն է, սակայն անիկա կը բուսնի, կ'աճի, կը մեծնայ:

Երբ հանգիստ ընենք, կը կարծենք որ բնութիւնը կը քնանայ մեր մէջ: Ահագի՛ն սխալ. մեր սիրտը կը զարնէ այն ատեն, մեր թոքերը կը գործեն. և մեր մարմինին մէջ չկայ կէտ մը որ յարատեւ աշխատութեան մը կայանը չըլլայ:

ՖԼԱՄԱՌԻՕՆ

Պ Ա Ր Կ Ե Շ Տ Դ Ո Ր Ե Ա Ի Ո Ր Մ Ը

Բարի դարբին մ'երկաթէ ձող մը կը դարբնէր . . .
Եւ, կռելով մերկ թեւերովն երկաթն հրավառ,



Միտք կը բերէր մարդն՝ անծանօթ այն եղբայրներ
Որոնց օր մ'իր գործն օգտակար պիտի ըլլար:

Եւ ծեծելով ատրաշէկ ձողն այն երկաթէ,
Կ'երգէր տաժանքն որ ձեռքերը կը կարծրացնէ,
Այլ որ մէ'կ սիրտ կու տայ բոլոր մարդկութեան հէք:

Սակայն յանկարծ կը դադրի երգը դարբինին:
Տնցելով գլուխն, «Ա՛հ, կը մնջէ ան տխրագին,
«Ի զո՛ւր է իմ դատանքս, այս ձողն է անարժէք.
«ձեղքըւած է: Վերսկզբի՛նք»: Լա՛ւ է այսպէս.
Ձի խղճահար է գործաւորն, ինչպէս արդար,
Եւ պնդակազմ մարմնին ձիգէն ան չի՛ վախնար:
Գիտէ՛ թէ լոկ կատարեալ գործ մը կը պարտի . . .
Եւ օր մըն ալ իր հաւանած ձողն երկաթէ
Կամուրջի մը տախտակներուն կը ծառայէ.
Եւ կամուրջին վըրայ կըքուն և դողդոջուն՝
Ահա՛, վաշտ մը, իր վեց հարիւր մարտիկներով,
Նըւագէ մը վարուած՝ կ'անցնի, և վաշտը՝ խռով
Գայլերուն տակ կ'զգայ կըքիւր կամուրջին.
Ա՛հ, քայքայուի՛ պիտի . . . : Եւ վեց հարիւր խոհեր
Կը փնտրուեն կին, քոյր, եղբայր ու նշանած.
Եւ ծովափէն դիտողներուն սրտին խորն ալ
Հայրենիքը լացած է վեց հարիւր մեռեալ:

Երգէ՛, երգէ՛ երբ հընոցէն բոցը կ'ելլայ,
Ձա՛րկ, գործաւոր, զըւարթօրէն սալիք վըրայ:
Ո՛չ, չը՛ պիտի փըլի կամուրջն, ո՛չ, չէ փըլած,
Ձի գործաւորն ազնիւ՝ ըրած է կարելին.
Ու երկաթէ ձողն սմուր է, սուանց ձեղքի:

Հայացոյց ԵՒ.ԳՕԼԱՆՁԵԱՆ ԺԱՆ ԷԳՂԱՌ
1911

Պ Ձ Տ Ի Կ Բ Ա Ն Ի Ո Ր Ի Ն Ա Ր Կ Ա Ծ Ը

— Ա՛յ մէջքս, Արտա՛շ, անանկ յոգնեցաւ իի:
— Եա՛ իմ թեւե՞րս, հիյ չես հարցըներ:
Եւ երկու պզտիկ բանւորներուն ձայները խեղդուեցան կազ-

մատան մուժ սրահին խորը, ծալլուող մեծածաւալ թուղթերու խշրտուքին ու մեքենաներու խուլ դղրդումին մէջ: Առտուընէ ի վեր, շատ կանուխէն գործի սկսած էին անոնք, իրենց մանրիկ մարմիններով ու թեւերով անդադրում շարժած, թուղթ ծալած ու մեքենան դարձուցած էին. և ահա իրիկուն եղած էր, բայց անոնք տակաւին իրենց կարողութեան վերջին մնացորդովը կը տքային, որպէս զի մթնէր բոլորովին ու տուն դառնային: Եւ ո՛չ ոք կրնայ գիտնալ թէ այն ատեն ի՞նչ երանութիւն կ'զգային այս տղեկները, վերջապէ՛ս ազատ համարելով ինքզինքնին:

Այնքան տաժանելի էր իրենց աշխատութիւնը. բայց որո՞ւ կրնային դժգոհիլ: Հազիւ 8-9 տարու տղաք, իրենց ազազուն ու գալկահար մարմինները շատ կարօտ էին անկաշկանդ, բաւարար կեանքի մը՝ աճելու համար: Սակայն աղքատութիւնը հալածած էր զիրենք ա՛յնքան անխղճօրէն որ ոչ միայն զրկուած էին այդ կեանքէն ու դպրոցէն, այլ և բոլոր այն հոգեկան ու բարոյական հաճոյքներէն որ իրենց տարեկիցներուն երջանկութիւնը կը կազմեն: Զիրենք սիրող ու: հոգացող չունէին, քանի որ ծնողքին ռոյրմելի ապրուստ մը ճարելու տաժանքին ենթակայ՝ իրենցմով զբաղելու ժամանակ չէին գտներ: Եւ իրենց այդքան մատղաշ հասակէն գործաւոր եղած, խստապահանջ իրականութիւնը շատ կանուխէն մէյ մէկ պզտիկ փիլիսոփաներ դարձուցած էր զիրենք: Ամառ ձմեռ մուժնուլուսուն, պանիր հացէ կամ միայն ցամաք հացէ բաղկացած յիւղններնին թեւերնուն տակ՝ ջուներնին ծախած, դուրս կ'իյնային իրենց տնակներէն, ժամանակին պատրաստ գրտնուելու համար գործարանին դրան առջեւ: Իբր թէ մինչեւ իրիկուն տեւող յոգնութիւնը չբաւէր, պարտաւոր էին առտուներն ալ սպասելու՝ ցուրտին բուքին, մինչեւ որ կազմատան դուռը բացուէր: Իրենց այս տառապագին կեանքին մէջ էր որ եղբայրագրուած էին իրարու անծանօթ այդ պզտիկ տղաքը: Բարեկամութենէ դուրս ուրիշ ի՞նչ ունէին, ուրիշ ի՞նչ կրնային յուսալ. իրարու օգնութեան փութալ՝ ամէն անգամ որ իրենցմէ մէկը նեղուէր, օրինակի համար՝ դժուարութիւն կրէր մեքենան դարձնելու ատեն, մէկ մէկու թերիները լրացնել կամ ծածկել: Մինչեւ իրիկուն վայն ի վրանին կու գար, բայց նորէն քաջութիւնը կ'ունենային սիրտ տալու իրարու:

Այդ դաժան, անսի՛րտ մեքենան, գործաւորներու ահ ու քարսափը...: Ե՛ննունդի Խթման օրն էր: Ո՞ր տղայ բնազդաբար ու-

րախուժութիւն չզգար որ և է տօնի առիթով: Արտաշ ու Գառնիկ եթէ քիչ մը ուրախ էին, պատճառն այն էր որ երկու օր հանգիստ պիտի ընէին: Ուստի այդ օր քիչ մը աւելի մղուժ կու տային իրենց գործին, որպէս զի իրաւունք ունենային իրիկուան բացառաբար քիչ մը կանուխ մեկնելու: Գառնիկ մեքենան կը դարձընէր նոյն պահուն և Արտաշ թուղթ կը ծալէր:

— Ո՛ւ՛հ, ձեռքս...»: Այս մանկական ճիչն էր որ լսուեցաւ յանկարծ, և Գառնիկ կէս մը նուաղած ինկաւ. մատներմատին ու միջամատին վերի մասերը մեքենային դանակին տակ մնացած ու կտրուած էին: Եւ մինչ գործապետը կը յանդիմանէր զայն անխղճօրէն՝ անուշադրութեանը համար, և մինչ միւս գործաւորները տեղերնուն չէին շարժած տակաւին, Արտաշն էր որ թեւերուն մէջ առաւ արկածեալը, ջուր սրակեց երեսին ու սրտապնդեց. յետոյ ձեռքէն բռնած դեղարան մը տարաւ շուտով:

Գառնիկի աչքին՝ մէկ վայրկեանի մէջ ամէն բան վեր ի վայր շրջած էր: Ո՛չ միայն իր վէրքին ցաւով, այլ և բարոյական վիշտերով կը տառապէր: Աչքին առջեւ կը բերէր շատ մը տխուր հետեւանքներ: Ի՞նչ պիտի ընէր այնուհետեւ առանց մատի. յետոյ ի՞նչպէս տուն պիտի երթար, մայրն ի՞նչ պիտի ըսէր: Նայեցաւ Արտաշին որ ահաբեկ, գորովագին՝ իր վրայ հակած էր, բժիշկին դարմանումին հետեւելով: Իրենց սրտակից բարեկամութիւնը յիշեց, ու մոռնալով ամէն ցաւ՝ մէկ մտահոգութիւն միայն ունեցաւ, իր ընկերոջ վիճակը: Խորհեցաւ թէ ի՞նչպէս ան ալ միշտ միեւնոյն սպառնալիքին ներքեւ կը գտնուէր: Սիրտը շարժեցաւ, և ձայնով մը ուր իր մաքուր, բոլորանուէր հոգին և անասելի եղբայրութիւն մը կը թրթռային.

— Արտա՛շ, աղբարս, ըսաւ, մաքիկան դարձունես նէ նայէ՛ քի՛մ ծառքըդ տանակին քով չտանիս...:

Գ Ե Ղ Ա Մ Բ Ա Ր Ս Ե Ղ Ե Ա Ն

Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ն Ե Ր Ո Ի Ն

Եթէ գովեն քաղաքն ու բիւր պերճանք,
 Ո՛վ գիւղացիք, ձեր ականջներն ըրէք խուլ.
 ձոխ կեանքն ունի իր խոր ցաւերն ու տանջանք.
 Սիրեցէ՛ք դուք ձեր խրճիթները խարխուլ:

Քաղաքին հացն, աւա՛ղ, դառն է քան անուշ.
Ժըպիտին տակ՝ հոն արցունք կայ շատ անգամ.
Եւ ձեր պարզուկ կեանքին անկեղծ և անփուշ
կը նախանձին ամէնէն ճոխն ու փարթամ

• Աշխատանքէն յետոյ, ամէն իրիկուն
Ձեր երգիքին տակ կը հանգչիք անվրդով.
Քաղաքացին մինչ տաժանքով օրն ի բուն
Յոգնելէ ետք, տուն կը դառնայ հոգեխռով:

Քաղաքին մէջ՝ աղքատութիւնն է զագիր.
Գրգռեակին տակ ի՞նչ կիրքեր կան թաքթաքուր:
Ձրկեալն այնտեղ ոճրին առջեւ չը կասիր.
Մինչդեռ գեղջուկն աղքատ կ'ապրի միշտ մաքուր:

Ձրկանքներով կ'ըլլայ տղոան ձեր չարքաշ.
Անո՛նք են որ կորով կու տան իր բազկին,
կը պահպանեն իր հաւատքը մեծահրաշ,
Իր գորովը ընտանիքին, սէրն ազգին:

Մի՛ բաժնըւիք ձեր արտերէն, ձեր ձորէն,
Սիրեցե՛ք ձեր հողն ու լեռներն ու վըտակ.
Ձեր քրտինքո՛վ կ'ապրի աշխարհք համերէն.
Վեհ է ձեր գործն ու օրհնեալ է ձեր վաստակ:

(Թարգմանարար) 1911

Ս Ի Պ Ի Լ

Պ Ի Ի Յ Օ Ն Ի Կ Ե Ա Ն Ք Է Ն

Յրանսացի մեծանուն բնապատու մը հարուստ ընտանիքի մը
զաւակն էր, բայց աշխատասէր կեանք մը վարեց: Ջարմանալի
գործունէութիւն մը ունէր. այն անձերէն էր որոնց մասին Հոռով-
մայեցիք կ'ըսէին. «Անհաւատալի՛ ճարտար, եզակա՛ն փութաջան»:

Պիւֆօն ժամանակը սահմանափակ գանձ մը կը նկատէր և կը
հաւատար թէ կորսուած ժամանակը կրկին ձեռք ձգել անկարելի

է, ուստի շատ խնայողութեամբ կը գործածէր զայն: Մինչեւ որ հանգիստի պէտք չզգար՝ չէր թողուր աշխատութիւնը: Տղայու թեանը չափաւոր տաղանդի մը տէր էր, բայց աշխատասիրութեամբ՝ գիտական աշխարհի մէջ երեւելի հանդիսացաւ: Միտքի կարողութիւններն ու զարգացան, մանաւանդ որ իր սորված բաներն արտայայտելու դժուարութիւն ունէր:

Ասկէ վատ — թէեւ անհաւատալի — անհոգ, ծոյլ մէկն էր սկիզբները: Իր կեանքին առաջին մասին մէջ ժամավաճառ եղաւ յոյժ՝ աւտուները կանուխ անկողինէն չկարենալ ելլելու սովորութեամբը, զոր կը ճգնէր մոռնալ: Մինչեւ որ իր ժողէֆ սպասաւորին օգնութեամբ յաղթեց անոր: Պատուիրած էր որ զինք կանուխ արթնցունէ, և ամէն անգամուն որ ծառան յաջողէր՝ մէյմէկ ֆրանք պիտի ստանար. բայց իեղճը դրամի տեղ յանդիմանութիւն ընդունեց յաճախ՝ չյաջողելուն պատճառաւ: Սակայն ժողէֆ միտքը դրած էր դրամն անպատճառ շահիլ. ուստի իր հնարքները կրկնապատկեց՝ տէրը կանուխ արթնցունելու համար, և այլևս կարեւորութիւն չտուաւ անոր աղաչանքներուն, յանդիմանութեանց ու նոյն իսկ պաշտօնէն արձակելու մասին ըրած սպառնալիքին: Առտու մըն ալ Պիւֆօն սովորականէն աւելի յամառ երեւելով, ծառան խորհեցաւ որ բուռն միջոցի մը դիմել հարկ է. աման մը պաղ ջուր թափեց տիրոջը կուրծքին: Այս կերպ միջոցներ բազմիցս կրկնուելով՝ Պիւֆօն թօթափեց վրայէն իր գէշ սովորոյթն ու օր մը ըսաւ բարեկամի մը. «Բնական Պատմութեան 4 հատորները ժողէֆի կը պարտիմ»:

Քառասուն տարի իր գրասեղանին առջեւ՝ աշխատեցաւ, ամէն աւտու ժամը 9էն մինչեւ 2, իրիկուններն ալ 5էն մինչեւ 9: Իր աշխատասիրութիւնն ա՛յնքան յարատեւ ու կանոնաւոր էր որ այլեւս այդ բանը կեանքին մէջ սովորութիւն մը և պէտք մը դարձաւ իրեն: Արեւմտեւ հաճոյքն էր սորվիլը: Իր փառաւոր ասպարէզին ծայրը հասնելուն՝ «Երեք-չորս տարի ևս կրնամ դեռ ուսմունքիս զոհել» ըսաւ:

Զոնաց միշտ իր լաւագոյն մտածումները լաւագոյն ձեւերով հրամցունել ընթերցողին. գրածները կրկին ու կրկին կը կարդար. այնպէս որ իր ոճին համար կրնանք ըսել թէ կարելի եղածին չափ կատարելութեան մօտ է: Իր *Époques de la Nature* անուն երկը 11 անգամ օրինակեց, մինչեւ որ հաւնեցաւ անոր, մինչ յիսո՛ւն տարի խորհած էր՝ նոյն գիրքին պատրաստութեանը համար:

Գործնակա՛ն ալ մարդ էր Պիւֆօն. ամէն գործ կարգ-կանոնով կը տեսնէր և սովոր էր ըսել թէ առանց կարգի՝ հանճարը ^{3/4}ը կը կորսնցունէ իր կարողութիւնն:

Համոզուած ըլլալով որ հանճարը միշտ միեւնոյն առարկային վրայ ուղղուած խորին ուշադրութեան մը պտուղն է, մեծ հաճոյք կ'ըզար գրածները միշտ սրբագրելով և զանոնք ևս քան զեւս լաւ գտնելով: Գիտնալ պէտք է մանաւանդ որ Պիւֆօն իր հոյակապ գործերն երկնած և հրատարակած ատեն՝ ամէնէն գէշ հիւանդութեամբ մը կը տառապէր:

Ս Ա Մ ՈՒ Է Լ Ս Մ Ա Յ Լ Ս

Գ Ե Ղ Ե Ց Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Ես ուրիշ մեծ մարդ չեմ գիտեր, բացի անոնցմէ որոնք մեծամեծ ծառայութիւններ մատուցած են մարդկութեան:



Աշխատութիւնը յաղթող է ամէն դժուարութեանց:



Այսուհետեւ աշխարհիս տէրերն են Աշխատանքն ու Գիտութիւնը:



Արուեստները յեղափոխող մեծ հնարիչներ ընդհանրապէս աղքատ խրճիթներէ ելած են, և ոչ թէ համալսարաններէ: Բեհեզներ չեն հագնիր անոնք, այլ քուրձ. և յաճախ մուխով ու փոշիով սեւցած են՝ ադամանդներով փայլելու տեղ:



Ճշմարիտ հնարիչն է ընդհանուր մարդկութիւնը, երբ յարատեւութեամբ և հաստատամտութեամբ աշխատի:



Ամէնէն հասարակ բաներու մէջ անգամ հրաշքներ կը գործէ յարատեւ աշխատանքը:



Դիւրութենէն աւելի՝ Պէ՛տքն է որ ստեղծած է հնարքները, որովհետեւ փորձառութեան լաւագոյն դպրոցը Թշուառութեան դպրոցն է:



Եթէ հանճար ունիք՝ աշխատանքը զայն պիտի զարգացունէ, իսկ եթէ չունիք՝ դարձեալ աշխատանքով պիտի կրնաք անոր տեղը լեցունել:



Ամէն աշխատութիւն հաւասարապէս ազնիւ է: Չկայ տխմար արհեստ, այլ տխմար մարդ: — Արեւելեան առածն ալ կ'ըսէ. «Արհեստին գէշը չըլլար, մարդո՛ւն գէշը կ'ըլլայ»:



Չանձրոյթը հիւանդութիւն մըն է որուն միակ դեղն է Աշխատանքը:



Անօթութիւնը բանող-դատող մարդուն դուռնէն ներս կը նայի, բայց չհամարձակիր ներս մտնելու:



Աշխատանքն այն հանճարն է որ աշխարհիս տգեղութիւնը գեղեցկութեան կը փոխէ, և մեծ անէծքը կը փոխէ մեծ օրհնութեան:



Մշա՛կ, քիչ խօսէ՛, շատ սկօսէ՛:



Թողո՛ւն որ գործենք. թողո՛ւնք որ խօսին:




Թշնամանքէ մը վրէժ լուծելը հաւասարիլ է թշնամին. իսկ անոր ներելը՝ խիստ վեր բարձրանալ է անկէ:



Բնութեան մէջ գտնուող բոլոր էութիւններէն՝ զորս ուսումնասիրեցի,—կ'ըսէ Քիւվիէ՝ Ֆրանսացի նշանաւոր բնապատումը,— չգտայ բան մը աւելի՛ վնասակար քան ծոյլը:



Ով որ աւելորդը կը գնէ, պիտի ստիպուի օր մը ծախել կարեւորը:





Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ա

Մ Ե Ր Ը Ն Կ Ե Ր Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Ք Ե Ր Ը

1. Ա Ր Դ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Արդար ըզարու մեր պարսֆը. — Ուրիշին կեանքը, պատիւն ու երջանկութիւնը չյարգող մարդը կը կոչուի անարդար: Անարդարը թշնամի կը նկատուի ընկերական կեանքին, ամէնուն, քանի որ իր անարդարութիւններով բարբարոսութիւնը հրաւիրած կ'ըլլայ նորէն, ուրկէ դուրս ելլելու համար գիտենք թէ մարդիկ միասին ա՛յնքան դարեր աշխատած են:

Արդարութիւնը սիրելու, արդար ըլլալու համար երկու ըան խիստ կարեւոր են: Նախ, տեսնել թէ ո՞րը ճիշդ է, արգար է և ո՞րը սխալ, անիրաւ. յետոյ՝ միտքը դնել՝ ընել մի միայն ուղիղն ու ճիշդը:—Անարդար գործ մը կատարած ատեննախ խորհի՛նք որ եթէ աշխարհի վրայ ամէն մարդ անարդարութիւն ի գործ դնէր՝ միասին ի՞նչպէս պիտի կրնային ապրիլ մարդիկ: Սրինակի համար, եթէ մեզ հակառակող անձեր ծեծէինք և ամէն ոք նոյնն ընէր, ի՞նչ պիտի ըլլար ընկերութեան վիճակը:

Արգարասէր, պատուաւոր մարդուն պարտականութիւնն է բողոքել անարդարութեան դէմ և օգնութեան փութալ անմեղին՝ երբ տեսնէ թէ անիկա զո՞հ մըն է վատերու, չարերու:

Մաշդասպան չըղանիս.— Ի՞նչ ահարկու բան պիտի ըլլար եթէ ներելի ըլլար իրար սպաննելը: Արդարութեան առաջին պարտքն է սպանութիւն չգործել: Աւելորդ է խօսիլ թէ տղաք ո՞րքան կը վախնան ոճրագործներէ. բայց այս վերջիններն ալ մանուկ եղած ատեննին սուկացած են ոճրագործներէ, և, գինովներու, այքոյամուներու պէս՝ անզգայարար է որ դիմած են անդունդ: Ատոնցմէ շատեր կամ ծոյլ եղած են կամ ախտաժէտ: Ոմանք օղիի կատաղութեան տակ իրենց եղեռնը գործած են, ուրիշներ ալ՝ նախանձու ազդեցութեամբ. որով չարութեան, նախանձի, արբեցութեան և խաղամոլութեան պէս գէշ կիրքեր կրնան մարդս մղել ոճրագործութեան:

Միւսները. — Յայտնի մարդասպաններուն քով կան շատ մը ուրիշներ ալ, — երկրորդականներ — որոնք թէեւ գէնքով չեն սպաններ, բայց իրենց չար վարմունքով պատճառ կ'ըլլան ուրիշներու տկարանալուն, վըշտանալուն, որով անոնց մեռնելուն: — Մարդեր ալ կան որ իրենց ամբողջ կեանքերնին անցուցած կ'ըլլան իրենց ընտանի մէկ անասունին հետ՝ անոր օգտակարութիւնը լիովի վայելելով. և ահա կենդանին օր մը կը ծերանայ կամ կը հիւանդանայ. տէրը կը լքէ զայն, կը թողու որ անօթի ծարաւ՝ խեղճը մեռնի: Տեսակ մը ոճրագործներ ալ այդ ապերախտ անգութները կը սեպուին:

Ճիգիքական չափազանց յոգնութիւններ, գէշ սընունդ, վատուժներու տրուած չարչարանքներ կեանքը կը կարճեցունեն: Ուստի, ո՞վ որ մանչերն ու աղջիկները չարաչար կ'աշխատցունէ՝ ոճրագործ մըն է: — Ոճրագործ մըն է նաև հայր մը որ իր ծուլութեամբ կամ ախտամոլութեամբ՝ թշուառութեան մէջ կը թողու կինն ու զաւակները, կամ, իր խայտառակ վարմունքով պատճառ

կ'ըլլայ որ վիշտէ և ամօթէ մեռնին անոնք: — Ոճրագործներէ վար չեն մնար նաև այն տղաք որ իրենցմէ պզտիկները կը չարչարեն, հազար չարիք կը հասցունեն ընտանի անասուններու: — Ոճրագործներ են նաև անոնք որ տարափոխիկ հիւանդութենէ տառապողներու կզկըզանքին կամ ուրիշ աղտեղութեանց մասին անտարբեր կը գտնուին, տեղի սալով որ ուրիշներ այ նոյն հիւանդութիւններէն վարակուին: Մարդասպանը մէկ հոգիի կեանքը միայն կը չքացունէ, մինչդեռ անոնք իրենց անփոյթ ընթացքով կրնան շատերու մահուան պատճառ ըլլալ: — Եւ դեռ ո՛րքան անանուն մարդասպաններ:

Գերութիւնը. — Հին ատեններ, պատերազմի մէջ բռնուած գերիները կը ջարդուէին: Յետոյ խորհելով որ անոնք ձիերէ ու եզերէ աւելի խելացի են, գրաստներու պէս սկսան աշխատացունել զանոնք: Մարդեր կային որոնք այդ գերիներուն առուտուրովը միայն կ'ըբաղէին՝ զանոնք երկիրէ երկիր տանելով ծախելու համար: — Առաջները, գերիներ չարաչար կը գործածուէին իրենց տէրերէն ու կը խարազանուէին: Այդ խոշտանգումներուն չտոկալով կը մեռնէին: Ասիկա օրէնքով թոյլատրուած վայրագութիւն մը, չարագործութիւն մը չէ՞ր միթէ: — Գերավաճառներ կրնան համարուիլ նաև բոլոր անոնք որ տկարները կը բռնադատեն աշխատութեան, կամ, բոլոր անոնք որ իրենց ծառայողներուն չարաչար վաստակումին փոխարէն՝ օրական ջնջին վարձ մը կուտան: — Գերավաճառներ են նաև այն կիները պճնամոյ՝ որոնք զաւակներնուն լաւ սնանումին յատկացեալ գրամը կ'երթան ծախսել իրենց արդուզարդի պէտքերուն:

Ստրկութեան խոյնը. — Տարիներէ ի վեր բռնութեան տակ, ստրուկի պէս ապրած ըլլալնուս՝ տգէտ ու վախ-

կոտ , շատերնիս կը սարսափինք «մեծ մարդիկ» ըսուածներէն : Կը կարծենք թէ ուրիշներ կրնան անիրաւ տեղը զմեզ ծաղրել կամ ամբարտաւան ըլլալ մեզ հանդէպ : Այդպիսիներ ազատ քաղաքացիի արժանապատուութեան գիտակցութիւնը չունին . տակուին չեն գիտեր թէ Սամանեան Սահմանադրութիւնը տիրացուցած է զիրենք քաղաքացիի իրենց արդար իրաւունքներուն : Տարօրինակ մեծարանք մը ունին մեծին , ունեւորին ու նոյն իսկ անխոստովանելի միջոցներով հարստացողին համար . առանց մտածելու թէ պէտք է յարգել միայն իմացականութիւնը , պարտաւորութիւնն ու արիութիւնը :

Զրպարտութիւն . — Մեծ չարիք մը գործած կ'ըլլան անոնք որ ատելութենէ կամ նախանձէ դրդուած՝ կերպ կերպ սուտեր կը հնարեն և կը խօսին ասոր անոր մասին : Ամէն ինչ երեւոյթներէ դատողներ՝ առանց վարանելու և ճշմարտութիւնն առանց անկեղծօրէն գիտնալ փափաքելով՝ կը հաւատան իսկոյն այդ ըսուածներուն , և մաս մը բան ալ իրենց կողմէ աւելցունելով՝ կ'սկսին արձագանդն ըլլալ այդ զրպարտութեանց : — Զրպարտողի մը չարաբանութեանց լուռ ու մունջ մտիկ ընողներ մեղսակից եղած կ'ըլլան անոր : Քաջութիւնն ունենանք զրպարտողին դէմ բողոքելու և տարակոյսնիս յայտնելու անոր խօսածներուն մասին , որպէս զի մեր զիմացինը վատարար համարձակ ըլլալէ դադրի :

Չարախօսութիւնը տարբեր է զրպարտութենէն : Չարախօսը չհնարեր , հապա ուրիշներուն ունեցած թերութիւնները մէջտեղ դնելով՝ կը խօսի անոնց մասին : Իրաւ է թէ այդպիսին զրպարտողի մը չափ չար չսեպուիր , բայց երբ , — յանցաւոր կարծուածի մը խօսքերն առանց

ինք անձամբ լսելու և իր դատաստանը կազմելու, — ելլէ չարախօսէ անոր մասին՝ ուրիշներուն խօսածներուն վրայ հիմնուելով, զրպարտութիւն մը ըրած կ'ըլլայ պարզապէս: Որինակի համար, շատեր կան որ կծծի կը նըկատուին և ըստ ախմ կը չարախօսուին. մինչդեռ անոնց մէջ թերեւս այնպիսիներ կան որ ժլատ երեւելով աստիճան ինքզինքնին կը զրկեն շատ բաներէ՝ պարզապէս օգնելու համար իրենց ծնողքին, կարօտ մէկ ազգականին կամ բարեկամին: — Նկատի առնելու ենք նաև չարախօսուած անձի մը վիճակը. տեսնելու ենք թէ ո՞ւր մեծցած է, ի՞նչ տեսակ միջավայրի մէջ. մանաւանդ մտածելու ենք որ մենք եթէ իրեն պէս մեծցած, իրեն տեղն եղած ըլլայինք, անոր գործած յանցանքը պիտի չգործէինք յիմարութեան մը վայրկեանին: Ուստի ներողամիտ ըլլանք անոնց նկատմամբ և չաճապարե՛նք զանոնք բամբասելու տարապարտուց:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Որո՞նք են մեր ընկերական պատճերը. — Ո՞ւր կը կայանայ արդարութիւնը. — Որո՞նք կ'ըլլան մարդասպան. — Բանի՞ ծեսակ ոճրագործ կը ճանցնաք. — Ի՞նչ է գերութիւնը. — Կրե՞նք բռնի գերութեան վիճակներ. — Ի՞նչ տարբերութիւն կայ գրպարտութեան և չարախօսութեան միջև. — Ո՞րն է սոսկային:

2. Ն Ե Ր Ո Ղ Ա Մ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Անկերողութիւնն արգելք է համագործակցութեան. — Մարդոց՝ իրարու հետ գործակցելու համար՝ արդար ըլլալը լուրջ չքաւեր. հարկ է որ մարդիկ ներողամիտ ալ ըլլան, չյամառին ու չըսեն թէ իրենցմէ տարբեր խոր-

հողներ անպատճառ յոռի էակներ են, հապա ընդունին թէ անոնք կրնան իրենցմէ տարբեր խորհիլ, տարբեր կրօնք ունենալ կամ բնաւ չունենալ, սակայն կրնան բարի արարածներ ըլլալ: — Երբ ընկերս արի, բարի ու պարկեշտ է՝ կը սիրեմ զայն, առանց նայելու թէ անիկա իմ կրօնքս չունի եղեր, ոչ ալ իմ գաղափարս: Երբ ընկերս վայրենաբարոյ, կոպիտ սողայ մըն է, չեմ կրնար սիրել զայն, որքան ալ ինձի մօտիկ ու գաղափարակից եղած ըլլայ անիկա, կամ ազգակից: — Պատուական քաղաքացի ու վստահելի անձ մը նկատուելու համար պէտք է հաստատուն կամք ունենալ, ուղղամիտ և արդար ըլլալ:

Ընտանիքներու մէջ տիրող անմիաբանութիւնը, ծեծը, կոիւն ու կրքոտութիւնը՝ զիրար չսիրելէ յառաջ կու գան: Ըմբռնումներու և հայեացքներու տարբերութիւններ կան քաղաքական ու կրօնական կուսակցութեանց մէջ. բայց կոիւին բուն պատճառը չե՛ն ատոնք, հապա շատ անգամ բարութեան ղգացումին պակասն է, նաև աններողութիւնն ու նեղմտութիւնը: Աններող մարդերն են որ կը ջանան ծածկել իրենց կիրքերը, — գողոցութիւն, նախանձ, ատելութիւն, — քաղաքական ու կրօնական կարծիքներով: Դժբախտութիւնը ՚ոն է որ չեն ջանար հասկընալու և սիրելու իրենց հակառակորդները. ներողամտութիւնը կը կայանայ համակրութեամբ անոնց մտիկ ընելուն մէջ:

Միշտ խորհինք որ մենէ աւելի խելացիներ կան: Ո՛չ մէկ եկեղեցի կրնայ ըսել թէ բացարձակապէս ճշմարտութիւնը կը ճանչնայ, ինչպէս նաև ո՛չ մէկ փիլիսոփայ: Գիտուններ և իմաստասէրներ կրնան վաղը ջնջել կատարեալ ու գեղեցիկ նկատուած գաղափար մը, քանի որ իրենք միշտ ճշմարտութիւնը փնտուելու ետեւէ են. և ճշմարտութիւնն ալ կամաց կամաց կը յայտնուի:

Անկերողութեան շարժառիթներ. — Ամէնէն աւելի աններող, նաև նոր գիւտերու և նոր գաղափարներու դէմ ելլող՝ անո՛նք եղած են որոնք ատոնց երեսէն նիւթական վնաս կրած են, կամ, իրենց սնապարծութիւնը ջախջախուած է՝ մինչեւ այն ատեն սխալ սկզբունքի մը յարած ըլլալնուն համար: — Եղած են բաներ՝ որոնց ճշմարտութեան հաւատացած են մեր նախնիք, և սակայն այսօր անոնք ճշմարտութիւն ըլլալէ դաղրած են: Օրինակի համար, մեր նախնիք կը հաւատային թէ երկիրս անշարժ է և արեւն է որ կը դառնայ. համոզուեցան սակայն վերջէն թէ ո՛րչափ սխալ էր գիտցածնին: Եւ ասոր նման գեռ անհամար դէպքեր:

Մարդկութեան բարերարները, գիտուններն ու մեծ խորհողները փոխանակ երախտապարտ զգացմանց արժանանալու՝ շատ տառապած ու շարչարուած են մեծ մասամբ, նախապաշարմանց դէմ կուռելով, սովորամոլութեանց ու գոռոզութեան դէմ պայքարելով՝ յանուն ճշմարտութեան: ու գտնուած են անանկներ ալ որոնք տգէտ ամբոխին կողմէ գանակոծուած ու սպաննուած են:

Խորհելու ազատութիւնը. — Ուրիշները չենք կրնար բռնադատել որ անպատճառ մեր ուզած կերպովը խորհին: Չկան երկու տղաք, նոյն իսկ երկու եղբայրներ որոնք լսացարձակապէս ունենան միեւնոյն ճաշակներն ու փափաքները: Արդ, ի՞նչպէս կ'ուզենք որ երկու մարդիկ անպայման միեւնոյն գաղափարին ծառային՝ կրօնքի, քաղաքականութեան կամ ապրելակերպի մասին: Ամէն ոք խորհելու իր ազատութիւնը թող ունենայ, որպէս զի ուզածին պէս դարգանայ: Չգրադիւնք թէ ի՞նչ կրօնքի կամ դաւանանքի կը պատկանի այսինչը, կամ թէ ի՞նչ է իր աշխարհահայեացքը: Եթէ անիկա պատուաւոր է և

արդարասէր, բաւ է արդէն որ ամէնքը զինք սիրեն: — Արդարութիւնը հիմն է ընկերութեան: Մեզ պէտք չեն մարդոց հաւատալիքները. գործերնին, վարմունքնին պէտք են մեզ:

Քննադատութեան օգուտը. — Անոնք որ զմեզ կը քննադատեն պատուաւոր կերպով, առանց չարամտութեան, շատ օգտակար կ'ըլլան մեզ. պատճառ կ'ըլլան որ խորհինք ու դէմ առ դէմ բերենք մեր մտածումներն ու մեր գործքերը, տեսնելու համար թէ ներդաշնակութիւն կա՞յ անոնց մէջ: Ուրեմն փոխանակ զայրանալու՝ յարգենք ու սիրենք զմեզ անկեղծ սիրտով քննադատողները:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ինչի՞ արգիլիք ե անկերողութիւնը. — Ի՞նչ բանի մէջ կը կայանան սէր ու միասնութիւն. — Որո՞նք անխտր չեն դառնար առարկայ մտ սիրոյն. — Ինչո՞ւ անկերող կ'ըրայ մտդ. — Հին ասնն ժողովուրդէն ի՞նչ ընդունելութեան արժանացած են մարդկութեան բարեբանները, զիտունները. — Պի՞տք ե ազատ խորհիլ. — Ճշմարիտ քննադատութիւնն ունի՞ իր օգուտները:

3. Գ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Գրութեան դերը. — Կուրծքերնուն սակ մարդկային արժանապատուութիւն կրողներուն, ուժեղ բազուկ, կորովի կամք և աշխատելու եւանդ ունեցողներուն ողորմութիւն տալը մահացունե՛լ է զանոնք, երբ աշխատութիւննին պակսի և անօթի մնան: Այդպիսիներուն գործ հայթայթելու է. զա՛յս կը պահանջէ միայն մարդկային համերաշխութիւնը, վասն զի անոնք գթութեան կարօտ

չեն, այլ գործի՝ որով կարենան պատուաւոր կերպով ճարել իրենց ապրուստն, առանց մուրայու, ընկերութեան վրայ բեռ առանց դառնալու: — Անխուսափելի, անակընկալ վիշտեր կան սակայն զորս գթութիւնը լոկ կրնայ սփռիել: Պէտք է գիտնալ միայն թէ որո՞նք են կարեկցութեան իսկապէս արժանի. ապա թէ ոչ՝ գթութիւնը ստուարացուցած կ'ըլլայ ծոյլիրու և գողերու բանակը, չարիքին շատնալուն ալ պատճառ: — Քանի՛ քանի՛ ընտանիքներ՝ մէկ օրէն միւսը սուգի ու կարօտութեան մատնուած են, իրենց աշխատաւոր էրիկ մարդուն յանկարծական մահով. ո՞րքան անտէր հիւանդներ, կազեր, կոյրեր ու որբեր, փողոցները մնացած սղաք՝ իրենց ծնողքին թշուառութեան հետեւանօք: Կթութիւնը պէտք է անարդար ասոնց համար:

Ժրաս չըլլանի վարձի տալու ասեն. — Եթէ արդար կերպով վարուինք և արժանաւորապէս վարձատրենք աշխատաւորը, յայտնի է թէ բաւական թիւով թշուառներ գոյութիւն ունենալէ կը դադրին: Չարաչար աշխատութեան մը փոխարէն չնչին վարձք առնող գործաւորը կամ գործաւորուն ի՞նչպէս կ'ուզէք որ աւուղջ ըլլայ, չհալի, և օր մըն ալ հիւանդանոց տարուելով՝ հասարակաց գթութեան կարօտ չըլլայ:


Բարեգործութիւն մը պէտք չէ որ նուաստացուցիչ հանգամանք ունենայ ենթակային համար: Փափկանկատութեամբ, անզգալի կերպով ընենք զայն և երախտագիտութեան չսպասենք բնաւ: Թշուառներու հետ մեր ունեցած եղբայրակցութեան ու համերաշխութեան ղգացո՛ւմը պէտք է մեզ: — Յախուռն կերպով կատարուած բարեգործութիւն մը իր վնասներն ունի. շատ անգամ

գթութեան անուամբ հանգանակուած դրամներ արհա-
տով մուրացիկներուն, ծոյերուն, թուլամորթներուն
գրպանը կ'երթան. որով մենք քաջալերած կ'ըլլանք ծու-
լութիւնը, դատարկապորտութիւնն ու նմանօրինակ մո-
լութիւններ: — Երբեմն անսիրտ ծնողքներ իրենց տղաքը
գործիք կ'ընեն մուրացկանութեան համար. անցրդներ
բան մը կը դնեն անոնց ձեռքը: Խեղճ պատիկներ, որ
մանկութենէ կը վարժուիք այդպէս մուրացկանութեան,
անամօթութեան, քրահած թելադրութեամբը ձեր հայրե-
րուն կամ մայրերուն՝ որոնք սպրուստնին կ'ապահովեն
ձեր միջոցաւ՝ առանց աշխատելու:

Թշուառութիւն մը գթութեամբ դարմանելէ աւելի՝
աշխատինք զայն ծնցունող պատճառները ջնջել. ապա
թէ ոչ՝ բարեգործութիւնը թէ՛ սուղի կը նստի մեզ և թէ
անօգուտ յոգնութիւն մը կը դառնայ: Սա կայ միայն թէ,
քանի որ ծերերուն չենք կրնար վերադարձունել իրենց
երիտասարդական կոյուղէ, անդամալոյծներ չենք կր-
նար քալեցունել և անբուժելի հիւանդներ աղէկցու-
նել, այդ պարագաներուն մէջ՝ մեզ անկ է սրտանց
նուիրուիլ այդպիսիներուն օգնութեան ու մխիթարու-
թեան գործին:

Կոյրերը, խուշ-համբերը. — Ամէնքս ալ գիտենք թէ
որքան ցաւալի է անոնց վիճակը: Մարդերէ անջատուած
է կարծես իրենցմէ իւրաքանչիւրը: Բայց երբ բան մը
սորվին ու կրթուին՝ առանձնացած չեն մնար աշխարհիս
վրայ. հետեւաբար աշխատինք որ հնարաւորութեան սահ-
մանի մը մէջ ուսանին ու պարսպին անոնք: Եթէ իրենց
յատուկ դպրոցները գրուին՝ կրնան կարդալ-գրելու վար-
ժուիլ, զարգանալ և ի հարկին պատուական գործաւոր-
ներ ու նոյն խակ երաժիշտներ ըլլալ: Կրնան իրենց ապ-


րուսար ճարել և բեռ չըլլալ ուրիշներու վրայ . ընկերու-
թիւնն ալ թեթեւցած կ'ըլլայ այդքան դժբախտներու հո-
գերէն : — Բարեբախտաբար հետզհետէ պիտի նուազի —



ՉԵՌԱՐՈՒԵՍ ՄՐ ԿՈՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ


Ամերիկայի մէջ կոյր երիտասարդներ տեւ շինելու արհեստը
սորված՝ կրցած են սնկախ ըլլալ իրենց օրականը շահելով :

ուսման և առողջապահութեան չ'որհիւ — կոյրերու թիւը :
Շատեր արդէն իրենց տեսողութենէն կը զրկուին՝ աղ-
տոտութիւններու և իրենց ծնողաց սգիտութեան երեսէն :
Գալով խուլ-համբերուն , անոնք ալ կարդալ-գրել և մտա-
ծումներնին ուրիշի հաղորդել սորվելով՝ մեծ բարիք մը
վայելած կ'ըլլան . և եթէ արհեստ մըն ալ սորվին , ալ
կրնան իրենց օրապահիկը ճարել :



ԽՈՒԼ-ՀԱՄԲԵՐՈՒՆ ԱՅՐՈՒԲԵՆԸ

Տը ընթէ արքան հնարեց այս ձեռանիշ տառերը որոնց միջոցաւ խուլ-համրեր կրնան իրարու հետ տեսակցիլ:—Երկու պըռուբեններն ալ մեծ բարիք մը և մխիթարութիւն մը եղած են թշուառ կոյրերուն և խուլ-համրերուն, որոնցմով կրցած են անոնք իրենց ահռելի մեկուսացումէն դուրս ելլել, հաղորդակցելով ուրիշներու հետ:



ԿՈՅՐԵՐՈՒՆ ԱՅՐՈՒԲԵՆԸ


Յրանսացի Լուի Պուպլ՝ 3 տարեկանին արդէն աջազուրկ՝ հնարեց կոյրերու ընթերցանութեան յատուկ այս ցցուած տառերը:

Թշուառութեան պատճառները . — Սովորաբար գործաւոր դասակարգը թշուառութեան մէջ կ'իյնայ հիւանդութեանց պատճառաւ : Կռուի՛նք ասոնց դէմ , ի՛նչ կերպով գիտէ՞ք . առողջապահութեան բարիքները սորվեցունելով ամէնուն , հասկըցունելով թէ մաքուր օդը , պարզ , աննգարար ճաշը , ժուժկալութիւնը , բոլոր ասոնք անհրաժեշտ պէտքեր են մեզ : — Թշուառութեան պատճառ են նաև անհաշիւ ծախսերը : Շատ մը էրիկ մարդիկ ստակներնին գինեստունները կը վատնեն , շատ մը կիներ ալ՝ արդուզարդի խանութները : — Կայ նաև ծուլութեան արդիւնք եղող թշուառութիւնը : Ով որ չօգնե՛ր իր անձին , ուրիշներ երբ իրեն օգնելո՛ւ ալ ըլլան՝ ծուլութիւնը քաջակերած կ'ըլլան պարզապէս : — Ամէն պարագայի մէջ գիտնալու ենք թէ ի՛նչ պիտի ըլլայ մեր բարեգործութեան արդիւնքը . վստահ ըլլալու ենք մանաւանդ որ մեր նիւթական որ և է մէկ օժանդակութիւնը հեւի է ծուլութիւնը քաջակերել :

Բարեբարեղու եղանակներ . — Մարդասիրական մեծ գործ մը կատարած կ'ըլլանք երբ օգնութեան հասնինք լքեալ մանուկներու : Տկարակազմ , վատոյժ տղաք երբ գիւղ դրկուին , գիւղացիներու պէս ապրելով՝ ազատ մաքուր օդէն մեծապէս կ'օգտուին : — Թշուառութեան մէկ ուրիշ աղբիւրն ալ ցամքեցուցած կ'ըլլանք , եթէ մանչերուն արհեստներ սորվեցունենք՝ հաստատուն կրթութեան մը հետ , աղջկանց ալ՝ տնտրարական պիտանի ծանօթութիւններ . որովհետեւ կարօտութիւններ յառաջ կու գան յաճախ՝ տղոց արհեստ մը չգիտնալէն , աղջկանց ալ՝ խորնտեսագէտ չըլլալէն :

Գրութիւնը տղայ հասակէն պիտի կ . — Պզտիկուց

վարժուինք բարի ըլլալու : Երբ մեր ընկերներէն մին հիւանդ է , անտարրեր չվարուինք և հիւանդտես երթանք , եթէ տարափոխիկ չէ հիւանդութիւնը : Իմացանք որ տղայ մը դպրոցէն բացակայիր է . իսկոյն հասկընանք պատճառը . մի՛ գուցէ հազուստ չունի կամ նմանօրինակ բան



ՀԻՒԱՆԴՏԵՍ

Ի՞նչ մեծ սփոփանք՝ անկողինի ծառայողի մը համար՝ այցելութիւնը սիրելիի մը որ անոր վիշտերը կ'ամփքէ յուսատու խօսքերով որոնք յաճախ կրնան դեղէն աւելի բարեբար դեր մը կատարել հիւանդին հոգեկան վիճակին վրայ :

մը կը պակսի իրեն . կը մնայ այն ատեն խնդրել մեր ծնողքէն , որպէս զի կարելին ընեն՝ անոր պէտքը հոգալու համար : — Հաշմանդամ ընկերներու մասին բարի ըլլանք . թոյլ չտանք որ անգութին մէկը ծաղրէ մեր ընկերը : Սիրենք զիրար և միջոյնս խորհինք իրարու օգնելու :

Կիևները շատ քան կարող են ընել. — Առանց պատասխանատուութեան և առանց նպատակի՝ հանգիստ կեանք վարող կիևներ պէտք է որ անկեղծօրէն զբաղին բարեգործութեամբ: Քանի՛ քանի՛ կիևներ փոխանակ իրենց ժամանակը շողակրատութեամբ կամ ձանձրոյթով վատ-




ԱՂԷՏԷՆ ՎԵՐՋ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆ» ՄԸ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

Հայուհիներ մինչև ուշ ատեն կարկահներու վրայ ծուած՝ կ'ստեղծէին անընդհատ, իրենց և իրենց ծնողքին ապրուստը]
պատուաւոր կերպով հայթայթելու համար:

Ներու՝ կրնային միջոցներ խորհիլ օգնութեան հասնելու զաւակներնուն ապրուստին հոգովը տառապող աղքատ մայրերու: Թշուառ ու լքեալ որբեր անոնց կը նային՝ սնանելու և կրթուելու համար: — Պէտք է մանաւանդ գործ հայթայթել ընտանիքի հայր եղող անգործ մնացած մարդերու: — Մտածեցէ՛ք անգամ մը թէ՛ ո՛րչափ անպէտ, սխուր ու տգեղ կերպով կ'անցնին օրերն այն

ունեւոր ու մենակեաց կիներուն որոնց սիրտը չգորովիւր դժբախտներուն վիճակով: Այդպիսիներ բարեպաշտ կը նկատեն ինքզինքնին, որովհետեւ ազօթասիրութեան



ԳՈՐԳԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՄԸ ՍՎԱԶԻ ՄԼՁ

Դեռատի Հայ որբուհիներ—սորված Արեւելքի Թանկագին ճարտարարուեստը եզոզ գորգաշինութիւնը,—նստեր կապերտ կը հիւսեն և պարկեշտօրէն իրենց ապրուստը կը հոգան:

նուիրուած են : Բայց միթէ ճշմարիտ աղօթասիրութիւնը չը կայանար դժբախտներու և կարօտներու օգնելուն մէջ ; անոնց որոնք արցունքի դժնդակ կեանք մը կը բոլորեն օրերով :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ դեր կը կատարէ գրութիւնը. — Ե՛րբ ժրօս ըլլալու եմք եւ Ե՛րբ անսիրտ՝ բարեգործելու ստեննինք. — Ի՞նչպէս պէտք է վարուիլ. — Ի՞նչ կրնանք ընել կոյրերուն, խուշ-համբերուն եւ կատօս հիւանդներուն. — Որո՞նք են բշտաւորական պատճառները. — Ինչո՞վ կրնանք կռուիլ անոնց դէմ. — Գիտե՞ք բարեբարելու կերպեր. — Ո՞ր տարիքն վարժուելու եմք գրալու. — Ի՞նչ կրնանք ընել հարուստ կիները՝ ջհառքաակարգին :

Ը Ն Յ Ե Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր Ե. Մ Ա Ս Ի Ն Յ Ա Տ Ո Ւ Կ

Չ Գ Ա Յ Ն Ա Չ Ա Փ

Ե՛րբ Պրահման մը իրիկուն մը տուն կը վերադառնար՝ վերջալոյս էր, երբ մտեցաւ քաղաքին՝ Յանկարծ տեսաւ երկու մանուկներ որ կծկտեր էին վրանաձեւ լաթի մը տակ : Մօտ գնաց և առանց տեսնելու զանոնք՝ ջանաց լսել անոնց խօսակցութիւնը : Մին փոքրիկ աղջիկ մըն էր որ կու լար և հաց կ'ուզէր. անօթի էր : Միւսը՝ մանչ մը քրոջմէն աւելի հասակաւոր՝ կը միտթարէր զայն, առարկելով որ մայրիկը շուտով կու գար և հաց կը բերէր :

Ու իրաւ ալ քիչ յետոյ եկաւ մայրիկը՝ յոգնած ու տժգոյն : Գալուն պէս, զամբիւղէն հաց մը հանեց ու դրաւ պղտիկներուն առջեւ : Աղջիկն իսկոյն հացին վրայ ինկաւ ազահուլթեամբ. իսկ աղան երկու կտոր ըրաւ հացը, կտորին մէկը գաղտնաբար անկին մը պահեց, միւսն ալ ուզելով բաժնել մօրը հետ : Ին որովհետեւ մայրը մերժեց ուտել, ինք կերաւ ամբողջը :

Տղուն այդ վարմունքը հետաքրքրութիւնը շարժեց Պրահման : Ին որ որոշեց յաջորդ օրը գալ և տեսնել թէ աղան արդեօք պակաս անօթեցած էր աղջիկէն : Միւս օր, կէս օրէն վերջ, քաղա-

քէն ելաւ և դէպ ի վրանը գնաց: Առանց աղմուկի մտեցաւ. մի-
եւնոյն բանը տեսաւ: Աղջընակը կու լար և հաց կ'ուզէր, իսկ
տղան կ'աշխատէր զայն մխիթարել: Վերջապէս երբ տղան տեսաւ
թէ աղջիկը ձայնը չէր կտրեր, առջի օրուան պահած հացը հանեց
ու քրոջը տուաւ: Բոլորն առաւ, ուզեց բերանը տանիլ, բայց իսկոյն
գետին ձգեց ու ըսաւ. «Զ՞ մի որ քուկին հացդ է ասիկա: —
«Ես անօթի չեմ, ինչ ընեմ պիտի»: — «Ե՛ս ալ չեմ ուզեր: —
«Ինձի՛ ալ պէտք չէ:» Բլ հացը մնաց գետինը. փոքրիկներէն ո՛չ
մին կ'ուզէր անոր դայիլ: — «Այլէ՛կ եղաւ, մտածեց Պրահմանը, հա-
ցի այդ կտորին շնորհիւ՝ աղջիկը մինչեւ իրիկուն ալ եւս հան-
դարտ կը կենայ ու չի լար»:

Եւ երբ Պրահմանը տուն կը դառնար, խորհեցաւ Առաքինու-
թեան մասին: Մտածեց ու գտաւ որ Առաքինութիւնը զգացում-
ներէ ծնած է: Ետքն ալ մտածեց թէ արդեօք կարելի չէ՞ր չա-
փել մարդկային զգացումներուն աստիճանը՝ գործիքով մը, ինչպէս
որ կը չափուի ջերմութեան աստիճանը:

Որոշեց շինել զգայնաչափ մը: Առաւ որբի արցունքէն քանի մը
կաթիլ, լեցուց ապակիէ բարակ խողովակի մը մէջ ու դէպ ի վրանը
գնաց: Հոն, խողովակը դրաւ տղուն սիրտին, և երբ արցունքն
եռաւ սկսաւ, խողովակին վրայ նշանակեց եռացման կէտը՝ 100
թիւով: Յետոյ գտաւ խորթ մայր մը և անոր՝ իր խորթ դակին
հանդէպ տածած զգացումները չափելով՝ նշանակեց 0: Այսպէս
վեր ու վար բաժանումներ ընելով զգայնաչափը պատրաստեց:

Պէտք էր սակայն արցունքին սառելու կէտը գտնել, ինչպէս
որ ջերմաչափին մէջ սնդիկին սառուցման կէտը կայ: Ատոր համար
ալ Պրահմանը բոլոր քաղաքը, վերջն ալ բոլոր աշխարհը սկսաւ
շրջագայիլ իր գործիքով, փնտռելով ամենավատ չարագործներ:
Ո՛չ մէկ դէպքի կը սառէր արցունքը: Եւ եզրակացուց որ կ'երեւի
թէ արցունքի սառուցման աստիճանը չէր գտնուած: Բլ դադրե-
ցուց իր հետախուզութիւնը:

Հանձարեղ գիւտին հռչակը կը տարաձայնուէր ամենուրեք:
Հարուստ ու աղքատ, խելօք կամ յիմար կու գային Պրահմանին
մօտ: Ամէն մարդ կ'ուզէր իմանալ իր զգացումներուն աստիճանը,
հա՛րց որ առանց գործիքի դժուար կը լուծուէր:

Վերջապէս կին մը եկաւ որ իր ամբողջ կեանքն անցուցած էր
եկեղեցիին ծառայելով: Մանօթ էր ինք իբր խիստ ջերմեռանդ,
և ո՛չ ոք կը կասկածէր անոր առաքինութեանը վրայ: Կինը գի-

տէր թէ, Աստուծոյ նուիրուած իր կեանքով՝ իր զգացումներն
 ամենքան վստահեցուցած էր որ, ամէնուն սխալներն արհամարհելով,
 ինք միայն արժանի էր տիրապետելու երկնային բոլոր վարձա-
 արութեանց: Ասանկ բացարձակ բարոյականի տէր անձ մը ու-
 թեմն հարկ չունէր գիտնալու իր զգացումներուն քանակութիւնը:
 Բայց անոր ուզածն այն էր որ գոնէ մէկ անգամ կարողանար ակ-
 աներեւ կերպով փայլեցունել ամբոխին առջեւ իր առաքինութիւնը:

Ուստի հպարտութեամբ միտեցաւ գործիքին: Արցունքը վայր-
 կենապէ՛ս վար իջաւ ու . . . սառեցաւ: Պրահմանը հիացած՝ ու-
 թախութենէն վեր ցաթկեց, օրհնելով կիւնը: Նշանակեց իսկոյն սա-
 ռուցման կէտը, քովն ալ սա խօսքերն արձանագրելով. «Առա-
 քինութիւնը՝ վատթարութեան աստիճանին»:

Կիւնը կատղեցաւ. տաճարին սեմին վրայ ելլելով՝ բարձրա-
 ձայն գրգռեց ամբոխը սատանայական գիւտերու դէմ և խոր-
 հուրը տուաւ ոչնչացունել զգայնաչափը, յանուն ամենամեծ փա-
 ռացն Աստուծոյ. . . :

Բարեպաշտները գրգռուեցան. «սուրբ» կրակով վառուած՝
 յարձակում գործեցին Պրահմանին տանը վրայ ու փշրեցին գոր-
 ծիքը: Այլ եւս չկար զգայնաչափ:

Ու այդ օրէն ի վեր է որ, ահա, կշիռ մը չկայ այլեւս մարդ-
 կային առաքինութեանց ու զգացումներուն համար:

Վ Ի Թ Ա Ն Է Ս Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

(Ռուսահայ լեզուով գրուած այս ԶՐՈՅՑԸ
 Պօրսահայ աշխարհաբարի վերածուած):

Ա Թ Ր Ի Ի Զ Ա Ն Գ Ա Կ Ը

Աթրի՛ իտալիոյ մէջ պզտիկ քաղաքի մը անունն է. շատ հին
 քաղաք մըն է, կառուցուած՝ սեպ բլուրի մը կողքին: Ատեհօք,
 Աթրիի թագաւորը խոշոր ու գեղեցիկ զանգակ մը գնեց, և հրա-
 պարակին վրայ՝ աշտարակէ մը կախել տուաւ: Երկայն, մինչեւ
 գետին հասնող չուան մը կապուած էր անոր. տղե՛կ մը իսկ այդ-
 չուանին կրնար հասնիլ՝ քաշելու համար զայն:—Արդարութեան
 վանգակն է ասիկա՝ ըսաւ թագաւորը:

Երբ ա՛լ ամէն բան պատրաստ էր, Աթրիի ժողովուրդը տօնական օր մը ունեցաւ: Տղայ, էրիկ մարդ ու կին, բոլորն ալ հրապարակ եկան, արդարութեան զանգակին այցելելու:— «Տեսէ՛ք, յղկուած է և արեւի պէս դեղին, կ'ըսէին շատեր, ո՛րչափ ուրախ պիտի ըլլայինք եթէ հնչէր...»:

Նոյն պահուն թագաւորը կ'անցնէր. հրապարակը կեցաւ բայց զանգակը չզարկաւ, ու ձեռքը վեր առնելով. «Սիրելի՛ ժողովուրդ, ըստւ, կը տեսնէ՞ք այս դեղեցիկ զանգակը. ձեր զանգակն է ասիկա, զոր պէտքի պարագաներու մէջ միայն զարնելու էք: Ձեռնէ՛ ո՛վ որ անիրաւուի օրին մէկը՝ թող դայ և այս զանգակը հնչեցունէ. դատաւորներ պիտի հաւաքուին խկոյն, դատը պիտի լսեն եւ գոհացում պիտի տան անոր: Հարուստ, աղքատ, ծեր, երիտասարդ, ամէնքն ալ պիտի գան. բայց ո՛չ ոք պիտի դպի չուանին, մինչեւ որ վստահ չըլլայ թէ անիրաւեալ է»:

Տարիներ անցան. հրապարակին զանգակը շատ անգամներ հնչուեցաւ ու դատաւորներ հաւաքուելով անիրաւութիւններ դարմանեցին ու չարագործներ պատժեցին: Բայց չուանին ծայրը մտած էր այլ եւս ու անոր հիւսքը քակուած. այնպէս մը կարճըցած էր որ բարձրահասակ մարդ մը հագիւ կրնար անոր համիլ:

«Աս ասանկ չ'ըլլար.— դատաւորներն ըսին օր մը, —ի՞նչ, եթէ տղու մը անիրաւութիւն ըլլայ՝ պիտի չկրնա՞յ ան մեզ իմաց տալ:» Որոշուեցաւ նոր չուան մը անցունել անմիջապէս, որպէս զի պզտիկ տղալ մը անգամ կարենար անոր համիլ: Սակայն ամբողջ քաղաքին մէջ չուան չգտնուեցաւ: Հարկ եղաւ մէկը դուրս դրկել՝ ուրիշ տեղէ մը ճարելու համար:

«Կեցէ՛ք, ըսաւ մարդ մը, ես հատ մը դնեմ անոր տեղ:» Վազեց պարտէզ ու բերաւ որթատունկի երկայն ոստ մը:— «Ասիկա կրնայ հիմակուհիմայ չուանին տեղը բռնել» յարեց: Եւ վեր մագըցելով չուանը քակեց, անոր տեղ ոստը կապեց որուն վրայ վերէն վար կանանչ խիղբեր ու տերեւներ դեռ կային:— «Այո՛, ըսին դատաւորները, թող մ'նայ եղածին պէս. աղէ՛կ եղաւ»:

*
* *
*

Քաղքին վերերը, բլուրին կողմը, կ'ապրէր մարդ մը որ ատենօք նշանաւոր ասպետ մըն էր: Երիտասարդութեանը շատ երկիրներ երթալուն և պատերազմներու մասնակցելուն՝ իր ձին եղած

էր լաւագոյն բարեկամը, հուժկու երիւար մը սը իր տէրը կրած էր ա՛յնքան վտանգներու մէջէ՛: Բայց առպետը տարիքն աւնեւուն՝



Տիրոջիկն սնօրի մնացող ձին՝ քափառակամ՝ եկած է
բանի մը սերել կրծելու:

հետամուտ չեղաւ այլ ևս քաջագործութեանց. իր մտածումին ա-
ռանցքը դրա՛մն ըրաւ միայն, որով սոսկալի ազահ՝ մը դարձաւ:
Ծախեց ամէն բան, բաց ի իր ձիէն. սկսաւ նայիլ ոսկիի իր քսակ-
ներուն և խորհիլ թէ ինչո՞վ կրնար շատցունել զանոնք: Այսպէսով,

ձին լքուած մնաց իր դատարկ ախոռին մէջ, կէս մը նօթի ու ցրտահար — ի՞նչ հարկ պահել սյս անօգուտ կենդանին, առտու մը կծծին ըսաւ ինքնիրեն. ամէն շաբթու իր արժէքէն աւելի սուղի կը նստի ինձ: Ի՞նչ տալով, բայց մէկո՛ւ մըն ալ պէտք չէ: Դուրս թող կու տամ, որ երթայ ինքզինք հոգայ և խոտ ուտէ ճամբու եզերքներէ: Անօթութենէն եթէ մեռնի, աւելի՛ լաւ...»

Պատուական ու ծերուկ ձին արձակուեցաւ վերջապէս իր ախոռէն, որպէս զի բլուրին ժեռուտ կողերուն վրայ կրցածը գտնէ: Կաղնի կաղ ու տկար, անցաւ փոշոտ ուղիներէն, ուրախ՝ երբոր քիչ մը խոտ և ուղտափուշ գտնէր: Տղաքը քարեր նետեցին անոր ու շուններն ալ հաջեցին. մա՛րդ չկար՝ անոր վրայ գթացող: Տաք միջօրէին, երբ ո՛չ ոք կար փողոցը, ձին ըստ բախտի թափառելով հրապարակ հասաւ: Որթատունկին ոստը նշմարեց յանկարծ՝ կախուած «Արդարութեան Զանգակէն» վրայի տերեւներն ու խիղբերը թարմ էին տակաւին, որովհետեւ շատ ատեն անցած չէր: Ի՞նչ աղւոր ճաշ մը կրնային ըլլալ ատոնք՝ անօթութենէ կիսամեռ հէք ձիուն համար: Եւ երբ իր նիհար վիզն անկա երկնցուց և բերնովը բռնեց իր ախորժակը գրգռող ոստին մէկ դիէն, զանգակը զարնուիլ սկսաւ խկոյն:

Աթրիի դատաւորները պաշտօնական զգեստներնին հագնելով փութացին հրապարակ, և երբ մարդու տեղ անասուն մը տեսան՝ ապշահար մնացին ու ըսին. «Ազահին ձին է. ամէն մարդ գիտէ թէ ո՞ր աստիճան անգութ վարուած է տէրն իրեն հետ. պէտք է արդարութիւն ըլլայ» — Զանգակին ձայնէն՝ հետաքրքիրներու բազմութիւն մը խոնուած էր հոն և ամէն ոք գիտցածը կը խոստովանէր, թէ ի՞նչպէս խեղճ կենդանին անօթի ծարաւ բլուրները կը թափառէր միշտ, մինչ տապտը տունը նստած՝ սակներուն քսակները կը համրէր միտն: — «Կայէք, հո՞ս կանչեցէք սա մարդը» գոչեցին օրէնքի պաշտօնեաները միտքերուն:

Մեծեր ու պզտիկներ իրենց առջեւ ձգած համբաւաւոր ազահը՝ քիչ մը յետոյ հասան հրապարակ: Դատաւոր մը խօսք առաւ ու ըսաւ անոր. — «Այս ձին տարինե՛ր ծառայեց ձեզ, շատ վտանգներէ փրկեց զձեզ և օգնեց ձեզ որ հարստութիւննիդ դիզէք: Ուստի կը հրամայենք որ ձեր հարստութեան կէսը տրամադրէք՝ պատասխան և սնունդ հայթայթելու համար անոր. ազատ աղւոր արտավայր մը ճարակելու, տաքուկ ախա՛ւ մըն ալ՝ ուր ձեր բարեացապարտը կարենայ անցունել իր ծերութեան»

օրերը:—Տէրը գլուխը կախեց և ցաւեցաւ՝ խորելիք ոսկիները միտք բերելով, մինչ ժողովուրդը ցնծութեամբ ընդունեց դատաւարներուն վճիռը:

Թարգմ. Ա Ն Գ Լ.

Հ Ր Ե Ա Յ Փ Ե Ր Ե Զ Ա Կ Ը

Խեղճ փերեզակն յանկարծ մեռաւ այս գիշեր,
Եւ չը տըւին զայդ մը տախտակ դազաղին.

Դարբինն անգամ ժանգոտ գամ մը կը մերժէր:
«Անիծապարտ Հրեայ մ'է ան, կ'ըսէին,
«Թշնամի' մը մեր Աստուծոյն պաշտելի
«Զոր կը խաչեն եթէ նորէն գայ աշխարհ:
«Իր դիակը պղծութիւն մ'է գարշելի.
«Քաշե'նք, նետե'նք շուտով շան պէս ծովն ի վար»:
Փերեզակին կինն ու տըղաք վըշտահար՝
Կը հայցէին անցորդներուն գութն անզօր,
Եւ խուժանին կոյր զգուանքին դէմ տխմար՝
Կը ջանային պահել դիակն իրենց հօր:
Յետոյ, անոր ձիգ ոտքերուն կառչելով,
Կ'արգիլէին այդ նախատինքն արտառոց:

Այս անսիրտ գործն երբ իմացայ դիպուածով,
Հոն վազեցի, և ճեղքելով ամբոխն հոժ՝
Երկու ձեռքերս երկարեցի խեղճերուն.
Կշտամբեցի Գրիստոնեաներն այդ անգուլթ
Եւ գոչեցի շիկնած, ձայնով կերկերուն.
«Գայէ'ք մահճիս տախտակները բերէ'ք շուտ»:
Այս երկու բառս յուզեց սիրտերն անողոք.
Եւ փութալով փերեզակին տըղոց մօտ՝
Կը ջանային օգնել անոնց արտորնօք,
Իրենց հոգին լեցուած գուլթով մ'անծանօթ:

Հայաստոց ՍիՊիլ,
1911

Լ Ա Մ Ա Ռ Թ Ի Ն

... Արեւմուտքը վարդ ամպերու մէջ կը ճաճանչէր. փոթորկոտ օրուան մը իրիկունն էր՝ ուր հորիզոնն իր հուր վառարանին մէջ բացի կը վերածէր թօնընկէցը:

Անուահետի մը մօտ, անձրեւէն դոյացած ճահիճի մը եզրը, դօդօշ մը շլմորած՝ երկինքը կը դիտէր: Սոսկալին հիացմամբ կը նայէր շքեղութեան:

Ա՛խ, ինչո՞ւ տառապանքն ու ինչո՞ւ տգեղութիւնը: Տիեզերք, ափսո՛ս, հակադրութիւններով լեցուն է, յանցապարտ մարդերով, շարաւոտ գորտերով, ծաղկաւէտ մարդերով ու արեւոտ երկինքով:

... Հոնկէ անցնող մարդ մը տեսաւ ժանտատեսիլ կենդանին, ու պօզամօք՝ կրուկի հարուած մը փակցուց անոր գլխուն: Տէրտէր մըն էր ան, ձեռքը գիրք մը՝ կարդալու զբաղած: Յետոյ կին մը եկաւ, չփակին ծաղիկ մը խօթած, ու անոր աչքը պայթեցուց հովանոցին ծայրովը: Ալեւոր էր քահանան, կինն ալ գեղեցիկ:

Չորս դպրոցականներ եկան, երկինքին պէս պայծառ: Զուարթ դպրոցականն ի՞նչ կրնայ ընել՝ երջանիկ արարած մը խոշտանգելէ զատ: Դօդօշը կը քաշկռտուէր ամույի ճամբուն խորը — «Սատկեցունե՛նք սա աղտոտ անասունը» ձայնեցին. և ահա ամէնքնին մէկ խնդալէն՝ սկսան մշտել սրածայր ճիւղով մը, անոր պայթած աչքին ծայրը բանալով: Սեւ մարտիրոսը ճիկ մը հանելո՛ւ է իսկ անկարող էր: Եւ արիւնը կը վազէր ամէն դիէն այս խեղճ էակին որ իբր ոճիբ՝ Տգեղութիւ՛նն ունէր իր վրայ: Որչա՛փ սև բան է թշուառութիւնը սաստկացունելը, տձեւութեան վրայ սոսկո՛ւմն ալ աւելցունելը...»

Անդամները խախտած, մէկ քարէն միւսը ցաթկելէն՝ դեռ ևս կը շնչէր անիկա և անապաստան կը սողար: Անիւի հետքը բաց էր. իր վէրքերը հո՛ն քաշկռտեց ու ներս քաշուեցաւ արիւնոտ:

«Երթանք խոշոր քար մը առնենք, գործը լմնցունենք» ըսին ու բոլորը մէկ՝ իրենց նայուածքը յառեցին բախտէն նզովեալ այդ էակին վրայ: Յուսահատը կը տեսնէր իրեն վրայ հակող այդ ճակատները: Տղոցմէն մին եկաւ՝ հետը քար մը բերած, ծանրութեանը նայելով ծանր իրաւ, բայց ծայրը չարութիւն ըլլալուն՝ դիւրաւ վերցուած. ու ըսաւ. «Նայինք սա ի՞նչ գործ պիտի տեսնէ հիմայ»:

Բայց նոյն բուպէին, ճի՛շդ սյդ տեղը, բախտը կը բերէր շատ ծանր բեռով սայլ մը զոր կաղն ի կաղ կը քաշէր խռֆած էշ մը նիհար ու խուլ, որ սաստիկ յողնած՝ ամբողջ օր մը քայլելէ վերջ՝ ախոռին կը մտտնար: Առած իւրաքանչիւր քայլը կը կարծուէր վերջընթերն ըլլալ: Անուահետը խորտուբորտ էր, ցետով լեցուն ու դժուարին զառիվերով մը: Էշը՝ կոյր, հնազանդող, խարազանին, բիրին տակ ա՛յն տեսակ խորունկ կերպով մը կը մտածէր որ մա՛րդ չկրնար:

Տղաքը լսելով անիւին ու քայլուածքին աղմուկը՝ պօռալով ետեւ դարձան ու սայլակը նշմարեցին: — «Քարը մի՛ ձգեր դօդօշին վրայ, կայնէ՛, գօչեցին. նայէ՛, սա ի՞նչոդ կառքը վրայէն անցնի պիտի հիմայ»: Ամէնքը կը դիտէին:

Յանկարծ դէպ ի անուահետը գալով՝ ուր հրէշն իր հուսկ տանջանքին կ'սպասէր, էշը տեսաւ դօդօշը: Իւ տխուր, — ափսո՛ս, աւելի տխուրի՛ մը վրայ ծռած, — ծանրանդամ, խորտակուած, թախճոտ ու մորթազերծ, կը թուէր հոտոտել զայն իր հակած գլուխով:

Այդ թիապարտ ու երկայնամիտ անասունը գթա՛ց վրան: Իր սպառած ոյժը ժողվեց և շղթան ու պախուրցը իր արիւնահոս դնդերներուն վրայ պրկելով, դիմադրութիւն ընելով իշապանին որ իրեն թի՛հ... կը պօռչըտար, նուաճելով բեռին անտանելի մեղսակցութիւնը՝ ճամբան շեղեց անողոք անիւին, որպէս զի ո՛ղջ մնայ: Իր ետեւ եղկելի անասունը: Յետոյ վերսկսաւ իր ճամբան, մորակի հարուածի մը վրայ:

Այն ատեն տղոցմէն մըն, — հիմայ այս պատմութիւնն ընողը, — քարը ձեռքէն ձգելով, անհուն երկնակամարին տակ որ մերթ կապոյտ է և մերթ սև, լսեց ձայն մը որ կ'ըսէր իրեն. «Բարի՛ եղիր»:



... Անիկա որ բարի է, երկինքէն կտոր մը կը հագնի: Ո՛վ իմաստուն, աշխարհքս լուսաւորող Բարութիւնն, — ազատածին առտուան այդ ակնարկն, անծանօթը տաքցունող այդ ճաճանչը, գիշերէն ու սաղապանքէ՛ն ախորժող սյդ բնազդը, — գերազայն այն զօդագիծն է, որ, մութին մէջ, մեծ անբանն՝ էշը՝ կը միացունէ Աստուծոյ, մե՛ծ Գիտունին:

Վ Ի Բ Թ Օ Ռ Շ Ի Ի Կ Օ

(Իր ֆերբուածեմ համառօտած)

Մ Ա Յ Բ Ե Բ Ո՛Ւ Ն (*)

Ծաղիկներ կան տօգոյն, ոսին,
Քարերուն մէջ ծըլած ճամբուն,
Եւ թռչուններ որ թեւ չունին
Թռելու անտառն երազներուն:

Մանկութենէ՛ զուրկ մանուկներ
Որ քաղած չեն ծաղիկ մը խուն,
Որոնք կ'ապրին ու չեն գիտեր
Ամէնէն պարզն հաճոյքներուն:

Մեծ քաղաքի փոքրիկ տըղաք՝
Փողոցն ու շուրջը մայթերուն
Կը դեգերին քայլով սայթաք,
Առաւօտէն մինչ՝ իրիկուն:

Քալա՛ծ իսկ չեն խոտին վըրսն,
Ո՛չ մամուռին պուրակներուն.
Եւ չեն կըրեր քաղուած որսն,
Ուրախ զըլարթ՝ արտերէն տուն:

(*) Բարիզի մէջ Ծրանսուհիներու ընկերութիւն մը կայ հիմա, — նախագահութեամբ Տիկին Ծուսիք Բիւշօի, — որուն նպատակն է ֆա-
ղափ ապականեալ օդին մէջ անտռ ասեն ապրելու դասապարտուած
գործաւորի եւ աղքատի թիւղծ հազարաւոր զաւակներ՝ 5 հն 15 տարու՝
գիւղ դրկել, մաքուր օդ վայելիչ տալու համար անոնց, առանց սեռի
եւ կրօնի խտրութեան: Անդամուհիներ կոչուլ կ'ընեն հարուստի տղոց,
իւնդրելով անոնցմէ որ աւերոյդ հանոյ՛ններու համար ծախսելիք սակ-
ներնուն մէկ մասը յսկիւցունեն այս գերազանցապէս բարի եւ օգտա-
շատ նպատակին: — Մարդասիրութեան մէկ եղանակը չէ՞ ասիկա որ կ'ուղ-
ղուի տարաբան մանկութեան, կոռուելու համար ներկայիս երկու մեծ
չարիքներուն, Հիւծախտի եւ Ալցոլամոնութեան դէմ: Ամիս մը շարու-
նակ իր բոխերը մաքուր օդով յեցուցած եւ այժերը բնութեան շնոյ
տեսարաններովը պարտուած տղան անշուշտ աւելի դիմադրող կը հան-
դիսանայ չարիքին դէմ, եւ աւելի արի՛ աշխատանքին համար: —
Վերելի սերտուածք արտառու կոչ մըն է՝ ֆաղսենի ունելու մայրերու
եւ անոնց զաւակներուն ուղղեալ:

Մաքուր օդ, լոյս, հաճոյք հեշտին
Պէտք է տըրուի առատ, զեղուն,
(եթէ կ'ուզենք որ չը մեռնին)
Ինչպէս ծաղկին՝ նոյնպէս տըղուն:

Մայրե՛ր, դուք որ կեանք լուսափայլ
Կ'ընծայէ՛ք ձեր զաւակներուն,
Դուք որ սիրով ձեր անայլայլ՝
Կ'ուզէք տեսնել զանոնք խնդուն:

Տըղա՛ք, որոնց կու տայ գարուն
Բոլոր խնձիղն ամէն տարուան,
Որ կը գտնէք մէջ դաշտերուն՝
Հասկեր ոսկի, մարգ հոտեւան:

Խորհեցէ՛ք թէ մանուկներ կան
Որ կը հիւծին ամառն ի բուն
Զորս պատերու մէջ բանտական,
Զուրկ շողերէ՛ն իսկ արեւուն:

Մաս մը տըւէ՛ք ձեր վայելքէն
Այդ զրկըւած էակներուն:
Եւ այդ տըղաք ձեզ՝ փոխարէն՝
Պիտի ձօնեն բիւր օրհնութիւն:

Մ Ի Ս Ը Ս Գ Օ Ռ Ի Ն Ա Շ Ա Թ Ը Գ

Անունն է ասիկա հայասէր Ամերիկուհիի մը որ 1873ին «Գօրտ» քիկերութեան կողմէ թուրքիա կ'առաքուի: Առաջին 6 տարիները կ'անցունէ Այնթապի աղջկանց ամերիկեան վարժարանը, մինչեւ որ թոքախտէ բռնուելով ծննդավայրը՝ Գօլօրտառ կը դառնայ, ուր 4 տարի վրանի տակ ապրելով առողջացած՝ կու գայ Մարաշի աղջկանց ամերիկեան վարժարանի վարչութիւնը կ'ստանձնէ: 1892 ին Եդեսիա կ'անցնի և 18 տարի անընդհատ կ'աշխատի ու կը նուիր-

ուի տեղական կարօտութեանց: 95ի Զարդին ներկայ կը գտնուի և մարդասիրութեան գեղեցկագոյն օրինակը կու տայ, հաստատելով



ՄԻՍԸՍ ԴՕՌԻՆԱ ՇԱՐԸՔ

արհեստանոցներ ծնողագուրկ Հայորդիներու և ասեղնազործութեան յարկեր՝ 2000 այրիներու և որբուհիներու համար, նաև կոյրերու դպրոց մը ուր ցարդ 28 աչազուրկ թշուառներ կը պատսպարուին ու կ'ուսանին:

Ծնունդով արդէն փափկակազմ, մանաւանդ ընկճուած՝ կոտորածին սոսկումներէն, Եղեսիոյ Հայութեան պահապան այս հրեշտակը պէտքը կ'զգայ կրկին հայրենիք երթալու 1910 ի գարնան՝ իր քայքայուած առողջութիւնը դարմանելու յոյսով, բայց ամիս մը վերջ հոգին կ'աւանդէ Պօսթընի մէջ: — Յառաջ կը բերենք

հաս Պատուելի Ս. Եղոյեանի գրութենէն մասեր՝ ուր ողբացեալ բարերարուհին պատկերացած է իր կեանքին ու գործունէութեանը հետ:

.. Հրաշալի բան մըն էր տեսնել մարմինով տկար կին մը ա՛յնքան գործերու մէջ: Կը հաշուեմ թէ 2-3 սյր մարդու գործ կը տեսնէր ան: Հինգ տարի զինք կը ճանչնամ, օր մ'ալ, ժամ մ'ալ չտեսայ իր հանգչիլը կակուղ բազմոցի մը վրայ. միշտ աթոռի վրայ, սեղանի առջեւ, յոտին կանգուսն՝ շարժման մէջ տեսայ զինք: Կը գործէր միշտ սիրով, եռանդով և արագ: Զարմանալի կերպով ճշդապահ էր, խոստմնապահ և սկզբունքի տէր: Ումանք խիստ կը նկատէին զինք, բայց ան սորված էր յանձին միացունել ողորմութիւնն ու ճշմարտութիւնը: Երջահայեաց ալ էր. փոքր բաները նկատել և յարգել վանց չէր ընել: Ուրֆան ու գիւղերը, Սեւերեկը, Ատիամանը, Պէրէճիքն ու Մարաշն իրեն կը նայէին և ինք ամէն բանի վրայ կը խորհէր և ամէնուն համար կը գործէր:—Յաւէտ կ'իշխէր ու կը ներգործէր մարդոց վրայ՝ բարիին և ուղիղին համար: Կարեկից և հիւրասէր էր. սողքատնե՛ր իսկ սեղանակից քղած են իրեն: Համակիր հիւանդներու՝ կ'օգնէր և կը ծառայէր անոնց անձամբ: Իրեն զրկուած ծաղկեփունջ մը տեղ մը կը դրկէր միլիթարութեան համար:—Պարզակեաց և սակաւապէտ էր. ճաշա-

սեղանը պարզ, սենեակին կահերը քիչ. իրեն եղած ընծաները չէր ցուցադրեր: Մանուսայէ շրջագգեստ մը կը կրէր. հաց և ընկոյզ կ'ուտէր. նաև ճաշի ատեն խօսելէ չէր ախորժեր: — Հայուն յարաբերութեամբ «հայասէր» էր, բառին բուն նշանակութեամբ, հայանուէ՛ր էր: Ինչ Հայեր անոր չափ արցունք թափեցին աղէտի օրերուն: Անկարելի է թուել թէ անիկա ի՞նչ ըրած է Հայուն համար՝ անոր ամէնէն թշուառ տարիներուն, — կրակի և մահուան տարիներուն — մէջ, նիւթապէս, կրթապէս և հոգեւորապէս:

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

ձմարտութիւնն՝ արեւն է իմացական աշխարհին:



Մարդ կարող չէ բարիք ընել ամէնուն, բայց կրնայ բարիք կամենալ ամէնուն:



Իր ըրած բարիքները յիշելը՝ վաշխառուներու նմանիլ է:



Առանց գթութեան, առաքինութիւնը լոկ անուն մըն է:



Մարդուս սորվելիք առաջին բաներէն մէկն է նեղուիլ գիտնալը:



Արդար ըլլալու սէրը շատ մը մարդոց համար անարդարութենէ տառապելու վախերնուն ծնած է:



Արդարութիւնը ժողովուրդին հացն է: Որչափ ալ ուտենք անկէ, դարձեալ պիտի անօթենանք:



Ազատութիւնը՝ կեանքը կ'արգասաւորէ, իսկ գերութիւնը կեանքի կորովն ու եռանդը կը մարէ:



Բնութիւնը մարդս ազատ ստեղծած է. մարդի՛կ են որ ստեղծած են գերութիւնը:



Ձրպարտութիւնը կը նմանի ածուխի մը: Եթէ չայրէ, գո՛նէ կը սեւցունէ:



Ներէ՛, եթէ կ'ուզես ներուիլ: (Անգլ. առած):



Քննադատութիւնը խարտոցի մը կը նմանի որ դպած տեղը թէեւ կը մաշեցունէ, բայց կը փայլեցունէ միեւնոյն ատեն:



Առաքինութեանց հոգին, կրօնքին ամբողջութիւնն ու Օրէնքին համառօտութիւնն է Գոիթիլ:



Հաւատքը փրկել ջանալու համար՝ մարդիկ վրայ տուած են Գթութիւնը:



Բարեգործութիւնը բոլոր պարկեշտ հոգիներուն տարրն է:



Դրամ մըն է Գաղաքավարութիւնը: Պէտք է վատնենք զայն՝ հարստանալու համար:



Հին յանցանքի մը ներելը նո՛ր մը արտօնել է:



Առանց բարի գործերու գիտունը տարբերութիւն չունի ա՛յն մեղուէն որ... մեղը չշիներ:



Երբ չարը կրնանք արգիլել և թողունք որ ի գործ դնէ անիկա իր չարութիւնը, մտանակից եղած կ'ըլլանք անոր ընթացքին:



Ներենք վատին ու ապերախտին, ապացուցած ըլլալու համար որ մենք անոնցմէ աւելի կ'արժենք:



Պատուաւոր մարդը չստորնանար երբեք: Առիւծը կը մեռնի տնօթութենէ, հոտած միս չուտեր:





Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Ն Ե Լ Ո Ւ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

1. Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ընտանիքին բարեբաւ դերը. — Բարբարոսութեան դէմ՝ քաղաքակրթութեան մղած պայքարներուն շնորհիւ հետզհետէ կազմուեցաւ ընտանիքը: Ամէն կազմակերպութիւն իր սկզբնաւորութեան մէջ թերութիւններ կ'ունենայ. այնպէս ալ ընտանիքը խեղճ վիճակի մէջ էր սկիզբները: Կիսը բոլորովին գերին էր իր ամուսինին, իսկ զաւակները գրկուած էին ամէն իրաւունքէ: Իրաւ է թէ այսօր ալ կան ամուսիններ որոնք իրենց իբրեւ հաւասար չեն նկատեր իրենց կիները, հապա իբրեւ գերի կը գործածեն զանոնք և զաւակներնին. բայց այդպիսիներ տգէտներ են ու չարեր: — Ընտանիքն է որ մեզ կը ճանչցունէ իրականութիւնը, քանի որ շատ մը պարտականութիւններ կը դնէ մեր ուսերուն: Ընտանիք կազմող անձն է որ ամէնէն աւելի առիթն ունի ինք իր մէջ զարգացունելու կանխատես, պատասխանատու և փափկանկատ ըլլալու զգացումը: — Լաւ կազմուած ընտանեկան բոյն մը ամենամեծ բարիքն է աշխարհի վրայ: Երբոր հայր ու մայր զիրար սիրեն ու յարգեն, տղաքն ալ կը մեծնան իսադաղ և երջանիկ միջնորդութիւն մը մէջ: Ի՞նչ մեծ երանութիւն, երբ խորհին թէ կրնան վստահիլ իրարու սիրոյն և յոյս դնել իրարու աջակցութեան վրայ:

Խանգարուած ընտանիքներ.— Յաւալի է որ կը գըտնուին տազնապալից վիճակ ունեցող ընտանիքներ : Շատ ամուսիններ բարկացոտ կ'ըլլան և անձնատէր , որով՝ բարորովին անտարբեր իրենց կիներուն քաշած նեղութեանց : Դժբախտութիւնը կատարեալ է երբ ամուսին մը արբեցո՛ղ ալ է : Երբեմն ալ կիներն են որ տեղի կու տան դժբախտութեանց . ծոյլ կ'ըլլան , անմաքուր և դրամին ոչինչ բաներու համար վատնող : — Կամքէ զուրկ անհատներ , կատարեալ յիմարներ են այն ջղագրգիռ և կոպիտ ծնողքները , որոնք իրարու հետ կը կուուին և զիրար կը նախատեն , գէշ օրինակ հանդիսանալով իրենց զաւակներուն :

Ձղազրդիւ տղաք .— Տղաք ամէն բանէ առաջ պէտք ունին հանդարտութեան : Կուուազան , ջղափն ու լալկան տղաք հիւանդներ են պարզապէս , զորս խնամել հարկ է : Գրգռիչ սնունդներ տալու չէ անոնց . ոչ միս , ոչ սուրճ , ոչ ալ ալքոլ մանաւանդ : Պէտք է պտրտցունել զանոնք բաց օդին , կամաց կամաց , և դրօսցունել հանդարտ խաղերով որոնցմէ շատ կ'օգտուին և կ'զգաստանան : Յոգնութիւններ և չափազանց դրօսանքներ նոյնպէս զարկ կու տան անչափահասներու ջղագրգռութեան , և պատճառ կ'ըլլան անոնց կազմին հետզհետէ վատթարանալուն :

Տղոց հնազանդութիւնն՝ իրենց ծնողաց հակդէպ .— Երբ ընտանիքի մը անդամներ համերաշխ են և սիրով կապուած իրարու հետ , այն ատեն պզտիկ մը շատ դիւրաւ կը վարժուի հնազանդելու իր հօրն ու մօրը : — Հնազանդութիւնը շատ կարեւոր է . անձ'վ է որ սղոց անգիտակցաբար գործելիք չարիքները կը խափանուին : Տղաք անուշադիր կ'ըլլան յաճախ , դիւրահաւան , հեռատե-

սութենէ և արիութենէ զուրկ, անգէտ՝ իրենց ըրածներուն հետեւանքին: Քարի, լուցկիի, դանակի հետ կը խաղան, որոնցմէ մեծ վտանգներ ու վնասներ կրնան յառաջ գալ: Ո՛րքան հրդեհներ ծագած են սողոց՝ կրակով զբռնելէն: Քարով իրարու աչք պայթեցունողներ կամ գլուխ պատուղներ շատ գտնուած են, ինչպէս և զմեկիով զիրար վիրաւորողներ: — Մեծկր բանիմաց ու նախատես կ'ըլլան. հետեւաբար տղաք խօսք մտիկ ընելու են, անասատկու չեն անոնց պատուէրներուն, մանաւանդ զուարթութեամբ ու փութով հնազանդելու են. չուզենալով հնազանդողները՝ տկար կամքի տէրերն են. յայտնի է թէ այդպիսիներն են որ աւելի հակուում կ'ունենան ծուլութեան, յամառութեան, որկրամոլութեան:

Պէտք է սակայն անհնազանդ գտնուինք, երբ գէշ խրատ մըն է որ կուտան մեզ: Սրինակի համար, գինով հայր մը երբ իր սղուն ստիպէ որ օղի խմէ, այդ պարագային՝ տղուն անհնազանդութիւնն, — այսինքն մերփումը, — պարտականութիւն է աւելի:

Ծնողասիրութիւնը ձնողիին օգնել է. — Հնազանդիլը չբաւեր միայն, պէտք է նաև մեր ծնողքը սիրենք և գործնականապէս ապացուցանենք սէրերնիս, օգնելով իրենց աշխատութեանց. եթէ բան մը բերել հարկ ըլլայ՝ խելոյն վազելու բերելու ենք: Մանաւանդ առջիկները սեղան եւ անկողին պատրաստելու համար փութկոտ ըլլալու են, իրենցմէ փոքր եղբայրներուն և քոյրերուն հոգ տանելու են, միշտ պատրաստ գտնուելով ծառայութիւն մատուցանելու իրենց ծնողքին: Մայրեր կան որոնց ամուսինները հիւանդ ըլլալուն, կամ անոնց վաստակը տանը պէտքերուն չբաւելուն՝ կ'ստիպուին տունը կամ սուռնէն գուրս օրականով բանելու: Ի՞նչ ցաւալի է վիճակն այդ

մայրերուն . ամբողջ օրը չարաչար դատիլ , գիշերներն ալ ի հարկին լամբարին լոյսով , ասկէ զատ ընտանիքին ճաշը պատրաստել , տղոց վրան-գլուխը հոգալ , լուալ-հորգել ու կարկրտել , վերջապէս հսկել տանը կարգապահութեանն ու մաքրութեանը : Ատանկ ծանր աշխատութեանց հետեւանօք , բնական է որ այդ կիները կը մաշին , կը տկարանան , ջղագրգիռ կ'ըլլան : Ուստի զաւակներին ջանալու են անոնց յոգնութիւնը թեթեւցունելու , հնար եղածին չափ օգնելով անոնց , սիրտ չհատցունելով և քաղցրութեամբ ու հնազանդութեամբ վարուելով : Ի՞նչ անձնուէր քոյրեր ալ կան որոնք ո՛չ միայն տնական աշխատութիւններ կը կատարեն և մայրելնուն կ'օգնեն , այլ և ընտանիքին ապրո ստը հոգալու դժուարին գործին իրենք ալ մասնակից կ'ըլլան՝ աշխատանոցներ յաճախելով կամ տունը բանելով , օրական չնչին վարձքի մը փոխարէն աչքի լոյս թափելով և մատղաշ կեանքերնին մաշեցունելով : — Իսկ երբ սղաք անձնասէր են , կ'ուզեն որ ուրիշները միայն իրենց ծառայութիւն մատուցանեն , միշտ կը տրանջան երբ մայրերնին իրենցմէ օգնութիւն մը խնդրէ : Կարգապահութիւն չեն ունենար և հազարումէկ դժուարութիւն յարուցանելով կը նեղեն ու կը չարչարեն իրենց շուրջիները : Իրենց ընելիք դործերնին ուրիշներուն կատարել տալով՝ այդպիսիներ ապագային կ'ըլլան անձնասէր , ծոյլ սւ չար քաղաքացիներ :

Կեղծաւորները . — Երբոր մէկը մեզ խօսի եղբայր-սիրութեան և համերայխութեան վրայ , նախ տեսնենք թէ անիկա ի՞նչ ընթացք ունի իրական կեանքի մէջ : Եթէ գէշ կը վարուի սպասաւորներու հետ , եթէ անտեղի կերպով անոնց արժանապատուութիւնը կը վիրաւորէ ծանր խօսքերով , եթէ գէշ կը սնուցանէ կամ կ'ընկճէ զանոնք

չարաչար աշխատութիւններով, կը համոզուինք որ անոր մարդասիրութիւնը սուտ է, կեղծաւորութիւն է պարզապէս: Նմանապէս բարեգործի համբաւ ունեցող կիներ կան՝ որոնք իրենց պաշտպանութեան տակ առած խեղճերը խօսակցութեան նիւթ կ'ընեն միշտ, բարութիւն ու գթութիւն կը քարոզեն ուրիշներու: Մօտէն քննելով զանոնք, երբ տեսնենք թէ իրենց քով աշխատողները չափազանց կը յոգնեցունեն, որդեգիր զաւակներու հետ արհամարհանօք կը վարուին, իրենց խնամածութեան յանձնուած որբուկներ ստորին արարածներու տեղ կը դնեն ու գէշ կը սնուցանեն զանոնք, այն ատեն վերահասու կ'ըլլանք թէ այդ կիները հասարակ կեղծաւորներ են՝ «բարեգործ» անունին տակ:

Ազատարար մըն է ուսուցիչը. — Մեծ յարգանք ու սէր պարտինք տածել մեր ուսուցիչներուն, որովհետեւ անոնք են որ կրցած են մեծ համբերութեամբ սորվեցունել մեզ գրել-կարդալ:— Տգէտ եղած ատեննիս՝ գերի էինք մեր միջավայրին սովորութեանց ու նախապաշարունակներուն, մինչդեռ հիմայ ուսում ունենալով կ'սկսինք տեղեակ ըլլալ աշխարհի վրայ անցած-դարձածին. կրնանք իմանալ թէ ինչ խորհած են ամէն ժամանակի և ամէն երկիրի մարդեր, օգտուելի մեր արհեստին կամ մեր ասպարէզին վերաբերեալ նոր գիւտերու մասին գրուածքներէն: Սիրենք ուրեմն ուսուցիչը, զմեզ գերութենէ ազատող այդ մարդը: Նաեւ, մեր ուսուցիչն է որ մեր պարտքերը ցոյց կու տայ մեզ, անոնցմով ազնիւ ու բարի անհատներ, պարկեշտ ու պատուաւոր քաղաքացիներ ըլլալու համար: Ուրեմն մեր սէրն ու յարգանքը մեր ազատարարին՝ վարժապետին, որուն համար Հայութեան բարոյախօս-դաստիարակը Պէրպէրեան ըսած է. «Ածո՛ւ-

խըն է ան որ կ'այրի, քաղաքակրթութեան մեքենան
դարձունող շոգին արտադրելու համար» :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ի՞նչ դեր ունի ընթանիքը. — Որո՞նք են պատասխանատու՝ տոց
չդադարուցեան, եւ ի՞նչպէս դարձանելու ե գայն. — Ի՞նչ բանի մեջ
կը կայանայ հնազանդութիւնը. — Ենդդաստիւնը շարժի ի՞նչ կը
հասկընամք. — Ո՞ր տոց կը կոչուին անձնատու. — Անձնատու տոց
ի՞նչ ընթացք կ'ունենան տունին մեջ. — Որո՞նք են խօսքի միայն մար-
դաստիւնը. — Ի՞նչ անուն կարելի ե օտը անոնց. — Որո՞նք են մեր
ճշմարիտ ազատարանները. — Ի՞նչ բան պատշախտան ենք մեր ուսու-
ցիչներուն:

2. Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն

Կարգապահութեան պէտքը. — Դպրոցին մէջ օրէնք կայ՝
աղմկայոյց աշակերտները պատժող, որպէս զի ատոնք
արգելք չըլլան իրենց ընկերներուն աշխատութեանց :
Մասնաւոր ժամեր սահմանուած են ինչպէս զբօսանքի,
նոյնպէս եւ աշխատութեան համար : Ուստի, այն տղան
որ որոշուած կանոնը չյարգեր եւ սերտողութեան ատեն
կ'զբօսնու՝ իր պատիժը կը կրէ, դպրոցին օրէնքին դէմ
գործած ըլլալուն : — Նմանապէս, մարդիկ ոլորնք խմբո-
վին, ընկերակցութեամբ կ'ապրին, կը դատին, կը հեր-
կեն, կը ցանեն, կը գործեն, վստահ թող ըլլան թէ ո՛չ
ոք իրենց աշխատութիւնը պիտի խանգարէ, թէ հակա-
ռակ պարագային՝ խանգարողը պիտի պատժուի, թէ,
վերջապէս, կայ որոշ կանոն մը՝ գողերու, հարստահա-
րողներու, բիրտ մարգոց քմահաճոյքին դէմ զիրենք
պաշտպանող : Այդ կանոնն է Օրէնքը :

Տխուր է սեանել սակնայն որ իր օրէնքներով համաբաւեալ Տաճկաստանի մէջ կան ժողովուրդներէ մաս մը — Քիւրտը—որ հաստատուած օրէնք մը չգիտեր յարգել և առանց խղճահարութեան, լոկ իր ոյժին ապաւինած, կը յափշտակէ դրացի ժողովուրդին՝ Հայուն հողը, վարուցան կ'ընէ հոն, կապտելով Հայուն արդար իրաւունքը: Քիւրտը հանուր քաղաքակիրթ աշխարհի կրնայ ցոյց սրուիլ իբրև օրինադանց ու բարբարոս, ուստի և արժանի՝ Կառավարութեան ամենախիստ պատիժներուն:

Եթէ օրհնները չըլլային. — Դժբախտաբար մարդիկ տակաւին ա՛յնքան բարի ու զարգացած չին, որպէս զի առանց օրէնքի՛ այ ապրելով՝ իրարու հանդէպ արդար ու բարի ըլլան: Ուստի եթէ օրէնքը չըլլար, կամ, եթէ օրէնքը սկար ըլլար, Բարբարոսութիւնը պիտի տիրէր այն ատեն և ատելութեամբ լեցուող մարդիկ, — նախանձոտներ ու ծոյեր—ուզածնի՛ն պիտի ընէին աշխատողներուն, իմաստուններուն, յառաջադէմներուն: Առանց ապահովութեան՝ կեանքը սոսկալի պիտի դաւնար: Աւարառութիւն, հրձիգութիւն ու մարդասպանութիւն գործողներ անպատիժ ապրելով, պարկեշտ, խելացի և աշխատասէր մարդիկ սարբերութիւն պիտի չունենային իրենց թշուառութեամբ՝ նախամարդոց վիճակէն:

Դժբախտ երկիրներ.—Արդարեւ անտանելի է կեանքն Արեւելքի ա՛յն երկիրներուն մէջ ուր Վեհապետի մը քմահաճոյքն է որ կ'իշխէ Օրէնքէն աւելի, ուր կուսակալներ, կառավարիչներ ու գիւղապետներ ուզածնուն պէս կը շահագործեն ժողովուրդը, կողոպտելով, կեղեքելով և ի հարկին ջարդելով զանոնք:—Օրինակ Պարսկաստանն ու Թուրքիան ասկէ քանի մը սարի առաջ,

երբ Սահմանադրութիւնը չէր հռչակուած դեռ և Քրիստոնեայ հպատակ ազգութիւններ զուրկ կ'ապրէին կեանքի, ինչքի և պատիւի ապահովութենէ : Ի՞նչ էր այն ժամանակ կեանքը թրքական Հայաստանի մէջ՝ ուր Համիտ իր արքանեակներով կը բանտարկէր, կը թալլէր, կը քանդէր, կ'սպաննէր Երկիրին ամէն կերպով օգտակար ժողովուրդ մը՝ Հայր, դաշտեր, ձորեր ու լեռներ անոր արցունքովն ու արիւնո՛վը թրջելով : Եկաւ վերջապէս Օսմանեան Սահմանադրութիւնը, եղբայրութիւն և համերաշխութիւն քարոզելով Թուրքիոյ ազգաբնակչութեանց, մանաւանդ Օրէնքի հպատակութիւն հռչակելով և պահանջելով որ բռնաւորներու քմահաճոյքները խոնարհին ու չքանան Անոր ներկայութեամբ : — Երբ Օրէնքը կը պաշտպանէ զմեզ աւազակներուն և ոճրագործներուն ատելութեան դէմ՝ պաշտպանած կ'ըլլայ աշխարհի քաղաքակրթութիւնը, մեր յառաջդիմութիւնը : Ամէն կերպով յարգե՛նք ուրեմն Օրէնքը, մեր հանգիստին ու գոյութեան այդ դերագոյն պաշտպանը :

Բանակաւուրքեաւրք բարձր եմք. — Երբ պզտիկ առարկայ մը խոշորէն կը զանազանենք, երբ արլար ալ արք մը անիրաւ գործէ մը կ'որոշենք, աղնիւ վարմունք մըն ալ անազնիւ վարմունքէ մը, յայտնի է թէ բռնակալութեան տէր ենք, քանի որ կարողութիւնն ունինք ճանչնալու և դատելու : — Ազգաս գիւղացին իր իրծիթին մէջ հաւասար է ամենէն մեծին, ամէնէն հարուստին, քանի որ բանականութիւն ունի, հետեւաբար ազատ է, նաև անկախ և արժանաւոր՝ թագաւորի մը չափ : Առանց բանականութեան՝ անբաններ ենք ամէնքս ալ : — Գողողութիւն, ծուլութիւն, բարկութիւն և ուրիշ

կիրքեր թշնամի են մեր բանականութեան՝ զոր կ'ուզեն խեղդել, որպէս զի իրենց տգեղութիւնները երեւան չհանէ անիկա: Կրքոս մարդը չուզեր տեսնել թէ իրաւունք չունէր զայրանալու. նախանձոս մարդը չխոստովանիր թէ ուրիշին ունեցած յատկութեանց վրայ ինք կը զայրանայ. ծոյլեր, չարեր ու պարծենկոտներ չեն ուզեր անդրադառնալ իրենց թերութեանց: Ատոնք ամէնքն ալ կը նեղուին բանականութենէ:—Քանի որ այսպէս է, մեզ կը մնայ ուշադիր մտիկ ընել յորդորներուն ա՛յն անձանց որոնք անկեղծօրէն կը քննադատեն մեր յոռի վարմունքը: Անսա՛նք մանաւանդ մեր բանականութեան ձայնին, վասն զի անիկա՛ է որ ուղիղ կը վարէ, կը բարձրացունէ և ազատ ու անկախ կ'ընէ զմեզ:

Անկախ ստածողներուն դերը. — Մենք ընդհանրապէս նախապաշարումներով տոգորուած ենք. նաև, խնդիրի մը խորն առա՛նց քննելու՝ իսկոյն անոր հաւատալու գէշ սովորութիւնն ունենալով, սխալ գաղափարներ ալ ունեցած ենք: Տուկաւին մենք շատ աւելի յետադէմ և աւելորդապաշտ եղած պիտի ըլլայինք, եթէ մեծ խորհողներ չտեսնէին թէ մեր հաւատացած բաներէն շատեր անճիշդ են ու չաչխատէին զմեզ տարհամողելու: Այդ կարգի մարդիկ մեծ դեր մը կը կատարեն յառաջդիմութեան գործին մէջ: Ուրեմն իւրաքանչիւր քաղաքացիի վրայ պարտք մը կը ծանրանայ բոլոր կարողութեամբը պաշտպանելու անկախ մտածողներ, ազատ խօսողներ և ճշմարտութիւնը քարոզողներ, երբ հալածուին անոնք մոլեռանգ, կամ սգիտութեամբ կուրացած ժողովուրդէն: — Վիճաբանութենէ վախնալով, ցոյց սուած կ'ըլլանք որ անարդար ու անմիտ բաներու հաւատ կ'ընծայենք: Ուրիշներուն՝ խօսելու և գրելու ազատութիւն

չտալով, պաշտպանած կ'ըլլանք զեղծումներու բոյն՝ անարդարութիւնն ու բռնակալութիւնը: Նոյն բանն ըրաւ Համիտ երկար տարիներ՝ Գրաքննութիւնը հաստատելով Մամուլին համար և կասեցունելով ազատ թռիչքը Թուրքիոյ մտաւորականներուն: — Անկախ խորհիւնք և անկախ խօսիւնք. ամէն բանի մէջ ճշմարտութի'ւնը փնտուենք մանաւանդ ու միայն զայն փնտուենք:

Մեկ աչ խորհիչ գիտնանք. — Երբ թերթի մը մէջ հրատարակուած գրութիւն մը նոյնութեամբ ընդունինք, առանց մեր բանականութեան դատաստանին ենթարկելու զայն, կամ պատմուածքի մը հաւատանք իսկոյն, ապացուցած կ'ըլլանք որ մենք ազատ քաղաքացի չենք, քանի որ մեզ յատուկ խորհելու եղանակ մը չունինք, հապա ուրիշներն են որ մեր տեղը կը մտածեն ու զմեզ գործելու կը մղեն: — Լրագիրներու մէջ մեր մէկ ծանօթին նկատմամբ ամբաստանութիւն մը կարդալնու՝ այդ գրուածքին համակարծիք պէտք չէ՛ որ ըլլանք իսկոյն, այլ հետաքրքրուինք իմանալու թէ ճիշդ են չըջող զրոյցները. մի՛ գուցէ ասունք զրպարտութիւններ ըլլան պարզապէս:

Ազատութեան թշնամիները. — Ամբարսուան, ինքնահաւան մարդիկ երբ կը տեսնեն թէ սահմանադրական երկիրներու մէջ ամէն մարդ հաւասար է Օրէնքին առջև, կը նեղսրտին ու իրենց սիրտը ատելութեամբ կը համակուի, խորհելով որ գիւղի մը ամենայնախին՝ բնակիչն իսկ Օրէնքին առջև հաւասար է՝ քաղաքներու, պալատներու մէջ բնակող ամենամեծին, ամենահարուստին: Այս պարագան իրենց արժանապատուութեանը կը դպի կարծես, և չեն սիրեր այդ ազատութիւնը: — Կան նաև վախկոտներ, տկարներ՝ ազատութեան յարգը բնաւ չգիտցող: Վիճաբանութենէ կը դողան և անչուկ կեանք մը կը

բոլորեն, դու խնդիր միշտ ծռած : Ինքնութիւն չունին . կ'ուզեն անտրտունջ հետեւիլ առաջնորդի մը : Իրենց բանականութեան առանց դիմելու, իրենց դատողութեան առանց ենթարկելու ուրիշի մը յայտնած կարծիքը՝ կ'ընդունին զայն խստին . կը փափաքին որ ուրիշներ իրենց ցոյց տան հետեւելիք ճամբանին և իրենք պէտքը չունենան զայն փնտռելու : Թուլամորթներ, տկարներ, երկչտաներ բոլորն ալ, որոնք կը վախնան ազատութենէ :

Երկիրի մը ճշմարիտ բարեկամները . — Ամէն բարիք և ամէն դիւրութիւն կարելի չէ սպասել կառավարութենէ մը, — մանաւանդ մեր երկիրին պէս Բռնապետութեան լուծէն նո՛ր ձերբազատուած կառավարութենէ մը, որ ա՛յնքան պէտք ունի ինքզինք դտնելու, բարենորոգուելու, յառաջդիմելու : Երկիրի մը ամէն դասակարգի աշխատողներն են որ իրենց քաղաքական ոյժերով կը նպաստեն անոր յառաջդիմութեան : Այսպէս, գիւղացին երբ հոգ կը ստանի իր հունձքերուն բարելաւումին, իր ախտոնները մաքուր կը պահէ և պաճարախտէ զերծ՝ իր անասունները, նպաստած կ'ըլլայ երկիրին զարգացման : Մայր մը երբ կը դաստիարակէ իր զաւակները, կ'ուզէ առողջ ու բարեկիրթ մեծցունել զանոնք, նպաստած կ'ըլլայ երկիրին զարգացմանը : Գիտուն մը երբ իր աշխատանոցին մէջ կը տքնի նոր գիւտով մը օժտելու մարդկութիւնը՝ երբեմն իր կեանքն իսկ վրայ տալով, նպաստած կ'ըլլայ երկիրին զարգացմանը : Վերջապէս, ամէն գործաւոր, — դարբին, ատաղձագործ, մշակ, հիւսն, — և ամէն անհաս որ կը ջանան օր աւուր իրենց աշխատանքն աւելի լաւ և աւելի մաքուր կատարելու, օգտակար գործերու ձեռնարկելու, օգասուն բնակարաններ կառուցանելու, նոր ճամբաներու բացման

պատճառ ըլլալու, բարենպաստակ ընկերութիւններ հիմնելու և ապրուստի միջոց հայթայթելու դատարկագորտ մարդոց, երկիրին զարգացման և յառաջգիւմութեան գործին մէջ իրենց յատուկ դերերը կատարած կ'ըլլան:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ է ճշմարիտ ֆաղսֆացիւն. — Ի՞նչպէս կարելի է ըրիչ պատառ ֆաղսֆացի. — Ինչո՞ւ հնարուած է Օրեկը. — Երկ Օրեկ չըրար, մարդիկ թե՛նչպէս պիտի սպրտին. — Կը ճանչնամք օրեկագանց ազգ մը. — Ո՞ր երկիրները դժբախտ կը համարուին. — Ի՞նչ բան մեզ կը բարձրացունէ. — Ի՞նչ դեր ունին անկախ մտածողներ. — Ամեն ռուսածի պե՞տ է հաւատար. — Որո՞նք բշխամի կը սեպուին ազատութեան, և ինչո՞ւ. — Որո՞նք են երկրի մը ճշմարիտ բարեկամներ:

Յ. Ա Մ Է Ն Մ Ա Ր Դ Գ Ո Ր Ծ Ի Մ Ը

Անգործը խոսելի էակ մըն է. — Ո՞չ ոք կրնայ ըսել թէ կրնայ ինք ապրիլ առանց գործ մը ունենալու: Գործ մը ունենալը պարտք մըն է մեր սննդին նկատմամբ, որովհետեւ չաշխատող անձին կեանքը բնաւ երջանիկ չսեպուիր, ոչ ալ արժանաւոր: Խոտելի էակ մը, հացկատակ մըն է անիկա որ առանց աշխատելու՝ ուրիշներուն աշխատութեանց արդիւնքները միայն կը վայելէ:

Աշխատողներուն երկու դասակարգերը. — Աշխատողներ կան որոնք գործ մը կը կատարեն՝ գործերնուն մէջ իրենց կողմէ առանց բան մը աւելցունելու, մեքենաբար, ջիղէ և նախաձեռնութենէ զուրկ: Անդին, կան ալ գործաւորներ, գիւղացիներ որոնք որ և է իրենց գիտցած արձեստին վրայ իրենց խելքէն, դատողութենէն:

կամ ճարտարութենէն թան մը կրնան աւելցունել և զայն ձեւափոխելով, կատարելագործելով՝ կ'աջողին աւելի պիտանի ընծայել աշխատանքսին: — Գործարաններու մէջ բանողներուն և գրասենեակներու մէջ պարապող պաշտօնեաներուն կեանքը տեսակ մը գերութիւն է, ինչու որ մեքենական աշխատութիւն մըն է ըրածնին. մեծ խելք կամ նախաձեռնութիւն պահանջող գրադումներ չունին, որով՝ իրենք ալ շատ չեն հետաքրքրուիր իրենց գործով: Ուստի ձանձրացած՝ կը նային որ իրիկուն ըլլայ օրը, չմտնալով շարթուան օրերը համրել, կիրակին ձեռք ձգելու և քիչ մը գրասենիու համար:

Գիւղացիներուն զոհունակութիւնը. — Քաղաքը բնակողներէն անոնք որոնց գրադումը ստրկութիւն մըն է, չեն կրնար հասկընալ այն կատարեալ, լուրջ ու երջանիկ կեանքը զոր գիւղացիներ կ'անցունեն:

Եթէ բռնութիւնն ու սուրը հալածած չըլլային մեր խելճ Հայ մշակները, համիտաբարոյ Քիւրտեր եթէ անոնց հողերը բռնի դրաւած չըլլային, այսօր Օսմանեան Հայրենիքին արգաւանդ գաշտերը բովանդակ բնակչութիւնը կշտացունելէ զստ՝ դրայի երկիրներու կարի՛քն ալ պիտի կրնային հոգալ, ահագին քանակութեամբ ցորենի արտածութիւններով:

Գիւղացին, — բռնութենէ, հալածանքէ ազատ գիւղացին — իր արհեստին բերումով համայնագէտ մը կրնայ ըլլալ: Հետգհետէ կը ճանչնայ բոյսերուն և հաւերուն կեանքը, կենդանիներուն առողջապահութենէն կը հասկընայ, հողերուն տեսակները կը զանազանէ, զանոնք ազնուացունելու, պարարտելու միջոցները կը գտնէ, արօրներուն, մեքենաներուն գործածութեան կերպերը կ'ուսումնասիրէ և կը խորհի թէ ինչպէս կրնայ տարուէ

տարի աւելի արդիւնաբեր դարձունել իր մշակական զբաղումները . նախաձեռնութեան ոգին իր մէջը միշտ արթուն է , քանի որ ատիկա՛ կը պահանջէ իր աշխատանքը : Իր կեանքը կ'անցնի արձակ . օգին , արեւուն բարերար լոյսին տակ , բնութեան զմայլելի տեսարաններուն առջեւ և լոյսերուն ու կենդանիներուն դուրգութոտ ներկայութեանը . տաժանելի բայց տենչայի՛ կեանք միեւնոյն ատեն , որմէ զրկուած է քաղքենին : Ո՛չ մէկ երանութիւն կրնայ հաւասարիկ հողերուն հետ կռուող մշակին զգացած երանութեան , երբ անիկա ատուք հասկերուն ոսկիացումը կը տեսնէ՝ իր արտերուն տարածութեանը վրայ այեսատան :

Արհեստնիկն ազնուացունող գործաւորներ . — Իրենց արհեստը լաւ ճանչցող , գործածած նիւթերնուն ծնունդն ու յատկութիւնները գիտցող գործաւորներ՝ բնական է՝ քաղքենի պաշտօնեային պէս սովորամոլութեամբ չէ որ իրենց աշխատանքը կը կատարեն , այլ ամէն օր — եթէ ճարտար են ու մտացի — կրնան նոր ձեւ մը սալ իրենց ըրածին , իրենց վարպետութեամբ ու նախաձեռնութեան ոգիով նոր բան մը յղանալ ու կատարելագործում մը մտցունել իրենց գործին մէջ : Պարկեշտ ու խելացի գործաւորին համար այդ ջանքերն ու յաջողութիւնները միթէ պզտի՞կ ուրախութիւններ ևն :

Մտցանկութիւնն ստեղծող տանկիկներ . — Կին մը երջանիկ է երբ իր կեանքը կ'անցունէ աշխատութեամբ : Կարող և աշխատասէր կին մը երջանիկ ըլլալէ զատ իր տունիներո՞ւն սլ երջանկութիւն կ'առթէ : Զաւակները լաւ խնամելով , ամուսինին շահած դրամը յատկացունելով իրեններուն հանգիստին ու անոնց ապագայ բարօ-

բութեանը՝ բարիք մը կը դառնայ իւր ընտանիքին համար: Երբ անիկա առողջապահութենէ կը հասկընայ, գիտէ կերակուր եփել, ճերմակեղէնի խնամք տանիլ, կարելի-կարկրտել, հաշիւները լաւ բռնել և ապագային համար խնայել, արժանի կ'ըլլայ «տանտիկին» ու «տնաչէն» կոչուալին, ստեղծելով այսպէս իրեն և իրեններուն երջանկութիւնը:

Սղճամիտ աշխատօրէն. — Անոնք որ կարօտ են մեր աշխատութեան ու զմեզ կ'աշխատցունեն, պէտք է որ կարենան վստահիլ մեզ: Պատուաւորութիւնը կը պահանջէ որ ջանանք լաւ ընել մեզ յանձնուած գործ մը: Սղճամիտ գործաւորներ նախապէս կը խորհին իրենց ընելիքին վրայ ու կը բաղձան կատարելագործուիլ միշտ: Գէշ և անփոյթ կերպով կատարուած աշխատութեան մը հետեւանքը վրասակար ու նոյն իսկ մահառիթ կրնայ ըլլալ: Վարպետութեամբ չչինուած տանիք մը կամ պատ մը կը փլի ու կեանքեր կը փճանան: Անհաստատ պտուտակ մը կրնայ խախտիլ, շոգեկառքը գիծէն դուրս հանել և շատերու մահը փութացունել: Աղէկ չկարուած կօշիկ մը ոտքը կը նեղէ և կոշտեր կը բուսցունէ մատներու վրայ: Եւ դեռ անհամար մեծ ու պզտիկ ցաւեր, նեղութիւններ, անպատեհութիւններ ու վտանգներ կ'առթուին՝ խղճամիտ կերպով չտեսնուած գործերու երեսէն:

Գործաւորներուն արդար պահանջները. — Սղճամիտ կերպով գործերնուն նայող, մաքուր ու քաղաքավար բանօրններ պահանջելու են որ իրենց տէրերը քաղաքավարութեամբ վարուին հետերնին. թոյլ տալու չեն որ զիրենք մարդու տեղ չդնելիք ընեն, ընդունելու չեն որ զիրենք աշխատցունեն անոյս, ազտոտ ու խոնաւ

տեղեր , քանի որ այդ բանը փճացումն է իրենց առողջութեան : Նախ ջանալու են որ իրենց գատանքին համարժէք աւուրչէք մը ստանան , հակառակ պարագային՝ խմբովին բողոքելու և բանթող ընելու պայմանաւ :

Երկու կարեւոր գիտելիք . — Խիստ կարեւոր երկու բաներ կան գիտնալիք . նախ , ինչ որ ըլլայ մեր կատարելիք գործը՝ ջանալ նախորդ օրուէնէ քիչ մը աւելի խնամով , աւելի աղէկ ու աւելի արագ ընելու . երկրորդ , մէկ անգամուան համար մէ՛կ գործ միայն կատարել , քանի մը աշխատութեանց միանգամայն չձեռնարկել , և երբ ձեռնարկեցինք գործի մը՝ ջանանք զայն աւելի աղէկ ընելու : Ասոնք անթերի յաջողութեան պայմաններ են զոր յարգելու է ամէն գործի մարդ , ամօթով չմնալու համար վերջէն :

Արհեստ մը շատ բան կ'արժե . — Ինքզինք յարգել գիտցող մէկը բնական է յարգելի ալ կ'ըլլայ ամէնուն , ու իր ունեցած զբաղումն ալ իրեն հետ բարձրացուցած , ազնուացուցած կ'ըլլայ : Ո՛չ մէկ արհեստ արհամարհելի կամ անազնիւ կրնայ նկատուիլ , քանի որ գիտենք թէ մարդիկ իրարու պէտք ունին միշտ , պէտք ունին ամէնէն խոնարհ արհեստաւորին ձեռարուեստին : — Ամէնէն նշանաւոր գրագէտն անգամ անկարողութեան պիտի դատապարտուէր , եթէ գործաւորներ իրեն համար չպատրաստէին մեկան , թուղթ , գրիչ ու մատիտ , եթէ տպագրիչներ իրենց ձեռագիրները չտպէին : Արձանագործ մը կոշտ մարմարին վրայ պիտի նայէր յուսահատ , եթէ երկաթագործը անոր ձեռքը տուած չըլլար մուրճ ու գրոց : Նկարիչ մը պիտի դադրէր բնութեան գեղեցկութիւնները կտաւին վրայ փոխադրելէ , եթէ իր երանգապնակն ու

վրձինը չունենար: Նոյն բանը նաև ջուլթակահարին, դաշնակահարին և ուրիշ արուեստագէտներու համար: Արհեստ մը անջքան արժէք ունի, որքան զայն գործածողը:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞ր մարդիկ խոսեցի եւ.—Աշխատանքի փանօ դասակարգ կայ եւ որո՞նք եւն ասոնք.—Ո՞ր դասակարգը նախապատիւ է.—Ո՞ր կը կայանայ գիւղացիին գոհունակութիւնը.—Քաղցինէն երջանիկ է աւելի, թէ գիւղացին.—Որո՞նք եւն արհեստի սզնուացունող գործաւորները.—Ի՞նչ յատկութիւններ պատճառորից եւն, որպէս զի կին մը «ճեւաշեն» կոչուի.—Ի՞նչ ճարտարութիւն կայ խոնամիտ աշխատութեան եւ անփոյթ աշխատութեան միջեւ.—Ի՞նչ հետեւանք ունի վերջինս.—Որո՞նք եւն գործաւորի մը արդար պահանջները.—Գործի մը ձեւակերպու ասեւ կարեւոր ինչե՞ր կան գիտնալիք.—Ի՞նչ է արհեստի մը արժեքը:

4. Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս Է Ր

Հայրենիքը.— Մարդս բնական զգացումով մը համակրութեան ու խանդաղատանքի կապ մը կ'ունենայ անմիջական կերպով զիրենք չըջապատող այն անձերուն նկատմամբ որոնցմէ ծնած է ինք, և այն վայրերուն նկատմամբ ուր մեծցած է: Մտողասիրութեան ու նմանասիրութեան զգացումին հետ՝ իր մէջ կը ծնի ու կը զարգանայ Հայրենիքի սէրը: Արդէն, ո՛չ մէկ անհատ պիտի կրնար կատարելապէս դարգանայ ու ըարգաւածիլ, եթէ իրեն օգնական չըլլային նոյն հայրենիքին մէջ գըտնըւող մեծ ընտանիքին համերային անդամները: Ուստի եթէ կ'ուզենք ազատ ապրիլ և ընդունակ դատնայ զարգացումի և յառաջդիմութեան, պէտք է որ ազատ ըլլայ նաև այն հայրենիքն ուր կ'ապրինք և ուր ապրած են մեր հայրերը:

Վաստօթիւնը կը խուսափի ֆաշտօթեանէն. — Դպրոցին մէջ կոպիտ ու չար տղան միշտ կ'ուզէ չարչարիլ իր ընկերները, տկարները. սակայն երբ գիտնայ թէ անոնք ալ իրեն չափ զօրաւոր են, կամ, իրմէ աւելի, չհամարձուկիր զանոնք անհանգիստ ընելու, անոնց հետ գէշ վարուելու: — Կոպիտ տղայ մը բնաւ չքաշուիր վախկոտէ մը: Վախկոտը՝ վատը կ'արժանանայ ամէն տեսակ արհամարհանքի և նուաստացումի: Այսպէս ալ ազգ մը երբ վախկոտ է, վատ է, կը կորսնցունէ իր անկախութիւնը: Ստոյգ է որ անարկու ազէտ մըն է պատերազմը, բայց անկէ՛ աւելի անարկու չարիքներ կան. «Լաւ է մեռնիլ, քան թէ գերի ըլլալ»: Ազգ մը անհատի մը պէս է. կ'ուզէ ազատ ըլլալ, անկախ, յարգուած: Երբ իրեն դէմ եղած սնարդարութեան մը աչք գոցէ՝ վատ մը եղած կ'ըլլայ այսօր ալ, վա՛ղն ալ, և ամէն մարդ կարող է նախատիլ վատ մը:

Հայր վաս շուգեց ըլլալ. — Մեր ազգն ալ յորմէ հետէ քաղաքական իր անկախութիւնը կորսնցուց, եղաւ հպատակ և հարկատու դրացի ազգութեանց, — Պարսիկներուն, Թուրքերուն, Ռուսերուն, և այլն, — և դարերէ՛ ի վեր անմուռնջ տարաւ հպատակի այդ կեանքը, քանի որ ներքին երկպառակութեանց և անողոր պարտութիւններու երեսէն իր ոյժերը սպառած՝ անկարող էր վերստին տիրանալու իր անկախութեան: Թէև ամէն դարու մէջ գտնուեցան Հայորդիներ որոնք իրենց վրայէն ջանացին թօթափելու ստրկութիւնը, բայց արդիւնքը մասնակի եղաւ

և կամ շատ կարճ ժամանակի մը համար : —
Շնորհիւ իր արթնամտութեան , ուշիմութեան և
աշխատասիրութեան , ո՛ւր որ Հայը սակայն ապ-
րեցաւ՝ սիրելի դարձաւ ամէնուն և մեծ մղում
տուաւ երկրագործութեան և վաճառականու-
թեան : Բաց աստի , կրցաւ բացառիկ առանձ-
նաշնորհումներ վայելել ա՛յն տէրութիւններէն ու-
րոնց քով կը բոլորէր իր հպատակի կեանքը :
Հայը բախտաւորութիւնն ունեցաւ իր մէջ համ-
բերու երեւելի զօրապետներ , նախարարներ որոնք
ի սպաս դրին միշտ իրենց խելքն ու արիութիւնը՝
նոյն երկիրին ազատութեանն ու յառաջդիմու-
թեանը համար :

Սակայն և այնպէս Համիտի օրով թրքահայը
սկսաւ ունենալ կեղեքումի ու զրկանքի դառն
կեանք մը , բացարձակապէս անտանելի : Հայը
յուսահատութեամբ տեսաւ թէ իր կեանքին ,
ինչքին և Պատիւին ապահովութիւնը վտանգուած
էր իր կողքին ապրող բարբարոս բնակիչներու
կողմէ : Բնական և անհրաժեշտ պէտք մը կար ,
հարկեցուցիչ պատճառ մը կը ներկայանար անի-
րաւ կերպով հարստահարուած Հայուն՝ բողոքելու
և ընդվզելու : Ու կազմուեցան Յեղափոխական Բն-
կերութիւնները՝ Հայը մղելու ինքնապաշտպանու-
թեան , քանի որ մեր տառապանքին և արդար
բողոքներուն առջև խուլ կը մնար կառավարու-
թիւնն իր վեհապետով որ կազմակերպիչն էր ար-

դէն հարստահարութեանց ու ջարդարար ձեռնարկներու : — Ի՞նչպէս կարելի էր գլուխ ծռել և անճիտուիլ անխօսուկ :

Իր ընդվզումով, սուրբ դատի մը պաշտպանութեամբ, այսպէս հայը գեղեցիկ ապացոյցը տուաւ թէ ինք վատ մը չէր, այլ ատակ պատուաւոր քաղաքացի ըլլալու, և ինքնապաշտպանութեամբ իր գոյութիւնն ապահովելով՝ սատարելու ընդհանուր յառաջդիմութեան գործին :

Արդարութեան ասեանք. — Տղաներ կան որ սաստիկ դիւրազգած կ'ըլլան և ոչինչ բանի մը համար կը սրդողին իրենց ընկերներուն հետ : Այսպէս այլ կան ազգեր որոնք պատճառի մը կը նային բորբոքելու, գժտելու և վերջապէս պատերազմելու համար, երբ կարելի էր խուսափիլ աղէտալի հետեւանքներէ :

Որպէս զի այդ տեսակ պատահական դիւրազգածութիւններ հանդարտին և խոհականութիւնը տիրէ, ազգերու ներկայացուցիչներ Լա Հէյի մէջ համաժողով մը գումարեցին և որոշեցին որ հոն իրաւարար մնայուն ատեան մը ըլլայ՝ ուր կարենան դիմել իրարու հետ խընդիր ունեցող ազգեր, — ինչպէս որ երկու երկրացիներ կը դիմեն դատարան, երբ մէկ մէկու դէմ դատ ունենան : Որոշումը գեղեցիկ էր. բայց դեռ յայտնի չէ թէ ո՞ր ատիճան իրական ու տեւական հանգամանք պիտի ստանայ անոր գործադրութիւնը :

Պատերազմին տակումները. — Ժողովուրդի մը համար կրկնապէս փճացում ըսել է, երբ կառավարութիւն մը պատերազմի պատրաստութեանց ահաբեկին գումարներ և



ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՍՈՍԿՈՒՄՆԵՐԸ (Նկար Աղջօնս ջը Նեովիյի)

Դրուագ ջը 1870ի Չուանքեւզեքուման ճակատամարտէն:

երիտառարդ կեանքեր կը յատկացունէ : Այդ գումարներով և կեանքերով ներքին ինչ բարենորոգումներ կրնային գործադրուիլ և ինչ յառաջդիմութիւններ ձեռք բերուիլ : Պատերազմը մանաւանդ ամենադժբախտ և անարկու աղէտ մըն է թէ՛ յաղթողին և թէ՛ յաղթուողին համար : Տէրութեան օգտակար՝ քանի՛ քանի՛ ոյժեր կ'ոչընչանան, որքան՝ դեռատի կեանքեր կապարներուն տակ սոսկալի մահը կ'ողջունեն. տուններ սգաւոր կը մնան, պղտիկներ ալ որք ու չքաւոր, մինչ անդին վառօղն ու կրակը՝ քանդում, աւերում, հիւանդութիւն. և աղտեղութիւն կը սփռեն չաքաչար : Եւ դեռ ինչ անլուր վայրագութիւններ՝ մարդկային կիրքերու այդ անսանձ պոռթկումին ասուն : — Ազգ մը բոլոր այդ սոսկումները պարսաւոր է կրել սակայն, երբ իր իրաւունքներուն և իր անկախութեան վրայ է խնդիրը : Տիրող սարսափին և թափուած արիւններուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ ա՛յն կողմին վրայ որ իր բարբարոս հակումներով անխուսափելի դարձուց այդ ճակատամարտը : Ամօթ ու նախատինք նոյն ազգին :

Բարբարոս, անխոհեմ ազգ մը կը նկատուի անիկա՛ որ ուրիշ ազգի մը հետ խնդիր ունենալուն՝ պատերազմ կը հուշակէ իսկոյն, — առանց դիմելու իրաւարարատեանի մը, — ապացոյցը տալով թէ ինք չարիքը գիտակցաբա՛ր կը գործէ, աշխարհակալութեան անյագ ցանկութենէն լոկ բռնուած : Հետեւաբար այդպիսի ազգ մը ո՛չ միայն բարբարոս է և անխոհեմ, այլ և վտանգաւոր՝ քաղաքակրթութեան համար : Պատերազմն այն ատե՛ն միայն նենդի պիտի սեպուէր, երբ ազգ մը տեսնէր թէ իր ամէնէն նուիրական բաները վտանգի տակ են, — իր անկախութիւնն ու ազատութիւնը : Ապա թէ ոչ, ըրածը պար-

զտպէս ոճրագործութիւն է, ինչպէս ոճրագործ պիտի ըլլար անիկա որ—ինքզինք օրէնքով առանց պաշտպանելու և դատարանին արձակելիք վճիռին չսպասած,— ելլէր սպաննէր մարդ մը որմէ անիրաւութիւն տեսած էր:

Ընդհանուր համեռացիութիւնը. — Բոլոր քաղաքակիրթ ազգերն իրարու կապուած են իրենց ճարտարարուեստական, առեւտրական ու մտաւորական կեանքով: Երկիրի մը մէջ երբ գիտուն մը, հանճար մը երեւան գայ, անոր գիւտէն կամ մեծ գաղափարներէն իր երկրացիները միայն չեն օգտուիր, այլ հանուր մարդկութիւնը: Նեղմտութիւն, տխմարութիւն է պարզապէս չընդունիլ որ և է օգտակար նոր դիւտ կամ մեծ գաղափար, երբ անոր հեղինակը պատկանի թշնամի ազգի մը: — Յուսովի է թէ պիտի գայ օր մը ուր բոլոր երկիրներու ժողովուրդներ ծիծաղելի պիտի գտնեն միջազգային ատելութիւններ, ուստի նուիրական համարելով իրարու ազատութիւն՝ անկեղծ եղբայրսիրութեան զգացումով պիտի վերաբերուին փոխադարձաբար: Այս բանին յաջողութեան համար նախափորձ մը կրնանք նկատել Լա Ղէյի վեհաժողովն Եւ «Խաղաղութեան մրցանակ»ը, զոր Շուէսացի մեծ քիմիագէտ-մարդասէրը՝ Նօպէլ հաստատեց վերջերս:

Պատրաստ գնուիմք միշտ. — Քանի որ բոլոր ազգերը խօսք-մէկ ըրած՝ մէկ դի զրած չեն ղէնքերնին, ուստի ամէն երկրացի պատրաստ գտնուելու է միշտ՝ իր Հայրենիքին անկախութիւնը պաշտպանելու, որուն համար պէտք է քաջ զինուոր ըլլալ: Զինուորութիւնը մասնաւոր արհեստ մըն է զոր պէտք է սորվիլ. ասիկա զինուորական ծառայութիւնն է՝ զոր ամէն հայրենիքի անձնիւր զաւակ պարտաւոր է անթերի կատարելու, որպէս զի կա-

րենայ առողջ, արի, հուժկու, անվեհեր ու կարգապահ անհատ մը դառնայ :

Յաղթութիւնը չվահցողի՛նն է. — Պատերազմի գաշտին վրայ զուարթօրէն ու քաջաբար յառաջացող զինուորը կրնայ վստահ ըլլալ թէ գրէթէ միշտ յաղթող պիտի հանդիսանայ : Անվեհերութիւնն ու յանդգնութիւնը կը սարսեն թշնամին և շատ անգամ անոր փախուստին պատճառ կ'ըլլան : Ուրեմն երբ զինուոր մը քաջ է՝ փափաքանօք ու զուարթութեամբ կը մտնէ զինուորական ծառայութեան մէջ, զանազան մարզանքներով կուռելու և վաղելու արհեստին կ'ընտելանայ, և օր մը կրբ թըշնամին գլուխ վերցունէ՝ անվեհեր կերպով կը խոյանայ այն ախոյեանին վրայ որ իր Հայրենիքին իրաւանց գէմ ոտնձգութիւն ընել կը փորձէր :

Ճշմարիտ ֆաղսագիւն՝ ճշմարիտ հայրենասէրն է. — Անոնք որ քաջակազմ զաւակներ կը մեծցունեն, անոնք որ օր ըստ օրէ արի ըլլալու և կատարելագործուելու ձգտելով՝ կը ջանան որ իրենցներուն կեանքն ալ աւելի գեղեցիկ ու արդիւնաւոր դառնայ, անոնք որ գիտեն վտանգի օր մը իրենց պարտականութեան մէջ չթերանալ ու մղել իրենցները նոյն ընթացքին, ճշմարիտ քաղաքացիներ են, կամ, ուրիշ բացատրութեամբ, ճշմարիտ հայրենասէրներ : — Աշխատող ճշմարիտ հայրենասէրները չը շփոթեն՝ք կեղծ ազմկարարներու հետ որոնք վտանգի առջեւ կը տկարանան ու կ'անհետին :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ի՞նչ կը հասկընամք «Հայրենիք» ըսելով. — Ո՞վ կը կոչուի վաս. — Իր անկախութիւնը կորսնցունելէն յետոյ Հայն ի՞նչպէս ապրեցաւ. —

Իրաւունք ունի՞ր շնորհակցելու. — Ի՞նչ դեր կատարելու սահմանուած է
 Լա Հէյի համաժողովը. — Պատերազմ մը կ'արդարանայ. — Ո՞ր
 ազգերը կը նկատուին բարբարոս. — Ի՞նչ օգուտներ յառայ կու գան
 բոյոր ազգերու համերաշխութենէն. — Ինչո՞ւ անհրաժեշտ դարձած է
 զինուորական ծառայութիւնը. — Ո՞վ կը հանդիսանայ յաղթական. —
 Ո՞վ արժանի է նշմարիտ հայրենասէր կոչուելու:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Զ. ՄԱՍԻՆ ՅԱՏՈՒԿ

Փ Ա Յ Տ Է Ա Մ Ա Ն Ը

Գէորգ ազա ամբողջ իր կեանքին մէջ ապրած էր իբրեւ տի-
 ազար՝ աշխատանքն ու ընտանիքը սիրող գործաւոր մարդու: Ժա-
 մանակին, գիտցած էր նեղ ապրիլ, իր համեստ վաստակէն խնայ-
 ութիւններ ընել՝ ո՛չ միայն իրեններուն ապրուստին ու կապուս-
 տին, այլ և անոնց դաստիարակութեանը համար: «Հայրս մայրս
 գալոց չդրին զիս, գրել կարգաւ չսորվեցայ, գոնէ ե՛ս զաւկըներս
 անուս չթողում». մեռնելէս ետք անոնք գերեզմանս չանիծե՛ն
 թող» խորհած էր ժողովուրդի այս պարզ զաւակը, ծխախոտին,
 օղիին, պերճանքին, բոլոր իր հաճոյքներուն համար մխիթելք
 ստակները յատկացունելով անոնց դպրոցին ու գիրքերուն: Մին-
 չեւ որ անոնք մեծցեր «մարդ» էին եղեր, հրապարակի վրայ մէյ
 մէկ պատուաւոր անուն շահեր և ամուսնանալով՝ զստ սուս տեղ
 կազմեր:

Ինք այլ եւս գործէ քաշուած՝ կրտսեր տղուն հետ կ'ապրէր,
 որովհետեւ ծերացեր էր և անկարող աշխատելու: Ալեւոյթի և
 ձանձրոյթի այդ օրերուն, կ'երթար բազմիչ վարի սենեակին ան-
 կիւնը, համբիչը ձեռքին մէջ, կարծես անոր հատիկներուն դարձ-
 դարձումով՝ կեանքին մ'նացորդ օրերը հաշուելու տիւրը զբա-
 ղումին անձնատուր: Տունին մէջ ա՛լ աւելորդ բեռ մըն էր
 ինք իր տղուն ու հարսին համար՝ որոնք կամաց կամաց երես կը
 դարձունէին իրմէ: Ատոր առաջին ու մեծ ապացոյցը տուին ար-
 դէն՝ իրենց հետ մէկտեղ սեզան չնստեցունելով զինք: Թոռները
 բողոք բարձրացուցին՝ իրենց ծնողքին այս անգութ ապերախ-
 աութեանը դէմ, լալով և պոռալով. «Մե՛նք ալ սեզան չենք նըս-

տիրոյ Տրտունջի այդ վսեմ արտայայտութիւնն իր արդիւնքն ունեցաւ երկող շաբաթ միայն. երթալով պզտիկները համակերպեցան իրենց հօր և իրենց մօր այդ անդարձ որոշումին, և մեծ հայրիկը դատ ճաշել սկսաւ: Անիկա սակայն իր դառնացած սիրտին մխիթարութիւնը կը գտնէր նորէն անուշ խանդաղատանքին մէջ իր թոռներուն որոնք յաճախ կու գային իր առանձնոցին ամայութիւնը շէնցունել իրենց աղմուկներով, երբ մանաւանդ պապը հողէ ամոնէ մը իր ճաշն ըրած ատեն՝ անոնք շուրջը կը խռուէին և իրենց ժպտուն դէմքերով կ'ամոքէին իր լքումը:

Բայց Գէորգ աղա իր թոռներուն ներկայութեամբ ինքզինք ո՛րչափ ալ երջանիկ զգար, կը կուահէր թէ անտանելի կը դառնար իր զաւկին ու հարսին աչքին, որովհետեւ ժամանակը կ'առաջնորդէր զինք անողոք կերպով դէպ ի խոր ծերութիւն: Այսպէս ականջները ծանրացեր էին, ձեռքերն ու ոտքերը կը դողդղողային, աչքերն ալ լաւ չէին տեսներ: Անգամ մը ապուր խմելու պահուն՝ երերուն ձեռքերը հողէ ամոնն ա՛յնքան շարժեցին որ շրջեցաւ ան ու կոտրեցաւ, ձենձերու մէջ թաթխելով վրան գլուխը: Իսկոյն անդրանիկ թոռը մօտեցաւ անոր ու ըսաւ. «Հո՛գդ անգամ չընես, մենք կը մաքրենք հիմայ. ամանին համար ալ մե՛նք կոտրեցինք կ'ըսենք»: Սակայն մայրերնին կիսաբաց դուռնէն տեսեր ու լսեր էր ամէն բան: Յաջորդօր նոյն թոռը շունչը բռնած՝ պապուն քով փութաց, տխուր դրուագ մը անոր հազորդելու համար այն գաղտնի խօսակցութենէն զոր առջի գիշեր իր ծնողքն ըրեր էին.

— «Տէտէ, քեզի Փրկիչ պիտի դնէին. ամէնքնիս ալ լաց մը դրինք, պօռացինք կանչեցինք: Մենք հոս ենք, տէտէ, չպիտի ձգենք որ քեզի հօսկէ դուրս հանեն»: Աչքերը խոնաւ՝ «Ապրի՛ս մանչա», ձայներ էր պապը, համբոյր մը դրոշմելով ճակտին՝ գորովագութ իր թոռան. յետոյ սկսեր էր Սաղմոսէն տուն մը մթմթալ, համբիջը ձեռքը. «Մեր ի տանէ՛ քու մէջ մի՛ պակասեսցի...»:

Ապուրը թափելուն և ամանը կոտրելուն դէպքէն վերջ, ծերունիին փայտէ սան մը յատկացուցին և ատո՛վ հրամցուցին ամէն կերակուր: Այդ անշնորհ ամանը մեծ թոռն էր որ տեսաւ առաջին սնգամ և սաստիկ վշտացաւ իր ծնողքին դէմ: Կիրակի առտու մըն էր. պարտէզ գնաց, ծառի մը տակ նստաւ ու սկսաւ փայտի մեծ կտոր մը տաշել ու փորել: Մայրը մօտեցաւ անոր ու ըսաւ. «Ի՛նչ է շինածդ նայինք»:

— Փայտէ աման, պատասխանեց տղան: Երբոր դուն ու հայրիկս ծերանաք, ես ալ ասո՛վ կերակուր պիտի կերցունեմ ձեզի.. :

Մայրիկը քարացած մնաց, զաւկին այս ազդու խօսքերը լսելով: Ա. Թ.

Կ Ա Ղ Ա Ն Դ Ը Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ձ

Կաղսնդ...: Աչքս գոց կը նայիմ...: Ո՞րն է այս երկիրը. երբեք եղած չեմ հոս. բայց անծանօթ չէ ան ինծի: Տեսնելուս՝ կը ճանչնամ զայն իսկոյն, սիրտս անոր կ'երթայ մէկէն. ընտանի, սերտ, ներքին բան մը կսյ անոր ու իմ միջեւ: Երկար երազանքներու մէջ, երեւակայութիւնը անոր տարփոտ ճարտարապետը եղած է: Ես հոս մագլցած չեմ անոր լեռներն ի վեր, աղբիւրին մէջ չեմ լողցած, եկեղեցիին բակը իմ խաղերս չէ տեսած, դաշտերուն մէջ ծաղիկ չեմ քաղած, ու այդ տանիքները իմ խոնջ մարմինս չեն պատսպարած: Բայց լերան բոլոր ծերպերը գաղափիք չունին ինծի համար. աղբիւրին ջրին կարկաջը սկանջներուս մէջ կը կլկայ, եկեղեցիին զանգակատան բարեկամ բարեւ մը կու տամ, ծաղիկներու հոտ մը ուղեղիս կ'ազդէ ընդփոյթ, ու երդիքին տակ ծիծեռնակի հին բոյն մը կը փնտուեմ:

Իրա՛ւ, երբեք եղած չե՞մ հոս: Ուրիշներու մէջ, իմ արիւնս կրող մարդերու մէջ ապրած եմ այստեղ, ու անոնցմէ ինծի ա՛յնքան խորապէս անցած է իրենց կրած ուղղակի տպաւորութիւնը այս երկրէն որ, անկից հեռու թէեւ, հոն եղած եմ միշտ, երազական կրկին կեանքով մը:

Մամնաւոր անուն մը չունի տեղը որ աչքիս դիմացն է: Քաղաք մը չէ ան, ո՛չ աւան մը կամ գիւղ մը: Ընդարձակ ու բիւրակերպ տարածութիւն մըն է: Գիծով մը ու սահմանով չորոշուիր: Լեռներ ու դաշտեր, ու նորէն լեռներ ու տափարակներ՝ ջրի ընթացքներով ժապակինուած, բլուրներ ու ծործորներ, քաղքի փողոցներ ու գեղի ճամբաներ պարտէզներու մէջէ, քարէ տուններ ու յարդածածուկ խրճիթներ: Անուններ դնել կ'աշխատիմ իւրաքանչիւր կէտին, զանազանել այս համախուճումը: Մշոյ դաշտ, Շատախ, Կարին, Հաւաւ, Բասեն, Սիփան, Կարմրկապ, Հայոց Ջոր,

Լուսանք, Արածանի, Սրտամէտ, Գրգուռ, Մօրենիկ, Վարդենիս, Բիւրակն, Տալարիկ... Բայց կը շփոթուին, իրար կը խառնուին, իրարու մէջ կ'ընդելուզուին, ու քիչ քիչ մեծ անուն մը միայն կը մնայ ամէնուն վրայ թեւատարած, — Հայաստան:

Ձիւն կայ ամէն կողմ, յորդ, թաւ ու կակուղ, անազարտ բաներու սրբութեամբ մը փալիլով: Լեռ ու դաշտ ծածկած է ան հոգածու տարփանքով, քաղաք ու գիւղ թաղուած են անոր մէջ մակոտ հաճութեամբ մը: Բուխերիկներ միայն կը ծածկեն զայն դէսուդէն, օդին մէջ զրկելով մուխի զուարթ յորձանքներ: Ու ցուրտ չէ այս ձիւնը. տաքցընող բան մը կ'ելլէ անկէ, և մտերմութեան, գուրգուրանքի ու խրախճանութեան հրաւէր մը կը յածի անոր վրայ:

Յնծուութիւն մը կը խաղայ այս ամբողջ տարածութեան վեթեւ: Ու մարդիկը որ կը տեսնեմ դիմացս՝ կը խնդան, ու կիները կը ժպտին, ու պզտիկները՝ թեւերնին վեր՝ կը պարեն: Լոյս, աղմուկ, ոգեւորութիւն ամէն կողմ:

Կէս-գիշերուան զանգակները կը հնչեն աւետաւոր, Նոր Տարիի գալուստը իմացնելով. կը հնչեն հրճուալիք, իրարու զրկելով՝ մօտէ մօտ իրենց փանգիւնները. ու բերկրութեան երգի մը, գոհարանութեան ալէլուիայի մը պէս կը տարածուի, կը բարձրանայ, կը սաւառնի ստիկա:

Ու սեղաններ կը տեսնեմ, սեղաններ ամէն կողմ, ու անոնց չորս կողմը շարուած են պառաւներ ու ծերունիներ իրենց պաւակներով, հարսներով ու թոռներով: Ու առատութիւնը յղփանքով մը կը վեղու այդ սեղաններուն վրայ. ճոխ ու շքարի բնութեան մը պարզեւած բոլոր բարիքները կուտակուած են հոս ժիր ու չարքաշ մարդերու ձեռքով: Գինիի պոզիկը հոն է յաղթապանծ, ու հողէ կուռիկներու մէջ կը խնդայ ան իր ցոլացիկ կարմրութեամբը: Սախերու մէջ ձագուց մեղրը իր ձերմակութիւնը կը փռէ: Ու իրարու վրայ դիզուած, բուրգի պէս կը բարձրանան նուշը, ընկուղը, չամիչը, պնտուկը, ամպրտը, թուզն ու պաստեղը, մալաչիկը, սպասիկը, խնձորները, որոնց քով շարուած են խաղաղները, ձմեռնուկը, կաղըմպտը, էծու պտուկը, անկուտ քիշմիշը:

Ահա ոտքի կ'ելլէ պառաւը որ սեղանին գլուխը բազմած է գինիին կուռիկը ձեռքը կ'առնէ, անոր մէջ կը ձգէ իր ճակտին պապղուն ոսկիներէն հատ մը, ու դողդոջուն ձեռքով կը բարձրա-



ԿԱՂԱՆՉԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ.—Նկար Կարապետ Արամեանի, զմահատուած Յրամապան թերթերի)

Ամանորի առտուն, տուճին Ըսնապէտը՝ թագմոցիւ անկիւնէ իր օրհնութիւնները իւր օայ իր բուններուն, գաւապ-
ներուն եւ հարսներուն որոնք կարգով իւր գան այնպէսպէս:

ցընէ բաժակը. ձայնը ամուր է սակայն, ու օրհնաբեր խօսքերը իր շրթունքներէն կ'ելլեն յոյսերով լեցուն. «Ձեզ ողջութիւն, շնորհաւոր տարի ու բարի կաղանդ. ամէն տարի բարով համախնք ուրախ սրտով: Դառնիկ դատինք, քաղցրիկ ուտինք: Աստուծոյ օրհնենքը ամէնուս վրայ: Ամէնքս համախնք մեր մուրատինս: Ու կաթիլ մը կը խմէ գինիէն, յետոյ ամէնուն կը խմցընէ պուտ պուտ, ու ամէնքը կարգաւ կը համբուրեն իր ձեռքը, մինչ ան կը շարունակէ իր մաղթանքները, լաւագոյն օրերու վստահութեամբ մը որ իր նիհար կուրծքը կ'ուռեցընէ: Կոճոյն է ան՝ տարիններէն զարնուած, բայց միշտ ամուր ու տեւական, հողին մէջ տարածած իր կենսալիր արմատները որոնք իր գործը պիտի վերակսին. վերանորոգման, շարունակութեան աւիշը կը բարձրանայ իր կանանչ ձիւղերն ի վեր որոնք դէպ ի վեր կը խոյանան յոյսի թռիչներով:

Սեղան մը, հեռուն, կը հեւայ իր բեռին տակ: Ինչպէս համբել անոր վրայ Գաւաշի քաղցրը, Մոկաց մեղրը, Կարկառի զարտէն, Սպայկերտի դմնը, Խիզանի խնձորը, Կարճկանի փոփինդը, Կիւզալտէրէի ռուփը, Մշոյ դաշտի բաղարջը, Մօտկանի միրգը, Բաղէշի զարկած քաղցրը, ու պտուղներուն կոյտը որ կը բարձրանայ խայտաբղէտ:

Անդին, տաքուկ քիւրսիկն շուրջը, որուն տակ շարուած են կրակով լեցուն հողէ թաղարներ, շալէ բարձերու և հաստ գորգերու վրայ նստած՝ ուրիշ խումբ մը նոր Տարիի հացը կը բաժնէ, մինչդեռ աւելի հեռուն՝ թոնիրին բոլորտիքը, բազմաթիւ ձիւղերու բաժնուած հսկայ մոմի մը լոյսով, ամբողջ ընտանիք մը լօլէին գալուստը կը տօնէ:

... Բայց աչքս անոնցմէ կը բաժնուի ու կը յառի քիչ մը հեռուն՝ աղւոր հարսի մը վրայ որ գոմին դրանը առջեւ կեցած՝ կը կաղընտէ արջառները, կուլուլ նետելով անոնց բռնալիր. չէ՞ մի որ տունէն են անոնք ալ, ու տարին ի բռն աշխատեցան նոյն վաստակին համար, արութեան ու առատութեան հացին համար դատեցան անոնք ալ՝ իրենց տէրերուն հետ քով քովի: Ու կը ծռի, խանդակաթ համբոյր մը կը դնէ անասունին ճակտին վրայ, որ, գգուանքին տաքութենէն հաճ՝ գլուխը կ'երկնցընէ:

Վայելքին ու մոռացման մեծ երանութիւնը կը տարածուի ամէն կողմ, անջրպետելով երէկուան ցաւերն ու վաղուան հոգերը: Մեծ դագարն է սաիկա, անհետացընելով յոգնութիւններն իւր

զրկանքները Գալիք օրերուն համար նոր ուժեր պատրաստելով, ամրապնդելով արի հաւատքը որ դարձրէ ի վեր այդ հողին կը կապէ զիրենք՝ վհատիւ չզիտցող վտահուժեամբ մը, տկարանալ չզիտցող կորովով մը: Ու մարդիկը որ կը տեսնեմ՝ դիմացս՝ կը խնդան, ու կիները կը ծպտին, ու պզտիկները՝ թեւերնին վեր՝ կը պարեն: (*)

(Համառօտած)

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն Զ Ո Ղ Հ Ա Յ Մ Ը

... Տքթ. Միհրան Գ. Գասապեանով՝ զոհերէն մէ՛կն ալ աւելցաւ հերոսներու այն մեծ բանակին վրայ, որոնք գիտութեան ցուրտ ոգեւորութեան մէջ՝ դէպ ի Մահ քալեցին մարդկութեան համար:

Իր մտաւորական հասունցած ոյժերուն առաջին թռիչքին, անիկա ստիպուեցաւ հեռանալու ա՛յն գործէն զոր կը սիրէր արտակարգ տարիանքով՝ այդպիսի բարձր հակում՝ ունեցող հազուադիւտ հոգիներէ՛ն միայն ըմբռնելի:

Անիկա եկաւ խորհրդաւոր Արեւելքէն՝ սորվելու նոր խորհուրդներ որոնք մարդկային միտքին առջեւ կախարդուած էին արեւմտեան գիտութեան մոգականութեամբը: Ժամանակակից

(*) ԳԱԻԱՌԻԿ ԲԱՌԵՐ. — Պոզիկ . երկայն ծոռակով փարչ: Կուռիկ. աման: Սալս. հողի ամանի ձեսակ մը: Զագուց միզր. բրբ. Օղուչ պաշը: Պնտուկ (= բրբ. Ֆնըզ), կաղին: Ա՛գրաւ. «արմաւ»իւ աղաւաղեալը: Մալաչիկ կամ մալաչի. ազնիւ օսան: Ապասիկ. «ամբասիկ»իւ աղաւաղեալը. բրբ. Ահյէ արմուռը: Զմեռնուկ, կալըմպոտ. մինչեւ ձմեռ ու կաղանդ դիմացող խաղողներ: Էծու պտուկ «այծպօռուկ»: խաղողի ձեսակ մը, բրբ. Քեյի մեմեսի: Քիչմիշ (= բրբ. Քիշմիշ), հյ. գին: Զարտէ (= բրբ. Զհրսայի), հյ. պարկուկ, խոբիկ: Դըմս (= դամաս), չոր սալոր: Ռուր, բրբ. Բհմեզ: Քիւրսի. բոնիշիւ վրայ դրուած 4 ոսֆով սեղան՝ որուն վրայ գորգ կամ վերմակ կը ձգեն, ջաֆնալու համար: Լօլէ. կաղանդ: Բլիթ. կրտ ձեռով հաց մը:



+ ՏԳԹ. ՄԻՀՐԱՆ ԳԱՍԱԳԵԱՆ

Նշանաւոր երկերարոյժ որ անցեալ տարի Նիւ Եօրք մտաւ 42 տարեկան, երկերական ճառագայթներու այրուցքի հիւսելանօք, երբ հարկ եղաւ անդամասել ձախ մեղքին մասները, բայց հիւանդութիւնը կրկին տարածուեցաւ քնիւն մէջ: Ինք կատարեալապէս գիտակից եր վսանգին, երբ X ճառագայթներուն վրայ կը զննէր. նոյն վսանգը յաճախ մասնանկիշ դրած է իր՝ հրատարակած յօդուածներուն եւ «Երկերարուժութիւն ու Ռեօերփենեան ճառագայթները» անգր. եղակապ իր երկատիրութեան մէջ:

մարդերու հաւասար՝ իր մեծագոյն ջանքը չխնայեց այդ նոր մեզուլթիւնն օգտագործելու ի նպաստ մարդկային ազգին, որպէս զի ամիցէր մարմնական հիւանդութիւններ, փրկէր կեանքեր, և այդպէսով պակեցունէր խոր ու ծանր անձկութիւններ: Աշխատեցաւ, որպէս զի ժողովուրդը չկորուի. ուստի իր կեանքը զոհեց՝ անորը փրկելու համար:

Տքթ. Գասապեան, — ինչպէս ծանօթացան իր յուզարկաւորները՝ խօսուած դամբանականներէն, — զաւակն էր այն հին ազգերէն մէկուն, որոնց հայրենիքը կը գտնուի Սեւ Մոլդուն հարաւակողմը. ա՛զգ մը որուն այժը հողամասի ընդարձակութեան կամ իր սպառազինութեան ահաւորութեանը մէջ չկայանար: Այդ ազգը չունի սպառազինութիւն, ինչու որ տարիներէ ի վեր հպատակ ցեղ մըն է: Աննուաճ թշնամիներէ պաշարուած՝ այդ պզտիկ ժողովուրդը պահպանած է իր ինքնութիւնը, լեզուն, աւանդութիւններն ու հաւատքը՝ հսկայ այն արշաւանքներուն դէմ որոնք հարուէն հիւսիս խուժելով, աւլեցին տարին իրեն պէս ուրիշ շատ ազգեր...:

Ուրեմն հերոսութիւնը Տքթ. Գասապեանի արիւնին մէջ՝ երկար տողանցք մըն է: Հայերը մտաւոր արենակցութիւն մը ունին հին Պաղեստինի ա՛յն ժողովուրդին հետ որ տուաւ աշխարհի՝ եղբայրութեան և զոհողութեան իր գերագոյն օրինակը:

... Տքթ. Գասապեան բժշկական սոսպարէզն իջաւ անանկ ատեն մը երբ «X ճառագայթ» կոչուած (ուրիշ յարմար անուն չգտնուելուն) նոր և տարօրինակ այժը դեռ նոր մտած էր գիտութեան մէջ: X «անծանօթ»ն էր այն ատեն, ու հիմակ ալ է՝ սղէտներուն համար: Թէ այդ խորհրդաւոր այժն ինչ հզօր կարողութիւն ունի օգտագործուելու համար՝ անտարակուսելի էր: Միայն թէ մա՛րդ պէտք էր որ լուծէր անոր խորհուրդները, սորվէր թէ ինչպէս հնար էր անոր յատկութիւնները կիրարկել ի նպաստ մարդկութեան: Երբեք նկատի չառնուեցաւ սակայն թէ X չարիք արտադրելու ո՛յժ ալ կը պարունակէր. անոր անձնուէրները վտանգն անգիտացան, ճի՛շդ զինւորներուն պէս որոնք թուչող գնտակին վտանգը կը մոռնան երբ կը հրամայուի իրենց՝ արձակել:

Տքթ. Գասապեանի գործին պատմութիւնը մին է յարատեւ վտանգներու, յաղթութեանց ու ինքնամոռացումի պատմութիւններէն: Ակներև վտանգը սաստկացուց իր եռամիդը: Այդ վտանգը պէ՛տք էր որ յաղթահարուէր. մահառիթ այժը պէ՛տք էր որ

փոխուէր ապահով ու փրկարար դարմանի մը: Այդպէս ալ եղաւ Այսօր X ճառագայթը կրնայ գործածուիլ նոյնքան ապահով կերպով որքան որ և է զօրաւոր ազդակ՝ բժշկութեան մէջ. անոր կիրառումին եղանակն ալ ա՛յնքան կատարելագործուած է որ, այլևս քիչցած են վտանգները զայն գործածողներուն համար:

Գիտութիւնը նոր ժամանակաշրջանի մը մէջ մտաւ X ճառագայթին գործածութեամբը, մանաւանդ ապահո՛ւյ գործածութեամբը . . . : Եւ ո՛չ ոք այնքան նպաստեց այդ «ապահով գործածութեան» որքան Տքթ. Գասապեան: — Նշանախեց մըն ալ չպակսեցունելով այն պատիւէն որ իրաւամբ կը պատշաճի անոր՝ իբրև անհատ, իր զոհողութիւնը նոր փայլ մը կու տայ նաև արուեստի՛ մը որուն մէջ անձնուիրութիւնը մինչև իսկ մահուան կը յանգի:

1910 Յուլիս

«NORTH AMERICAN» քերթիկ

[Բռնատր Համիտի ֆաղափակումութեան շրջանին, գիտեմք թէ րփանդակ Թուրքիոյ մէջ ապրող զանազան ազգաբնակչութիւններէն աշխատանքի եւ յառաչդիմութեան նուիրուած Հայե՛րն էին ամենէն աւելի շատ ենթակայ հարստահարութեանց. մանաւանդ զաւստի Հայութիւնը յունեցաւ հանգիստի օր: Իր հերկուած դաշտերը կ'աւշոջկէին միշտ, իր միակ ապրուստին ու հարստութեան աղբիւր՝ յոճի անատուններ, արօր ու արմաթի աւարի կը տրուէին, եւ ինչ որ ամենէն աւելի սոսկային էր՝ անիկա ականատես կ'ըլլար յաճախ անշուր անուանգումներու՝ որոնց ենթականերն էին իր աղջիկներն ու ճարտերը: Ասոնցմէ զատ, նախաստակն ցոյցեր յաճախադէպ էին՝ Հայուն կրօնիկն եւ անոր սրբափայտեուն նկատմամբ: Բնական էր որ Հայ գիւղացին ընդվզեր վերջապէս՝ անիրաւութիւններու այդ շարքին հանդէպ: — Էնտացայ ետզը գաղափար մը կրնայ տալ բոլոր ասոնց մասին: Կարևոյ 1891ի պատմական ցոյցն է ան, որուն գլխաւոր դերակատարները բանտի մէջ խմբագրած եւ եղանակած են զայն, ե՛րգ որ իսկոյն թայն ժողովրդականութիւն ունեցաւ]:

Է Ր Ձ Ր Ո Ի Մ

Ձայնը հնչեց էրզրումի Հայոց լեռներէն,
Թունդ Թունդ ելան Հայոց սրտեր զէնքի շաչիւնէն:

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած.
Դաշտը Թողուց, սուր-հրացան՝ բաճի տե՛ղ առաւ:

Հայ ծերուկը ցուպն ի ձեռին՝ լալով խնդրում է
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ:

Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն՝ զնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ-ստանալ:

Գնքուշ կեանքը ծանր է թըլում Հայ օրիորդին,
Ձէն ի ձեռին՝ սիրտ է տալիս Հայոց քաջերին:



Անսիրտութիւն, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրածարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին:

Լսեց Գիւրտն ու սառեցաւ արիւնը խեղճին,
Ձէր երազեր Հայը տեսնել նա՝ այդ վիճակին:

Ուրախացաւ Մայր-Հայասաան, ելաւ կանգնեցաւ.
Հինգ դարերու սուգ-տառապանք մի քիչ մեղմացաւ:

Պ Ա Տ Ո Ւ Ա Խ Ն Դ Ի Բ Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն

Զարայի Դարապողազ գիւղին մէջ ո՛վ չէր ճանչնար բարի և աշխատասէր Գալուստ Անդրէասեանը: Ամէնքը կը սիրէին զինք և մեծ համարում ունէին վրան: Իրմէ դժգոհ էին միայն քանի մը երիտասարդներ որոնք երբեմն Շապին Գարահիսարի կողմերէն կ'երեւէին այդ տեղերը՝ «մարդ գրել» ու համար իրենց դժգոհութեան շարժառիթն ալ այն էր որ «մարդ գրողները կ'ուզէին իրենց ընկերացընել Գալուստը, բայց անիկա կը մերժէր շարունակ:

Գալուստ իր ամբողջ ժամանակը կ'անցընէր աշխատութեամբ: Այն սեպհական արտերը զորս կը մշակէին իր ծնողքն ու եղբայրը՝ լիւրի բաւարարութիւն կու տային անոնց գերդաստանին պէտքերուն, և ինք չէր ուզեր բեռ ըլլալ անոնց վրայ:

Իր անբաժան ընկերներն էին Աստուրն ու անոր քոյրը՝ սևաչուկ Սառան, որոնց հետ սիրալիւր յարաբերութիւն մը մշակած էր: Անոնց հետ կ'անցընէր իր պարապոյ ժամերը: Երկուքն ալ հասակակից իրեն՝ բարի և ժրջան էին իրեն պէս: Եթէ պատահէր որ այս երեքը չտեսնէին զիրար՝ կը տխրէին:

Գորովի այս կասն էր պատճառ, որ երբ հարեւան բռնակալ Մէհմէտ Ալի ութսունական թուականին Գալուստեանց հողերը գրաւելով թշուառութեան մատնեց զանոնք, ազգականներէ աւելի նոյն քոյր-եղբայրն էին որ հէք զրկեալը կը մխիթարէին, ամէն ատենէ աւելի կրկնապատկելով իրենց սէրը:

Այդ միջոցներուն էր որ Անդրէասցի Ադամ Տաքէսեան և Սեդրաք Գողոսեան նորէն Գալուստի դիմեցին և ուզեցին զինք առնել իրենց «խումբ»ին մէջ: Կռուելու համար Մէհմէտ Ալի բըռ-



ԳԱԼՈՒՍՏ

ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

նութիւններուն դէմ Գալուստ դարձեալ մերժեց, որովհետեւ հաւատքն ունէր թէ չարերը պիտի պատժուին Աստուծոյ, Օրէնքին և Թագաւորին կողմէ: Այսպէս, «խումբ» կազմողներուն բոլոր ջանքերն ապարդիւն անցան և Գալուստ հեռու մնաց անոնցմէ:

Եւ ահա օրին մէկը լուր տարածուեցաւ թէ Մէհմէտ Ալի իր արքանեակներուն ձեռքով առևանգած էր Սառան՝ որ 18 տարու էր այն ատեն: Հէք Հայուհին շատ պաղատեր էր որ չտանին զինք, սակայն անիրաւները մտիկ չէին ըրեր, ու նոյն իսկ այդ պահուն իր մօտ գտնուող եղբայրն Աստուր սաստիկ ծեծուեր էր այդ հրէշներէն՝ ընդդիմացած ըլլալուն համար: Իրիկուան՝ Աստուրը մահամերձ գիւղ բերուելուն՝ բոլոր գիւղացիք յուզումի

մատնուած էին այդ դէպքին Նետեւանօք, մինչ քահանան և գիւղին երեւելիները բռնաւորին մօտ փութացած էին՝ աղաչելու որ աղջիկը հայրենի տունը վերադարձուի. բայց Մէհմէտ Ալի պատասխանած էր թէ Սառան իրեն կնութեան առած է և անունն ալ փոխելով Այիշէ դրած:

Յաջորդ կիրակի առտուն կանուխ՝ ամբողջ Ղարապօղազ գիւղը սուգի և իրարանցումի մէջ ինկաւ, որովհետեւ թշուառ աղջկան մասին տխուր լուրեր կը շրջէին: Կ'ըսուէր թէ անիկա բռնաւորին գէտ անաստած ըլլալուն պատճառաւ ստկալի տանջանքներու ենթարկուած էր, որոնց չդիմանալով՝ հոգին աւանդած էր վերջապէս:

Գալուստ որ մինչեւ վերջը հիւանդ Աստուրին մնարէն չէր հեռացած՝ խորին կսկիծով լսեց Սառայի մասին պատմուածները: Թօթը չուշացաւ իրականութեան գոյն առնելու. Սառայի անշունչ մարմինը գիւզ բերեր էին, և դեռ չթաղած՝ հարկ եղեր էր մեւեւոյն փոսին մէջ ամիսփելու թէ՛ անոր և թէ՛ Աստուրի մարմինները, գիւղացիներուն դառն արցունքներուն հետ:

Այն ատեն էր որ Գալուստ գծաց Շապին Գարահիսարցի Աւագ Տուրիկեանն ու Մկրտիչ Թացեանը գտաւ ու սիրայօժար փափաքեցաւ մտնել անոնց «խումբ»ին մէջ...:

Դէպքը տեղի ունեցեր էր 1892ին, երբ Գալուստ 25 տարու էր տակաւին: Այնուհետեւ ամբողջ 12 տարի անիկա գործեց քաջարի խումբին հետ, ահ ու սարսափ տարածելով բոլոր անոնց վրայ որոնք հայ ժողովուրդը կը կեղծէին ու կը զրկէին: — Մէհմէտ Ալի եւս իր պատիժը գտաւ նոյն «խումբ»էն: Ինչ որ երկրին օրէնքը չէր ուզած ընել՝ Գալուստ գործարարած էր զայն, լուծելով վրէժը Սառայի և Աստուրի: Անիկա ուրացած էր իր անձը, ծառայելու և զոհուելու համար իր թշուառ ազգին՝ անարդարութեան երեսէն տանջուողները փրկելով:

Օր մըն ալ յանկարծ Գալուստ ձերբակալուելով առաջնորդուեցաւ Խարբերդի բանտն ուր մնաց մինչև 1904: Բռնակալ Համիտի հաւատարիմ պաշտօնեաներ զինք ու իր զինակից ընկերը՝ Թէվէթէլեան Յարեթը դատելով մահուան դատապարտեցին: Նոյն տարին Նոյեմբեր 21ին երկուքը մէկ գլխատուեցան: — Ժողովուրդը սրտանց ողբաց անոնց կորուստն, ուխտատեղի ընելով անոնց գերեզմանն ալ: — Այսպէ՛ս վերջացաւ բարի, զգայուն և արդարասէր Գալուստի կեանքը:

Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ,

Ա Ր Դ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ի Ա Ձ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր

ձիշդ ծովուն պէս ալեկոծ՝ որ իր ժեռուտ եզերքին
կը զարնըւի, մեծ ջարդին մէջ խոյացան ամէնքն ալ,
վայրագօրէն գոռացող յորձանքներով թանձրածալ,
Գնտակներէն ծակծկուած, շնչասպառ ու մոլեգին:

Յորդ արեւին տակ ամրան, արշալոյսէն մինչև մութ,
Այգիները, հասկերը աւերելով անդադար,
Սև սև պատեր մարդկային՝ իրենց գիծերը երկար
Քշռեցին ու գացին այն տեղ խուժել կոյտ առ կոյտ:

Յետոյ իրար փարեցան պրկումներով կատաղի,
Շունչը շունչին խառնուած, խէթով աչքերը լեցուն,
Տենդոտ արիւնն յագեցուց երկաթները սուրբրուն,
Հաստ բունին տակ ժայթքեցին փշրանքները ուղեղի:

Յողթական ու պարտըւած, ձիւտոր ու հետեւակ,
Ահա ամէնքը գունատ, լուռ ու վայրագ, բռունցքնին՝
Փակ, ակռանին՝ սեղմուած, ու պղտոր՝ գոյնը աչքին,
Մահուան գիրկը մոլեգնոտ բիւր բիւր փռուած են հիմակ:

Մեղմ անձրեւը լուալով անոնց դէմքերը տօգոյն՝
կը կարկաչէ սարերէն, ու դաշտին խորը դաժան
Ուր թռչուններ կը յածին՝ չարաշուք այդ իրիկուան
երկինքն անոնց դէգերը կ'ուրուագծէ հոն, հեռո՛ւն:

Եւ երբեմն, այդ անհուն ջարդին մէջ՝ դեռ կենդանի
Ձի մը յանկարծ կը ցըցէ պիրկ վիզը որ ծակ ծակ է,
Եւ օդին մէջ դառն, խուպոտ հըրածեշտ մը կ'արձակէ՝
Ձոր լըռութեան վըրայէն հովը կ'առնէ կը տանի:

Անէ՛ծք ձեզի, իողխողո՛ւմ, Մահուան Ծարա՛ւ աղէկէզ,
Ահե՛ղ Մոլուցք, հեղձուցիչ ու ճշող Հո՛տ մեռելի,
Հարիւր հազար դիակի և սպանդի ահուելի,
Յիմարական սոսկումին առջեւ անէ՛ծք, անէ՛ծք ձեզ:

Եթէ սակայն այդ քաջերն, արեւին տակ, դաշտին մէջ,
Թնդանօթի երախին դէմ սրտերնին դրած են
Ու Գեղ համա՛ր մահացած, Ազատութի՛ւն, այն ատեն
Օրհնուի՛ր ջինջ արիւնը՝ ձօնուած փառքիդ քու անշէջ՛:

Հայացուց ՓԱՅԼԱԿ
1911

Լ Ը Գ Օ Ն Թ Տ Ը Լ Ի Լ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Գ Ե Բ

Իր Ընտանիքին համար անօգուտ եղող անձը նո՛յնն է նաև
Հայրենիքին համար: Այդպիսին մարդկային ընկերութենէն վտար-
ուած մը կը սեպուի:



Հայրն ու մայրն են որ կը կազմեն ընտանիքը: Անոնցմէ՛ է որ
յառաջ կու գան նաև առաքինութիւններն ու երջանկութիւնը:



Ամենուրեք, օգտակար և պարկեշտ մարդը ճշմարիտ քաղա-
քացի կը դառնայ ընդհուպ:



Ընտանիք մը իր զաւակները դաստիարակին՝ վտահելով, կը
պահանջէ որ պարկեշտ մարդիկ ըլլան անոնք. իսկ երկիրը՝ լա-
քաղաքացիներ:



Ամէն մարդ իր արհեստը կը գովէ, առանց մտածելու թէ բո-
լոր արհեստները հաւասարապէս գովելի ու պիտանի են:



Բռնակալ տէրութեան մը մէջ Հայրենիքը դոյութիւն չունի,
ուրիշ բաներ անոր տեղը կը բռնեն, այսինքն շահամոլութիւն,
փառք և մեծերու առջեւ դարպասում:



Հայրենիքի մը մեծութիւնն ու զօրութիւնն ինչ բանի պիտի ծառայէին, եթէ ժողովուրդը՝ տխուր ու մտատանջ՝ հալածանքի ու չքաւորութեան կեանք մը բոլորէր:



Արիութեամբ մահուան դէմ ելլողին համար՝ ամենուրե՛ք է Հայրենիքը:



Բացարձակ պետի մը առջեւ կոյր հնազանդութիւնը մարդս անբանութեան կ'առաջնորդէ:



Երբ երկսեռ մանուկներ խիստ դաստիարակութիւն մը ստանան, կոյր հնազանդողներ կը դառնան վերջէն՝ ընկերութեան օրէնքներուն:



Ընդհանուրին կամքին արտայայտութիւնն է Օրէնքը:



Դժբախտութիւն է բարի օրէնքներու քիչութիւնը. բայց ա՛լ աւելի դժբախտութիւն է անոնց հազուադիւս գործադրութիւնը:



Ինքնապաշտպանութեան իրաւունքը, կամ, զօրութիւնը զօրութեամբ ետ մղելու իրաւունքը՝ բոլոր բացարձակ իրաւունքներէն առաջինն է, նաև հիմը՝ միւս բոլոր իրաւունքներուն:



Մեծամեծներու փառասիրութեամբ սկսող պատերազմները կը վերջնան ժողովուրդներու թշուառութեամբը:



Երբ պատերազմը տէրութեան մը պահպանութեանը համար է որ կը մղուի՝ իրաւացի է. իսկ երբ աշխարհակալութեան համար՝ ոճի՛ր մըն է ընդդէմ քաղաքակրթութեան:





Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ա

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Հ Ա Ր Ց Ե Ր. Կ Ր Օ Ն Ք Ի Ի Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք

1. Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Ի Ա Տ Ա Լ Ի Ք Ն Ե Ր

Ուրիշներն իրենց գործքերէ՛ն դասեմք, եւ ո՛չ թէ իրենց խօսքերէն. — Մինք ընդհանրապէս, սխալ ըմբռնումով մը, մարգերը կը դատենք իրենց խօսքերէն և իրենց դաւանած կրօնքներէն, և ո՛չ թէ իրենց գործքերէն: — Կատարելապէս հաւատացեալ կրնայ նկատուիլ անիկա որ իր կրօնքին տրամադրած պատուէրները կը յարգէ ու կը գործադրէ, որով՝ գործքով ապացուցած կ'ըլլայ անկեղծ ջերմեռանդ մը ըլլալը: — Ծոյլ մը կրնայ ըսիլ թէ աշխատասէր մըն է ինք. բայց իր խոստովանութեան անկեղծութիւնը հաստատելու համար մէկ բան միայն կայ, աշխատիլ: — Ինքզինք ազատամիտ նկատող մը երբ առանց զայրոյթի չկրնար լսել ամէն ընդդիմաբանութիւն, ապացուցած կ'ըլլայ թէ պարզապէս նեղմիտ մըն է ինք, հակառակ ինքզինքին «ազատամիտ» մակդիրը տալուն: — Այսպէս ալ, կը պնդենք թէ քրիստոնեայ ենք մենք: Բայց երբ իրականութեան մէջ նախանձոտ ենք, չարակամ, յաջողկոտ և անարդար, այն ատեն ցոյց տուած կ'ըլլանք թէ անունով միայն քրիստոնեայ ենք:

Ուրիշները բռնադատելու չենք մեր հաւատքին դառնալու. — Մարդիկ մեծամասնութեամբ բաժնուած երեք

գլխաւոր կրօնքներու՝ որոնք են Պուտտայականութիւն , Գրիստոնէութիւն և Մահմէտականութիւն : Այս երեք կրօնքները համաձայն չին իրարու՝ ո՛չ մէկ վարդապետութեան մասին : Ասկէ զատ , Գրիստոնէութիւնն ալ իր մէջ շատ մը բաժանումներ ունի , (Լուսաւորչական , Բողոքական , Հռոմէական , Օրթոտոքս և այլն) . որով կը տեսնուի թէ կրօնական տարբեր դաւանանքի պատկանողներ հաւասարապէս ամէնքն ալ միեւնոյն կերպով չին կազմած իրենց ըմբռնումը կրօնական հաւատալիքներու մասին և համաձայն չին իրարու թէ ի՞նչ բանի պէտք է հաւատալ . որմէ զիւրին է հետեւցունել թէ ո՛չ ոք գիտէ բացարձակ ճշմարտութիւնը : Ուրեմն կատարեալ անմտութիւն մը ըրած կ'ըլլանք , երբ խեթիւ նայինք մեր կրօնքէն կամ դաւանանքէն չեղողի մը . իսկ երբ բռնադատենք զայն որ անպատճառ մեր հաւատալիքներն ընդունի՝ ապօրէն և անզուրկ ընթացք մը ցոյց սուած կ'ըլլանք անոր հանդէպ :

Ամեն մարդ ազատ պէտք է ըլլայ իր կարծիքներուն , իր կրօնական դաւանանքին և իր սկզբունքներուն մէջ : Ո՛չ մէկ ճնշում կարելի է քանեցունել անհատի մը վրայ , որպէս զի անիկա բռնի թողու իր սկզբունքն ու դաւանանքը՝ մերինին յարելու համար : Ամէնէն կարեւոր ու կենսական բանը մեզ համար՝ պէտք է ըլլայ մարդու մը գործքը , չէ՛ թէ անոր մտածումները կամ համոզումները :

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ շարժման ընթացիլ . — Դժբախտաբար բարոյական յառաջդիմութիւնը գիտութեանց յառաջդիմութեան չափ արագ չէ եղած , որովհետեւ ամէն ժամանակի մարդիկ մեծ մասամբ անկարող եղած են լուրջ ուշադրութիւն մը դարձունելու

իրենց անձին , իրենց բանականութեան և իրենց խիղճի ձայնին , յամառելով մանաւանդ մնալու իրենցմէ առջի սերունդներուն ընդունած յաճախ թիւր ըմբռնումներուն և դատողութեանց մէջ : «Բարոյական»ի , ինչպէս և «գիտութեանց» յետամնացութեան պատճառ եղած է նաև տգէտներու գոռոզութիւնը : Այդ մարդիկ ինչ որ իմացած են և ուսած՝ իրենց համար բացարձակ ճշմարտութիւններ համարած են և իրենց արժանապատուութեան հակասակ նկատած՝ երբ օրին մէկը գիտուններ հաւատացած բաներնուն անճիշդ ըլլալը մատնանիշ ըրած են իրենց : Մէկ խօսքով անոնք չեն ուզած պայքարիլ չար բնազդներնուն դէմ : — Մարդիկ նաև բուռն ու կրքոտ ըլլալով , չեն ներած որ ուրիշներ կարենան իրենցմէ տարբեր խորհիլ կամ խօսիլ : Այսպէս , մարդոց մեծ մասը դիւրագրգիռ և յախուռն բնոյթի տէր , սոնք ու բուռն ըլլալով՝ չչարչարած , հալածած , տառապեցուցած ու նոյն իսկ մահացուցած է իրմէ տարբեր ու ազատ խորհող քաջարի մարդերը : Այս պատճառաւ , Բարոյականի և Գիտութեանց մասին տեղի ունեցած յառաջդիմութիւններ յամր ընթացք մը ունեցած են :

Ինքնահաւանութիւնը յիմարներու եւ զգեսներու միայն ծնունդ կու տայ . — Գիտուն միտքեր համոզուած են թէ ներհակ զօրութեանց հրամայելու և զանոնք նուաճելու համար հնազանդիլ հարկ է բնութեան օրէնքներուն : Զոր օրինակ , գիտեն թէ պէտք է ժուժկալ և մաքուր ըլլալ , գիշեր ցորեկ մաքուր օդ չնչել և այլն , որպէս զի մարդ առողջ ապրի . գիտեն թէ վէրք մը կը գէշնայ՝ թարախին միքրոպներով , որով կրնան անոր տարածուելուն առաջքն առնել : — Բնութեան օրէնքներուն հնազանդիլն ալ սակայն կը պահանջէ որ մենք այդ օրէնքները

լուրջ կերպով ուսումնասիրենք, հետազօտենք, իրերու խորը թափանցենք: Գոռոզ ըլլալու չենք, այլ շատ համեստ, մեր սորվածներէն աւելի բան մը սորվելու կամ մեր սխալ ուսածներնիս ուղղելու հետամուտ ըլլալու ենք. գիտնալու ենք մանաւանդ թէ մարդ առանձին շատ քիչ բան կրնայ երեւան հանել. այսօրուան գիւտերը հնարարաւոր եղած են հարիւրաւոր հետախոյզներու աշխատակցութեամբ. գիտունի մը ըրածը յաճախ ուրիշներ կատարելագործած են:


Աղմկայարոյցներ եւ անխոնջ աշխատողներ. — Երբ մէկ կողմէ գոռոզներ, այսինքն ամէն բան գիտցած ըլլալու յաւակնութիւնն ունեցող խաւարամիտ մարդիկ շատ աղմուկ կը յարուցանեն ու քիչ գործ կ'արդիւնաբերեն, միւս կողմէ սակայն համբերատար գիտուններ կը տքնին անդու՛ Նոր գիւտերով մարդկութեան բարօրութեանը նպաստելու. իմաստուն խորհողներ ալ կը ջանան զտել ժողովուրդներու հաւատալիքները նախապաշարումներէ և աւելորդապաշտութիւններէ, որպէս զի սըխալներ և անճշտութիւններ երևան բերելով կարենան պարզել ճշմարտութիւնը:

Ճշմարտութեան համար քառապողներ. — Ճշմարտութիւնը որոնելով ժողովուրդին միտքը լուսաւորելու համար գիտուններու թափած ճիգը սակայն զանոնք ենթարկած է բուռն հալածանքներու, դանադան դարերու մէջ: Ատոնցմէ մէկը՝ Գալիլէոն էր որ յանդգնութիւնն ունեցաւ ըսելու թէ ո՛չ թէ Արեւը, հապա Երկիրն է որ կը դառնայ Արեւին շուրջ: Տգէտ մեծամիտները խռովեցան իսկոյն այս յայտնութենէն և պարսաւեցին զայն իբր հերետիկոս, բռնադատելով որ անգամ մըն ալ չքա-

աւելաւ

րոզէ ատանկ անհեթեթ(?) վարդապետութիւն մը: Իտա-
լացի եօթանասնամեայ աստղաբաշխը թէեւ հաւանեցաւ
ի սկզբան, բայց վերջէն տեսաւ թէ պիտի չկրնայ խեղ-
դել իր գիտունի գանկին մէջ ծնունդ առնող այդ հըս-
կայ ճշմարտութիւնը. փութաց հատորի մը մէջ ամփո-

1615
գրաւ
Ֆիլոսոփ



1564 - 1642 ԳԱԼԻԼԵՍՍ Զաւիթեմ

փել և հրատարակել իր հաստատած դրութեան ճշմարիտ
ըլլալուն բոլոր դրուագները: Այն ատեն հաւատաքննու-
թեան ատենը չուշացաւ գիրք ու հեղինակ բանադրե-
լու. և մեծանուն գիտնականը ստիպուեցաւ խաւարա-
միտ դատաւորներու առջեւ ծունգի գալու և հրաժարելու
իրեն վերագրուած հերետիկոսութենէն: Իր ալեւոր մար-
գու տարիքին խնայելն՝ ինչ որ ըստ սովորութեան
խարոյկ չբարձրացուցին զինք, բայց դատապարտեցին
մշտատեւ բանտարկութեան: — Ասկէ շուրջ ⁴⁸⁰ հարիւր
տարի առաջ յայտնուած այդ հերետիկոսութիւնը սակայն
այսօր տիեզերահռչակ ճշմարտութիւն մը մնաց, և մարդ-
կութիւնը յարգանքով կը յիշէ ցարդ տարաբախա գի-
տունին այն պահը, երբ անիկա ճշմարտութիւնը ծածկե-
լու այլևս անկարող խելայիդ կերպով բացազանչեց. «Եւ

սակայն կը շարժի՞ս պատմական խօսքը:—Մեծ դաս մըն է ասիկա՝ անձկամիտներուն և աններողներուն համար, բայց դժբախտաբար չէ կրցած ուղղել զանոնք, քանի որ դեռ ևս կան մարդիկ որ նոյն ոգիով ու շարութեամբ կը շարժին՝ պրպտող միտքերու նոր յայտնութեանց հանդէպ:

Աններող և չար ըլլալէ աւելի՝ երախտապարտ ըլլալու հնք անոնց մասին որոնք խղճմասօրէն ճշմարտութիւնը փնտռելու հետամուտ՝ երբեմն մեք հաւաստացած ինչ ինչ բաներուն անճիշդ ըլլալը մատնանիչ կ'ընեն ու զմեզ կ'առաջնորդեն դէպ ի ուղիղ և գիտակից կեանք մը, դէպ ի ճշմարտութիւն:

Միշտ բռնութիւն, հաշածանք կրօնական հաւատալիքներու դեմ.—Մեծ խորհողներու դէմ տգէտ միտքերու յարուցած անիրաւ հալածանքներէն զատ՝ կան նաև այն ահարկու խժոժութիւններն ու վայրագութիւնները, որոնցմով լեցուն է Քրիստոնէութեան Պատմութիւնը: Առաքեալներու դարէն սկսեալ մինչեւ 1909, Ատանայի ջարդին թուականը՝ քանի՞ քանի՞ նահատակներ, մարտիրոսներ ու տառապողներ, որովհետև անոնք յարած ըլլալով հանուր աշխարհի սէր քարոզող, ազատախոհ և ճշմարտասէր մեծ կրօնքին՝ Քրիստոնէութեան, չեն ուզած նիւթեղէն աստուածներու առջեւ երկրպագել: — Չարչարանքի պատմութիւնը նոյնն է ամէն երկրի մէջ ուր Քրիստոնէութիւնը ծաւալ կը գտնէր: Ի Հայաստան Քրիզոր Լուսաւորիչ Տրդատի հրամանով Խոր Վիրապը կը նետուի, Հովիտիմէ և այլ կուսանք կը վկայուին, մինչ անգին՝ Հռոմի կրկէսներուն մէջ Քրիստոնեաներ ողջ ողջ կեր կը դրուին զազաններու: Յետոյ, երբ Քրիստոնէութիւնը կը տարածուի աւելի ընդարձակ սահմաններով, կը գտնուին մարդիկ որոնք այդ չքնաղ

կրօնքին վեհութիւնն ու պարզութիւնը ծէսերու և պաշտամանց պայմանադրական կազանքներով խեղաթիւրող անձերէն տարբեր կերպով կ'ուզեն պաշտել զայն, կ'ուզեն պաշտել իրենց խիղճին թելադրութիւններուն համաձայն. ահա կրկին հալածանք, և հալածանքներուն ամէնէն սոսկալին. քանի որ ատիկա կը մղուի քրիստոնեաներու դէմ՝ քրիստոնեաներո՛ւ կողմէ: Այսպէս Իտալիա եւ Սպանիա կը հաստատուին հաւատաքննական ատեաններ. կրօնքի պաշտօնեաներու կողմէ ընկալեալ սովորութիւններէն տարբեր կերպով իրենց պաշտամունքը կատարողներ կը չարչարուին, կ'այրուին. Ֆրանսայի մէջ ալ «գետնադամբան»ներ կը կազմուին ուր կը լեցուին հաւատացեալներ, գաղտնի կատարելու համար իրենց պաշտամունքը:

Յեղաշրջումի եւ յառաջդիմութեան հետեւանլով իրաւէ թէ հաւատաքննական այդ եպերելի ատեանները վերցած են հիմայ եւ «գետնադամբան»ներ ու կրկէսներ դատարկացած, իրաւ է թէ քաղաքակիրթ մարդիկ նուա՛զ անգութ ու բարբարոս են քան մեր նախնիք, բայց դրժբախտաբար այսօր իսկ երբ պատերազմ կամ յեղափոխութիւն մը ծագի և կամ կրօնական վէճ մը, մարդոցմէ շատերուն մէջ յանկարծ կը յառնեն կարծես՝ վայրենի բնազդներ: Իսուողութիւնը, նախանձն ու մոլեռանդութիւնը կը շարունակեն ուրեք ուրեք զարհուրելի տառապանքներ առթել ընկերութեան:

Կրօնական անկերող ոգին ալ թէեւ քաղաքակիրթ երկիրներու մէջ իր նախկին բռնութիւնը թօթափած է, բայց բազդատաբար՝ իր մեղմ երեւոյթին տակ գոյութիւն ունենալէ չէ դադրած տակաւին: — Մեր մէջ, կրօնական աններող ոգիի յատկանշական մէկ ցոյցը կըր-

նայ նկատուի Ն'տադայ դէպքը՝ Պոլսոյ մէջ տեղի ունեցած ասկէ 63 տարի առաջ, Յակոբ պատրիարքի օրով : Այն ատենուան հազուադիւտ գիտնականներէն մին՝ Նիկողայոս Զօրայեան — որ սնտեսադէտ, բարոյախօս, մանկավարժ և հեղինակ էր միանդամայն, և որուն «Ընթերցասիրութիւն» անուն երկատիրութիւնը խիստ շահեկան բովանդակութեամբ զօրծ մըն էր իր ժամանակին



ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՕՐԱՅԵԱՆ, որուն «Վարք Յիսուսի» գիրքին բոլոր օրինակները կ'այրէ օրուան կրօնական ժողովը—Այսպէս, ազգերու յառաջդիմութեան փորձին նուիրուած, այսինքն հին նախապաշարումներու դէմ պայքարող մարդիկ յաճախ հալածուած են ընկալեալ սովորութիւններու գերի՝ իրենց ժամանակակիցներէն :

համար, — իբր առաջնորդ կրօնի ուսման, — հայերէնի կը վերածէ 1848ին «Վարք Յիսուսի» խորագիրով գիրք մը՝ որ պարզաբանութիւնն էր Աւետարանի, տղոց հասկա-

նալի՝ պարզ ու մեկին ոճով մը : Օրուան Պատրիարքը նախ կ'արտօնէ անոր հրատարակութիւնը . բայց Օրթօքսէոյ քաջուած ապրող հրաժարեալ Մատթէոս Պատրիարք կիրակի մը տեղւոյն եկեղեցիին մէջ քարոզ մը կը խօսի և բուռն շեշտօքով կը բողոքէ այդ գիրքին հրատարակութեանը դէմ , ըսելով թէ ի՞նչ համարձակութեամբ մէկը կ'ելլէր Աւետարանը համառօտելու : Քարողէն ազդուող անձեր վաղայաջորդ օրն իսկ կը դիմեն Կրօնական Ժողովին , որ՝ իր կարգին՝ նշանաւոր մտաւորականը ներկայութեանը կոչելով կը յանդիմանէ և կը պախարակէ զայն իրրեւ հերձուածող մը , չմոռնալով ամբողջովին այրել տալ «Վարք Յիսուսի»ի օրինակները : Զօրայեան սաստիկ յուզուած և աչքերն արցունքով լեցուն՝ դուրս կ'ելլէ Ժողովէն : Ծանօթ մը նոյն պահուն անոր հանդիպելով կը ջանայ խօսքով մխիթարել զայն , մինչ անիրաւեայ գիտնականը նիւթական կորուստի և բարոյական վիրաւորանքի իր կրկին ցաւերը մոռնալով՝ կը պատասխանէ անվեհեր . — «Հոգ չէ , թող հիմայ դատապարտե՛ն զիս . ապագան պիտի վճռէ թէ ո՞ր աստիճան սխալ դատաստան մըն էր անոնց ըրածը» : Իրաւ ալ այսօր գիտենք թէ շատ ճիշդ յայտարարած էր Զօրայեան , քանի որ ա՛յնքան Քրիստոնէականի գիրքեր կան ներկայիս մէջ՝ Յիսուսի կեանքը համառօտակի կամ ընդարձակօրէն պատկերացունող՝ վաւերացուած մեր Կրօնական Ժողովէն :

Ապագան աւելի յուսալից . — Խորհողներու և գիտուններու դէմ եղած հալածանքներէ պէտք չէ յուետես ըլլալ , որովհետեւ երթալով աւելնալու վրայ է թիւն ա՛յն այրերուն ու կիներուն որոնց գիտակցութիւնը զօրաւոր է անարդարութեան մասին , որոնք ո՛չ միայն կը նեղուին անարդարութենէ , այլ և գիտեն մաքաւիլ անոր

դէմ՝ ամէն տեսակ զոհողութիւն աչք առնելով, չարիքներու դէմ, հիւանդութեանց ու չքաւորութեան դէմ, իշխանութեանց զեղծումներուն դէմ, վերջապէս ընկերական զանազան անարդարութեանց և ծթուած գաղափարներու դէմ, խօսքով, գրիչով ու դործքով:— Մենք վերջ եկողներ աւելի հմուտ, զարգացած, յուսամիտ, ազատախոհ և արդարասէր սլիտի ըլլան անկասկած՝ շնորհիւ ժամանակակից մտաւորականներու թափած ջանքերուն ու զոհողութեանց:

Յարգեմք զանո՛նք որ արդարութիւնը կը սիրեն, ձեռկրօնիկն ըղնա՛ն թէ չըղան.— Որպէս զի մարդիկ կատարեալ ըլլան և ամէ՛ն մէկ կերպով զարգացեալ, ջանանք չյուսահատեցունել զիրենք՝ երբ հետամուտ ըլլան անոնք ճշմարտութեան: Պէտք է ներողամիտ ոգիով մը վերաբերուինք նոր և օգտակար գաղափարներու հանդէպ, չդատենք մարդերն իրենց հաւատալիքներէն, հապա տեսնենք թէ ի՞նչ են իրենց գործքերը: Եթէ մէկը քարսիրտ ու անձանասէր է տանը մէջ, գիտցէք որ յաջողկոտ, գոռոզ և անարդար է ամէնուն նկատմամբ. այդպիսին ամէն օր եթէ եկեղեցի՛ ալ վաղէ կամ ուրիշ որ և է ազօթատեղի՛ մեզի համար կատարեալ անպատիւ մըն է: Իսկ երբ մէկը բարի է իր կնոջը, զաւակներուն և պաշտօնեաներու մասին, եթէ արդարասիրութենէ չչեղիր բնաւ, սուտ չխօսիր, անիրաւօրէն ուրիշները չզրպարտեր, յարգելի և պատուաւոր անձ մըն է, և մեզ համար բնաւ կարեւորութիւն չունի թէ ինք իբրեւ ջերմեւանդ հաւատացեալ՝ ամէն օր ո՞ր եկեղեցին կամ ազօթատեղին կը յաճախէ, և կամ կը յաճախէ՞ իբօք թէ ոչ:

Մարդկային երկու դասակարգ միայն կարելի է որոշել. անոնք որ արդար են և անոնք որ չեն. անոնք

որ մտադրած են ճշմարիտ կեանքով մը ապրիլ և անոնք որ անբանի կեանք մը կը բոլորեն : — Քաղաքավար ըլլանք մանաւանդ մեր վիճաբանութիւններուն մէջ և գիտնանք յարգել միշտ ուրիշներուն խիղճի համողումներն ու հաւատալիքները՝ կրօնքի մասին :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Խնջ բանկ կրնամ մարդերը դասիլ. — Օրինա՞ր է ուրիշները բռնադատել որ մեր հաւաստիէ դառնան. — «Բարոյական»ի եւ «Գիտութեան» ի՞նչ կերպ յառաջիմութիւններ ձեռի ունեցած են. — Որո՞նք են ինքնահաւանութեան վնասները. — Ի՞նչ արքեւորիւն կայ աղմկայարոյց մարդուն եւ անխոնջ աշխատողին միջեւ. — Ճշմարտութեան յարողներուն ճակատագիրը յաճախ ի՞նչ եղած է. — Կրօնական անկերոյ ոգին ի՞նչ չարիքներու ծնունդ տուած է. — Այդ ոգին Հայերս աչ ցոյց տուած ենք. — Մարդկային գլխաւոր ֆակի՞ դասակարգ կայ եւ ո՞րն է այն քակակ յակութիւնը զոր անհաս մը պարտի ունենայ :

2. Ա Ր Ժ Ա Ն Ա Ի Ո Ր Ե Ի Ե Ր Զ Ա Ն Ի Կ Կ Ե Ա Ն Ք Ը

Սխալ համոզում մը ունիմք թէ չարերը կեանքի մէջ կը յաջողին երբեմն : Անգամ մը խորհի՛նք սակայն թէ ո՞ւր կը կայանայ մարդու մը երջանկութիւնը . չէ՞ մի որ երջանիկ է անիկա որ ներքին անկախութիւն մը ունի , այսինքն ո՛չ մէկ կիրքի գերի է , ունի խիղճի անողորութիւն , սէր է ճոխ իմացականութեան մը և բարձր ու ազնիւ զգացումներով օժտուած է : — Անարդարներ , անձնասէրներ , կիրքերու մոլիներ ի՞նչպէս կրնան պատուաւոր յաջողութիւն գտնել կեանքի մէջ և երջանիկ ըլլալ . ատոնք անկատար էա՛լիներ են՝ կարեկցութեան արժանի :

Մեր վարունքին հետեւանքները. — Մ. ք վարած աղէկ

կամ գէշ կեանքը բնականօրէն իր հետեւանքն ունի մեր առողջութեան վրայ, կեանքի մէջ մեր ունենալիք յաջողութեան կամ ձախողանքին վրայ: Գարձեալ, մեր միեւնոյն վարմունքն է որ իր հետեւանքը կ'ունենայ զմեզ չրջապատողներուն կամ հասարակաց կարծիքին վրայ: Ընկերական արդարութիւնն ալ իր պաշտօնն ունի կիրարկելիք՝ մեր յուր ընթացքին կամ գործքին համար. կը դատաւարտէ, կը բանտարկէ և ի հարկին կ'աքսորէ զմեզ: Գալով մեր խղճմտանքին, անիկա ալ չուշանար զմեզ տանջելու՝ երբ մեր գործքերը չար են. ընդհակառակն անիկա կ'սղոյէ զմեզ գոհունակ զգացումներով՝ երբ իր և Սրէնքի ձայնին անսալով է որ վարուած ենք:

Մեր մոլորքեանց քննական հետեւանիքները.— Ամէն անգամ որ ձեռքերնիս կրակին գպցունենք՝ կ'այրինք. ծարաւ եղած ատեննիս երբ ջուր խմենք՝ հաճոյք կ'զգանք. մեր ըրածներուն անմիջական հետեւանքներն են ասոնք: Այսպէս է նաև մեր թերութիւններուն և մեր մոլութեանց համար. ալքոլամոլ մը իր առողջութիւնը կը վրճացունէ և իր քսակը կը պարպէ. որկրամոլ մը իր ներքին գործարաններուն շատ աշխատութիւն առթելով՝ կը յոգնեցունէ զանոնք, մասնաւորապէս իր լեարդն ու երիկամունքը զորս կամովին տկարացունելով՝ ենթակայ կ'ըլլայ տեսակ տեսակ հիւանդութեանց. ծոյլ մը իր մարմինն ու իմացականութիւնը բթացունելով՝ տաժանագին ճիգ մը ընելու պարտաւոր կ'ըլլայ ամենաթեթեւ դործի մը ատեն. յաջողկոտ մը յաւիտենական տառապող մըն է, քանի որ ուրիշներու յաջողութիւնները զինք կը նեղեն ու իր սիրտը միշտ կը մաշի: — Վերջապէս, ո՛րքան շուրջերնիս քննենք, կը տեսնենք թէ մարդիկ իրենց մոլութիւններուն հետեւանքները կը տեսնեն ու կը կրեն՝ յաճախ շատ դառն կերպով:

Այդ հետեւանքները տեսակ մը պատիժներ են որ երբեմն անմիջական կերպով չեն երեւիր, բայց կամաց կամաց՝ օր մը անպատճառ կը յայտնուին: — Մենք միշտ ալ անարդար եղած ըլլանք, բանականութիւննիս ճիշտ կը դատէ, և երբ ուրիշներ պակասութիւններ գործեն կամ անարդար դտնուին՝ կը նեղուինք, կը նեղանանք և կ'ուղենք որ իսկոյն իրենց պատիժը կրեն անոնք:—Նոյնը չէ սակայն մոլութեան մը հետեւանքը: Երբ արբեցող մը թողատապէ մեռնի, յաճախ չենք անդրադառնար թէ այքսն էր որ նորէն անոր մահը փութացուց, մարմինն այդ հիւանդութեան դիմադրելու անկարող դարձած ըլլալով: Շատակերը ստամոքսի տկարութիւն կ'ուեննայ որ կը նեղէ զինք ծերութեան ատեն. երբ պատճառը հարցունենք, «սարիքի բերմունք է» կ'ըսէ ու կ'անցնի:— Այսպէս, յուր ընթացքի մը բնական հետեւանքները դանդաղօրէն երեւան կու գան և թէև պատիժի մը երեւոյթը չունին, բայց իրականութեան մէջ ճշմարիտ և անողոք պատիժներ են:— Կան նաև առողջսպահութեան մասին թերացումներ, երբ վտանգաւոր վէրք մը չինք դարմաններ, կամ, երբ ինքզինքնիս չարաչար կը յոգնեցունենք՝ մեր վրայ հրաւիրած կ'ըլլանք ծանր հիւանդութիւններ ու նոյն իսկ մահ:

Գովես ու պարսաւ. — «Հասարակաց կարծիք» կոչուած բանին աղդեցութիւնը շատ զօրաւոր է: Չկայ մարդ որ առաւել կամ նուազ չզգածուի գովեստէ կամ յարգանգէ: Անշուշտ անտանելի բան է խորհիլ թէ ամէնքը կ'ատեն ու կ'արհամարհեն զմեզ: Որպէս զի ուրիշներուն պարսաւանքին նիւթ չդառնանք, պէտք է որ մեղադրելի ոչինչ ունենանք մեր վարմունքին մէջ: Ծոյլ տղան իր ծնողքին ու գասասուներուն աչքին ատելի չերեւելու

համար՝ ջանք կ'ընէ աշխատութեան փարելու . որկրամօլը չափ մը կը դնէ իր ստամոքսի անյազ պահանջներուն . ստախօսը կը հրաժարի իր մոլութենէն . վախը սուտած բանէն դողացողը քաջութիւն կու տայ իր անձին և կ'անգոսնէ վտանգը , շատերու առջեւ չխայտառակուելու և վաս մը չհամարուելու համար : — Ուրեմն մեծ երջանկութիւն մըն է ուրիշներէ յարգուիլը , բաւ է որ արժանանանք այդ պատիւին մեր իմաստուն ու զգօն վարմունքով :

Գերի չըղանք «հասարակաց կարծիք»ին սակայն , որ շատ անդամ տրամաբանութենէ զուրկ՝ վտանգաւոր է և անբարոյ : Ուստի խիստ գուեհիկ ստրկութիւն մըն է «հասարակաց կարծիք»ին հաճոյ թուելու համար՝ անոր ուզածին պէս վարուիլը կոյրզկուրայն : Անիկա որ իր խիղճին հակառակ կը վարուի «հասարակաց կարծիք»ը չվիրաւորելու . դիտումով՝ ստորին արարած մը եղած կ'ըլլայ : Ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր՝ քաջութիւնն ունենանք շարժելու խիղճերնուս ձայնին համեմատ : Օրինակի համար . «Զիս կրօնամիտ կամ կրօնամոլ պիտի կարծեն» ըսելով եթէ մէկը չհամարձակի եկեղեցի երթալու՝ հակառակ իր ունեցած փափաքին , կամ , եթէ ուրիշ մը «ի՞նչ պիտի ըսեն վերջը» խորհելով պատարագի մը ներկայ գտնուի՝ հակառակ իր մեկնելու տրամադրութեան , այն ատեն անոնք պատուաւոր և քաջ մարդեր չեն , հապա խեղճ գերիներ «հասարակաց կարծիք»ին : Ատոնցմէ տարբերութիւն չունի նաև վաճառական մը երբ գործերու գէշ մերումով ստիպուի քաջուիլ ասպարէզէն , յետոյ պաշտօնակից անձերէ խպնելուն՝ վարանի աւելի խոնարհ գործի մը ձեռնամուխ ըլլալու և վերջապէս թըշուառանայ . կամ , մեծ հարսնիքէ մը հրաւիրուած տիկին

մը կրք իր ամուսինին նիւթականը նկատի չառնելով պարտքեր ընէ՝ լոկ հարանեւորներու առջեւ իր հագուստներուն պերճանքը ցուցադրելու՝ անոնց արդուզարդէն վար չմնալու համար :

Փառասէրներ , գոռոզներ , մնապարծներ որոնք կ'ուզեն սքանչացում կամ վախ առթել ամէնուն՝ արգահատելի մարդիկ են , որովհետեւ գերիներ են «հասարակաց կարծիք»ին : Ճշմարտապէս ազատ մարդ մը նախ և առաջ իր խիղճին կ'անսայ , և իր բանականութիւնն է միայն որ կը վարէ «հասարակաց կարծիք» կոչուած ոյժը : — Բարոյական բաղձալի յառաջդիմութիւններ աւելի արագ տեղի կ'ունենան , եթէ բարի և պատուաւոր մարդիկ անխիղճ մարդոց չափ յանդուզն ըլլան և սապէս խորին . «Հարուստ և զօրաւոր մարդիկ , այո՛ , բայց քանի որ անոնք միեւնոյն ատեն բարի , արի ու արդարասէր չին . ինչ կ'արժեն . կ'արգահատի՛մ այգպիսիներուն վրայ» :

(Ընդունուած պատժներէն ազատ մնացողները) — Օրէնքին կողմէ տրամադրուած պատիժներ կան որոնք տաժանելի են . օրինակի համար՝ բանտարկութիւն , տուգանք , աքսոր և այլն . բայց ա՛լ աւելի տաժանելի է ատոնցմէ առթուող անպատուութիւնը : — Բաց աստի , դժբախտաբար յանցաւորներ ալ կան սակայն որոնք անմեղները կը չարչարեն , կը տառապեցունեն և անպատիժ կը մնան : Այսպէս , ուղղակի պատիժի մը չին ենթարկուիր ամուսիններ՝ որոնք իրենց կիները կը խոչտանգեն , կը խմեն և վաստակին գինեպանին գրպանը լեցունելով՝ թշուառութեան կը մատնեն իրենց զաւակները : Նոյնպէս , կիներ՝ որոնք ծոյլ են և իրենց խեռ բնաւորութեամբ կը թունաւորեն ընտանեկան խաղաղ կեանքը : Ու տակա-

ւին ո՛րքան անգութներ և անիրաւներ՝ որոնք անզգա-
լաբար, յամբօրէն իրենց շուրջիներուն մահուանը պատ-
ճառ կ'ըլլան և սակայն անպատիժ կը մնան :

Արդարութիւն պահանջեմք, երբ մեմք արդարաւոր եղած
ենք. — Անպատիժ մնացող այդ անզգամ դասակարգին
նկատմամբ պէտք է անաչառ արդարութիւն պահանջել :
Բայց այն ստեղծ միայն իրաւունք ունինք ուրիշներուն
համար խտտապահանջ ըլլալու, երբ մենք բարի և արդա-
րասէր ենք : Նախ անհրաժեշտ է որ մենք ծնողասէր զա-
ւակներ ըլլանք, մեր հօր ու մօր ի հարկին օգնութեան
փութալու պատրաստ, ըլլանք տիպար դպրոցականներ,
խղճամիտ աշխատողներ, և յետոյ՝ ապագային ալ բարի
և պատուական հայրեր, պարկեշտ ու ազնիւ քաղաքա-
ցիներ : Երբ ամէն կերպով կատարեալ անհասանք դառ-
նանք, այն ստեղծ միայն իրաւունք ունինք պահանջկոտ
ըլլալու ուրիշներուն համար :

Արտասիւն երեւոյթներէ չդասե՛նք ուրիշներու երջան-
կութիւնը. — Թեթեւամիտ խորհուղներ կամ անպաշտակ
դիտողներ կ'ըսեն թէ չարերը կը յաջողին, և թէ՛ պատ-
ուաւոր ըլլալը զո՛հողութիւն մըն է : Այսպէս մտածողի եր-
շատ թերի լմբռնուժ մը ունին անխառն երջանկութեան
մասին, քանի որ հանդարտ խիղճ ունեցողներն են միայն
որ կը ճանչնան հոգեկան այդ աղւոր սւրբաութիւնը :
— Մէկու մը համար «չատ երջանիկ է» վճռելէ առաջ՝
պէտք է մօտէն քննել զայն և վերահասու ըլլալ անոր
կեանքին : Քանիներ կան որոնք շատ երջանիկ երեւոյթի
մը տակ՝ կը ծածկեն թաքուն վիշտի իրենց սիրտերուն
խորը, բոլորելով կեանք մը արտասուալից ու տառա-
պագին :

Երջանկութեան մասին մեր սխալ ըմբռնումը. — Տխմար հասկացողութեամբ մը, մարդիկ կը կարծեն թէ կեանքի մէջ յաջողութիւն և երջանկութիւն ըսուած բաները կը կայանան պարզապէս հարստութիւն դիզելուն, կամ, բարձրաստիճան ու զօրաւոր գիրքի մը սիրանալուն մէջ: Մարդս սակայն շատ շուտով կը վարժուի դրամին պարզեւած հաճոյքներուն, ճոխութեան և իշխանութեան, և ատոնք սովորական վիճակ դառնալով կը դադրին իրեն հրապոյր մը ազդելէ: — Ապրելու համար շատ բան պէտք չէ արդէն. երբ մաքուր, արեւոտ ու կանոնաւոր ընակարան մը ունինք, բաւարար ուտելիքով սեղան մը և մեր դիրքին յարմար հագուստներ՝ վարժամութիւնը մեծ բան մը չաւելցուներ ասոնց վրայ: — Նախընտրենք պանիր-հոց ուտել՝ կրը անօթի ենք, քան թէ համադամներ՝ երբ կուշտ ենք: Նոյնն է նաև կեանքի մէջ՝ քիչ թէ շատ ամէն բանի համար. աւելի լաւ է քիչ մը պակաս ունենալ ամէն ինչ և ունեցածնիս հանգիստ սիրտով վայելել, քան թէ յղփութեան մէջ ըլլալ և ձանձրանալ ու տառապիլ՝ զայն վայելելու անկարող զգալով ինքզինքնիս:

Ի՞նչ երջանկութիւնը. — Մարդս ա՛յն ատեն կատարեալ երջանիկ է, երբ իր զգացումները զօրաւոր ու բարձր են: Արդ, ո՛չ հարստութիւն, ո՛չ ալ բարձր դիրքեր կրնան զօրաւոր զգացումներ ներշնչել մեզ: Համեստ գիւղացի մը կրնայ վայելել օրուան ամէն պահերուն ուրոյն գեղեցկութիւնները. դաշտերուն հանդարտութիւնն ու անտառներուն հրապոյրները, կրնայ իր սիրտին խորէն սիրել իր կի՛նն ու զաւակները, կրնայ խաղաղ ու պարզուկ կեանքի մը բոլոր երանութիւններն ըմբռնել, եթէ սակայն երկիրին կառավարութիւնը թոյլատու ըլլայ իրեն

և չար ու անարդար մարդիկ չի գան յառիշտակել իր ճակատին քրտինքով շահած ապրուստը, չի գան վայրենօրէն սպառնալ իր պատիւին ու իր կեանքին: — Հարստութիւնն ընդհակառակն արգելք կը հանդիսանայ շատ անգամ երջանկութեան: Հարուստը կարծես զրկուած կ'ապրի ուժեղ զգացողութենէ. ելք անհրաժեշտ պէտք չունի աշխատելու՝ օրական իր ապրուստը հոգայու համար, աշխատութեան զգացումը նուա՛գ գօրաւոր կ'ըլլայ իր մէջ, ուստի հաճոյքներու ետեւէ կ'ըլլայ, կը ձանձրանայ և զբօսանք կը փնտռէ, զբօսանքներու անձնատուր ըլլալով՝ ընտանեկան զգացումն ալ կ'սկսի տկարանալ. մինչդեռ հարուստ չեղող աշխատաւորներ աւելի քիչ խորհելով սին հաճոյքներու վրայ՝ երջանկութիւն կը բերեն իրենց յարկերէն ներս՝ ուր ամէն ոք այնքան պէտք ունի իրարու:

Երջանիկ ըլլալու միւս պայմանն է ունենալ զգացումներու ազնուութիւն և բարձրութիւն: Չար բնազդներ ունեցողներ և գէշ կիրքերու դերիններ զրկուած են անշահախնդիր և վեհանձն կեանքի մը պարգեւած ուրախութիւններէն և իրենց մոլութիւններն անգութ տառապանքներ կը պատճառեն իրենց: Ագահ մը որ դրամ դիզելէ և անոր վրայ հողի տալէ զատ՝ ուրիշ բանի վրայ չէ մտածած, ինչ տարբերութիւն ունի անասունէ որ մի միայն իր ուտելուն վրայ կը խորհի: — Անոնք որ գերի չեն չար կիրքերու, — ծուլութեան, ալքոլամոլութեան, ազահութեան, ամբարտաւանութեան են. — անոնք որ գիտեն նուաճել իրենց հողին ու մարմինը կամքի կորովով՝ ազատ մարդեր են և իսկապէս տէր արժանապատուութեան:

Դժոխք եւ Արհայուքիւն. — Շատ դիւրին է տեսնել թէ դժոխք և արքայութիւն կ'սկսին ա՛յս աշխարհէն: Ալքո-

լամոյ մը երբ կը խմէ շարունակ և կ'անրանանայ՝ զրդուելի արարած մը կը դառնայ, ամէնուն արհամարհանքին արժանի: Այդպիսի մէկուն ընտանեկան յարկն ալ դժոխքի մը կը վերածուի, որովհետև գինով մը տունէն ներս մտնելուն՝ կը հայհոյէ. կնոջը հետ կը կուռի, զայն կը ծեծէ անխնայ և անկարող ըլլալով ապրուստի և կապուստի պէտքերը հոգայու՝ իր ձեռքովը տունէն ներս հրաւիրած կ'ըլլայ թշուառութիւնը: Դժոխք մը չէ՞ միթէ կեանքը գձուձ կծծիին որ չուտեր ու չկերցուններ, վախնալով որ ստակները կը հատնին, ու ինք կ'ապրի միշտ չըջապատուած՝ իր բոլոր շահագործած անձերուն նողկանքովն ու ատելութեամբը: Դժոխք մը չէ՞ միթէ կեանքը ծոյլին՝ որուն համար ամէն աշխատութիւն տանջանք մըն է և որ կ'ապրի ձանձրոյթի տխուր կեանքով մը:— Ընդհակառակն արքայութիւն մըն է կեանքը պատուաւոր, բարի և ազնիւ այն կնոջ որ իր զաւակներուն կը սորվեցունէ պարտականութիւննին ճանչնալ, որ ներողամիտ է ու գթած և որ պճնամոլութիւնը կ'ատէ. արքայութեան կը վերածուի ընտանեկան այն յարկն ուր պզտիկներ իրենց մեծերը կը ճանչնան, և մեծեր իրենց պարսքը կը լնուն՝ աշխատելով, ըմպելիք չգործածելով և իրենց զաւակներուն բարօրութիւնը միայն խորհելով:

Երջանկութիւնը բաւի սեղ յղնողները. — Մարդեր կան որոնք աղէկ, պատուաւոր և անկեղծ ըլլալու երջանկութիւնը կարեւորութենէ զուրկ կը նկատեն և կը խոստովանին թէ չարժեք ասոր համար նեղուիլ: Ի՞նչ, միթէ պզտիկ երջանկութիւն է մօր մը տածած սէրն իր զաւակին, հօր մը զգացած հաճոյքն՝ իրիկունները գործէ դարձին տեսնելով իր կիճն ու զաւակները, զուարթօրէն զինք դիմաւորելով: Միթէ չնչի՞ն բաներ են այն անհուն

ուրախութիւնները բոլոր որոնք կը բղխին այսատաւորի պարզ ու պատուաւոր կենցաղէն, խաղաղասէր ընտանիքի մը ծոցէն: Միթէ կարեւորութենէ զո՞ւրկ բան է կարգալ գիրքեր որ մեր միտքը կը զարգացունեն. — մեր արի-ութիւնը կը կրկնապատկին, նայիլ գեղեցիկ պատկերի մը, լսել սիրուն կամ յուզիչ երգ մը: Ասոնք են աշակեանքի էական բաները, վասն զի «երջանիկ կեանքը կազմուած է աղւոր ու մաքուր յուզումներէ»: Գիտէ՞ք թէ ասոնց չհաւնող մարդիկ ինչն՞ր լաւ կը գտնեն. անցողական կարգ մը հաճոյքներ՝ որոնք տառապանքէ զերծ չեն սակայն. անոնք չաշխատիլը, բան մը չընելը գուցէ նախամեծար կը սեպեն, առանց անդրադառնալու թէ անզբաղ վիճակը մարդս կը մեռցունէ ձանձրոյթէ. կամ, իրենց գլխաւոր մտածումը կը կեդրոնացունեն ճաշի սեղանին վրայ՝ ամէն օր ճաշակելու համար իրարմէ համադ, հիւթեղ ու փոփոխ կերակուրներ որոնք սակայն մարմինը դանդաղեցունելէ զատ ուրիշ պաշտօն մը չունին. կամ, կը սիրեն յարիլ խել մը մոլութեանց որոնք մարդկային կազմուածքը կը մաշեցունեն, և դեռ այն կործանարար հաճոյքները բոլոր որոնք զմեզ գելլի կը դարձունեն իրենց:

Հաճոյքները վայելենք, առանց անոնց գերին ըլլալու. — Իրաւ է թէ արհամարհելի չեն մարմինին հաճոյքները. զոր օրինակ, ոչ ոք կը խրատէ անոնցմէ բոլորովին հեռի մնալ, չուտել ընտիր խորտիկներ, չըմպել պատուական գինի մը, չընել մեր դնդերները զօրացունող զբօսանքներ ելլն. միայն թէ անոնց գերին ըլլալու վտանգը կայ: Անոնք օգտակար են, պայմանաւ որ չափաւոր ըլլան և մենք ազատ զգանք ինքզինքնիս զանոնք մերժելու, երբ ուզենք: — Լնտանեկան հաճոյքները, բարի ու խղճամիտ գործաւորին զգացած եր-

Ջանկութիւնը, բնութեան գեղեցկութիւններէն աւթուող հրապոյրները, նաեւ արիութեան ուրախութիւնները լաւագոյն են անշուշտ: Ջանանք միշտ ազատ ըլլալու և չտարուելու մեր մարմինէն ու մեր կիրքերէն. ցաւինք անոնց վրայ որոնք գոռոզ են, ցանկասէր, այքոյամոյ, շատակեր, մեղկ կամ ստախօս. որովհետեւ այդ գասակարգի անձերուն բոլոր հաճոյքները վիշտերով խառնուած են:

Անարդար մեկու մը վերագրուած երջանկութիւնը. — Կան մարդիկ որոնք հակառակ չար եղած ըլլալուն՝ «կեանքի մէջ յաջողած» և հետեւաբար երջանիկ կը նկատուին մեր սխալ դատաստանովը: Անգամ մը երբ մօտէն քննելու ըլլանք անոնց ներքինը՝ պիտի համոզուինք թէ շատ հեռու են եղեր անոնք երջանիկ ըլլալէ. որովհետեւ՝ նախ՝ զուրկ են իմաստուն և արդարասէր անձերու յարգանքէն, յետոյ՝ մաքուր և ուղիղ կեանքի մը պարգեւած հոգեկան անդորրութենէն, քանի որ ամէն վայրկեան խորամանկութեան ու խաբերայութեան մտատանջութիւններուն նուիրուած՝ չունին ազատութիւն և գերի են իրենց կիրքերուն: Այդպիսիներ երբ առանձնութեան վայրկեանի մը մէջ քննեն ինքզինքնին՝ սուկումով պիտի համակուին, որովհետեւ պիտի տեսնեն թէ իրենց վարած կեանքը չարք մըն է անբարոյ արարքներու որոնք ապահովութիւն ու երջանկութիւն չեն ներշնչիր իրենց: Ուստի երջանիկ երեւոյթի մը տակ անպատիւ մարդը բարոյապէս մեռած մըն է և ապերջանիկ: Մինչդեռ պատուաւոր մարդը միշտ հանդարտ կ'զգայ իր խիղճը, հանգիստ կը քնանայ, ապահով է թէ պարկեշտ և ազնիւ մարդիկ վստահութիւն ունին իր վրայ և ամէն վայրկեան խայտառակուելու վախը չխռովեր իր հոգին:

Անարդար մարդու զարհուրեցի օրինակ մը . — Չկայ
Հայ մը որ քիչ թէ շատ չգիտնայ գահընկէց և ապաշնորհ



ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. — Դարուս ամենամեծ անտրդարը

Սուլթան՝ Համիտի վարած կեանքն իր թագաւորութեան
33 տարիներու ընթացքին : Իր անիրաւութիւններէն ա-
ռաջինն ու գլխաւորն էր եղբօրը՝ Մուրատի համար զրո-
պարտելը թէ մտազար մըն էր ան և անկարող գահակա-

լելու . իր վատ խորագիտութեամբը յաջողեցաւ համոզել կամ կաշառել . աւագանին՝ գահ բարձրանալով անոր տեղ և զայն ցմահ բանտարկած պահելով ամայի պալատի մը մէջ : Այնուհետև իր թագաւորութեան երկար շրջանին՝ Համիտ կանգուն պահեց իր գահը , կեղեքելով մայրաքաղաքի ժողովուրդը , մանաւանդ գաւառի Հայերը բոլոր , անոնց երկրագործի և վաճառականի յառաջդիմութեանց խոչընդոտ դառնալով . Քիւրտերը միշտ անոնց դէմ հանելով և երկիրին մէջ ամենուրեք կարդելով լրտեսներ , սրպէս զի իր անարդարութեանց և վայրագութեանց դէմ որ և է բնաւոր խլրտում կարենայ կասեցունել , երբ խուլ ատելութիւն մը կոհակի պէս կ'ուռէր արդէն իր շուրջը : — Իր անձնական գանձը շարունակ լեցուց միլիոններով զորս չորթած էր յաճախ ապօրէն տուրքերու անունին տակ , հարուստէն , աշխատաւոր ժողովուրդէն ու չքաւորէն անխտիր , և այդ յղիութեանց մէջ կարծեց թէ այլ եւս ինք աշխարհիս զօրաւորագոյնն ու երջանիկն է . բայց գիտենք թէ իր բռնաւորի զօրութիւնները յանկարծ սապալեցան , գիտենք մանաւանդ թէ դարուս այդ մեծ անարդարը ապրեցաւ յաւէտ խռոված խիղճով մը , ամէն ատեն իր շուքէն իսկ վախնալով և բնաւ դուրս չելլելով Երլտրզի իր թաքթաքուր և մոգական պալատէն՝ զոր իր կասկածոտ և հալածական երեւակայութիւնը կառուցանել տուած էր , միշտ առանց քունի և առանց հանգիստի , ականջը լարած ամենաչնչին աղմուկի մը համար , որովհետև գիտէր թէ հարստահարուած միլիոնաւոր ժողովուրդ և անիրաւաբար սպանել տուած բազմաթիւ զոհերու ծնողքներ իր մահացումը միայն կը բաղձային : — Ահաւասիկ մեծ օրինակ մը արտաքուստ երջանիկ կարծուած , բայց աշխարհի ատելութեան արժանացող ապերջանիկ և չարաշուք մարդու մը :

Մահը.—Մեռնիլը մարդկային կեանքին վախճանն է որմէ կարելի չէ խուսափիլ . ուչ կամ կանուխ ամէնքս ալ պիտի ունենանք այդ վախճանը : Երանի՛ անոր որ՝ նախ՝ պատճառ չըլլար անոր փութացումին , և յետոյ՝ գեղեցիկ և արժանաւոր կեանք մը բոլորելէն վե՛րջն է որ կը փակէ իր աչքերը :—Լէօնառ տը Վինչի՛ իտալացի նշանաւոր նկարիչը շատ յատկանշական սա խօսքն ըսած է . «Ինչպէս որ լաւ գործածուած օր մը ուրախութիւնը կու տայ քնանալու , այնպէս ալ լաւ գործածուած կեանք մը ուրախութիւնը կու տայ մեռնելու» : Իայց ի՞նչ սուկայի ըլլալու է այն վայրկեանը , երբ հոգեվարք մը իր մահուան անկողինին մէջ կը խորհի թէ՛ ո՛րքան տխրութեամբ ամէն ինչ իր կիրքերուն զոհած էր , իր մարմինի հաճոյքներուն , որկրամուրթեան ևն . և իր առողջութիւնը դէպ ի քայքայում փութացուցած : Երբ այդ հոգեվարքը կծծի մը ըլլայ , ո՛րքան կը տառապի արդեօք որ իր գանձերը հոս պիտի թողու և պիտի չկրնայ զանոնք հետը տանիլ գերեզմանէն անդին : — Մահը թէ՛ հարուստին և թէ՛ աղքատին համար միեւնոյն բանն է ,— ճերմակ պատանք , դազաղ և վոս : Տարբերութիւնը կը կայանայ մաքուր ապրան մարդու մը հոգեկան խաղաղ վիճակին և անպարկեշտ ապրած մարդու մը տագնապներուն և խռովքին մէջ , մանաւանդ իրենց կեանքի վերջին րոպէին : Այդ րոպէն ո՛րքան սոսկալի է արբեցողներուն , խազամոլներուն և աննախատես մարդոց համար որոնք իրենց կինն ու զաւակները թշուառութեան մէջ կը թողուն՝ ինչպէս իրենց կենդանութեանը , նոյնպէս և իրենց մահէն վերջ . ափսո՛ս որ շատ ուչ է արդէն , քանի որ իրենց հոգեվարքի պահօ՛ւն միայն կ'անդրադառնան անոնք այդ սարաղային : Ընդհակառակն անիկա՛ որ իր զաւակները լաւ դաստիարակած է , զանոնք ժուժկալ և

արի կեանքով մը մեծցուցած, վերջապէս գիտակցօրէն և հաճոյքով կատարած իր պարտականութիւնը, հանդարտութեամբ կը փակէ աչքերը, վասն զի գիտէ թէ բոլորովին պիտի չմեռնի, այլ պիտի ապրի իրեններուն սիրտին մէջ՝ անուշ յիշատակով մը :



Կեանքի ի՞նչ ճամբայ ընտրենք. — Սիրեւի պարոններ և օրիորդներ, այս գիրքին մէջ ըսուածներէն որոշապէս հասկցաք անշուշտ թէ ամէնքս ալ կեանքի մէջ մտած տեննիս՝ երկու ճամբայ ունինք, որոնցմէ մէկը պարտինք ընտրել : — Արգ, պիտի սիրենք ունենալ կոշտ, անձնասէր, անմիտ ու անարդար կեանք մը, թէ՛ իմաստուն, ազատ, արդարասէր և արժանաւոր կեանք մը : — Ազնիւ և լաւազոյն մարդիկ իրենց կեանքով ցոյց կու տան մեզ թէ աշխատելու ենք եղբայրաբար, մեր աշխատանքով պատուաւոր դիրք մը ունենալու ենք ընկերութեան մէջ, կռուելու ենք չարութեան, թշուառութեան և անարդարութեան դէմ, և մեր անձնասէր շահադիտումներով խռովելու չենք ուրիշներուն այնքան դիւրաբեկ երջանկութիւնը, խորհելով որ այդ ուրիշները մեր եղբայրներն են անխտիր :

Մեր կեանքի ճամբան ընտրելէ առաջ՝ ազէ՛կ մը խորհինք : Ասիկա ո՛չ միայն մեր արժանապատուութեանը խնդիրն է, այլ և մեր երջանկութեանը : Անտարակոյս չենք ուզեր միջակ, անապահով և տարաբախտ կեանք մը ունենալ, այլ պէտք է տենչանք այն կեանքին որ իմաստուն, ազէկ, արդարասէր և պատուաւոր է, և ապրինք զայն՝ չորհիւ մեր բարի կամեցողութեան և կամքի կորովին ապրինք այն կեանքը զոր ապրեցան մենէ առաջ ու մեր օրով այն մարդերը զորս կը սիրենք, կը յարգենք և որոնց վրայ կ'սքանչանանք մեր բոլոր սիրտով :

Այդ ազնիւ ու վեհ անձերուն ընտրած ճամբան տարած է զիրենք բարոյական ազատութեան մը զոր կարելի չէ կապտել և որմէ՛ միայն կը բղխի աշխարհի բոլոր անխառն երջանկութիւնները :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ո՞րն է մեր սխալ համոզումը. — Հաւատա՞նք թէ չար մարդերն այ յայտոյտքին կը գտնեն. — Որո՞նք են մեր փարմունքիս հետեւանքները. — Եթէ մոլորփուններ ունիմք, քնական ի՞նչ հետեւանքներ կ'ըստպանեն մեզ. — Ի՞նչ դերիւ կը խաղան զովեսն ու պարտաւը՝ մեր կեանքիս մէջ. — Պե՞տք է գերի ըլլայ «հասարակաց կարծիք»ին. — Ո՞ր անձերն են որ դժբախտաբար ազատ կը մնան ընդունուած պատիժներէն. — Երբ մենք իսկապէս արդարաւոր եղած ենք, ուրիշներէն ի՞նչ պահանջելու ենք. — Կարելի՞ է արտաքին երեւոյթներէ դատել ուրիշներուն երջանկոյտքները. — Կրնա՞ք ցոյց տալ աշխարհիս ամենեւնի անարդար մարդերուն մէջին՝ զարեւուրելի նմոյշ մը. — Ո՞րն է երջանկութեան մասին մեր սխալ ըմբռնումը. — Ո՞ր կը կայանայ բուն երջանկոյտքները. — «Դժոխք», «Արխայտքներ». ի՞նչ իմաստ ունին այս բառերը. — Ի՞նչ է մահը. — Կեանքի ի՞նչ ճամբայ ընտրենք:

Վ Ե Ր Ջ Ի Ն Ը Ն Յ Ե Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

Ա Ն Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Գ Ի Ր Ք Ը

Գիրք մը կայ զոր ամէն մարդ պիտի հեղինակէ կամայ թէ ակամայ, մատենագիր թէ ոչ :


Աւելի կամ նուազ թերթերով կազմուած -- թէեւ անոնց թիւը յաւէտ մեզ անձամբ -- անիկա տրուած է մեզ, և հարկ է մեզ՝ լեցնել զայն :

Իրողութեանց պատմութիւններով, խոհերով, երգով, փայլուն թէ նստի պատկերներով պիտի լեցուի անիկա :

Պատմութիւնը կամ վէպը պիտի ըլլայ անհատի մը :

Թերթերը մեր օրերուն հետ պիտի դառնան, և ո՛չ ոք պիտի

**Կրնայ վերադառնալ էջին վրայ որ դարձաւ, ո՛չ ոք պիտի կրնայ
տրբագրել ինչ որ միանգամ գրուեցաւ:**



ՌԵԹԷՈՍ Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Իր աշխատութեան սենեակին մէջ. փրքին տարին (1907)

Մեծանուն ուսուցչուհիք մեկն եր յարասեւ աշխատութեամբ զարգացած այն անձերէն՝ որուն պէսներ իր Պատմութեան մեջ ա՛յնքան քիչ կրնայ բուեղ Հայ Ազգը: Դեռասի հասակէն նուիրուեցաւ դաստիարակութեան աւագ գործին, դասախօսեց, սերունդնն՛ր կրթեց, գրեց, խօսեց եւ նաեւ ամենուրեք, բոլորեղով բարոյախօս-խմասաստեղի իտեայ կեանք մը, որմէ ո՛չ մեկ ասնն շնորում ունեցաւ, շնորհիւ իր կամքի կորովին:

Տարբեր երեսներ, ետքէն եկած, պիտի կրնան միայն հակա-կշռող իրողութիւններ կամ պատկերներ ներկայացընել. բայց վրէպը՝ խուսափած՝ պիտի մնայ անջինջ:

Մեր երեւակայութիւնը, մեր զգացումներէն ու մտածումներէն դրդուած՝ ատողձները պիտի յղանայ, և մեր կամքը պիտի ընտրէ անոնցմէ կամ պիտի մերժէ իբրեւ պատշաճ կամ ո՛չ յօրինուածքը զոր պիտի ուզենք հաստատատիպ դրոշմել հոն:

Բայց զանոնք ներկայացընելու կերպը միշտ մերը պիտի ըլլայ: Ոճը մեր անձնակտն դրոշմը պիտի կրէ միշտ:

Անոնք որ մեզմէ առաջ հեղինակեցին այդ գիրքէն և անոնք որ նոյն իսկ զմեզ առաջնորդեցին և օգնեցին մեր յատուկ գիրքին առաջին տողերուն կամ էջերուն մէջ՝ սովորութիւններ տուած պիտի ըլլան մեզ, բայց միշտ պիտի կրնանք մեր անձնական նախաձեռնութիւնն ունենալ և ինքնայատուկ ոճ մը տալ մեզ:

Ամէն պարագայի մէջ, գիրքը մեր հեղինակութեան վերագրելի պիտի ըլլայ, ու մե՛զ վերագրելի, հետեւապէս անոր արժանաւորութիւններն ու թերութիւնները:

Հեղինակը բնական ձգտումով մը պիտի բաղձայ յաւէտ երջանկաւէտ պատմութիւն մը ընել զայն և իր նախաձեռնութիւնը կարեւոր բաժին մը պիտի ունենայ առ սյր:

Բայց վերջապէս ատիկա իրմէ կախում պիտի չունենայ բացարձակապէս. իր ճիգերը պիտի կրնան բախտէն հարկադրուած ատողձներուն դէմ ի զուր կռուիլ:

Այն ատեն գիրքը պիտի ներկայացընէ ուրախ ու տրտում պատկերներու փոխ առ փոխ յաջորդութիւն մը, ու նոյն իսկ, աւա՛ղ, ծայրէ ի ծայր ողբերգութիւն մը:

Մակայն միշտ մեզմէ կախում պիտի ունենայ գեղեցիկ յօրէնել զայն, ու տգեղութեանը՝ հեղինակը պիտի ըլլայ պատասխանատուն:

Անոր գեղեցկութիւնը մանաւանդ բարոյական գեղեցկութիւնը պիտի ըլլայ, ու համեստ ոյլ պարկեշտ պատմութիւն մը պիտի կրնայ մեծ առաւելութիւններով մրցիլ պերճ սյլ բարոյապէս անգոյն ու մթին պատմութեան մը հետ:

Մեծագոյն արուեստագէտը պիտի կրնայ գթիլ ու ձախողել հոն ուր խոնարհագոյն ոգին յաջողի ու փայլի:

Ամէնէն աւելի ապրուած վէպը կամ պատմութիւնը պիտի ըլլայ ան, վէպերուն ամէնէն իբրականը, բայց ո՛չ ի հարկէ իրապաշտականը, պիտի կրնայ անոր մէջ այնքան ազնիւ իտէտկան մը իրացուած տեսնել, որքան ուզած պիտի ըլլանք և պարագաները թոյլատրած:

Սակայն յարատեւութեամբ ուզուածն ալ, թէեւ անիրացեալ կամ կիսկատար՝ իր հրապոյրը պիտի սփռէ պատմութեան վրայ:

Պիտի գրենք սյդ գիթքը, ցորչափ տուէ մեր կեանքը. մեր վերջին օրուան հետ պիտի աւարտի ան:

Հետեւապէս չենք գիտեր թէ ե՞րբ պիտի աւարտենք զայն: Բայց այս անստուգութիւնն իսկ խթան մըն է իմաստունին համար որ, ցորչափ կեանքն ունի գրչը, գեղեցիկ էջեր անոր մէջ զետեղել ջանայ, ու այնպէս մը ընէ որ ո՛ւր որ լի՛նայ՝ միշտ իրեն պատիւ բերել կարենայ:

Գիրքին կարճութենէն կամ երկարութենէն կախում պիտի չունենայ էապէս ոնոր արժանիքը:

Անաւարտ մնացած ըլլալու տպաւորութիւնը թողած էջերու Խիհար քանակութեամբ գիրք մը պիտի կրնայ մեծագոյն արժէք մը ունենալ, քան ստուարագոյն հատորներ:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԶՈՐՍ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Հովը, ջուրը, հսւրն ու պատիւ միասին
Օր մը ընկեր եղած՝ ճամբան կը խօսին,
Եւ դաշտն ու սար, անդուռները անցնելով՝
Կը ճամբորդեն մինչեւ արեւն ու լուսին:

Կ'անցնին մառեր և մըշուշներ շրջարշէ,
Կ'անցնին ամպեր որոնց ստուերն անշարժ է.
Եւ աստղերուն մօտենալով լուսավառ՝
Շուրջն հիւ կու գան Ծիր-կաթինին մարմաշէ:

Բայց այդ լոյսէ գաւառին մէջ վեհ ու ջինջ՝
Կը վախնան որ չըլլան ի սպառ բընաջինջ.
Ու կը դառնան նորէն սարերը մեր մութ
Ուր պսլբարող չը կայ իրենց դէմ ոչինչ:

Ու կը հասնին բարձր բլրի մը վըրան
Ուր իրարմէ հարկ է զստուիլ անպայման:

Պիտի երթան անոնք ոլորտն աշխարհի,
Հետեւելով իրենց պարտքին անխափան:

Կը հարցընեն հիմայ կեցած ապշահար.
«Ի՞նչպէս նորէն պիտի գտնենք մենք զիրար.
«Որպէս զի մենք չը բաժնուլինք առ յաւէտ՝
«Հարկ է որ տանք մէյ մէկ նըշան յայտարար»:

Հովը կ'ըսէ. «Սիրելինե՛ր, երբ տեսնէք
«Որ կը շարժի տերև մը, լոյս մը բեկբեկ,
«Երբ ոստերուն մէջ լըսէք սոյլ մը թեթև,
«Ես այն տե՛ղ եմ. մի՛ կասկածիք դուք երբեք»:

Հուրը կ'ըսէ. «Ուր բուխերիկ մը վառի,
«Ուր նշմարէք մուխը թեթև բուրվառի,
«Ուր կը մըխան փըլատակներ մոխրին տակ,
«Ես այն տե՛ղ եմ, նոյն իսկ երբ կայծ մը մարի»:

Ջուրը կ'ըսէ. «Այգուն լոյսին մէջ առկայծ՝
«Երբ նշմարէք ծաղկին թերթերը թըջած
«Երբ կոհակին ձայնը լըսէք ժայռին դէմ,
«Հո՛ն մտտեցէք. ես այն տե՛ղ եմ անկասկած»:



Իսկ պատիւը կը մընար լուռ, ապաքան:
Ու հարցուցին ընկերները մէկ բերան.
«Ըզքեկ ի՞նչպէս պիտի գտնենք, ըսէ՛ մեզ.
«Դո՛ւն ալ մեզի ծանօթութեան տուր նըշան»:

Պատիւը որ տրտում տըխուր կը կենար՝
Ըսաւ յանկարծ լուրջ ձայնով մը վշտահար.
«Անգամ մը որ կորսնցընիք զիս, աւա՛ղ,
«Մի՛ փնջըռիք. զիս գտնելն է շա՛տ դժուար»:

Ճ Ա Բ Ո Ն Ա Կ Ա Ն Ա Ն Օ Թ Ն Ե Բ Ը

Ատենօք «Միքատո» մը կար որ՝ գեղեցկագիտական նուրբ ճաշակի տէր՝ իր արքունիքը զարդարած էր չնաշխարհիկ գեղորներով, նկարներով և յախճապակեայ 20 հատ անօթներու հաւաքածոյով մը որուն պէսներ կարելի չէր գտնել իր բովանդակ կայսրութեան մէջ: Այնքան հազուագիւտ էին անոնք:

Օրին մէկը, պատահեցաւ որ իր դրանիկներէն մին անզգուշութեամբ կոտրէ այդ անօթներէն սովէնէն թանկարժէքը: Միքատոն սաստիկ բարկացաւ և հրամայեց որ յանցաւորը մահուան դատապարտուի:

Հետեւեալ առտուն, այն պահուն երբ պատիժը պիտի գործադրուէր, իր ցուպին օգնութեամբ դժուարաւ քալող ծեր Պրահման մը պալատ ներկայացաւ: «Տէ՛ր իմ, ըսաւ, ես գաղտնիք մը գիտեմ՝ Ձեր Վեհափառութեան բեկեալ անօթը նորոգելու համար: Առաջնորդեցէ՛ք զիս այն սրահն ուր կը գտնուի Ձեր անօթներուն ձոխ հաւաքածոն»:

Իր խնդրանքը կատարուեցաւ: Բայց հազիւ թէ հասան հոն ուր գետեղուած էին 19 անվնաս մնացած անօթները, Պրահմանը ցուպի բուռն հարուածով մը գետին տապալեց զանոնք՝ բոլորը մէկէն ցրել ցրել ընելով:

— «Թշուառակա՛ն, ի՞նչ ըրիր» գոչեց Միքատոն՝ զայրոյթէն կղպուած ահուաներուն մէջէն:

— «Պա՛րտքս կատարեցի, Վեհափա՛ռ Տէր, պատասխանեց ալեւոր Պրահմանը պաղարեամբ: Այս անօթներէն իւրաքանչիւրը կրնար Ձեր հպատակներէն մէկուն կեանքն արժել. բաւականացէ՛ք իմի՛նս միայն վերցունելով աշխարհէն»:

Կայսրը ցնցուեցաւ այս խօսքերուն իմաստութենէն և այն ազդուութենէն որով արտասանուած էին անոնք:

— «Ի՛բերունի՛, յարեց քիչ մը վերջ, իրաւունք ունիս. բոլոր ոսկեզօծ անօթներս աւելի քիչ կ'արժեն քան մարդկային էակի մը կեանքը»:

Ու ներում շնորհեց իսկոյն թէ՛ ձախաւեր դրանիկին և թէ իմաստուն ու քաջարի Պրահմանին:

ԱՊԵՐՋԱՆԻԿ ՀԱՅՈՒ ՄԸ ԵՐՋԱՆԿՈՒԹՒՆԸ

Ասկէ 35 տարի առաջ տղայ մը կար Սկիւտար, աղցաւոր ծնողքի զաւակ: — «Պիտի աշխատիմ, ուսմունք սորվիմ, — մտածեց, — շուտով վեր ելլելու համար սա տխուր կացութենէն ուր կը գլտնուիմ հիմայ»: Ու մտաւ իր թաղին դպրոցը:



ԼԵՒՈՆ

ՍԷՄԷՐՃԵԱՆ

Կարծես երախսագիտական անսեղիսայի հարկ մը վճարած ըլլարու համար, այս վեհոգի Հայր շեղապէս կառոյց Սկիւտարի այրացաւեր ձեւարանն, ա՛յն դպրոցն ուր ինք ժամանակին ձրի դաստիարակութիւն եր սսացած: (Նոր ձեւարանի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ 21 օգոստոս 1911ին, Եղիշէ Արեւիկայոցու Դուրեանի նախագահութեամբ):

Իր մտասեւեռումին կառչած՝ փարեցաւ յամառ աշխատանքի փրկարար թեւերուն: Միւս կողմէ, ընդոծին ուշիմութեան կայծն ալ կար իր մէջ որ չուշացաւ զարկ տալու իր յառաջդիմութեան: Զկար դաս մը որուն մէջ տկար ըլլար. այս պատճառաւ կրցաւ

գրաւել արդար համարումը բոլոր ուսուցիչներուն որոնք քննութեանց և հանդէսներու ատեն՝ գովեստով ցոյց կու տային թուշակաւոր շատ մը աշակերտներու մէջէն սյդ ձրիսպարժը, դպրոցին պատի՛ւը:

Ընթացաւարտ ելլելուն, պերեւեշտները դեռ նոր մրտիլ սկսած պատանի, շունչը շիտակ եւրոպա առաւ և Բրիտանական յայտնի շահաստանի մը մէջ յաջողեցաւ քիչ ատենէն ձեռք ձգել դերք ու վարկ՝ շնորհիւ իր ինքնօգնութեան, իր կամքի կորովին և իր ուղղամտութեան, — սխրալի՛ երրորդութիւն՝ զոր ըրած էր իր կեանքի մենտորն անսպթաք:

Այսպէս, կ'իրականանար իր մտնկութեան անդրանիկ աղւոր տեսլականը:

Կը մնար իրեն՝ բնական ձգտումը դէպի երկրորդ իտէալ մը. — Ամուսնանալ: — Այդ հանգրուանին մէջ հազի՛ւ սակայն իր երջանկութեան ոսկեզօծումը տեսած՝ անիկա անագորոյն դժբախտութիւնները կ'ունենար իրարու ետեւէ կորուսելու կողակից և որդի՛ ս'յնքան դեռատի:

Անոնց պաշտելի շիրիմները միշտ ներսիդին՝ Զանաց սթափիլ իր մորմիքանքէն: Ներսէս Ծնորհալիին պէս համոզուած ըլլալով որ «Աշխարհս իջեւան մըն է, մենք ալ ճամբորդներ», միտքին դրաւ պանծալի յիշատակով մը յաւերժացունել մահկանացուի իր կեանքը սգաւոր: — ինտերուի՛մ, ըսաւ իւրովի, ազգօգուտ գործի մը, որչափ միջոցներս կը ներեն, անոր մէ՛ջ փնտռեմ սփոփ ու վայելք»:

Ինչո՞վ պիտի կրնար դրական ու տեւական օգտակարութեան մը կռուանին վրայ դնել ոտքը. քան զի ուսումնական և լրջախոհ անձ՝ գիտէ՛ր թէ պէտք էր կատարեալ մարդու վայել գործ մը յամբոկ ածել, «կատարեալ մարդ» կոչուելու համար:

Ու մտածեց վերստին. — «Կ'ըսեն թէ որբուհի մը ամուսնացու «նողը ժամ մը շինածի չափ կ'ըլլայ. հապա դպրոց շինողը՝ Մեր «պապերուն կոյր բարեպաշտութեան դարը փոխուած է այլեւս «Գերագոյն առաքինութիւնն է խօսքի տեղ գործք. և աղօթքէն, «խունկէն ու կերոնէն սուրբ՝ հանրօգուտ գործքն է միայն: Արդ, «իմ խիղճիս և իմ Ազգիս համար իսկապէս հաճոյ նուէր վարժա «րա՛նը կայ. շինե՛մ զայն, քանի մը եկեղեցի մէկէն շինածի չափ «ըլլալու համար»:

Միտքին մէջ՝ այս գեղեցիկ ու վեհ մտատիպարին կայծկտալը

հազիւ զգացած, անիկա ծննդավայր վերադարձաւ և աւերա՛կ տեսաւ այն շէնքը նուիրական ուր իր մանուկ միտքն էր դարբնած Ուսմունքի ամուր սալին վրայ:

Եւ, որչափ սիրտի՛ նոյնքան ալ գործի մարդ. «Յարգե՛նք փո-
ւ խանակութեան օրէնքը, — տրամաբանեց իսկոյն, — տա՛մ այ-
ւ բացաւեր այս դպրոցին անանկ բան մը որ ատենօք իմին՝ իրմէ
ւ ճրիաբար առածս հակակշռէ, և որ ողբացեալ կնոջս և զաւակիս՝
ւ Վահէին յիշատակներն արժէ լիուլիս: Ու հիմքէն կառուցանել
տուաւ զայն՝ աւելի շքեղ և ամիակուռ քան իր նախորդը փայ-
տակերտ:



Ահաւասիկ միտք մը՝ համակ գիտակցութիւն, և սիրտ մը՝ հա-
մա՛կ բարութիւն և ազնուութիւն:

Իրմէ շա՛տ աւելի մեծ ու փարթամ բարերարներ ունեցած է
Հայ ազգը, — Ռափայէլեաններ, Սանասարեաններ, Մանթաշօֆներ
և այլն, իրենց կառուցած պատկառելի դպրոցներով անմոռանալի:
Բայց ինք անոնցմէ անհունապէս մե՛ծ է իմ աչքիս, սնո՛ր համար
որ անիկա ինքնաբերաբար գրեթէ իր ունեցածն էր որ տուաւ միա-
նուագ, դպրոցով՝ ուսանող մանկութեան օգտակար ըլլալու խոր
համոզումով:

Եւ այդ համոզումին անկեղծութի՛ւնն է արդէն որ յաւէ՛տ
պիտի փոփոգէ ու երջանկացունէ իր տպերջանիկ մարդու կեանքը
դառնագին:



Շատցո՛ւր, Տէր, Սէմէրճեան Լեւոնի սիրտով մարդեր և անոր
կառուցած ձեմարանին ալէս կրթական յարկեր ամէն ո՛ւր որ Հայ
կայ, ի բարօրութիւն ուսումնազուրկ մեր ազգին ...

1911

Թ Ե Ո Ղ Ի Կ

Ո Ի Ղ Ե Ր Ձ

(Արտագրութիւն Սկիւսարցի երախագէտ մշաւտականներէ՛ 1. Սկւեր-
նեանի նուիրուած ձեռագիր շիկ «Յիշատակարան»է մը):

Եւ ես իմ հիացումս կը վերընծայեմ քեզ, ազգասէր Հայ և
բարեսիրտ Մարգ, վասնզի աւելի՛ ամուր և աւելի շքեղ վերաշի-
նեցիր երբեմնի ձեմարանը. վասնզի իր աճիւններէն վերականգ-
նեցիր հայ վարժարան մը, վասն զի դպրոց մը կառուցիր. նաև

վասնզի՝ այս լուսաւորութեան յարկը ստեղծելով՝ հայրական սէրը որ կորուսեալ որդւոյդ իրաւունքն էր՝ բաշխել ծաւալել ուզեցիր տղոց սերունդներու վրայ, որոնց երամները որդեգրած եղար ճշմարիտ հայրութեանդ արիւթեամբը: Եւ դարձեալ՝ վասնզի այս բարեգործութիւնը բոլորեցցիր որդեկորոյս հօր կսկիծներէդ. այնքան աւելի մարդասէր եղար՝ որքան աւելի տառապեցար. այնքան աւելի բարիք կամեցար՝ որքան աւելի՝ խոցեր կրեցիր. և սուգի արցունքներդ գոհարներ դարձան. և դուն ո՛րքան իբրեւ մարդ հէք գերի մը թուեցար դժնդակ աղէտներու, այնքան աւելի հոգիդ ազատ ու իշխանավայել կեցուածքներ առաւ:

Եթէ ստոյգ է որ իւրաքանչիւր մարդ յաջորդական կեանքեր ապրելով միայն կը բարձրանայ կատարելութեան, ուրեմն արդեօք նախկին հայ թագաւոր մը չե՞ս դուն որ իր երբեմնի հարսանեաց մէջ բազմութեան տեղացուցած մարգարիտները կ'ուզէ շինել այսօր իր արցունքներով...: Տրտմալի սիրտդ աղբիւր կ'ընես՝ ազգիդ համոր հոսող մաքուր ու զօրացուցիչ բերկրութեան. քու սուգէդ մխիթարութիւն կը հանես ամէն կարգի կարօտութեանց համար. քու դաստիարակիչ ու ազնուացուցիչ տառապանքներուդ վիհերէն կը յարուցանես անվհատելի կամք մը՝ ուսման ու կրթութեան յարկ մը կառուցանելու. թախծութեանցդ խաւարէն կը ծագեցնես լուսաւորութեան երո՛ւզ մը՝ արդէն քարակերտ մարմնացած. և Աստուծոյ անճողոպրելի և անթափանցելի կամքին տակ գլխիկոր՝ դուն կը մտմտաս կանգնել ու կը կանգնես տաճար մը, որպէսզի այդ կամքը ճանչցուի և պաշտուի հոն:

Թող ձեմարանդ արժանի ըլլայ իր յղացմանը. թող մատող սերունդներուն ուսուցանէ՝ անձին դժբախտութիւններէն իսկ բոլորեցունել ուրիշներու նսեհը. թող ուսուցանէ՝ զրկանքներուն ու վիշտերուն անհրաժեշտութիւնը՝ գութի և սիրոյ հանդերձեալ կատարելութեան համար. թող ձեմարանդ, որուն պատուհանները շուրջանակի կը տեսնեն վերասլաց միմարէներ, երկնաբերձ զանգակատուններ արեւելքէն ու արեւմուտքէն, և անդրհայեաց նոճերու տարմեր հիւսիսէն ու հարաւէն, ուսուցանէ երկրպագել այն կամքին որ որդեկորոյս հայերէն, տղայասէր, ազգասէր, մարդասէր բարերարներ կը շինէ, և որուն առջեւ քո՛ւ հպատակութեամբդ խոնարհիլն է որ կը մեծցնէ, կը փրկէ զմարդիկ:

Հ Ա Յ Ո Ւ Հ Ե Ա Յ Կ Բ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ամէնէն աւելի անտես առնուած նիւթ մ'է մեր աղջկանց բարոյական և ընկերային կրթութիւնը: Հայուհեաց կրթութիւնն երկու ծայրայեղութիւններէ կ'բաղկանայ: Ոմանք պարզապէս անուս են, ուրիշներ՝ չափէն աւելի նրբացեալ: Կանոնաւոր դպրոցական շրջան մը բոլորելու պատեհութենէն զուրկ մնացած աղջիկներ ոչինչ կ'հասկնան ժամանակիս յառաջադէմ պէտքերէն և զգացումներէն: Այն օրիորդներն ալ որ կ'կարծուի թէ «խնամեալ կրթութիւն» մը ստացած են, մեծ մասամբ օդի մէջ կ'ապրին: Առաջինք լոկ նիւթական գեանաքարջ կենցաղ մ'ունին. իրենց աշխարհային վիճակի անձկութիւնն հոգւոյ բարձրութեամբ և մտքի մշակութեամբ ազնուացնելու անկարող են: Իսկ վերջինք բոլորովին անմասն են աշխարհի իրականութիւններէն, և նոյնչափ վերացական կեանք մը կ'վարեն՝ որչափ վերացական են իրենց բոլոր ընթերցումներն ու մտածումները:

Ակներեւ է թէ այս կրկին չափազանցութիւնները դժբախտութեան կ'առաջնորդեն հաւասարապէս: Ընտանիք մը կազմել՝ լոկ ֆիզիքական և նիւթական գործ մը չէ: Ամուսնութեան մէջ և զաւակաց կրթութեան մէջ բարոյական պարտաւորութիւնք մեծ տեղ մը կը բռնեն: Օրիորդ մը որուն միտքն ու սիրտը կարեւոր հրահանգութիւնն ու պատրաստութիւնը չեն ստացած կեանքի մեծ կոչումներուն համար, կ'դատապարտուի զուրկ մնալու կեանքի մեծագոյն հաճոյքներէն: Կրնայ իրեն և իրեններուն զգեստները կարկտել, կերակուրն եփել և տան կառավարութիւնն հոգալ. բայց այս չոր նիւթականութենէն աւելի վեր չի կրնար բարձրանալ և կեանքէն համ չառնուր: Բայց նոյնչափ և գուցէ աւելի դժբախտ է այն օրիորդն որ վէպերու մէջ միայն կարդացած է կեանքի նկարագիրներ: Իմացական դրութիւն մը որ կեանքի նկատմամբ լոկ վիպային գաղափարներով կ'պատրաստէ ապագայ մայրերն՝ աւագի վրայ կ'դնէ ապագայ ընտանեաց հիմերը: Ոչ սակաւ ունինք ընտանիքներ՝ որոնց մէջ վերացական գաղափարներով մնած մայրեր որք առտնին տնտեսութենէ չհասկընալու դժբախտութիւնն ունին, թէ՛ իրենց, թէ՛ ամուսնոց և թէ՛ զաւակաց դժգոհութիւնն ու դժբախտութիւնը տեսնելով՝ կանուխէն կ'զգուին կեանքէ:

Այս կրկին ծայրայեղութեանց մէջտեղը կսյ անհատական, ընտանեկան և ընկերական կրթութեան բանաւոր ու գործնական տեսակ մը, չափ մը — երիտասարդներ կանուխէն կը նետուին աշխարհի փորձառութեանց մէջ. և ինչ որ դպրոցին մէջ, կամ իրենց ծնողքէն, կամ իրենց հեղինակներէն չեն սովորած, շատ անգամ փորձառութեամբ կ'սովորին, անընդհատ շօշափուելով իրենցինէն տարբեր բնաւորութեանց և տարբեր իմացականութեանց հետ: Անոնք, թէեւ շատ մը վէպեր ալ կարդացած ըլլան, շուտով կ'վարժուին կեանքին իրականութեանց, և եթէ բարոյական դաստիարակութեան քիչ շատ հիմ մը ունին, կարող կ'ըլլան այդ հիման վրայ տակաւ կառուցանել իրենց առնական բնաւորութեան շէնքը: Օրիորդներ որք երիտասարդաց չափ պատեհութիւններ չունին աշխարհային փորձառութեանց մէջ միտուելու, աւելի ենթակայ են թիւր գաղափարներով մանելու, կեանքի վրայ ծուռ կարծիքներ տածելու և անպատրաստ մտնելու «աշխարհի տան» մէջ: Հետեւապէս անոնք երիտասարդներէն աւելի պէտք ունին ողջամիտ և փորձառու հեղինակաց դիտողութիւնները լսելու՝ կեանքի ուղիղ հասկացողութեան վրայ:

Երբ անփոյթ, անգիտակից աղջիկը կ'սկսի չափահաս օրիորդը ըլլալ, իր կեանքի ամէնէն վտանգաւոր տարիներն է որ կ'անցունէ: Գաղափարներու և զգացմանց թիւր ուղղութիւն մը, կամ կեանքի նախագաւիթին մէջ սխալ քսյլ մը, մնայուն կերպով վնասաբեր հետք մը կրնայ թողուլ և իր բովանդակ կեանքը թունաւորել:

Օրիորդ մը ինչ բաներ և ինչպէս սովորիլ պէտք է դպրոցի մէջ և դպրոցէ դուրս՝ խնդիր մ'է որ ունի իր կարեւորութիւնն, երբ կ'տեսնենք հայ օրիորդներ որք մայրենի լեզուն զոհած են եւրոպական լեզուի մը, և աշխարհի ամէն լեզուներն ու ամէն ուսումները զոհած են դաշնակի մը, և այնպիսի աններդաշնակ դաշնակի մը որմէ ո՛չ իրենք համ կ'առնուն, ո՛չ ալ իրենց ծանօթները: Թերուս օրիորդներ աւելի մեծ թուով ունինք քան թերուս երիտասարդներ: Թէպէտ իմ մասիս չեմ համարիտ անոնց որք թերուսը տգէտէն աւելի վտանգաւոր կ'համարին, սակայն և այնպէս թերուս օրիորդ մը շատ ծիծաղելի կ'դառնայ ընկերութեան մէջ և անօգուտ՝ իրեն և իւրայնոց:

Բանսարկութիւն և բամբասանք դիտողութեան արժանի նիւթեր են: Մեր մայրերէն շատերուն այս մասին սովորութիւնը

պէտք չէ որ հետեւելի օրինակ ըլլայ բարեկիրթ աղջկանց որք սակայն ուրիշ շատ բաներու մէջ ընտիր հանգամանաց գեղեցիկ օրինակներ կրնան առնուլ իրենց մայրերէն: Անուս կանայք իրենց միտքերն զբաղեցնելու ուրիշ նիւթեր չգտնելով յաճախ կ'փորձուին բամբասանքը գլխաւոր առարկայ մ'ընելու իրենց խօսակցութեան:

Աղջկան մը համար, հարուստ թէ աղքատ, ուսեալ թէ անուս, դիտողութեան, վարժութեան և փորձառութեան կարեւոր նիւթ մը պէտք է ըլլայ ընտանեկան տնտեսութիւնը: Մեր մէջ տակաւին գաղափար մը կայ թէ ուսեալ, մանաւանդ բարեկեցիկ աղջիկ մը թերութիւն մը չունենար՝ եթէ տան կառավարութենէն, խոհահարարութենէն և կարկտուքէն բան չհասկնայ բնաւ: Այս ատենին ծառայութիւնք ինքնին նուաստացուցիչ բան մը չունին սակայն: Աղջիկ մը որ իր ծնողաց, եղբայրներուն և իր անձնական հանգստեան տարրական պիտոյքը կ'հոգայ՝ զբաղմանց ամէնէն պատուաւորն ի գործ կ'գնէ, արժանանալով ամէնուս յարգանաց միայն: Այսպիսի աշխատութիւն մը ֆիզիքական մարզանք մ'է միանգամայն, առաջքն առնող շատ մը չարեաց զորս ֆիզիքական կարողութեանց անզբաղ թողուիլը միշտ կը պատճառէ երկու սեռի երիտասարդներու: Ունեւոր ընտանեաց մէջ ծառաներու գոյութիւնն արգելք մը չի կրնար ըլլալ օրիորդներու՝ ատենին տնտեսութեան նիւթերուն ուշադրութիւն նուիրելու. զի այն ապագայ ընտանեաց մէջ որոնց մայրերը պիտի ըլլան այդ օրիորդները, ծառաներու սպասարկութիւնք ա'յնչափ միայն օգտակար պիտի ըլլան՝ որչափ տանտիկինը փորձ ու վարժ է առտնին տնտեսութեան, և իր վարձկան սպասուհիներուն ըրածներն իրենցմէ՝ աւելի աղէկ ընելու կարող: Այսպիսի տանտիկին մը օրհնութիւն մ'է թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ ընտանիքի մէջ, — առաջնոյն մէջ շուսյութեան և անկարգութեան առաջքն առնելով, և երկրորդին մէջ խեղճութիւնն զգալի չընելով ըստ կարելոյն:

Բ Ի Ի Զ Ա Ն Դ Բ Է Զ Ե Ա Ն

(Իր մէկ գրուածքին համառօտաբար)



Մ Ի Լ Ա Ր, Մ Ա Յ Ր Ի Կ, Վ Ս Տ Ա Հ Է՝ Ի Ն Ի Ի

Շուրջս կը նայիմ: Պիտի կրնայի՞ գտնել այն շրթունքը, որ այս խօսքերն ուղղէր իր մայրիկին, այլայլած, դողահար իր մայրիկին: Կը կասկածիմ: Ես չեմ յուսար գտնել հայ տղայ մը որ այս խօսքերն ա՛յնչափ կորովով ու ինքնավստահութեամբ ըսէ, որչափ ըսաւ Ուիլեմը՝ Շի:

Ո՞վ է այս Ուիլեմը՝ Շին: Հռչակաւոր մէկը չէ ան, ոչ ալ մեծ միտք մը: Եւ տարու ամերիկացի մըն է թէեւ, բայց պզոյթիկ մեծ-մարդ մըն է: Հիմա այս բացատրութիւնը կը գործածենք ամէն անոնց համար որոնք տարիքով ու հասակով դեռ սահմանափակ՝ կը նետուին սակայն համբաւի փայլունութեան և կեանքի մեծութեան սահմաններուն մէջ:

Այս տղան վերջերս ճամբայ ելաւ Ամերիկայէն՝ աշխարհիս շրջանն ընելու համար միս մինակ: Այս ինքնավստահ աշխարհաշրջիկն է որ մեկնած ատեն՝ իր մայրիկին արցունքներուն ժպտելով պատասխանեց. «Ինչո՞ւ կու լտս, սիրական մայրիկ, մի՛ լար, ես ողջ առողջ պիտի վերադառնամ, վստահէ՛՛ ինձի»:

Ի՞նչ կը խորհիք դո՛ւք որ դպրոց երթալու համար տնտեսին կ'սպասէք, մէկ թաղէն միւսն անցնելու համար ընկեր մը, մարդ մը կը փնտռէք որ քովէն քալէք: Գննեցէ՛ք ձեր սիրտն ու խորհեցէ՛ք թէ բաղդատմամբ այս տղեկին ո՛րչափ անձնավստահութիւն ունիք:

Փոքրիկն Շի աշխարհի շրջանը կատարելու արտակարգ զբօսանքին կը դիմէ այն տարիքին մէջ երբ ուրիշներ տունը նստած՝ իրենց խաղալիքներով կ'զբաղին: Անիկա աշխարհ կը միռի իր կեանքի ամէնէն փափուկ շրջանին, երբ ուրիշներ հայրիկին պաշտպանութիւնը կը խնդրեն՝ պզտիկ գործի մը ձեռնարկելու համար: Անիկա գաղաններու ձիրաններն ու մահաբոյր կլափները կ'արհամարհէ, երբ իր հասակակիցները շնիկի մը հաջիւնէն կը սարսափահարին:

Այդ պզտիկ ճակատին տակ որ դեռ կեանքի կնձիռները չէ ճանչցած, յանդուգն միտք մը իր բոյնը հաստատած է: Այդ նեղ կուրծքին տակ վստահութիւնն ու ինքնագիտակցութիւնը հիւսած են ոսկի ոստայն մը: Իր նիհար սրունքները կը քալեն ճամբէ մը

որ ապահով է և ամուր, և որ կը տանի արժանիքի ու համբաւի անկեղծ մեծութեան:

Ո՞վ դբաւ նկարագիրի ուժն այդ պատանիի սիրտին մէջ. ո՞վ վառեց ձեռներէցութեան կրակն անոր անփորձ երեւակայութեան խորը. ո՞վ պատուաստեց ինքնավստահութիւնն այդ պզտիկին արիւնին: Ո՞վ, Հարցուցէք ձեր ծնողքներուն և ինքզինքն՝ ո՞ւր ար

կը ճանչնամ հայ ծնողքներէն շատերուն, մանաւանդ գրեթէ հայ բոլոր մայրերուն տկար սէրն իրենց զաւակներուն համար: Անոնք յաճախ ա՛յնքան ծայրայեղ են իրենց գորովին մէջ որ, թռչող ճանճ մը որ պիտի թառի իրենց զաւակին վրայ՝ կը վրդովէ զիրենք:

Դուք ալ, — այդ սահմանափակող թեւերուն մէջ մեծցած ծաղիկներ որ չէք ուռզուած կեանքի մէջ «իկնակ» մնալու և աշխատելու ոգիով, — ազազուն, վարանոտ ու տարտամ էակները կ'ըլլաք վաղուան: — Ամերիկացի և անգլիացի մայրեր կը թողուն որ իրենց զաւակներն իյնան, ելլեն, գլտորին քարերու վրայ, լան, տառապին, որպէս զի ամուր ըլլան, յանդուգն ու սրտապինդ ըլլան կեանքի ճամբուն վրայ:

Բայց տղոց քով ալ յանցանք չկա՞յ կը կարծէք. անոնք ալ մասնակից են իրենց ծնողքին այս տկարութեան. անոնք ալ հիւանդ, ճղճիմ էակներու պէս՝ չեն ուզեր առանց օժանդակի, առանց-թեւ-թիկունքի բան մը ընել: — Մտածեցէ՛ք և ձեր անձին վրայ՝ իսկ պիտի գտնէք պզտիկ պատկեր մը վարանոտութեան, ինքնավստահ և ձեռներէց ջրլալու: Ձեր պզտիկ ցաւերը տրտունջով կ'երթաք պատմել ձեր մեծ եղբօր. ձեր արցունքները միշտ առատ են քանի մը հարուածի առջեւ: Գայլ մը կ'առնէք, կը սայթաքիք, կը ցաւի ոտքերնիդ. և ահա տեղ մը կը փնտռէք լալու, մայրիկը կը փնտռէք որ ձեր մագերը շոյէ և հանդարտեցնէ զձեզ: Հոսկէ՛ց է որ ահա կ'սկսի տկարութիւնը:

Եթէ նոր Աշխարհի պզտիկ մարդը վաղը մեծ դիրք մը գրաւէ և միլիոններ լեցուին իր դրամարկղներուն մէջ, ո՞վ պիտի կրնայ ըսել թէ անիկա անարժան մըն է, թէ բախտը ժպտեր և դիպուածը հարստացուցեր է զայն:

Այս առաքինութիւններով օժտուած խմոր մը երբ վաղը շաղուուի ու եփի գործունէութեան մեծ հնոցին մէջ, կը կարծէ՞ք որ սեւ ու անմարսելի սնուանդի մը վերածուի:

Ես շատ մտածեցի այս պզտիկ էակին վրայ: Իիջ մըն ալ դուք

խորհեցէք, քիչ մըն ալ օրինակեցէ՛ք անկէ ինչ որ ձեզ կը պակսի.
իր նկարագիրէն ոգեւորուեցէ՛ք քիչ մը:

Ես չպիտի մոռնամ այն յուզիչ ու ճշմարտապէս մեծ խօսքը,
որ սպարտացի զաւակի մը բերնէն կ'ելլէր կարծես: Դուք ալ մի՛
մոռնաք զայն, ձեր ամէնէն նախընտրած տեղը գրեցէք և բազ-
ձացէ՛ք որ օր մը զայն դուք ալ ըսէք ձեր մայրիկին, երբ պիտի
մանէք կեանքի և ճշմարտութեան մեծ ճամբուն մէջ.— «Մի՛ լար
մայրիկ, ես մարդ պիտի ըլլամ, վստահէ՛ ինձի»:

Կ. Պօլիս

ՅԱԿՈՒՄ ՏԵՐ ՅԱԿՈՒՄԵԱՆ

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

* Ամէնէն առաջ Պարտականութիւնը, վերջէ՛ն Հաճոյքը:

* Երբ մարդ իր պարտքը կատարելով ծափահարութիւն-
ներ կը փնտռէ, կամ, զայն կատարելու համար անոնց կ'սպասէ,
առաքինութիւնը չէ՛ որ առաջնորդ և գործիչ եղած կ'ըլլայ պար-
տականութեան:

* Պարտազանց ըլլալու հակամիտութիւն չունեցող մը չհար-
ցուներ թէ ի՞նչ է պարտականութեան սահմանը:

* Ո՛չ ոք իր պարտականութիւնը լաւ կատարած կ'ըլլայ՝
եթէ չսիրէ զայն. և պատուաւոր մարդերն են միայն որ կարող են
սիրել իրենց պարտականութիւնը:

* Մեր խղճմտանքը չը՛սեր մեզ իրերու ճշմարտութիւնը,
հապա պարտականութեանց կանոնը:

* Պզտիկ արուները կը կազմեն մեծ գետերը: (Առած):

* Գու ծառա՛ղ եղիր, որպէս զի քու տէրդ ըլլաս:

* Շողոքորթի մը նպատակն է հաճելի ըլլալ. բարեկամի մը
նպատակն է օգնակար ըլլալ:

* Կրօնքին գլխաւոր ոյժը կը կայանայ՝ անոր հաւատալնու
մէջ. իսկ աշխարհային օրէնքներու ոյժը կը կայանայ՝ անոնցմէ
վախնալնու մէջ:

* Երջանկութիւնը պտուղ մըն է ախորժահամ որ Աշխատանքի դաշտի՛ն մէջ միայն կը հասուննայ:

* Անիկա որ ի՛ր անձին ազատութիւնը կ'ուզէ միայն և ուրիշներուն կը զլանայ զայն՝ բռնաւոր մըն է:

* Գրիստոնէութիւնը, կամ լաւ ևս է ըսել Աւետարանը՝ կը բովանդակէ իր մէջ երեք մեծ գաղափար. — Սէր, Հաւասարութիւն և Ազատութիւն՝ որոնք ազգերու հասարակական կեանքին մէջ ծնած են Աշխատանք, Օրէնք և Անհատականութիւն: (Գրիգոր Արծրունի):

* Բոլոր երջանկութիւններուն մէջէն ամէնէն տիպարն է ընտանեկան երջանկութիւնը:

* Երջանկութիւնը կը կայանայ բարոյական օրէնքը գործադրելն՝ ևս մէջ:

* Առաքինութենէն աւելի ապահով ճամբայ չկայ՝ Երջանկութեան հասնելու համար: Եւ զո՛հելով ամէն ինչ Պարտականութեան՝ մարդս վտահ ըլլալու է թէ կրնայ հասնիլ Երջանկութեան:

* Երջանկութիւնը յղիութեան մէջ չփնտռե՛նք, այլ աշխատութեան:

* Ուրիշն երջանկութիւնը թոյնն է յաջողկոտին:


* Երջանկութիւնը տունկ մըն է որ կ'աճի միայն կիրքերու բարեխառն գօտիին մէջ:

* Երբ անհատի մը կեանքը չձգտիր գեղեցիկ նպատակի մը՝ կ'ըլլայ երկարաձգուած մահ մը:

* Գիտութիւնը՝ որ փափաքելի էր տարածուած տեանել ամբողջ մարդկութեան մէջ, պարզ է և չափաւոր. — Կը կազմէ հոգին և կ'ազնուացունէ զայն, առանց երբեք գէշ կիրքերը գործընելու և զանոնք գոհացունելու միջոցներ ստեղծելու: Զաւկիդ միտքը շղթայել և կաշկանդել, անասո՛ւն ընել է զայն:



Լաւագոյն դպրոցներ ունեցող ժողովուրդ մը աշխարհիս առաջնակարգ ժողովուրդն է. եթէ այսօր չէ՛ վաղը պիտի ըլլայ:





Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

**ՄԻՇՏ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՀԱ-
ՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ**

Արդի Բարոյագիտութիւնը մեր գիրքին իբր նախամուտ գործածեցինք անգլիացի մեծանուն ազատական՝ անմահն Ուիլիւմ Կլէտսթընի ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ մասին յայտնած նշանաւոր մտածումը: Նոյնպէս մեր յառաջաբանին մէջ զետեղեցինք բարոյագէտներու կազմած դատաստանը թէ բարոյագիտութիւնը պարտականութեան եւ պարտականութեանց զիտութիւնն է:

Արդ, սիրելի ուսանողներ և ուսանողուհիներ, գիրքիս վերջաբանով՝ անգամ մըն ալ կու գանք յիշեցունել ձեզ թէ տղոց կեանքը կ'սկսի առանց բարոյականի, ինչպէս առանց հմտութեան: Ուստի, անգամ մը որ՝ տարիներու հոլովումովը՝ պարտականութիւննիս կատարելու սովորութիւնը զօրանայ մեր մէջ, այն ատեն մեզ համար անհանդուրժելի բան մը պիտի ըլլայ արտոնց մասին մեր ունեցած անփութութիւնը:

Առաքինութիւն ըստածը Պարտականութեանէն անջատ բան մը չէ, այլ պարզապէս անոր լաւագոյն կիրարկումը: Պարտականութեան ամէն արարք երբ աղէկ ու սրտանց կատարուի՝ առաքինական գործ մըն է, որով մենք առաքինի կրնանք ըլլալ մեր բոլոր գործերուն մէջ: Ուրեմն ջանալու ենք գործի մը լաւագոյնն ընել՝ որչափ կը ներէ մեր կարողութիւնը. վասն զի լաւագոյնն ընելու մեր անկեղծ կամեցողութիւնն է առաքինութիւնը:

Մեր պարտականութիւնը լրիւ կատարած կ'ըլլանք՝ աշխատելով և համագործակցելով մեր նմաններուն հետ : Առանձինն ոչինչ պիտի արժէինք , եթէ ուրիշներ աշխատած չըլլային և չչարունակեն դեռ աշխատիլ մեզ համար :

Գիրքիս ընթացքին՝ տեսանք թէ գիտակից ու պարտաճանաչ աշխատութիւնը մարդուս միակ փրկութիւնը եղած է , և անոր երջանիկ կեանքին միակ ազդակը : Համագործակցութիւնն այ այն բարիքն է որով մարդիկ կրնան զարգանալ , բարգաւաճիլ և իրենց համար ստեղծել ճշմարտապէս ազատ կեանք մը :

Մարդս անպատճառ հանճար մը կամ տաղանդ մը ծնած ըլլալու չէ՝ կեանքի կրկէսին մէջ նախանձելի յաջողութիւններ ձեռք ձգելու համար : Յարատեւ , յամառ և գիտակից աշխատանքը կրնայ հրաշքներ գործել և ապահովիլ ինչպէս անհատին՝ նոյնպէս և ընդհանուրին բարօրութիւնն ու ազատութիւնը :

Աշխատանքի և համագործակցութեան մասին զո՛ւտ տո՛նմային մանրանկար մը տալու փափաքանօք՝ գիրքիս իբր յաւելուած զետեղեցինք ԽՄԲԱՆԿԱՐԷ՛ կարգ մը հայ անձնաւորութիւններու որոնք իրենց ՍԻՐՏՈՎ , ՄԻՏՔՈՎ , ԳՐԻՉՈՎ ՈՒ ՁԵՌՔՈՎ նշանաւոր հանդիսացած են ուրոյն ասպարեկներու մէջ : Բաւականացանք իւրաքանչիւր ասպարեկէ մէյմեկ հոգի միայն առնել , — հանգուցեալ թէ կենդանի , — և զանոնք ձեզ ներկայելով՝ ուզեցինք գիտակից ընել ձեզ թէ Սիրտի ազնուութիւնը , Միտքի , Գրիչի և Ձեռքի ճարտարութիւնն ու գործօնութիւնը կրնան եղեր անհատ մը արժանացունել ուրիշներուն գնահատութեան , յարգանքին և յաճախ երախտագիտութեան , հոգ չէ թէ անիկա ազնուական կամ շատ խոնարհ ծնունդ մը ունեցած ըլլայ , մտաւորական մը կամ պարզ արհեստաւոր մը եղած ըլլայ :

Համոզուինք ուրեմն որ աշխարհիս վրայ բարեգործները, գիտուններն ու հերոսները չեն միայն որոնք հանուրին սիրոյն ու յանգանքին արժանի են, հապա նաև այն պարկեշտ ու ժիրաժիր գործաւորներն ալ որոնք արհեստ մը իւրացուցած, զայն կատարելագործած և անոր մէջ «վարպետ» եղած՝ յաջողած են իրենց համեստ կարողութիւններով օգտակար ըլլալ իրենց ընտանիքին և իրենց նմաններուն :

Ջանանք ուրեմն անդրադառնալ նախ՝ թէ ի՞նչ կոչում և ընդունակութիւն ունինք կեանքի ասպարէզին մէջ. և անգամ մը որ մեր կեանքի ուղին լաւ ընտրած՝ որոշենք մեր գործունէութեան ասպարէզը, սիրով ու եռանդեամբ փարինք անոր, և յարատե աշխատութեամբ մը կատարենք մեր պարտքը՝ մինչև և այն օրն ուր դեռ մեր աչքը կը տեսնէ, մեր միտքը կը գործէ ու մեր բազուկները կը բանին :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԽՄԲԱՆԿԱՐԻՆ


1. ԱԶԳՆՍԷՐ ՀԱՅՐԻԿ, Մկրտիչ Կաթողիկոս Խրիմեան
2. ԲԱՐԵՐԱՐ (ՎԱՅԱՌԱԿԱՆ), Աղիքս. Մաննաւոժ
3. ՄԵԿԵՆՆՍ, Աղա Յովսէփ Իզմիրեանց
4. ԶՕՐԱՎԱՐ, Միքայէլ Լօռու Մելիքեանց
5. ՊԱՏԵՐԱԶՄԻԿ-ՀԵՐՈՍ, Երբեմ Խան*
6. ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ, Քրիստափոր Միքայէլեան
7. ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ-ՆԱՀԱՏԱԿ, Ժիրայր (Մարտիրոս Պոյաճեան)
8. ԿՐԹԱՆՈՒԷՐ, Սիպիլ (Տիկին Զապէլ Հ. Ասատուր)*
9. ՈՐԲԱԽԱՄ, Սրբուհի մայրապետ Գալֆաեան
10. ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ, Մաղաքիա Արքեպսկ. Օրմանեան*
11. ԲՆՐՈՅԱԽՍՍ-ԻՄԱՍՏԱՍԷՐ, Ռեթէոս Յ. Պէրպէրեան
12. ՄԱՆԿԱՎԱՐԺ, Սեդրաք Մարտիրեան
13. ՊԱՏՈՒԵԼԻ (ԱԶԱԶՈՒՐ), Համբարձոււմ Երամեան*
14. ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻ, Տիկին Գայիանէ Մատակեան
15. ՄԱՆԿԱՆՅ ԳՐԱԳԷՏ, Ղազարոս Աղայեան
16. ՔԵՐԹՈՂԱՀԱԹՐ, Հ. Ղեւոնդ Ալիշան
17. ԳԵՂԱՐՈՒԵՍԱԳԷՏ-ԱՐՁԱԿԱԳԻՐ, Եղիա Տէմրեճիպաշեան
18. ՎԻՊԱՍԱՆ, Բաֆֆի (Յակոբ Մելիք-Յակոբեան)
19. ՆՈՐԱՎԷՊԱԳԻՐ-ԲԵՄԲԱՍԱՅ, Աւետիս Ահարոնեան*
20. ԹԱՏԵՐԱԳԻՐ, Շիրվանզաղէ (Աղեքս. Մովսէսեան)*
21. ԱՌԱԿԱԽՍՍ, Գաբրիէլ Արքեպսկ. Այվազովսքի
22. ԵՐԳԻՇԱՐԱՆ, Յակոբ Յ. Պարոնեան
23. ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ, Գրիգոր Արծրունի
24. ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏ, Արշակ Չօպանեան*
25. ՀՆԱԽՍՍ-ԲԱՆԱՍԷՐ, Հ. Յակովբոս Տաշեան*
26. ԲԱՌԱԳԻՐ, Նորայր Բիւզանդացի (Յր. Թերզոնց)*
27. ՊԱՏՄԱՐԱՆ, Լէօ (Առաքել Բարսխանեան)*
28. ԿԵՆՍԱԳԻՐ, Արշակ Ա. Ալպոյաճեան*
29. ԳՐԱԲԱՐԱԳԷՏ, Մատանիա Գարագաշեան
30. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԱԳԷՏ, Հ. Արսէն Այտընեան
31. ԹԱՐԳՄԱՆԻՉ, Հ. Արսէն Հաղիկեան*
32. ՕՐԱՑՈՒՑԱԳԻՐ, Գէորգ Զարչաբեան
33. ՔԱՂԱՔԱԳԷՏ, Գրիգոր Օտեան
34. ՕՐԷՆՍԳԷՏ-ՓԱՍՏԱՐԱՆ, Գրիգոր Զօհրապ*

35. ՄԱԹԵՄԱԹԻԿՈՍ, Սիւոն Միքայէլիան
36. ՀԱՄԱՐԱԿԱԼ, Պօղոս Յ. Թորգոմեան
37. ԲՆԱՊԱՏՈՒՄ, Խաչիկ Ուլղուրիկեան
38. ԲԻՄԻԱԳԷՏ, Բարսեղ Նուրիճան
39. ԵԼԵԿՏՐԱԲՈՅԺ, Միհրան Գասապեան
40. ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՄԱՍՆԱԳԷՏ, Յովհ. Խորասանճեան
41. ՄԱՆԿԱԲԱՐՁ, Յովհաննէս Քեաթիպլիան
42. ՆՄԱՆԱԲՈՅԺ, Յովհաննէս Արշակունի
43. ՎԻՐԱԲՈՅԺ, Վիլէն Օրմանեան
44. ԱԿՆԱԲՈՅԺ, Նիկողոս Էսմէրեան
45. ԱՏԱՄՆԱԲՈՅԺ, Հրանտ Մատթէոսեան*
46. ԱՆԱՄՆԱԲՈՅԺ, Մինաս պէյ (Աւետիսեան)*
47. ՏՆՏԵՍԱԳԷՏ-ՆԱԽԱՐԱՐ, Գրիգոր Ազաթոն
48. ԵՐԿՐԱԳՈՐԾ, Գէորգ Սթրմարաճեան
49. ՃԱՐՏԱՐԱԳԷՏ-ՀՆԱՐԻՉ, Պօղոս Նուպար Փաշա* [հնարիչ հերկաւար գործիի մը որ եգիպտոսի մէջ՝ երկրագործութեան մեծապէս օգտակար եղած է]:
50. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ, Նիկողոս Պալեան
51. ԵՐԿՐԱՉԱՓ, Գարրիէլ Սէրվիլէն*
52. ԴՐԱՄԱԳԷՏ, Հ. Կղեմէս Սիպիլեան
53. ԾՈՎԱՆԿԱՐԻՉ, Յովհաննէս Այվազովսքի
54. ՆԿԱՐԻՉ, Արսէն Շապանեան*
55. ՊԱՏԿԵՐՀԱՆ-ԳԾԱԳՐԻՉ, Տիգրան Էրսէրճեան
56. ԶԱՐԴԱՆԿԱՐԻՉ, Սոփոն Պէզիրճեան*
57. ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ, Ստեփան Ակայեան*
58. ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ, Գէորգ Ապտուլլաի*
59. ԳԵՂԱԳԻՐ, Խաչիկ Ս. Թահտաճեան*
60. ՎԻՄԱԳԻՐ, Միհրան Ուլղուրիկեան*
61. ԱՐՁԱՆԱԳՈՐԾ, Հայկ Բաղիկեան*
62. ԵՐԱԺՇՏԱՊԵՏ, Կոմիտաս վրդպտ. (Սողոմոնեան)*
63. ԵՐԳԱՀԱՆ, Տիգրան Զուհաճեան
64. ԱՐԵԻԵԼԵԱՆ ԶԱՅՆԱԳՐԱԳԷՏ, Պապա Համբարձում (Զէրլեան)
65. ԵՐԻՉ, Ներսէս Շահրաբեանց
66. ԴԱՇՆԱԿԱՀԱՐ, Յակոբ Ասատուր
67. ԶՈՒԹԱԿԱՀԱՐ, Դաւիթ Դաւիթեան
68. ԹԱԻ-ԶՈՒԹԱԿԱՀԱՐ, Տիրան Ալէքսանեան*
69. ԴԵՐԱՍԱՆԱՊԵՏ, Մարտիրոս Մնակեան*

70. ՈՂԲԵՐԳՈՒ, Պետրոս Հ. Աղամեան
71. ԿԱՏԱԿԵՐԳԱԿ, Գարեգին Ռշտունի
72. ՆԱԻԱՊԵՏ, Պետրոս Խուլիպէկեան
73. ՆԱԻԱՎԱՐ, Պետո (Ասքանազ)*
74. ՆԱԻԱՇԷՆ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ, Յովսէփ Գազաֆեան
75. ԱՏԱՂՁԱԳՈՐԾ, Որդիկ պէյ (Քէմրամեան)
76. ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԳԷՏ, Միլրոն Գալէնտէր
77. ԱԿՆԱԳՈՐԾ-ՓՈՐԱԳՐԻԶ, Մկրտիչ Պէնտէրլեան
78. ՏԱՌԵՐՈՒ ՓՈՐԱԳՐԻԶ, Յովհաննէս Միւհէնտիսեան
79. ՈՍԿԵՐԻԶ-ՓՈՐԱԳՐԻԶ, Քերովբէ Թուլումպաճը օղլու*
80. ՏՊԱԳՐԻԶ, Ճանիկ Արամեան
81. ԿԱԶՄԱՐԱՐ, Յակոբ Մատթէոսեան
82. ԳՐԱՇԱՐԱՊԵՏ, Կարապետ Ա. Պարոնեան*
83. ԵՆԵՂԱՅԱԳՈՐԾ, Քերովբէ Զիլճեան
84. ԿԵՐՊԱՍԻ ՈՍՏԱՅՆԱՆԿ, Խաչիկ Զէքի (Տէր Յակոբեան)*
85. ԴԱՐԲԻՆ, Տիգրան Մօսկօֆիան* (քաջաճի պաշխ մական-
ուանեալ):

 Աստղանիշ կրօղ անձինք ողջ են

Կ Ե Ր Զ



* Խ Մ Բ Ա Ն Կ Ա Ր *

ԶԱՆԱԶԱՆ ԱՍՊԱՐԷԶՆԵՐՈՒ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀԱՅԵՐԷ ՈՄԱՆՅ

Մ՛յ Հայ, երբ տեսնես կշիռ մը որան մէկ նմարը
ծանրացուցած են Թշուառութիւնը, Քզիտութիւնն ու
Բռնութիւնը, նետէ՛ միւս բարին մէջ 'Իորո՛վդ ու Կո-
րովդ՝ եթէ ազգասէր ես, 'Գա՛ննդ՝ եթէ հարուստ ես,
Մուխ՛նդ՝ եթէ զիմուր ես, Ռո՛ւմբդ՝ եթէ յեզաւիոյս-
կան ես, Հօզի՛դ՝ եթէ մայր ես. Ուզե՛զդ՝ եթէ հանճար
ես, 'Գաղափա՛րդ՝ եթէ փիլիսոփայ ես, Խա՛նդդ՝ եթէ
հերքող ես, 'Իրի՛չդ՝ եթէ հրապարակագիր ես, Լեզու՛դ՝
եթէ պերճախօս ես. Սլա՛րդ՝ եթէ երգիծարան ես.
'Իրբամուտքի՛ւնդ՝ եթէ քաղաքագէտ ես, Բա՛հդ՝ եթէ
մշակ ես, ու Մո՛ւրնդ եթէ զործաւոր ես:

* Կ Ա Ջ Մ Ե Յ Թ Է Ո Ղ Ի Կ *





11



12



13



14



15



16



17



18



19



20



21



22



23



24



25



26



27



28



29



30



31



32




33



34



35





36



37



38



39



40



41



42



43



44



45



46



47



48



49



50



51



52



53



54



55



56



57



58



59



60



61



62



63



64



65



66



67



68



69



70



71



72



73



74



75



76



77



78



79



80



81



82




83



84



85



Ճառագարան 5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մ Ա Ր Դ ՈՒ Ն Ա Ջ Ա Տ Ա Գ Ր ՈՒ Մ Ը

- 1. **ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴԵՐՈՒ ԹՇՈՒԱՌ ՎԻՃԱԿԸ . —**
 Բարոյագիտութեան նպասակը. — Բարեբախտ կը ծնինք. —
 Նախամարդոց սպրեշակերպը. — Ժամանակակից վայրե-
 նիներուն բշուառութիւնը. — Վայրենիներուն իմացակա-
 նութիւնը. — Նախամարդոց սարսափը. — Տմարդի հին. —
 Հարցարան. 9— 17
- 2. **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆՆ Է ԱՂԲԻՒՐ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ .**
 — Համագործակցութիւն. — Նախնական յառաջդիմութիւն-
 ներ. — Գիր, Թուղթ, Տպագրութիւն. — Մարդիկ տր' Բնու-
 րեան ոյժերուն. — Յարգենք մեր բարեւարները. — Հար-
 ցարան 17— 21
- 3. **ԱՋԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ ԻՐԱՐՈՒ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ**
ՄԷՋ. — ԸՆՏՐԵՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՃԱՄԲԱՆ. — Ազատութիւն,
 բայց ո՛չ յիմարութիւն. — Ազատ տղան. — Տղան վիճակն
 ընկերութենէ զուրկ. — Արդարութեան պիտի. — Պատուա-
 տու տղան. — Անարդար, գեղ տղան. — Լաւ ընտելեմք մեր
 կեանքի ճամբան. — Հարցարան. 21— 25

Ը Ն Թ Ե Ր Յ ՈՒ Մ Ն Ե Ր

Ոսկորի կտորը (Անաթօլ Ֆուսս). — Երազ իը (Թարգմ.
 Վահան Թեքէտան). — Միութիւնը զօրութիւն է (Լա-
 տիլէ). — Մարդկութեան բարեբարները (Ամէսուն Տա-
 րեցոյցը). — Ոսկի սպարանջանը (Գ. Մ.). — Գեղե-
 ցիկ խօսքեր 26—32

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵՐ ԿՈՐՈՎԸ . — ՉԱՅՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՆՔ

1. ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿՈՐՈՎ. — Առանց կորսի՛ ոյնչութիւն կ

մարդ.—Մաքուր արիւն.—Շատակերութեան վնասները.—
Բռնի, օղի եւ մարմնամաքցի կարեւորութիւնը.— Մար-
մինին մաքրութեան հակաւ պիտի.— Փոշիին եւ աղտոս
ջուրին վնասները.— Մեր սխալ ըմբռնումը դեղերու մա-
սին.— Հարցարան 34— 39

2. ՄԻՏՔԻ ԿՈՐՈՎ.—Տգեհ մարդուն վիճակը.—Երկու խոշոր
քերութիւններ.—Հարցարան 39— 41

3. ԿԱՄՔԻ ԿՈՐՈՎ.—Կամֆը.—Հարցարան 41— 42

4. ԿՈՐՈՎԻ ԿԱՄՔԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ.—Համբերութիւն, եթէ
կուզենք մարդ ըլլալ.—Յարստեւորութիւնն ու իր հրաշ-
ները.—Արիութեան անհրաժեշտութիւնը.— Երես երեսի
բացատրութիւն պահանջիչը կարեւոր է.— Նախաձեռնու-
թիւն.—Անկանոնը.—Հարցարան 42— 46

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գինին ու ջուրը (Մ. Ասքանազ).—Սարդն ու Շերամը
(Թարգաւ. Աղեքա Փանոսեան). — Գերագոյն անձնուե-
րութիւն մը (1911ի Բարիզեան Թերթերէ).—Կամքի կո-
րովի տէր Հայ մը (Ա. Թէոդիկ).—Գեղեցիկ խօսքեր . 46—53

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵՐ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

1. ԱԼՔՈՒԸ.—Այնքանոյ ըլլալու պատճառներ.—Այնպանոր-
քեան հետեւանքը.—Այնոյին դեմ աղջկանց ու կիներուն
դերը.—Ծխելը.—Հարցարան 55— 58

2. ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ.—Բարկացողին վիճակը.— Բարկութեան
պատճառները.—Ի՞նչպէս զսպենք բարկութիւննիս.—Հար-
ցարան 58— 60

3. ԶԱՐԱԿԱՄՈՒԹԻՒՆ, ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐԱԳՐՈՒՈՒ-
ԹԻՒՆ.—Զարակամութիւն.—Հպարտութիւնը կամֆի զկա-
րութիւն է.—Սրդողիչը.—Դիւրագրողութիւն.—Ստախօսու-
թիւն.—Զարտութիւն.—Հարցարան 60— 63

4. ԴՐԱՄԸ.—ԻՐ ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՄՆԵՐԸ.—Դրամին ոչ-
ժը.—Խման բանտը.— Կծծիւն յիմար մըն է.—Խաղա-
մորութիւն.—Ճշմարիտ հանոյնները.—Հարցարան . 63— 67

5. ՏԽՐՈՒԹԻՒՆ, ԵՐԿԶՈՏՈՒԹԻՒՆ, ԾՈՒԼՈՒԹԻՒՆ, ՎԱԽ.—
Տխրութիւն, Երկչոտութիւն եւ վախ.—Ծուլութիւն.—Հար-
ցարան 67—70

Ը Ն Ք Ե Ր Ց Ո Ւ Մ Ե Ր

Գինո՛վ (Արշակ Զօպանեան). — Առաքինի Հայ մը
(Թէոդէկ).—Բօլէրան (Պարսկական զրոյց).—Երկնա-
հաճոյ նուէրը (Գերմ. Զրոյց) Սիպիլ.—Ցեխին դպրոցը
(Թէոդէկ).—Գեղեցիկ խօսքեր 70—81

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

1. ԿՈՐՈՎԻՆ ԴԵՐԸ.— Աշխատանք.—Նեղսեղու չեմ աշխատած ասեմքիս.—Կարգադրեմ աշխատանքիս.—Հարցարան 83—85
2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՇԱԿԵՐՏԸ՝ ՀԱՅԸ.— Աշխատանք հա՛ցը ասեղծած է.—Աշխատանք մեր փրկութիւնն ու հրշակութիւնն է.—Հարցարան 85—87

Ը Ն Ք Ե Ր Ց Ո Ւ Մ Ե Ր

Հնճողին երգը (Թարգմ. Սիպիլ).—Աշխատութեան ճառը
(Էմիլ Զօլա).—Տիեզերական աշխատանքը (Ֆլամսոն Իօն).
—Պարկեշտ գործաւոր մը (Թարգմ. Ե. Գօլանճեան).
— Պատիկ բանւորին արկածը (Գեղամ Բարսեղեան).—
Գիւղացիներուն (Սիպիլ).—Պիւֆօնի կեանքէն (Սամուէլ
Սմայլ).—Գեղեցիկ խօսքեր 88—97

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Մ Ե Ր Ը Ն Կ Ե Ր Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Ք Ե Ր Ը

1. ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ.—Արդար ըլլալու մեր պարտքը.—Մարդասպան չըլլամք.—Միւս մարդասպանները.—Գերութիւն.—Սերկութեան բոյնը.— Զրպարտութիւն.— Զարսիտութիւն.—Հարցարան 99—103
2. ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ.—Անկերողութիւնն արգելք է համագործակցութեան.—Անկերողութեան շարժառիթներ.—Խորնեղու ազատութիւնը.—Քննադատութեան օգուտը.—Հարցարան 103—106

3. ԳԹՈՒԹԻԻՆ.—Իրուքեան դերը. — ժլատ չըղանք Քվարձի սառու ասեւն.—Բարեգործութիւն.—Կոյրները, Խուր-Համբերը. Թշուառութեան պատճառները. — Բարեբաւերու եղանակներ.—Իրութիւնը տղայ հասակին պէտք է.—Կիները շատ քան կարող են ընել.—Հարցաւրան] 106—115

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

Զգայնաչափ (Վրթամէս Փափազեան).—Աթրիի զանգակը (Թարգմ. Անգլ.).—Հրեայ Փերեզակը (Թարգմ. Սիպիւ).—Դօքօշը (Վ. Հիւզօ).—Մայրերո՞ւն.—Միսըս Գօռինս Դաթըգ.—Իեղեցիկ խօսքեր 115—127

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՐԿԱՑՈՒՆԵԼՈՒ

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

1. ԸՆՏԱՆԻՔԸ.—Ընտանիքին բարեբաւ դերը.—Խանգարուած ընտանիքներ.—Ձղագրգիռ տղայ.—Տղոց հնազանդութիւնն իրենց ծնողաց հանդէպ.—Մնողասիրութիւնը ծնողքին օգնելի է.—Կեղծաւորները.—Ազատարար մըն է ուսուցիչը.—Հարցաւրան 129—134
2. ՔԱՂԱՔԱՅԻՆ.—Կարգապահութեան պէտքը.—Երեք օրկները չըղային.—Դժբախտ երկիրներ.—Բանականութեամբ բարձր ենք.—Անկախ մտածողներուն դերը. — Մե՛նք աչ խորհիչ գիտնանք.—Ազատութեան բշխամիները. — Երկիրի մը մշակութիւն բարեկամները.—Հարցաւրան 134—140
3. ԱՄԷՆ ՄԱՐԴ ԳՈՐԾԻ ՄԸ.—Անգործը խնայի կակ մըն է.—Աշխատողներուն երկու դասակարգերը.—Գիւղացիներուն գոհունակութիւնը. — Արհեստին ազնուացունող գործաւորներ.—Երջանկութիւն ասեղծող սանտիկիները.—Խղճամիտ աշխատութիւն.—Իործաւորներուն արդար պահանջները.—Երկու կարեւոր գիտելիք.—Արհեստ մը շատ քան կ'արժէ.—Հարցաւրան 140—145
4. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԷՐ.—Հայրենիքը.—Վատութիւնը կը խուսափի քաջութենէն.—Հայր փես չուզեց ըրալ.—Արդարու-

քեան ասեանը.—Պատերազմին սուկումները. — Բարբա-
 րոս, անխոհեմ ազգ.—Ընդհանուր համերաշխութիւնը.—
 Պատրաստ գեներալի միջոց.—Յաղթութիւնը չխախտողինն է.
 —Ճշմարիտ ֆալսապոստի ճշմարիտ հայրենասուտն է.—Հար-
 ցարան 145—152

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Փայտե ամանը (Ա. Թ.).—Կաղանդը Հայաստանի մէջ
 (Լ. Բաշալեան).—Գիտութեան զոհ Հայ մը.—Էրզրում
 (Երզ.).—Պատուախնդիր Հայորդին (Հմ. Արամեանց).—
 Պատերազմ, Արդարութեան և Ազատութեան համար
 (Թարգմ. Փայլակ).—Գեղեցեկ խօսքեր 153—167

ԵՕԾՆԵՐՈՐԴ ՄԱՍ

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑԵՐ.—ԿՐՕՆՔ ԵՒ ԽՂՃՄՏԱՆՔ

1. ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՏԱՒՔՆԵՐ.—Ուրիշներն իրենց գործերէն
 դասեմք, եւ ո՛ր քէ իրենց հիւստերէն.—Ուրիշները բռնա-
 դասելու չենք մեր հաւաստին դառնալու. — Արեւն մարդ
 ազատ պէտք է ըլլայ. — Բարոյականի եւ գիտութեանց
 շարժման ընթացքը. — Ինքնահասունութիւնը յիմարներու
 եւ զգեսներու միայն ծնունդ կու տայ. — Աղկալարոյցներ
 եւ անխոնջ աշխատողներ. — Ճշմարտութեան համար սա-
 նապողներ. — Մի՛ջս բռնութիւն, հալածանք կրօնական
 հաւատալիքներու դէմ. — Յեղաշրջումի եւ յաւալոյիսնու-
 րեան հետեւանքով.—Կրօնական աններող ոգին. — Ապա-
 գան աւելի յուսալից.—Յարգեմք զանո՛նք որ արդարու-
 րիւնը կը սիրեն.—Հարցարան 169—179

2. ԱՐՃԱՆԱՒՈՐ ԵՒ ԵՐՁԱՆԻԿ ԿԵԱՆՔԸ.—Սխալ համոզում-
 նիս.—Մեր վարմունքին հետեւանքները.—Մեր մտութեանց
 քնական հետեւանքները. — Գոյնիս ու պարսաւ. — Գերի
 չըղանք Վասարակաց կարծիքին.—Ընդունուած պատիժ-
 ներէն ազատ մնացողները. — Արդարութիւն պահանջեմք,
 երբ մենք արդարասէր եղած ենք.—Արտաքին երեւոյթներէ
 չդասեմք ուրիշներու երջանկութիւնը. — Երջանկութեան
 մասին մեր սխալ ըմբռնումը.—Բուն երջանկութիւնը.—

Դժոխք եւ Արխայուքիւն. — Երջանկութիւնը բանի սեղ
 չդնողները. — Հանոյքները վայելեմք, առանց անոնց գե-
 րին ըղբալու. — Անարդար մեկու մը վերագրուած երջան-
 կութիւնը. — Անարդար մարդու զարհուրեցի օրինակ մը. —
 Մահը. — Կեանքի ինչ նամբայ ընտելեմք. — Հարցարան. 179—194

Վ Ե Բ Զ Ի Ն Ը Ն Յ Ե Բ Յ Ո Ւ Մ Ն Ե Բ

Անհրատեշտ դիւքք (Ռ. Յ. Պէրպէրեան). — Չորս ճամ-
 բորդներ (Սիպիւ). — Ճարճնական անօթները. — Ապեր-
 ջանիկ Հայու մը երջանկութիւնը (Թէոդիկ). — Ուղեքճ
 (Տ. Զրաքեան). — Հայուհեաց կրթութիւնը (Բ. Քէչեան).
 — Մի' լար, մայրիկ, վստահէ' ինձի (Յակոբ Տ. Յա-
 կոբեան). — Գեղեցիկ խօսքեր. 194—209

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ս

Մ Ի Շ Տ Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ի Ր Ա Ր Կ Ո Ւ Մ Ը Հ Ա Մ Ա .
Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ե Ի Ա Շ Խ Ա Տ Ա Ն Գ Ո Վ 211

Բովանդակութիւն Խմբանկարին 214
Խմբանկար ՅԾ Հայերու 217—224

